Հարգելի՛ ընթերցող,

«Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում» **(ԱԵԳՄՄ)** հասարակական կազմակերպությունն իր գործունեության տասմեկ տարիների ընթացքում նախաձեռնել է ավելի քան չորս տասնյակ ծրագրեր, որոնցից հատկանշելի է www.artsakhlib.am հասցեով գործող **«Արցախի էլեկտրոնային գրադարան»** կայքէջը, որն Արցախի և Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ գիտական, գեղարվեստական և ճանաչողական նյութերի համահավաք շտեմարան է:

Ներկայումս կայքում առկա նյութերի քանակն անցել է 14.600-ի, իսկ նյութերի հեղինակների թիվը՝ 6.600-ի սահմանագիծը:

Եթե ունեք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տպագրված գիտական աշխատանք և այն նշված կայքէջում տեղադրելու ցանկություն, խնդրում ենք ուղարկել artsakhlib@gmail.com էլեկտրոնային փոստին: Իսկ եթե փնտրում եք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն դեռ չեք գտել, գրե՛ք մեզ նույն հասցեով և մենք կփորձենք օգնել Ձեզ:

Նշենք, որ «Գիտական Արցախ» պարբերականում ընդգրկված գիտական հոդվածների էլեկտրոնային տարբերակները ևս կարող եք ԱՆՎՃԱՐ ներբեռնել Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքից:

Dear reader!

«Union of Young Scientists and Specialists of Artsakh» **(UYSSA)** NGO has initiated more than four dozen programs during the eleven years of its activity, of which the Artsakh E-Library website can be singled out - www.artsakhlib.am, which presents a consolidated repository of scientific, artistic and educational materials reflecting various spheres of life of Artsakh and Armenia.

Currently, the number of materials on the site exceeded 14.600, and the number of authors of materials - 6.600.

If you have published scientific work about Artsakh and Armenia and you wish to make it available on our website, please send it to the following e-mail address: artsakhlib@gmail.com. And if you are looking for the information on Artsakh and Armenia but have not found it yet write to us to the same e-mail and we will try to help you.

It should be noted that you can also download FREE electronic versions of scientific articles published in the journal «Scientific Artsakh» from the Artsakh E-Library website.

Уважаемый читатель!

Общественная организация «Объединение Молодых Учёных и Специалистов Арцаха» **(ОМУСА)** в течение своей одиннадцатилетней деятельности инициировала более четырёх десятков программ. Среди них можно выделить сайт **Электронной библиотеки Арцаха** - www.artsakhlib.am, который является сводным хранилищем научных, художественных и познавательных материалов, отражающих различные сферы жизнедеятельности Арцаха и Армении.

На данный момент количество материалов на сайте превысило 14.600, а количество авторов материалов -6.600.

Если у Вас имеется изданная научная работа об Арцахе и Армении и желание опубликовать на нашем сайте, то просим отправить её на следующий адрес электронной почты: artsakhlib@gmail.com. А если Вы ищете сведения об Арцахе и Армении, но пока ещё не нашли их, напишите нам по тому же адресу, и мы попробуем помочь Вам.

Отметим, что также можете БЕСПЛАТНО скачать из сайта Электронной библиотеки Арцаха электронные варианты научных статей, опубликованных в журнале «Научный Арцах».

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ ◉ SCIENTIFIC ARTSAKH ◉ НАУЧНЫЙ АРЦАХ

№3(26), 2025

ISSN 2579-2652

ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ԱՐԱՐԱՏ» ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ, ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿՈՄԲԱՏ ՀԻՄՆԱՐԿ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(26), 2025

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3 (26), 2025

www.scientificartsakh.com

*«**Գիտական Արցախ**» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

*«**ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ**» պարբերականն ընդգրկված է նաև ՌԻՆՑ միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում և զետեղված www.elibrary.ru կայքում:*

*The journal **«Scientific Artsakh»** is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia (SCC RA).*

*The journal **«Scientific Artsakh»** is also included in the RSCI (Russian Scientific Citation Index) International Scientific Information Database and posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** также включен в международную научно-информационную базу данных РИНЦ и размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2025

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ (№14/5, առ 31.05.2023 թ.):

Համարը հրատարակության է երաշխավորել
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Աննա ԱՍԱՏՐՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գայանե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, մշակութաբանության դոկտոր, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մանուկ Աբրահամ ՄԱԼԽԱՍՅԱՆ, աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր **(Նյու Յորք, ԱՄՆ)**
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալեքսանդր ՆԵՎԵՐՈՎ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ (**Սարատով, ՌԴ)**
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ամիթ ՉԱԲՐԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Նյու Յորք, ԱՄՆ)**
Գուրգեն ՊԵՏՐՈՍՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր **(Նյուրենբերգ, Գերմանիա)**
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Քրիստիան դը ՎԱՐԴԱՎԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Լոնդոն, Մեծ Բրիտանիա)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3 (26), 2025, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2025, 236 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2025 թ. 3-րդ (26-րդ) համարի տպագրությանն աջակցել է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամը, ինչի համար էլ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

ISSN 2579-2652 (Print)
ISSN 2738-2672 (Online)

© Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում (ԱԵԳՄՄ), 2018-2025

Published by the Yerevan State University Academic Council Decision (№14/5, 31.05.2023).

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the Journal «Scientific Artsakh».

EDITORIAL COUNCIL

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D. in Law, Associate Professor

Members:
Anna ASATRYAN, Doctor of Arts, Professor
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Amit CHHABRA, Doctor of Law, Professor **(New York, USA)**
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Irina HAYUK, Doctor of Cultural Studies, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D. in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Manuk Abraham MALKHASYAN, Doctor of Theology, Professor **(New York, USA)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economics, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D. in Economics, Associate Professor
Alexander NEVEROV, Doctor of Economics, Associate Professor **(Saratov, Russia)**
Gurgen PETROSSIAN, Doctor of Law (LL.M.) **(Nuremberg, Germany)**
Ruben SAFRASTYAN, Academician of NAS RA, Doctor of History, Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economics, Professor
Christian de VARTAVAN, Doctor of History **(London, Great Britain)**
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Gayane YEGHIAZARYAN, Doctor of Philology, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3 (26), 2025, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2025, 236 pages.

The publication of the 3rd (26th) issue 2025 of the Journal «Scientific Artsakh» was supported by the «Luys» Cultural, Scientific, Educational Foundation, to whom we express our deepest gratitude.

Издается решением учёного совета
Ереванского государственного университета (№14/5, 31.05.2023 г.).

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах».

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Анна АСАТРЯН, доктор искусствоведения, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Кристиан де ВАРДАВАН, доктор исторических наук **(Лондон, Великобритания)**
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, доктор культурологии, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Гаяне ЕГИАЗАРЯН, доктор филологических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Манук Авраам МАЛХАСЯН, доктор богословия, профессор **(Нью-Йорк, США)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Александр НЕВЕРОВ, доктор экономических наук, доцент **(Саратов, Россия)**
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Гурген ПЕТРОСЯН, доктор юридических наук **(Нюрнберг, Германия)**
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Рубен САФРАСТЯН, академик НАН РА, доктор исторических наук, профессор
Амит ЧАБРА, доктор юридических наук, профессор **(Нью-Йорк, США)**

Научный Арцах, № 3 (26), 2025, Ереван, Издательство «АРЦАХ», 2025, 236 страниц.

Изданию 3-го (26-го), 2025 г. номера журнал «Научный Арцах» содействовал культурный, научный, образовательный фонд «Луйс», за что мы выражаем глубокую благодарность.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS СОДЕРЖАНИЕ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Էլինա Մխիթարյան. Արցախահայության հարկադիր տեղահանության երկարաժամկետ հետևանքները. որոշ ասպեկտներ (հայերեն) 9
Elina Mkhitaryan. Long-term Consequences of the Forced Displacement of Artsakh Armenians: Some Aspects (in Armenian)
Элина Мхитарян. Долгосрочные последствия принудительного перемещения армян Арцаха: некоторые аспекты (на армянском)

Բաբկեն Ղազարյան. Հայերի տեղաբաշխվածությունը Թիֆլիսի գավառում և Թիֆլիս քաղաքում 1920-ական թվականներին (հայերեն) 20
Babken Ghazaryan. Distribution of Armenians in Tiflis Uezd and the City of Tiflis in The 1920-s (in Armenian)
Бабкен Казарян. Расселение армян в тифлисском уезде и в городе Тифлис в 1920-е годы (на армянском)

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

Էդգար Քալանթարյան. Ժամանակակից հանրային կազմակերպությունների կառուց-վածքային վերափոխումները (հայերեն) 31
Edgar Kalantaryan. Structural Transformations of Modern Public Organizations (in Armenian)
Эдгар Калантарян. Структурные трансформации современных государственных организаций (на армянском)

Տիգրան Ղազարյան. Միգրացիան և ազգային անվտանգությունը. տեսական մոդելներ և հիբրիդ սպառնալիքներ (հայերեն) 40
Tigran Ghazaryan. Migration and National Security: Theoretical Models and Hybrid Threats (in Armenian)
Тигран Казарян. Миграция и национальная безопасность: теоретические модели и гибридные угрозы (на армянском)

Արտյոմ Պողոսյան. Ռուսաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգային, դոկտրինալ փաստաթղթերը և մոտեցումները Հարավային Կովկասի վերաբերյալ (1991-2023 թթ.) (հայերեն) 53
Artyom Poghosyan. Conceptual and Doctrinal Documents of Russia's Foreign Policy Toward the South Caucasus (1991–2023) (in Armenian)
Артём Погосян. Концептуальные и доктринальные документы и подходы внешней политики россии в отношении Южного Кавказа (1991-2023) (на армянском)

Լուսինե Սողոմոնյան. Ընտրական գործընթացներում առանձնահատուկ դերակատարների, մասնավորապես՝ ներքին գործերի նախարարության դերը (ՀՀ օրինակով) (անգլերեն) 64
Lusine Soghomonyan. The Role of Specific Actors in the Election Process, Especially the Role of the Ministry of Internal Affairs (According to the Law of the RA) (in English)
Лусине Согомонян. Роль особых субъектов в избирательном процессе, в частности, роль министерства внутренних дел (согласно законодательству РА) (на английском)

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Հայկ Մկրտչյան, Էդգար Մանուչարյան. Նվազ վտանգավորություն ներկայացնող արարքների քրեաիրավական բնութագիրը և արդի հիմնախնդիրները (հայերեն) 75
Hayk Mkrtchyan, Edgar Manucharyan. Criminal Characteristics of Less-Dangerous Acts and Current Issues
Айк Мкртчян, Эдгар Манучарян. Уголовно-правовая характеристика деяний, представляющих пониженную общественную опасность, и ее актуальные проблемы (на армянском)

Էլինա Գեղամյան. Վարչարարության բողոքարկումը որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց (հայերեն) 83
Elina Geghamyan. Administrative Appeals as an Effective Legal Remedy (in Armenian)
Элина Гегамян. Административное обжалование как эффективное средство защиты прав (на армянском)

Աննա Մկրտումյան. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը՝ որպես դրական և բացասական իրավունքներ (հայերեն) 95
Anna Mkrtumyan. Physical and Mental Integrity as Positive and Negative Rights (in Armenian)
Анна Мкртумян. Физическая и психическая неприкосновенность как позитивные и негативные права (на армянском)

Շուշանիկ Վարդերեսյան. ՀՀ նախագահական կառավարման մոդելը (հայերեն) 102
Shushanik Varderesyan. The Presidential Model of Government in Armenia (in Armenian)
Шушаник Вардересян. Президентская модель правления в Армении (на армянском)

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Օվսաննա Խաչատրյան. Անթիլիասի Հմր 150 ձեռագրի գրառաջքների ինքնատիպ խումբը (հայերեն) 114
Ovsanna Khachatryan. A Unique Group of Grar'ajk's in Antelias Manuscript No. 150 (in Armenian)
Овсанна Хачатрян. Уникальная группа грараджков в Антелиасской рукописи № 150 (на армянском)

Անի Ղազարյան. Հովհաննես Թումանյանի արձակի երգիծանքի առանձնահատկությունները 122
Ani Ghazaryan. Characteristic Features of H. Tumanyan's Prose Satire (in Armenian)
Ани Казарян. Особенности прозаической сатиры О. Туманяна (на армянском)

Աննա Կոստանյան. Պատմագրությունից սրբապատում. Մովսես Խորենացու «Ողբը» «Յայսմաւուրքում» (հայերեն) 133
Anna Kostanyan. From Historiography to Hagiography: Moses Khorenatsi's "Lament" in the "Yaysmavurk" (in Armenian)
Анна Костанян. От историографии к агиографии: «Плач» Мовсеса Хоренаци в «Яйсмавурке» (на армянском)

Քրիստինե Մելքումյան. Ձեռագիր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների բնույթն ու կիրառությունը միջնադարում (հայերեն) 141
Kristine Melkumyan. The Nature and Functionality of Handwritten Textbooks and Educational Manuals in the Middle Ages (in Armenian)
Кристине Мелкумян. Характер рукописных учебников и учебных пособий и их применение в средние века (на армянском)

Սոնա Մուսայելյան. Ազգային կենցաղի արտացոլումը Մակար Բարխուդարյանցի «Միրզայ և Աննայ» երկում (հայերեն) 149
Sona Musayelyan. Reflection of National Life in Makar Barkhudaryan's Book "Mirzai and Anna" (in Armenian)
Сона Мусаелян. Отражение национального быта в книге Макара Бархударянца «Мирзай и Аннай» (на армянском)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Սուրեն Պողոսյան, Սուսան Ավետիսյան. Ֆինանսական համակարգի և տնտեսության փոխազդեցության երկրային առանձնահատկությունները (հայերեն) 159
Suren Poghosyan, Susan Avetisyan. Country-Specific Features of the Interaction Between the Financial System and the Economy (in Armenian)
Сурен Погосян, Сусан Аветисян. Особенности взаимодействия финансовой системы и экономики в различных странах (на армянском)

Սյուզաննա Պետրոսյան. ՀՀ միջազգային տարանցիկ ուղիների գործունեության վերլուծությունն ու զարգացման միտումները արդի պայմաններում (հայերեն) 171
Syuzanna Petrosyan. Analysis of Functioning and Development Trends of International Transit Routes of the Republic of Armenia Under Contemporary Conditions (in Armenian)
Сюзанна Петросян. Анализ функционирования и тенденции развития международных транзитных путей РА в современных условиях (на армянском)

Աստղիկ Փարսյան, Աննա Սարգսյան. ՀՀ զբոսաշրջության զարգացումները և դրա ազդեցության գնահատումը ՀՆԱ-ի վրա (հայերեն) 181
Astghik Parsyan, Anna Sargsyan. Tourism Development and Its Impact on Armenia's Economy (in Armenian)
Астхик Парсян, Анна Саргсян. Развитие туризма и его влияние на экономику Армении (на армянском)

Մարինե Մխիթարյան. Ինքնագնահատումը՝ որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման գործիքակազմ (հայերեն) 194
Marine Mkhitaryan. Self-Assessment as a Toolkit for Improving Local Self-Government Efficiency (in Armenian)
Марине Мхитарян. Самооценивание как инструмент повышения эффективности местного самоуправления (на армянском)

Կարապետ Մովսիսյան. Եկամտային հարկի հետվերադարձի նոր մոտեցում ՀՀ մարզերի համար (հայերեն) 205
Karapet Movsisyan. A New Approach to the Personal Income Tax Refund Mechanism for the Regions of the Republic of Armenia (in Armenian)

Карапет Мовсисян. Новый подход к механизму возврата подоходного налога для регионов Республики Армения (на армянском)

Անուշ Պետրոսյան. Հարկերի սահունության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում (հայերեն) 220
Anush Petrosyan. An Assessment of Tax Buoyancy in the Republic of Armenia (in Armenian)
Ануш Петросян. Оценка налоговой гибкости в Республике Армения (на армянском)

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները 230
The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH».....232
Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ» 233

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ. ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐ *

ՀՏԴ 94(4/9), 341.1/8 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-9*

ԷԼԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ
AUA-UCLA CW ծրագրի համակարգող, LLM, MA HRSJ,
փախստականների հարցերով փորձագետ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mkhitaryan.elina.m@gmail.com
ORCID: 0009-0003-5721-8166

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Արցախի բնիկ հայ բնակչության հարկադիր տեղահանության երկարաժամկետ հետևանքները՝ դիտարկելով դրանք որպես համայնքային ինքնությունը, հավաքական հիշողությունը, ոչ նյութական մշակութային ժառանգությունը խաթարող խորքային և շարունակական գործընթաց:

Հոդվածը կենտրոնանում է տեղահանության պայմաններում համայնքային կյանքի քայքայման, սերնդային հիշողության փոխանցման խզման, ոչ նյութական մշակութային պրակտիկաների վերարտադրության անհնարինության, ինքնության ու մշակութային իրավունքների սահմանափակման խնդիրների վրա:

Հոդվածը հիմնված է որակական հետազոտության մեթոդաբանությամբ դաշտային ուսումնասիրության արդյունքների վրա: Հետազոտությունն իրականացվել է փորձագետների հետ խորքային հարցազրույցների[1] (key informant - 3), տեղահանված արցախցիների հետ ֆոկուս խմբային քննարկումների[2] (Focus group - 5) և խորքային հարցազրույցների[3] (In-depth - 27) ձևաչափով՝ ընդգրկելով ընդհանուր 78 անձ: Հետազոտության ընթացքում կիրառվել են կառուցվածքային (semi-structured field-guides) դաշտային ուղեցույցներ և դիտարկումների գրանցման տեխնիկաներ (note-taking techniques): Տվյալների վերլուծությունն իրականացվել է դաշտային գրառումների բազմակի ընթերցման, առանցքային թեմաների կոդավորման և հետազոտական արդյունքների թեմատիկ խմբավորման միջոցով:

Որակական դաշտային հետազոտության արդյունքում ստացված տվյալները հարադրվել են փաստաթղթային ուսումնասիրության հետ՝ կիրառելով պատմահամեմատական և իրավական-դոկտրինալ վերլուծության մեթոդներ: Դաշտային դիտարկումները համեմատվել են փաստաթղթերի, միջազգային իրավական ակտերի, գիտական գրականության, հետազոտությունների հետ՝ օգտագործելով ընդհանուր գիտական՝ դիալեկտիկական և տրամաբանական, նաև հատուկ՝ պատմահամեմատական,

* Հոդվածը ներկայացվել է 01.10.2025թ., գրախոսվել՝ 17.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

[1] Մեջբերումներում՝ ՓԽՀ հապավմամբ:
[2] Մեջբերումներում՝ ՖԽՔ հապավմամբ:
[3] Մեջբերումներում՝ ԽՀ հապավմամբ:

վերլուծական մեթոդներ՝ բարձրացնելով հետազոտության արդյունքների վավերականությունը:

Հիմնաբառեր՝ *հարկադիր տեղահանություն, բնիկ ժողովուրդ, համայնքային ինքնություն, փախստականներ, ոչ նյութական մշակութային ժառանգություն, հավաքական հիշողություն, արցախահայ փախստականության ժառանգություն:*

Ներածական.
Հարկադիր տեղահանությունը որպես շարունակական գործընթաց

Պատերազմն օգտագործվում է որպես կանխամտածված ռազմավարություն (ICRC 63) ոչ միայն այս կամ այն տարածքի վրա վերահսկողություն ստանալու, այլև այդ տարածքը «մաքրելու» բնակվող էթնիկ հանրույթից: Պատերազմը լավագույն «փաթեթավորումն» է բնիկ ժողովրդի՝ ֆիզիկական և հոգևոր ներկայությունից ազատվելու գործընթացի համար. ռազմական գործողություններով սահուն քողարկում են ինչպես հարկադիր տեղահանությունը, այնպես և մշակութային ժառանգության ոչնչացումը կամ յուրացումը:

Ղարաբաղյան հակամարտության ռազմական բախումների ընթացքում 1988-2023 թվականներին Արցախի բնիկ հայ բնակչության նկատմամբ իրականացված բռնի տեղահանությունները չեն կարող դիտարկվել որպես իրավիճակային կամ ժամանակավոր երևույթ: Դրանք կազմել են երկարաժամկետ, քաղաքականապես ուղղորդված գործընթաց, որի նպատակն է եղել ոչ միայն բնակչության ֆիզիկական հեռացումը պատմական հայրենիքից, այլև այդ տարածքում ձևավորված համայնքային ինքնության, մշակութային ներկայության և պատմական հիշողության համակարգային խաթարումը: Այս համատեքստում հարկադիր տեղահանությունը հանդես է գալիս որպես էթնիկ մաքրման և մշակութային էկոհամակարգի քայքայման հիմնական մեխանիզմ: «Էթնիկ մաքրում» եզրույթը մշակվել է նախկին Հարավսլավիայի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ հանձնաժողովի կողմից՝ որպես քաղաքականապես կազմակերպված գործողություն, որի նպատակն է «տարածքը դարձնել էթնիկորեն միատարր՝ բռնի ուժի, ահաբեկման կամ ճնշման միջոցների կիրառմամբ» (UN 33-34):

Միջազգային փաստաթղթերում և դիվանագիտական հարթակներում բնակչության հարկադիր շարժը հաճախ բնորոշվում է «բռնի տեղահանում» (forced displacement), «զանգվածային տեղահանում» (mass displacement) կամ «հարկադիր փոխանցում» (forced transfer) եզրույթներով: Այս հոդվածում «հարկադիր տեղահանություն» եզրույթին զուգահեռ կիրառվում է «էթնիկ մաքրում» հասկացությունը, քանի որ Արցախի հայության նկատմամբ իրականացված գործողությունները իրենց բնույթով, կազմակերպվածությամբ և նպատակադրվածությամբ ամբողջությամբ համապատասխանում են այն չափորոշիչներին, որոնք ՄԱԿ-ի կողմից կիրառվել են նախկին Հարավսլավիայի հակամարտությունների պարագայում: Այս համատեքստում հարկադիր տեղահանությունը պետք է դիտարկել ոչ թե որպես ինքնուրույն և մեկուսի երևույթ, այլ որպես էթնիկ մաքրման գործընթացի առանցքային բաղադրիչներից և անմիջական հետևանքներից մեկը: Այն ներառում է ոչ միայն մարդկանց մշտական բնակության վայրերից բռնի հեռացումը և տարածքային կորստի փաստը, այլ նաև պատմական ինքնագիտակցման և հավաքական ինքնության խորը ճեղքումը: Այսինքն՝ տեղահանված համայնքի պարագայում հայրենիքի հետ ֆիզիկական կապի խզումը ներթափանցում է համայնքային ինքնության կառուցվածքի մեջ՝ ավերելով սերնդային, ծիսական, տարածքային և հոգևոր շարունակականության շղթաները: Այս ամենի արդյունքում ձևավորվում է փախստականի/տեղահանվածի «արմատախիլ արված ինքնության կառուցվածք» (uprooted identity structure) (Malkki 27-31), երբ

համայնքը փորձում է գոյատևել առանց իր ինքնությունը սնուցող մշակութային և տարածական հիմքերի: Հարկադիր տեղահանությունը այլևս չի ընկալվում որպես բացառապես մարդասիրական ճգնաժամ կամ սոցիալական հետևանք ունեցող իրավիճակ. այն ճանաչվում է որպես մարդու հիմնարար իրավունքների համակարգային խախտում:

Համայնքային ինքնության խաթարումը հարկադիր տեղահանության երկարաժամկետ հետևանքների համատեքստում

Հարկադիր տեղահանության պայմաններում արցախահայ համայնքը հայտնվել է տարածական սփռվածության իրավիճակում, երբ նախկինում «միասնական սոցիալական մարմին կազմող» մարդիկ ապաստանել են ՀՀ տարբեր բնակավայրերում (UNHCR, February 5, 2024), մարզերում (The Government of RA, 2023), լքել ՀՀ-ն՝ մեկնելով արտասահման (Շահվերդյան, 2024): Այս ցրվածությունը հիմնահատակ ավերել է համայնքային կյանքի կառուցվածքային հիմքերը՝ խզելով սոցիալական փոխգործակցության առօրյա ռիթմերը, ծիսակարգային պրակտիկաների համատեղ իրականացումը և այն համերաշխության մեխանիզմները, որոնց միջոցով համայնքը վերարտադրում է իր ինքնությունը (Turner 94-97): Տեղահանության հետևանքով ոչ միայն մարդիկ են հեռացվում հայրենի բնօրրանից-տարածքից, այլև տարածքն է հեռացվում, խլվում մարդկանցից: Հետևանքը՝ համայնքային ինքնության կլեվաժ՝ ճեղքում, խզում. խզվում են մարմնավորված հիշողությունների, ծեսերի, տարածքների, գերեզմանների, տեղանունների, սրբավայրերի, հողագործական ու անասնապահական ցիկլերի, լեզվամշակութային շերտերի, նախնիների հետ կապող անտեսանելի թելերը: Այս խզումը մշակութային մարդաբանությունը սահմանում է որպես «մշակութային էկոլոգիայի» (“cultural ecology”) քայքայում (Ingold 189): Մշակութային էկոլոգիան-էկոհամակարգը հիմնված է մշակույթի (հոգևոր-մշակութային բաղադրիչ), մարդու/համայնքի (սոցիալական բաղադրիչ) և միջավայրի (տարածքային ֆիզիկական միջավայր) փոխազդեցության վրա (Gunn 18-19). այն եռոտանի է, որի վրա խարսխվում է համայնքային ինքնությունն ու գոյությունը:

> *«Ամեն գիշեր մահացած հայրս է գալիս երազիս, նախատում է ինձ, որ այցելության չեմ գնում (արտասվում է)…Անգամ չկարողանաս գնաս ծաղիկ դնես, խոնարհվես ծնողիդ գերեզմանին… Դեռ 2020 թվականի պատերազմից հետո հիմնահատակ ավերել են մեր գյուղի դարավոր գերեզմանոցը: Իմ հոր կողքին հոր պապի ու նրա պապի գերեզմանաքարերն էին: Հոգեպես անդորր էր գալիս ամեն անգամ այցելելուց, մաքրելուց գերեզմանների շրջակայքը և նախապապիս տնկած ընկուզենու տակ նստած լացելուց հետո…»:*
>
> ՖԽՔ, 55 տ. տեղահանված կին, Արարատի մարզ

Համայնքը սոցիալական հարաբերությունների պարզ համախումբ չէ. այն ինքնության ձևավորման և վերարտադրության հիմնարար միջավայր է, որտեղ անհատական ինքնագիտակցումը կառուցվում է հավաքական փորձառության, սերնդային հիշողության և կրկնվող մշակութային պրակտիկաների միջոցով: Սոցիալական մարդաբանության և ինքնության տեսության մեջ համայնքը դիտարկվում է որպես այն հիմնական շրջանակը, որի ներսում են պահպանվում պատկանելության զգացումը, ծիսակարգային կյանքի շարունակականությունը և մշակութային նորմերի փոխանցման մեխանիզմները (Halbwachs 38-40):

Արցախահայության պարագայում համայնքային ինքնությունը ձևավորվել և դարեր շարունակ կենսունակ է եղել կոնկրետ տարածական միջավայրում՝ գյուղական

և քաղաքային «հարևանությունների», ազգակցական ու բարեկամական ցանցերի, հոգևոր կյանքի և հավաքական ծիսական պրակտիկաների փոխկապակցված համակարգի միջոցով: Յուրաքանչյուր էթնիկ համայնք, ինչպես և արցախահայերի համայնքը, հիմնված է յուրահատուկ «առասպել-խորհրդանիշային համալիրի» (*myth-symbol complex*) վրա, որը սրբավայրերի, գերեզմանների, հերոսական առասպելների, պատմական հիշողության, արժեքների, սոցիալական դերերի, ավանդույթների և մշակութային խորհրդանիշների մի ամբողջություն է. այն կապում է դրա անդամներին և նրանց տալիս է ինքնության ընդհանուր զգացում: Տարածք-հայրենիքի հետ կապվածությունը, սրբավայրերը, կոլեկտիվ հիշողությունները և խորհրդանիշները կազմում են այն հիմքը, որի վրա համայնքները, ապա և ազգերը կառուցում ու պահպանում են իրենց ինքնությունը (Anthony Smith 28-29): Մի կողմից հայրենիքի հետ կապի խզումը, մյուս կողմից Ադրբեջանի կողմից Արցախում հուշարձանների ու ծիսական տարածքների ոչնչացումն իրականում փլուզում են արցախահայության ինքնության հիմնասյուները:

Տեղահանված համայնքի ներսում ձևավորվում է «արմատախիլ արված ինքնության կառուցվածք», երբ անհատը շարունակում է նույնականացվել նախկին համայնքի և հայրենիքի հետ, սակայն այդ նույնականացումը զրկված է իր կենսական սոցիալական և տարածական միջավայրից: Այս հակասությունը՝ ինքնության պահպանման ցանկության և դրա իրականացման հնարավորությունների բացակայության միջև, տեղահանված համայնքի երկարաժամկետ փորձառության առանցքային հատկանիշներից մեկն է: Անհատը չի կարող լիարժեք ինքնություն ձևավորել առանց «համայնքային ճանաչման հորիզոնի» (Taylor 27-29), որը նրան տալիս է պատկանելության զգացողություն և արժևորում է կյանքի իմաստը:

> *«Այնտեղ ես տարիների վաստակած բարի համբավ ունեի՝ որպես լավագույն և սիրելի ուսուցիչ, որպես լավ հարևան, որպես հոգատար կոլեգա… Ընկեր X-յանի մեջ* (**Է.Մ**.-ազգանունը փակված է հետազոտության գաղտնիության պայմանով) *ամփոփված էր այս ամենը… Հիմա ով եմ ես, չկա ոչ մի ես… (արտասվում է):»*
>
> ԽՀ, 63 տ. տեղահանված կին, Կոտայքի մարզ

Նշենք նաև, որ համայնքային ինքնության պաշտպանությունը ժամանակակից միջազգային իրավունքում դիտարկվում է որպես մշակութային իրավունքների հիմնական բաղադրիչ: ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների դաշնագրի (ICCPR) 27-րդ հոդվածով, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածով (ICESCR, 1966), Բնիկ ժողովուրդների իրավունքների հռչակագրով (DRIP, 2007) պետությունները պարտավոր են ապահովել այնպիսի պայմաններ, որոնցում համայնքները կարող են պահպանել և զարգացնել իրենց մշակութային ինքնությունը: Սա նշանակում է՝ ոչ միայն չմիջամտել, այլ նաև պոզիտիվ պարտավորություն՝ ստեղծելու համայնքային կյանքի վերականգնման համար անհրաժեշտ սոցիալական և տարածական միջավայր: Համայնքի տարածական ցրվածությունը և կոմպակտ բնակեցման քաղաքականության բացակայությունը խոչընդոտում են համայնքային ինքնության պահպանմանը, իսկ հարկադիր տեղահանության երկարաժամկետ հետևանքները՝ դարձնում ոչ միայն սոցիալական, այլ նաև իրավական խնդիր:

Հավաքական հիշողության ճեղքումը որպես տեղահանության շարունակական հետևանք. Հուշասպանություն (memoricide)

Հարկադիր տեղահանության հետևանքները չեն սահմանափակվում համայնքային կյանքի սոցիալական կառուցվածքների խաթարմամբ. դրանք ուղղակիորեն ներթափանցում են հավաքական հիշողության և ոչ նյութական մշակութային ժառանգության վերարտադրության ոլորտ: Հավաքական հիշողությունը ձևավորվում ու պահպանում է կենսունակությունը այն սոցիալական շրջանակներում, որտեղ հիշողությունը մշտապես վերակազմավորվում է որպես փորձառություն, տարածական կայունություն (Halbwachs 39-40): Այդ շրջանակների խզումը տեղահանության ցրվածության պայմաններում հանգեցնում է հիշողության ապասոցիալականացման: Այսինքն՝ հիշողությունը զրկվում է սոցիալական միջավայրից և դադարում է գործել որպես համայնքային փոխգործակցության և ինքնության վերարտադրման մեխանիզմ: Համայնքի գոյությունը, համաձայն մշակութային հիշողության տեսության, պայմանավորված է «հիշողության կրողների» (lieux de mémoire)՝ սրբավայրերի, ավանդույթների, գերեզմանների, ծիսական վայրերի, պատմական տեղանունների պահպանությամբ (Assmann 37-38), ինչը էթնիկ խմբի գոյության և շարունակականության գրավականն է: Դրանց ոչնչացմամբ ջնջվում է պատմական հիշողությունը՝ որպես ինքնությանը ներսից սնուցող ուժ: Ադրբեջանական պետական քաղաքականությունը պատմական Արցախում պարունակում է «մշակութային մաքրազերծման և ջնջման» տարրեր**, որի վերաբերյալ մտահոգություն է հայտնել** ՄԱԿ-ի մշակութային իրավունքների հարցերով հատուկ զեկուցող Ալեքսանդրա Քսանթակին՝ Ադրբեջանին ուղղված հաղորդագրության մեջ արտահայտելով իր անհանգստությունը «…հայկական պատմական, մշակութային և կրոնական նշանակություն ունեցող վայրերի և առարկաների ոչնչացման և յուրացման շարունակական միտումների վերաբերյալ, որոնք ունեն կրոնական, պատմական և մշակութային նշանակություն» (Gazanchyan): Այստեղ թվարկվածները հանդիսանում են հուշասպանության (memoricide) երևույթի բաղադրիչներ: 1990-ականներին կիրառության մեջ դրված «memoricide»՝ «հուշասպանություն» եզրույթը, «հիշողությունների սպանություն» տերմինը, որը հաճախ վերագրվում է Միրկո Դրաժեն Գրմեկին, օգտագործվել է մշակութային հիշողության միտումնավոր ոչնչացումը նկարագրելու համար (Civallero 3): Այն **միջազգային իրավունքի առանձին կոդիֆիկացված հանցանք չէ**, համարվում է Էթնոցիդի / մշակութային ցեղասպանության բաղադրիչ և իր մեջ ներառում է հավաքական հիշողության համակարգային ոչնչացման մեխանիզմները.

1) **Ֆիզիկական ոչնչացում.** եկեղեցիների ու վանքերի քանդում, գերեզմանոցների ավերում, խաչքարների ոչնչացում: Արբանյակային պատկերների և դաշտային վավերագրերի ուսումնասիրության արդյունքում Caucasus Heritage Watch-ի հրապարակած զեկույցում փաստվում է, որ «վերջին մեկ տարվա ընթացքում» Արցախի տարածքում **75 %-ով աճել է լիովին կամ մասամբ ոչնչացված ժառանգության քանակը** (Adam Smith)**:** Զեկույցը ընդգծում է, որ ոչնչացումը համակարգված է՝ ներառելով ոչ միայն ենթակառուցվածքների ավերում, այլ նաև **«հիշողության ջնջում/ ժառանգության ջնջում»:**

2) **Պատմական գույքագրում (Historical revisionism).** հայկական հուշարձանները ներկայացվում են որպես «աղվանական»: Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության «աղվանացման» մեխանիզմները անթաքույց գործում են պետական երաշխավորմամբ (Պետրոսյան և Մուրադյան 45-47): 2022 թվականի փետրվարին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քերիմովը հայտարարել էր, որ ստեղծվել է «Աղվանքի պատմության ու ճարտարապետության աշխատանքային խումբ», որը իբր պետք է զբաղվի «աղվանական կրոնական տաճարներից հայերի գրած կեղծ հետքերը վերացնելու» հարցերով (EJC, 2025):

3) **Տարածքային հիշողության ջնջում. տեղանունների փոփոխություններ, քարտեզագրական վերաձևում: Համաձայն միջազգային փաստահավաք զեկույցների տվյալների՝ 2020 թվականից հետո Արցախում իրականացվածը տարածքային/տարածական հիշողության համակարգային ջնջում է:** Human Rights Network-ի տվյալներով «Ադրբեջանը ջնջել է հայկական տարածքային ներկայությունը՝ հեռացնելով հայկական տեղանուններն ու դրանք փոխարինելով պետականորեն հաստատված նոր անվանումներով» (UNFHR 132-133): Եվրոպական խորհրդարանը իր՝ 2022 թվականի մարտի 10-ի (2022/2582(RSP)) բանաձևում դա բնութագրել է որպես շարունակական և համակարգային քաղաքականությամբ «Լեռնային Ղարաբաղում պատմական հայկական մշակութային ներկայության գոյության վերացմանն» ուղղված «ոչ պատահական գործողություններ»: Համաձայն Center for Truth and Justice-ի վերջին ուսումնասիրության՝ Արցախի տարածքում «հայկական մշակութային վայրերը ենթարկվել են դիտավորյալ քարտեզագրական ջնջման. հայկական տեղանունները հեռացվել են պաշտոնական քարտեզներից, իսկ պատմական տարածքներին տրվել նոր ինքնություններ» (CFTJ 2025): Քարտեզագրական վերաձևման ակնառու օրինակն է այն փաստը, որ «Ադրբեջանը դադարեցրել է «Լեռնային Ղարաբաղ» անվանումն օգտագործելը և այժմ տարածաշրջանն անվանում է պարզապես «Ղարաբաղ»» (Kucera, 2021):

4) **Ուխտավայրերին/ծեսերի հասանելիության արգելում**. հայկական ուխտավայրեր այցելության անհնարինություն (2020թ. պատերազմից հետո զավթված տարածքներ, 2022-2023 շրջափակում, 2023թ. հարկադիր տեղահանումից հետո): Ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող Արցախի տարածքում հայ ուխտավորների մուտքը սրբավայրեր արգելվել է դեռևս 2020 թվականի պատերազմից հետո: Դեռ Ադրբեջանի զինված ուժերը 2021 թվականի ապրիլի 25-ին *«արգելափակել էին հայ ուխտավորների մուտքը Դադիվանք՝ կիրակնօրյա պատարագի և քահանա ձեռնադրության արարողության համար*, չնայած ռուս խաղաղապահների ուղեկցությանը» (Corley 2021): ԱՄՆ Պետքարտուղարության Կրոնական ազատության մասին զեկույցում նշվում է, որ Լաչինի միջանցքի՝ 2022 թվականի դեկտեմբերից սկսված և 2023 թվականի սեպտեմբերյան ռազմական էսկալացիայով խորացած շրջափակումը, ապա և դրանից հետո իրավիճակում «Է՛լ ավելի է սրել Արցախի հայերի՝ իրենց ժառանգությանը և մշակութային վայրերին հասանելիության պակասը». Արցախի հայերը զրկվել են «մշակութային կյանքին ազատ մասնակցելու իրավունքից, իրենց գաղափարներին և մշակութային պրակտիկաներին համապատասխան կյանք վարելու բնական իրավունքից» (IRF, 2022):

> *«Ամեն օգոստոսի, մատաղացու գառնուկին շալակած, բարձրանում էի մեր գյուղի գլխավերևում գտնվող Սուրբը՝ մատաղ անելու: Մատաղի միսը բաժանում էինք հարևաններին, սովորույթի համաձայն միշտ մի քիչ աղ էին լցնում՝ չգիտեմ որտեղից է գալիս այդ ավանդույթը, և վերադարձնում մեր ափսեն…Հուսով եմ ծառերը, թփերը ծածկել են մեր Սուրբը, որ նրանք (**Է.Մ**.-ադրբեջանցիները) չգտնեն, դա էլ չոչնչացնեն… »*
>
> ԽՀ, 50տ. տեղահանված տղամարդ, Արարատի մարզ

5) **Ժառանգության յուրացում.** եկեղեցիների ու վանքերի վերածում մզկիթների կամ «թանգարանների»: Ադրբեջանը կիրառում է «համակարգված և լայնածավալ ոչնչացման և յուրացման» քաղաքականություն՝ հայկական մշակութային արժեքներին վերագրելով ոչ հայկական ինքնություն: «Վերագրման» այսպիսի դրվագները դուրս են գալիս ժառանգության պարզ յուրացման սահմաններից. դրանք

ներկայացնում են ժառանգության նկատմամբ բռնության ընդլայնված ձև, որը չի սահմանափակվում միայն ջնջմամբ, այլ միտված է վերացնելու անգամ այն դատարկության «ուրվականային ներկայությունը», որը շարունակում է հետապնդել լքված տարածքները:

Արցախի տարածքում իրականացվող քաղաքականությունը չի սահմանափակվում միայն սրբավայրերի և հանրային նշանակության հուշարձանների ոչնչացմամբ: Վերջին տարիների ընթացքում արձանագրվել է բնակելի տների, գերեզմանների, գերեզմանոցների և առօրյա կյանքի հետ կապված կառույցների համակարգված ավերում, հատկապես այն դեպքերում, երբ այդ օբյեկտները կրում են 19-րդ դարի և ավելի վաղ ժամանակաշրջանների թվագրումներ: Այս ընտրովի ոչնչացումը միտված է վերացնելու Արցախի տարածքում հայերի ներկայության պատմական ապացույցները՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ձևավորումից շատ առաջ գոյություն ունեցած բնակեցման շերտերը: Միևնույն ժամանակ, այդ ավերումների մի մասը դիտավորյալ փաստագրվում և տարածվում է բաց աղբյուրներում՝ տեսագրությունների և լուսանկարների միջոցով, ինչը վերածվում է տեղեկատվական և հոգեբանական ազդեցության գործիքի: Այդ կերպ ոչ միայն ֆիզիկապես ջնջվում է նյութական միջավայրը, այլև խզվում է տեղահանված համայնքի հիշողության և նախկին կենսատարածքի միջև եղած մենտալ և հուզական կապը:

Եզրակացություն

Հարկադիր տեղահանությունն ու էթնիկ մաքրումը ժամանակակից հակամարտությունների համատեքստում պետք է դիտարկել ոչ միայն որպես բնակչության ֆիզիկական հեռացման կամ տարածքային վերահսկողության գործիքներ, այլ որպես երկարաժամկետ գործընթացներ՝ ուղղված համայնքների պատմական շարունակականության, ինքնության կառուցվածքների և հիշողության սոցիալական միջավայրերի համակարգային խաթարմանը: Հարկադիր տեղահանությունը ժամանակավոր ճգնաժամային վիճակ չէ միայն, այլ կայուն սոցիալական իրադրություն, որն աստիճանաբար վերաձևում է տեղահանվածի/փախստականի անհատական և հավաքական ինքնության կառուցվածքները (Zetter 176-178): Զինված հակամարտությունների կանխամտածված ռազմավարություն-ներից է հարկադիր տեղահանությունը (Տիգրանյան 358), որը, սակայն, շարունակվում է ռազմական գործողությունների ավարտից հետո և իր կուտակային հետևանքներով երբեմն նույնիսկ գերազանցում է պատերազմի արհավիրքներին: Հայրենիքից հարկադիր հեռացումը չի հանգեցնում պարզապես ֆիզիկական տեղաշարժի, այլ առաջացնում է համայնքային ինքնության այնպիսի վիճակ, որտեղ կորուստը դառնում է մշտական փորձառություն, իսկ վերադարձը՝ անընդհատ հետաձգվող հորիզոն (Said 173-186):

Սույն հոդվածը կենտրոնացել է այդ բազմաշերտ հետևանքների որոշ առանցքային դրսևորումների վրա՝ դիտարկելով համայնքային ինքնության խաթարումը և հիշողության նկատմամբ կիրառվող մեմորիցիդային պրակտիկաները՝ որպես փոխկապակցված գործընթացներ: Այդ դիտարկումները չեն հավակնում սպառել հարկադիր տեղահանության ազդեցությունների ամբողջությունը, այլ նպատակ ունեն լուսաբանելու այն մեխանիզմները, որոնց միջոցով տարածական խզումը, մշակութային միջավայրի ոչնչացումը և պատմական ներկայության համակարգված ջնջումը վերափոխվում են երկարաժամկետ գոյաբանական ճգնաժամի:

Արցախի հայության դեպքը ցույց է տալիս, որ հարկադիր տեղահանությունը չի կարող ընկալվել և գնահատվել բացառապես մարդասիրական արձագանքների կամ կարճաժամկետ աջակցության միջոցների շրջանակում: Այն պահանջում է

համապարփակ մոտեցում, որը միաժամանակ ներառում է մշակութային ժառանգության ու հիշողության, ինքնության և իրավունքների փոխկապակցված հարթությունները՝ բացահայտելով այն մեխանիզմները, որոնց միջոցով տեղահանված համայնքները փորձում են պահպանել իրենց պատմական շարունակականությունը տարածական խզման պայմաններում: Այս համատեքստում «փախստականության ժառանգություն» (refuge heritage) հասկացությունը թույլ է տալիս ձևակերպել և նկարագրել ոչ միայն կորուստը, այլ նաև այն մշակութային ռազմավարությունները, որոնց միջոցով տեղահանված համայնքները վերակառուցում են իրենց ինքնությունը, հիշողությունը և մշակութային ներկայությունը հարկադիր տեղահանության պայմաններում՝ մինչև վերադարձի իրավունքի իրացումը:

Եվ վերջապես, հարկադիր տեղահանության երկարաժամկետ հետևանքների ըմբռնումը ենթադրում է միջդիսցիպլինար մոտեցում, որը համադրում է պատմությունը, ազգագրությունը, սոցիալական մարդաբանությունը, մշակութային հիշողության ուսումնասիրությունները և միջազգային իրավունքը: Այդպիսի համադրության միջոցով հնարավոր է ձևակերպել այն գիտական և նորմատիվ հիմքերը, որոնց վրա կարող են կառուցվել համայնքապահպանության ռազմավարությունները՝ ուղղված ոչ միայն անցյալի սխալների գնահատմանը, կորուստների արձանագրմանը, այլև տեղահանված համայնքների ինքնության, մշակութային իրավունքների և վերադարձի հեռանկարների վերահիմաստավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Assmann, Jan. *Cultural Memory and Early Civilization*. Cambridge: Cambridge University Press, 2011.
2. CFTJ, Center For Truth and Justice. «The Deliberate and Systematic Erasure of Armenian Cultural and Religious Sites by Azerbaijan in 2024». 2025, https://www.cftjustice.org/the-deliberate-and-systematic-erasure-of-armenian-cultural-and-religious-sites-by-azerbaijan-in-2024/. Accessed: 11.01.2025
3. Civallero, Edgardo. «When Memory Is Turned into Ashes… Memoricide during the XX Century.» Academica, 2007.
4. Corley, Felix. “Azerbaijan blocks ordination in Armenian monastery”. *Forum 18 News Service, April 28, 2021*, Forum 18 News Service. https://www.forum18.org/archive.php?article_id=2654. Accessed: 29.09.2025.
5. DRIP. «United Nations General Assembly. United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples. GA Res. 61/295», 13 September 2007.
6. Gazanchyan, Siranush. *UN Special Rapporteur expresses concern over destruction and appropriation of Armenian historic and religious sites by Azerbaijan*. 1 December 2023. https://en.armradio.am/2023/12/01/un-special-rapporteur-expresses-concern-over-destruction-and-appropriation-of-armenian-historic-and-religious-sites-by-azerbaijan/. Accessed: 02.12.2025.
7. Goodman, S., Burke, S., Liebling, H., & Zasada, D. ““I can't go back because if I go back I would die”: How asylum seekers manage talk about returning home by highlighting the importance of safety”. *Journal of Community & Applied Social Psychology* 27.4, 2017, 312-323 pp.
8. Gunn, Mickael C. “Cultural Ecology: A Brief Overview”. *Nebraska Anthropologist* 5.149, 1980, 18-27 pp.
9. Halbwachs, Maurice. *On Collective Memory. Translated by Lewis A. Coser*, Chicago: University of Chicago Press, 1992.
10. ICCPR. “International Covenant on Civil and Political Rights”. 16 December 1966.
11. ICESCR. “International Covenant on Economic, Social and Cultural Rights”. General Assembly, 16 December 1966.

12. ICRC, International Committee of the Red Cross. “Displacement in Time of Armed Conflict: How International Humanitarian Law Protects in War and Why it Matters”. 2019.
13. Ingold, Tim. *The Perception of the Environment: Essays on Livelihood, Dwelling and Skill*. London and New York: Routledge, 2000.
14. IRF, U.S. State Department Office of International Religious Freedom. “Azerbaijan 2021 International Religious Freedom Report”. 2022, https://www.state.gov/wp-content/uploads/2022/04/AZERBAIJAN-2021-INTERNATIONAL-RELIGIOUS-FREEDOM-REPORT.pdf. Accessed: 30.11.2025
15. Kucera, Joshua. *Down with Nagorno-Karabakh - long live Karabakh*. 2 April 2021.
16. Malkki, Liisa H. *Purity and Exile: Violence, Memory, and National Cosmology Among Hutu Refugees in Tanzania*. Chicago: University of Chicago Press, 1995.
17. Nations, United. “Final Report of the Commission of Experts Established Pursuant to Security Council Resolution 780 (1992), S/1994/674”. May 27, 1994.
18. Said, Edward W. *Reflections on Exile*. Cambridge: Harvard University Press, 2000.
19. Smith, Adam. “Caucasus Heritage Watch, Monitoring Report #8 – 2025: Armenian Cultural Heritage in Nagorno-Karabakh”. 21 July 2025. 11 September 2025, https://caucasusheritage.cornell.edu/?p=1948&utm_source=chatgpt.com. Accessed: 03.12.2025.
20. Smith, Anthony D. *The Ethnic Origins of Nations*. Blackwell, 1986.
21. Taylor, Charles. *Sources of the Self: The Making of the Modern Identity*. Cambridge: Harvard University Press, 1989.
22. The Government of RA, Official News. *According to the latest data, the number of forcibly displaced people from Nagorno Karabakh*. Yerevan, 1, Sunday October 2023.
23. Turner, Victor. *The Ritual Process: Structure and Anti-Structure*. New York: Cornell University Press, 1969.
24. UNFHR, University Network for Human Rights. “We are no one: How Impunity for Three Years of Atrocities is Erasing Nagorno-Karabakh’s Armenians”. December, 2023. https://static1.squarespace.com/static/66a134337e960f229da81434/t/66f6df5f5edc4342fc0b34dd/1727455082457/We%2Bare%2BNo%2BOne_August%2B2024_compressed.pdf. Accessed: 15.12.2025.
25. UNHCR, UN High Commissioner for Refugees. “UNHCR Report on the Humanitarian Situation of Armenian Refugees from Nagorno-Karabakh”. February 5, 2024. Document: INTER-AGENCY OPERATIONAL UPDATE.
26. Thomas De Waal*, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, 1st publ. in paperback,* New York: New York Univ. Press, 2013.
27. Zetter, Roger. “More Labels, Fewer Refugees: Remaking the Refugee Label in an Era of Globalization”. *Journal of Refugee Studies* 2007, 172-191pp.
28. Շահվերդյան, Լիլիթ. *Քանի՞ արցախցի է հեռացել Հայաստանից սեպտեմբերից մինչ օրս*. 14 Ապրիլի, 2024, https://www.civilnet.am/news/771779.
29. Պետրոսյան Համլետ, Մուրադյան Հայկուհի. *Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում*. Երևան, 2022.
30. Տիգրանյան, Արմինե. *Լեռնային Ղարաբաղ. Մշակութային իարվունքների խախտումները բռնի տեղահանության համատեքստում*. Երևան, 2025.
31. EJC, Տնտեսական լրագրողների ակումբ. *Ռազմական հանցագործության «աղվանականացման» սրբագրումը*. 13 Հոկտեմբերի, 2025, https://www.ejc.am/hy/article/37569: Վերջին այց՝ 10.12.2025:

WORKS CITED

1. Shahverdyan, Lilit'. Qanի՞ arcaxci e' her'acel Hayastanic septemberic minch o'rs. [How many Artsakh residents have left Armenia since September? 14 April] 2024, (in Armenian).
2. Petrosyan Hamlet, Muradyan Haykuhi. Arcaxi mshakut'ayin jhar'angut'yuny' hard'akumneri t'iraxum. [Artsakh's cultural heritage under attack. Yerevan,] 2022, (in Armenian).
3. Tigranyan, Armine. Ler'nayin Gharabagh. Mshakut'ayin iarvunqneri xaxtumnery' br'ni teghahanut'yan hamateqstum. [Nagorno-Karabakh: Violations of Cultural Rights in the Context of Forced Displacement. Yerevan,] 2025, (in Armenian).
4. EJC, Tntesakan lragroghneri akumb. R'azmakan hancagorc'ut'yan «aghvanakanatsman» srbagrumy'. [EJC, Economic Journalists Club: Correcting the "Albanisation" of War Crimes. October 13] 2025, Available at: <https://www.ejc.am/hy/article/37569>, Accessed on: 10.12.2025, (in Armenian).

LONG-TERM CONSEQUENCES OF THE FORCED DISPLACEMENT OF ARTSAKH ARMENIANS: SOME ASPECTS

ELINA MKHITARYAN

AUA-UCLA CW Program Coordinator,
LLM, MA HRSJ, Refugee and Migration Expert,
Institute of History of the NAS of RA, Ph.D.Student
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to examine the long-term consequences of the forced displacement of the indigenous Armenian population of Artsakh, viewing them as a profound and continuous process that undermines community identity, collective memory, and intangible cultural heritage. The article focuses on the issues of the destruction of community life under conditions of displacement, the rupture of intergenerational transmission of memory, the impossibility of reproducing intangible cultural practices, and the restriction of identity-related and cultural rights.

The article is based on the results of a field study conducted using qualitative research methodology. The research was carried out through key informant interviews with experts (3), focus group discussions (5) and in-depth interviews (27) with displaced Armenians from Artsakh, covering a total of 78 participants. During the research process, semi-structured field guides and note-taking techniques were applied. Data analysis was conducted through repeated reading of field notes, coding of key thematic areas, and thematic grouping of research findings.

The data obtained from the qualitative field research were combined with documentary analysis through the application of historical-comparative and legal-doctrinal methods. Field observations were interpreted and compared with policy documents, international legal instruments, academic literature, and the results of similar studies, using general scientific dialectical and logical methods, as well as specific historical-comparative and analytical approaches, which contributed to enhancing the validity of the research findings.

Keywords: *forced displacement, indigenous peoples, community identity, refugees, intangible cultural heritage, collective memory, Artsakh Armenian refugee heritage.*

ДОЛГОСРОЧНЫЕ ПОСЛЕДСТВИЯ ПРИНУДИТЕЛЬНОГО ПЕРЕМЕЩЕНИЯ АРМЯН АРЦАХА: НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ

ЭЛИНА МХИТАРЯН
Соискатель в Институте истории НАН РА,
координатор программы CW AUA-UCLA,
магистр права (LLM), магистр программы «Права человека и социальная справедливость», эксперт по вопросам беженцев и миграции,
г. Ереван, Республика Армения

Целью настоящей статьи является изучение долгосрочных последствий принудительного перемещения коренного армянского населения Арцаха, рассматриваемый как глубинный и непрерывный процесс, подрывающий основы общинной идентичности, коллективной памяти и нематериального культурного наследия. В статье особое внимание уделяется разрушению общинной жизни в условиях перемещения, разрыву механизмов межпоколенческой передачи памяти, усложнению воспроизводства нематериальных культурных объектов, а также ограничению идентификационных и культурных прав.

Статья основана на результатах полевого исследования, проведённого с применением качественной методологии. Исследование осуществлялось в формате развернутых интервью с экспертами (key informant - 3), фокус-групповых обсуждений с перемещёнными армянами Арцаха (focus group - 5) и развернутыхинтервью (in-depth - 27), охватывая в общей сложности 78 участников. В ходе исследования применялись полуструктурированные полевые методы (semi-structured field-guides) и техники фиксации наблюдений (note-taking technique). Анализ данных осуществлялся путём многократного прочтения полевых записей, кодирования ключевых тематических направлений и тематической группировки результатов исследования.

Данные, полученные в результате качественного полевого исследования, были сопоставлены с результатами документального анализа с применением историко-сравнительных и правовых-доктринальных методов. Полевые наблюдения интерпретировались и сопоставлялись с политическими документами, международно-правовыми актами, научной литературой и результатами аналогичных исследований с использованием общенаучных диалектических и логических, а также специальных историко-сравнительных и аналитических методов, что способствовало повышению валидности результатов исследования.

Ключевые слова: *принудительное перемещение, коренные народы, общинная идентичность, беженцы, нематериальное культурное наследие, коллективная память, наследие армянских беженцев Арцаха.*

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ *

ՀՏԴ 930 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-20*

ԲԱԲԿԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի Հայաստանի
հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
babken.ghazaryan@ysu.am
ORCID: 0009-0002-1313-5599

Հոդվածի նպատակն է ներկայացնել հայերի տեղաբաշվածությունը Վրաստանի Թիֆլիսի գավառում և մայրաքաղաք Թիֆլիսում[1]: Հայերը Վրաստանում բնակություն են հաստատել վաղ միջնադարից սկսած, իսկ հետագա դարերում նրանց թվաքանակը գնալով մեծացել է: Այդ հանգամանքը պայմանավորված է Հայաստանի պետականության կորստով, ինչպես նաև օտար ասպատակություններով: Վրացիները, պահպանելով իրենց կիսանկախ պետականությունը, ապավինել են հայ բնակչության ներուժին: Արդեն 19-րդ դարից սկսած՝ Վրաստանի մի շարք քաղաքներում հայերը սկսում են կազմել բնակչության զգալի մասը: Արևելյան Վրաստանը մշտապես պատվար է եղել հայ ժողովրդի համար, օգնել է խուսափել օտար նվաճողների պատճառած արհավիրքներից: Այդ հանգամանքը պայմանավորված է Վրաստանի այդ հատվածի բարենպաստ աշխարհագրական պայմաններով ևս:

Սույն աշխատանքում ուսումնասիրել ենք հայ ժողովրդի տեղաբաշխվածությունը և ժողովրդագրական շարժընթացները Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում և Թիֆլիսի գավառում 1920-ական թվականներին: Այս հետազոտության խնդիրներն են՝

1. լուսաբանել հայ բնակչության ժողովրդագրական պատկերի փոփոխության պատճառներն ու միտումները.

2. ցույց տալ Վրաստանում պատմաժողովրդագրական իրավիճակը նախքան խորհրդային կարգերի հաստատումը.

3. պարզաբանել հայերի արտագաղթի պատճառները Վրաստանից:

Հայերի թիվը սկսում է աճ գրանցել արևելավրացական քաղաքներում, 19-րդ դարի վերջերից սկսած, երբ Ռուսական կայսրությունը թևակոխել էր կապիտալիստական զարգացման փուլ: Հետազոտությունը իրականացնելիս կիրառել ենք պատմահամեմատական, վերլուծական ինչպես նաև վիճակագրական մեթոդներ՝ նպատակ հետապնդելով ներկայացնելու օբյեկտիվ և անաչառ լուսաբանում ընտրված ժամանակաշրջանի և խնդրի առնչությամբ: Կատարած ուսումնասիրության համաձայն կարելի է պնդել, որ ըստ 1926 թվականի Համամիութենական մարդահամարի տվյալների՝ հայերը բնակվել են Թիֆլիսի գավառի բոլոր երեք խոշոր քաղաքներում և երեսունմեկ

---

* Հոդվածը ներկայացվել է 22.06.2025թ., գրախոսվել՝ 08.09.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

[1] Մինչև 1935 թվականը Թբիլիսին անվանել են Թիֆլիս, իսկ հայկական աղբյուրներում հիշատակվում է հիմնականում Տփղիս անվանումը, մանրամասն Տե՛ս, Կարապետյան Ս, Թիֆլիսի քաղաքագլուխները, Գիրք Ե, Երևան, 2003

գյուղական բնակավայրերում: Հոդվածում անդրադարձել ենք տվյալ բնակավայրերում հայերի տեղաբաշխվածությանը, վերլուծել ենք նրանց թվաքանակի աճի պատճառները, մայրենի լեզվի իրավիճակը՝ ըստ մարդահամարի տվյալների:

Հիմնաբառեր՝ *Արևելյան Վրաստան, Թիֆլիս, գավառ, նահանգ, խորհրդայնացում, հայություն, վրաց հասարակություն, Անդրֆեդերացիա, Ռուսական կայսրություն:*

Ներածություն

Թիֆլիսում և Վրաստանի արևելյան հատվածում հայերը բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից: Վրաստանում հայերի մասին տեղեկությունները հիշատակվում են ոչ միայն հայ հեղինակների, այլև օտար պատմիչների և ճանապարհորդողների կողմից: Համաձայն Առաքել Սյունեցու տեղեկության՝ VIդ. կեսերին Թիֆլիս է գալիս հայ իմաստասեր Դավիթ Անհաղթը, որը, հալածվելով Հայաստանում, ապաստան է գտնում Վրաստանում: Նա այստեղ ևս քարկոծվում է, ապա, մեկուսանալով «Գարեսջայի բազմալեռանց» անապատներում և արծարծելով «իմաստնոց արտաքնոց» (գարե սջա) ուսմունքը, իբրև միակ հայախոս անապատական ցմահ մնում է այստեղ: Հայերի ներգաղթը Թիֆլիս հատկապես ուժեղացավ Անիի կործանումից և Հայոց Բագրատունյաց թագավորության անկումից հետո (1045թ.): XII դարից Թիֆլիսը դարձավ վիրահայ թեմի առաջնորդանիստ քաղաք: XI-XIIդդ. վրաց թագավոր Դավիթ Շինարարը սիրով ընդունում էր հատկապես հայ առևտրականներին ու արհեստավորներին և բնակեցնում նրանց խոշոր քաղաքներում՝ հյուսիսային առևտրական մայրուղիների աշխուժացմանը և քաղաքային արհեստների զարգացմանը նպաստելու նպատակով: Հայ բնակչությունը նշանակալի ավանդ է ունեցել Վրաստանի կյանքում, մասնավորապես զարգացրել է այդ երկրի տնտեսությունը, արդյունաբերությունը, մշակույթը, վրաց ժողովրդի հետ կողք կողքի մարտնչել է օտար նվաճողների դեմ:

Աշխատանքի հետազոտության համար անհրաժեշտ է համակողմանի և օբյեկտիվ իրականացնել նախորդ հետազոտությունների, աղբյուրների և վիճակագրական տվյալների վերլուծություն: Սույն հետազոտության համար կարևոր աղբյուր է եղել (Кавказкий календарь 1913, 1914) վիճակագրական հանդեսը, որտեղ ընդգրկված են տարածաշրջանի վերաբերյալ ժողովրդագրական տվյալները և փոփոխությունները:Մինչ առաջին համամիութենական մարդահամարի իրականացումը հետոզոտության ուսումնասիրման համար օգտակար են եղել (Заря Востока) թերթի տվյալները, որտեղ ներկայացված է մինչև 1926 թվականի մարդահամարի տվյալները, իսկ հաջորդ երկու տարիների համարներում (Заря Востока 1922,1923,1924) նախապատրաստական աշխատանքները՝ 1926 թվականի համամիութենական մարդահամարի համար:

Հայերի տեղաբաշխվածությունը Արևելյան Վրաստանում 20-րդ դարի առաջին քառորդում (Թիֆլիսի նահանգ, Թիֆլիս քաղաք)

Միջնադարից հայերի դերակատարությունը Վրաստանում նկատելի է եղել: Վրաստանի թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին հարաբերություններում հայ ռազմաքաղաքական գործիչների մասնակցությունը անվիճելի իրողություն է, իսկ հայ բնակչության ներուժը վրաց պետության պահպանման, տնտեսական կյանքի առաջընթացի կարևոր գործոններից մեկն է եղել: Արդեն 19-րդ դարից սկսած՝ Վրաստանի քաղաքներում հայերը սկսում են զգալի ներկայություն և

դերակատարում ունենալ առևտրաարդյունաբերության ոլորտում և ձեռք են բերում քաղաքի բնակչի՝ «մոքալաքների» (მოქალაქე) դասի կազմում կարգավիճակ (Պետրոսյան 89): Վաղ ժամանակներում այդ պատվանունը տրվում էր Թբիլիսի և Գորիի այն բնակիչներին, որոնք ունեին հին ծագում, վճարում էին հատուկ հարկ (մաթխա) მათხა (Պետրոսյան 89):

Արևելյան Վրաստանը մշտապես պատվար է հանդիսացել հայ ժողովրդի համար. օգնել է խուսափել օտար նվաճողների պատճառած արհավիրքներից:

Ըստ ազգային պատկանելության՝ Թիֆլիսի բնակչությունը կազմել են վրացիները և հայերը: Դարեր ի վեր հայկական տարրը գերակշռել է Թիֆլիս քաղաքում: Հայերի բնակության մասին դեռևս 6-րդ դարից սկսած կան պատմական վկայություններ: Հետագայում Դավիթ 4-րդ Շինարարի (დავით მე-4 აღმაშენებელი) և Թամար թագուհու (თამარ მეფე) վարած քաղաքականության հետևանքով հայերի թիվը ստվարանում է Թիֆլիսիում: Այս քաղաքականությունը հետևանքն էր,քանի որ հայերը հմուտ արհեստավորներ էին և բանիմաց առևտրականներ: Հայերը պահպանել են իրենց ազգային նկարագիրը շնորհիվ նաև Հայ առաքելական եկեղեցու (այսուհետ ՀԱԵ): 1671 թվականին ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենը նշում է, որ Թիֆլիսի 14 եկեղեցիներից 8-ը եղել է հայկական (Իշխանեան, 147): Այսպիսով՝ կարող ենք նշել, որ մինչև 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը Թիֆլիսում հայերը պահպանել են իրենց մշակութային և դավանական դիմագիծը: 1886 թվականին Թիֆլիսի նահանգում հայերի թիվը կազմում էր 194. 131 մարդ (Իշխանեան 70), որոնց մեծամասնությունը Հայ առաքելական եկեղեցու հետևորդ էր, իսկ կաթոլիկ էր 16,173-ը: Դիտարկել նաև 1876 թվականի մարտի 25-ի և 1897 թվականի հունվարի 28-ի համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալները (Первая всеобщая перепись населения Российской Империи 1897, 1905): Ըստ 1876 թվականի տվյալների՝ Թիֆլիսի բնակչությունը կազմել է 91. 668 մարդ, իսկ 1897 թվականի՝ 146. 164 մարդ՝ առանց զինվորականների, որից հայ բնակչության թիվը կազմել է 47. 133 մարդ (Իշխանեան 70):

Ըստ 1897 թվականի առաջին համառուսաստանյան մարդահամարի՝ Թիֆլիսի նահանգում բնակվել է 196,189 մարդ (Իշխանեան, 70): Ուշագրավ է նաև, որ Թիֆլիսի նահանգի հասարակական-պետական ոլորտի ծառայություններում հայերը նույնպես զգալի ներկայություն են ապահովել (Ասոյան 102):

1913 թվականին Թիֆլիսի նահանգում բնակվում էր 389. 858 հայ, որից ՀԱԵ հետևորդ էր 348. 373-ը, 40. 648-ը՝ այլ դավանանքի՝ հիմնականում կաթոլիկ, իսկ 837-ը՝ ուղղափառ (Кавказкий календарь 1913,127):

Եթե դիտարկենք դավանաբանական պատկերը, ապա կարող ենք պնդել, որ հայ ժողովուրդը հիմնականում պահպանել էր իր դավանանքը՝ չնայած այն հանգամանքին, որ, դեռևս վաղ միջնադարից սկսած, վրաց պետականության հզորացման տարիներին մեծ է քաղքեդոնական ուղղությանը հարող հայերի թվաքանակը: Այս իրողությունները համադրելով՝ փաստում ենք, որ՝

• Հայերը, տեղափոխվելով Վրաստան, հիմնականում կարողացել են պահպանել իրենց դավանական ինքնությունը: Նույնը չենք կարող փաստել կախեթաբնակ հայերի մասին, որտեղ վրացականացման գործընթացը տվել էր իր պտուղները՝ լեզվի պահպանման, դավանական և ազգային ինքնագիտակցության համատեքստում:

• Վրաստանում ՀԱԵ-ն հսկայական ազդեցություն է թողել հայկական մշակույթի, դպրության և արվեստի զարգացման գործում:

• Հայաբնակ շրջաններում եկեղեցին կարողացել է պահպանել ազգային ինքնությունը և հենք է հանդիսացել Վրաստանի Առաջին Հանրապետության շրջանում հայ բնակչության կենսական շահերի իրականացման համար: Նկատի

ենք առնում Եկեղեցու դերը հայապահպանության և կրթամշակութային կյանքի կազմակերպման առումով:

1914 թվականի տվյալներով Թիֆլիսի նահանգում հայերի թիվը 394. 115 է, որից 350. 715-ը՝ ՀԱԵ հետևորդ, 42. 360-ը՝ այլ դավանանքի (հիմնականում կաթոլիկ), 1040-ը՝ ուղղափառ (Кавказкий календарь 1914, 243):

Եթե համեմատենք, մեկ տարվա կտրվածքով հայերի թվաքանակը ավելացել է 4257-ով: Այս աճը պայմանավորված էր Արևմտյան Հայաստանից և Արևելյան Հայաստանի մի շարք գավառներից բնակչության տեղաշարժով, որի գլխավոր գործոնը Առաջին համաշխարհային պատերազմն էր և ռազմաճակատից հեռու գտնվելու օրախնդիրը:

Աղյուսակ №1
Թիֆլիս նահանգի կազմում ընդգրկված Թիֆլիս գավառի հայ բնակչության թվաքանակը ներկայացված է հետևյալ աղյուսակում՝

Թիֆլիսի գավառ	1886 թ.	հայեր - 11. 944
Թիֆլիսի գավառ	1897 թ.	հայեր - 64. 008
Թիֆլիսի գավառ	1913 թ.	հայեր - 157. 935

1917 թվականին անցկացված մարդահամարի տվյալներով Թիֆլիս քաղաքի առկա բնակչությունը կազմել է 231. 141 մարդ: Եթե դիտարկենք, ապա 1913 թվականի համեմատ քաղաքի բնակչությունը պակասել է: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Թիֆլիսի բնակչությունը պակասել է 25. 807 մարդով կամ 9. 9 տոկոսով: Սակայն որքանո՞վ են արժանահավատ այս տվյալները : Եթե վերլուծենք և վեր հանենք, թե որքան է եղել քաղաքի բնական աճը, ապա պետք է պարզաբանենք, թե ինչ իրավիճակ էր 1917 թվականին Այսրկովկասում: Պատերազմական իրավիճակում իրականացված հարցումները չեն կարող արժանահավատ լինել: Ըստ այդմ՝ 1917 թվականին իրականացված մարդահամարը, որպես կանոն, ծառայել է տեղական իշխանությունների շահերին և կրել է ժամանակի հրամայականի առանձնահատկությունները: Հայ բնակչության նվազումը պայմանավորված էր տղամարդկանց ռազմաճակատում զոհվելու հանգամանքով, մահացու վարակիչ հիվանդություններով և այլն:

1918 թվականին Վրաստանի անկախության հռչակումից հետո 400 հազար հայեր (որից մոտ 100 հազարը՝ վրացախոս) հայտնվեցին Հայաստանի հյուսիսային հարևանի սահմաններում (Վարդանյան 35): Հայոց ցեղասպանությունը, թուրքական արշավանքները Այսրկովկաս ստիպեցին հայերին ապաստան գտնել Վրաստանում (Մելքոնյան 266-276): Ապաստան գտած հայ գաղթականները իրենց կենսական շահերը փորձում էին գտնել Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ) ջանքերի շնորհիվ (Մայիլյան 68): 1918 թվականի հունիս-նոյեմբեր ամիսներին Բակուրիանի անտառներում սովից և համաճարակներից զոհվեց 18 հազար մարդ (Մայիլյան 68):

1918 թվականին տեղի ունեցած հայ-վրացական կարճատև պատերազմից հետո՝ մինչև 1921 թվականը, վրաց իշխանությունները ջանում էին այնպիսի քաղաքականություն վարել, որ հայ բնակչության թվաքանակը չավելանա:

Այս քաղաքականությունը կարող ենք բացատրել, հետևյալ գործոններով.

- Անկախության շրջանում հայ-վրացական հարաբերությունները սկզբնական շրջանում ունեին լարված բնույթ: Դա բացատրվում էր Լոռու և Ախալքալաքի տարածքային խնդիրներով:

- Առկա էր Այսրկովկասի գույքի ժառանգության բաժանման խնդիր, որտեղ վրացիները ցանկանում էին տիրանալ ամբողջ ունեցվածքին՝ համարելով իրենց Անդրկովկասյան հանրապետության իրավահաջորդը:
- Վրաց իրականության մեջ զարթոնք էր ապրում ազգայնականությունը՝ երբեմն ծայրահեղ դրսևորումներով:

Փաստերի համադրությունը վկայում է, որ 1918-1921 թվականներին վրաց իշխանությունները ոչ միայն տագնապում էին հայերի ունեցած նպաստավոր տնտեսական կարգավիճակից, այլև անբարյացակամ վերաբերմունք ունեին հայերի թվի ավելացման նկատմամբ, քանի որ վտանգ էին զգում՝ իրենց ազգային շահերից ելնելով: Հենց այս հանգամանքները ստիպեցին հայ բնակչությանը արտագաղթել Վրաստանից: Եվս մեկ կարևոր հանգամանք էր, որ արդեն մարդահամարներում վրացախոս հայերին և քաղքեդոնական դավանանքին պատկանող հայերին նշում էին որպես վրացի: Այս գործելաոճը առկա էր նաև Ցարական Ռուսաստանի իրականացրած մարդահամարներում, մասնավորապես Թիֆլիսի նահանգի Գորու շրջանում վրացախոս հայերին և քաղքեդոնական եկեղեցու հետևորդներին որպես ազգություն նշված էր վրացի (Սարգսյան 10-11):

Խորհրդային իշխանության հաստատումով փոխվեց վերաբերմունքը հայ և մնացյալ այլ ժողովուրդների նկատմամբ: Սոցիալիստական համակարգը առաջնորդվում էր միասնական և եղբայրական ժողովուրդների համախմբման, ինտերնացիոնալ բարեկամության գաղափարախոսությամբ:

Հայերի տեղաբաշխվածությունը Թիֆլիս քաղաքում և Թիֆլիսի գավառում՝ ըստ Համամիութենական 1926 թվականի մարդահամարի տվյալների

1926 թվականին իրականացվեց առաջին համամիութենական մարդահամարը: Ըստ այդ մարդահամարի տվյալների՝ Վրաստանի բնակչությունը կազմել է 2. 666. 494 մարդ (ՐԳԲ 12): Համաձայն 1926 թվականի մարդահամարի տվյալների՝ հայերի թվաքանակը հասել է 307. 018-ի: Դիտարկելով հայ բնակչության տեղաբաշխվածությունը՝ կարող ենք փաստել, որ հայերը գերազանցապես քաղաքաբնակ էին: Մասնավորապես Գորիում, ըստ 1926 թվականի մարդահամարի տվյալների, հայերի թիվը հասնում է 25. 341 մարդու, Թելավում՝ 9,135, Բաթումում՝ 10,233, Սղնախում՝ 12,181 (ՐԳԲ 84-88):

Հայերի թիվը Թիֆլիսի գավառում 1926 թվականի տվյալներով կազմել է 128. 745 մարդ, որից 63. 641-ը տղամարդ, իսկ 65. 104-ը՝ կին: Թիֆլիս քաղաքում հայերի թվաքանակը 1926 թվականին կազմել է 100. 148 մարդ, որից 48. 983-ը՝ տղամարդ, իսկ 51. 165-ը՝ կին: Թիֆլիս քաղաքում վրացիների թիվը տվյալ ժամանակահատվածում կազմել է 112. 206 մարդ, որից 58. 247-ը տղամարդ, իսկ 53. 959-ը՝ կին:

Աղյուսակ №2
Թիֆլիսի բնակչությունը՝ ըստ 1926 թվականի Համամիութենական մարդահամարի տվյալների

Թիֆլիս քաղաք	Ընդհ. բնակչ.	հայեր	վրացիներ
	291. 455 մարդ	100. 148 մարդ	112. 206 մարդ

Մարդահամարի տվյալներով վրաց բնակչության կազմում ընդգրկվել են նաև աջարները, մեգրելները, լազերը և սվանները:

Ի տարբերություն Վրաստանի այլ բնակավայրերի՝ Թիֆլիս քաղաքում հայերը պահպանել են իրենց մայրենի լեզուն, ինչպես նաև հաղորդակցվել են և՛ վրացերենով, և՛ ռուսերենով: Այսպես՝ հիշյալ ժամանակահատվածում հայերենը իր միակ մայրենի լեզուն համարել է շուրջ 80. 321 մարդ, որից 39. 461-ը տղամարդ, իսկ 40. 860-ը կին: Վրացերենը իր մայրենին համարել է 14. 949-ը, որից 7156-ը տղամարդ, իսկ 7793-ը՝ կին, իսկ ռուսները՝ 4690 մարդ, որից 2286-ը տղամարդ, իսկ 2404-ը՝ կին (РГБ 35-88): Վերլուծելով փաստերը՝ պարզում ենք, որ Թիֆլիսում հայերենին տիրապետել է հայ բնակչության 80. 2 տոկոսը: Դա պայմանավորում ենք հայկական դպրոցների և վարժարանների գործունեությամբ, ՀԱԵ դարավոր ներկայությամբ:

Թիֆլիս քաղաքում, ըստ մարդահամարի տվյալների, իրեն գրագետ է համարել շուրջ 55. 451 մարդ, որից 29. 465-ը տղամարդ, իսկ 25. 986-ը՝ կին: Երկար տասնամյակներ լինելով Կովկասի քաղաքական և մշակութային մայրաքաղաքը՝ Թիֆլիսում մշտապես եղել է հայերի ներգաղթ, որը ունեցել է տարբեր սոցիալ-տնտեսական և անվտանգային շարժառիթներ:

Համեմատելով հայերի և վրացիների բնակչության աճը՝ կարող ենք եզրահանգել, որ Թիֆլիս քաղաքում հայերը կազմել են երկրորդ ազգային էթնիկ բնակչությունը և 307. 018 մարդուց միայն Թիֆլիսում բնակվել է հայ բնակչության 1/3-ը: 1926 թվականի տվյալներով Անդրֆեդերացիայի Հանրապետությունում հայերենին տիրապետել է 1. 251. 012 մարդ: Այս տվյալները չեն փաստում, որ ամբողջ Վրաստանում հայերը պահպանել էին իրենց դավանանքը և մայրենի լեզուն: Որպես օրինակ կարող ենք ներկայացնել Արևելյան Վրաստանի Կախեթի շրջանը, ուր կային բազմաթիվ մարտահրավերներ: Խորհրդային իշխանությունների կողմից իրականացված քաղաքականության հետևանքով հայերը դարձել էին կամ ամբողջությամբ վրացախոս, կա՛մ ռուսախոս և վրացախոս (Կարապետյան 14-17):

Տվյալ աղյուսակից կարող ենք եզրակացնել, որ հայ բնակչությունը Թիֆլիսի գավառի բոլոր գյուղերում ունեցել ներկայություն, բացառություն է Արթանի գյուղը: Հայ բնակչությունը զգալի է եղել Աղբուլաղ, Ասուրեթի, Աշկալա, Ձեմո-Ծալկա և Քվեմո-Ծալկա բնակավայրերում: Այս բնակավայրերը նաև առանձնահատուկ են նրանով, որ հայ բնակչությունը պահպանել է իր մայրենի լեզուն, իսկ մնացյալ բնակավայրերում դարձել է վրացախոս, կամ ռուսախոս: Օրինակ Ձեմո-Ծալկայում, ըստ մարդահամարի տվյալների, հայերին տիրապել է ամբողջ հայ բնակչությունը, իսկ Մցխեթ քաղաքում հայերեն ընդհանուր 330 բնակչից ոչ մեկը չի տիրապետել: Իհարկե, այս փաստերը խոսում են Թիֆլիսի գավառում առկա կրթական և դավանաբանական խնդիրների մասին,որը նախորդ տասնամյակներում վարած քաղաքականության արդյունք էր:

Այնուամենայնիվ, հայ բնակչության՝ խորհրդային տարիներին գրանցած աճը մենք մասամբ պայմանավորում ենք խորհրդային իշխանությունների վարած եղբայրակասիրության, ժողովուրդների համերաշխության քարոզի հետևանքով: Իրականում 1930-ական թվականների սկզբին ակնհայտ էր արդեն, որ դա այսպես ասած մտրակի և բլիթի քաղաքականություն էր: Գուցե հայ բնակչությունը աճում էր 1920-ական թվականներին, սակայն դավանական, մայրենի լեզվի պահպանման, սոցիալ-տնտեսական առումով կային բազում մարտահրավերներ: Եկեղեցիների, թատրոնների և մշակութային օջախների կազմաքանդումը իր հետևանքը թողեց ամբողջ խորհրդային իշխանության տարիներին, որի հետևանքով ամբողջ Վրաստանում և մայրաքաղաք Թիֆլիսում հայերի թիվը սկսեց փոքրանալ:

Աղյուսակ №3

Հայ բնակչության թվակազմը Թիֆլիս գավառի քաղաքներում և գյուղերում՝ ըստ 1926 թվականի Համամիութենական մարդահամարի տվյալների

Հ/Հ	Բնակավայր	Հայերի ընդհ. թիվ	Արական բնակչ	Իգական բնակչ
1.	Մանգլիս ավան(մանգլისი)	318	157	161
2.	Մցխեթ քաղաք(მცხეთა)	330	165	165
3.	Ավչալա(ავჩალა)	530	283	247
4.	Աղբուլաղ(აღბულაღ)	4916	2574	2342
5.	Աղթաղլյա(აღთაღლია)	64	35	29
6.	Արթանի(ართანი)	-	-	-
7.	Ասուրեթի(ასურეთი)	2515	1299	1216
8.	Աշկալա(აშკალა)	3291	1620	1671
9.	Բոգվի(ბოგვი)	1257	661	596
10.	Գոմբորի(გომბორი)	23	16	7
11.	Դիգոմի(დიგომი)	396	213	183
12.	Դումանիսի(დუმანისი)	460	238	222
13.	Ձեմո-Էրցո(ზემო-ერცო)	9	13	6
14.	Ձեմո-Թիանեթի(ზემო-თიანეთი)	6	4	2
15.	Ձեմո-Ծալկա(ზემო-წალკა)	4435	2194	2241
16.	Իրագա(ირაგა)	5	2	3
17.	Կարայազի(კარაიაზი)	169	108	61
18	Քվեմո-Էրցո(ქვემო-ერცო)	6	3	3
19.	Քվեմո-Թիանեթի(ქვემო-თიანეთი)	52	26	26
20.	Քվեմո-Ծալկա(ქვემო-წალკა)	1814	856	958
21.	Մանավի(მანავი)	532	274	258
22.	Մանգլիսի(მანგლისი)	923	471	452
23.	Մարտկոպի(მარტკოპი)	63	31	32
24.	Մցխեթա(მცხეთა)	30	20	10
25.	Նորիյո(ნორიო)	81	46	35
26.	Պատարձեուլի(პატარძეული)	5	2	3
27.	Պրիյուտ(პრიუტ)	71	56	15
28.	Սագարեջո(საგარეჯო)	833	426	407
29.	Սարտիչալա(სარტიჩალა)	88	56	32
30.	Թելեթի(თელეთი)	2538	1305	1233
31.	Թրիալեթ(თრიალეთი)	25	15	10
32.	Ծավկիսի(წაკვისი)	1484	779	705
33.	Ցխնեթի(ცხნეთი)	1318	710	608
	Ընդհանուր	28. 597	14. 658	13. 939[1]

[1] РГБ, Всесоюзная перепись населения 1926 года, т. 14, С.С.Р. Грузия, 35-88:

Եզրահանգումներ

Այսպիսով՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները՝

- Թիֆլիսի նահանգում հայ ազգաբնակչությունը աճել է 1886-1897 թվականներին
- Թիֆլիս քաղաքում բնակչությունը սկսել է որոշ չափով ավելանալ Վրաստանի խորհրդայնացումից հետո
- Վրաստանը 1918-1921 թվականներին էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ վարում էր ազգային քաղաքականություն,որը կրթամշակութային կյանքում շարունակվեց նաև խորհրդային կարգեր հաստատելուց հետո:
- Նախքան Վրաստանի խորհրդայնացումը վրաց իշխանությունները վարել են որոշ դեպքերում հակահայ քաղաքականություն, որը պայմանավորված էր հիշյալ ժամանակահատվածում երկու երկրների միջև առկա տարածքային խնդիրներով և վրաց իշխանությունների վարած ազգային քաղաքականությամբ:
- 1920-ական թվականներից սկսած՝ Թիֆլիս քաղաքի բնակչության գրեթե կեսը կազմել են հայերը:
- 1926 թվականի մարդահամարի տվյալների համաձայն՝ Թիֆլիս քաղաքում վրացիները կազմել են 112. 206 մարդ կամ 38. 1%, հայերը 100,148 մարդ կամ 34,1%, ռուսները 45,937 մարդ կամ 15,6%: Հիշյալ տվյալները ակնհայտորեն ցույց են տալիս, որ քաղաքի ընդհանուր բնակչությունը կազմել է 291,455 մարդ[1]: Հիշյալ տվյալներն ակնհայտորեն ցույց են տալիս,որ մայրաքաղաքի բնակչության կեսից ավելին հայերն էին, որոնք կարևոր դերակատարություն ունեին սոցիալ-տնտեսական,հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում
- Ի տարբերություն Թիֆլիսի գավառի գյուղական բնակավայրերի՝ մայրաքաղաքում գրագիտության աստիճանը և մայրենիին տիրապետելու աստիճանը խիստ տարբերվում է հիշյալ ժամանակահատվածում:
- Խորհրդային իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով հայ բնակչությունը հանդիպում է խնդիրների՝ դավանական և կրթամշակութային դիմագիծը պահելու առումով:
- Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Վրաստանում փակվել են հայկական դպրոցներ և եկեղեցիներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Ասոյան, Լիլիթ. «Հայերի տեղաբաշխումը և աճը Անդրկովկասում. ըստ 1897 թվականի համառուսաստանյան մարդահամարի տվյալների». *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան 2003, թիվ 3,102 էջ:
2. Իշխանեան, Բախշի. *Վիճակագրական ուսումնասիրութիւն Անդրկովկասեան ժողովուրդների*. Բագու,1919:
3. Կարապետյան, Սամվել. *Թիֆլիսի քաղաքագլուխները*. Երևան, 2003, թիվ 5:
4. Կարապետյան, Սամվել. *Հայերը Կախեթում*. Երևան, 2004, թիվ 8:
5. Մայիլյան, Բենիամին. «Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918թ. օգոստոս-1921թ. փետրվար)», *Պատմա-բանասիրական հանդես,* Երևան, 2011, թիվ 1, 61-82 էջ:
6. Մելքոնյան, Աշոտ. *Ջավախքը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին քառորդին*, Երևան, 2003:

[1] РГБ, Всесоюзная перепись населения 1926 года, т. 14,216-242)

7. Պետրոսյան, Արամ. «Մոքալաքեները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում». *«Լրաբեր հասարակական գիտությունների»,* Երևան, 1966, թիվ 12, էջ 89-99:

8. Վարդանյան, Թամարա. «Թիֆլիսի և մերձակա բնակավայրերի հայության պատմությունը 5-21-րդ դարեր», *Գլոբուս վերլուծական հանդես*, Երևան, 2014, թիվ 8-9,109:

9. Սարգսյան, Վահե. «Հայերը Գորիի գավառում և սահմանակից շրջաններում». *Գլոբուս վերլուծական հանդես,* Երևան, 2013, թիվ 10(43):

10. *Кавказкий календарь*. 1913.

11. *Кавказкий календарь*. 1914.

12. «Всесоюзная перепись населения 1926 года». *РГБ,* т. 14.

13. *Заря Востока.* (N 139), 01.12.1922.

14. *Заря Востока.* (N 146), 12.12.1922.

15. *Заря Востока.* (N 161-163), 27-29.12.1922.

16. *Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г.* Тифлис, 1983.

17. *Первая всеобщая перепись населения Российской Империи*. 1897 г., издание ЦСК МВД, LXIX, Тифлисская Губерния, С.Пб., 1905.

WORKS CITED

1. Asoyan Lilit, Hayeri teghabashkhumy ev achy Aysrkovkasum, yst 1897 tvakani hamarusastanyan mardahamari tvyalneri, *[The Settlement and Growth of Armenians in Transcaucasia According to the Data of the 1897 All-Russian Census]* (Lraber hasarakakan gitutyunneri*), Erevan, 2003, t'iv3, 102 ej. (in Armenian)*

2. Ishkhanean Bakhsh, Vichakagrakan usumnasirutyun Andrkovkasean zhoghovurdneri [Statistical Study of the Peoples of Transcaucasia], Bagu,1919. *(in Armenian)*

3. Karapetyan Samvel, Tiflisi qaghaqaglukhnery [Mayors of Tbilisi], Yerevan, 2003. *(in Armenian)*

4. Karapetyan Samvel, Hayery Kakhetum, [Armenians in Kakheti], Yerevan, 2004. *(in Armenian)*

5. Mayilyan Beniamin, Vrastani Hayots Azgayin khorhrdi gortsuneutyan patmutyunic(1918 tvakani ogostos- 1921 tvakani petrvar) // Patma-banasirakan handes// [*From the history of the Armenian National Council of Georgia (August 1918-February 1921), Historical-philological journal], Yerevan, 2011, No. 1, 61-82pp. (in Armenian)*

6. Melkonyan Ashot, Javakhqy 19-rd dari verjin ev 20-rd dari arajin qarordin [J*avakhk in the late 19th and first quarter of the 20th century], Yerevan, 2003. (in Armenian)*

7. Petrosyan Aram. Moqalaqnery hay-vratsakan tntesakan-qaghaqakan haraberutyunnerum (Lraber hasarakakan gitutyunneri) *[Mokalaki in Armenian-Georgian Economic-Political Relations, "Lraber of social sciences], Yerevan, 1966, No. 12,11pp. (in Armenian)*

8. Vardanyan Tamara, Tiflisi ev merdzaka bnakavayreri bnakchutyuny 5-21-rd darer,(Globus verlutsakan handes) *[The History of the Armenians of Tbilisi and Nearby Settlements, 5th-21st Centuries], «Globus Analytical Journal», Yerevan, 2014, No. 8-9,109 pp. (in Armenian)*

9. Sargsyan, Vahe. Hayery Gorii gavrum ev sahmanakits shrjannerum(globusl verlutsakan kentron) [Armenians in Gori province and bordering regions] «Globus Analytical Journal», Yerevan, 2013, No. 10(43). *(in Armenian)*

10. Kavkazskiy calendar 1913: [*Caucasian calendar 1913*]. (in Russian)
11. Kavkazskiy calendar 1914: [*Caucasian calendar 1914]*. (in Russian)
12. RGB, Vsesoyuzniy perepis naseleniya 1926. Tom 14: *RSL, [All-Union Population Census of 1926], vol. 14.* (in Russian)
13. Zarya Vostoka (N 139), 01.12.1922. (in Russian)
14. Zarya Vostoka (N 146), 12.12.1922. (in Russian)
15. Zarya Vostoka **(**N 161-163), 27-29.12.1922. (in Russian)
16. Svod statisticheskikh dannikh o naseleniya Zakavkazskovo kraya, izvlechennikh iz posemeynikh spiskov 1886 god, [Collection of Statistical Data on the Population of the Transcaucasian Region, Extracted from Family Lists of 1886], Tiflis, 1983 (in Russian)
17. Pervaya vseobsheya perepic naselenie Rossiskoy Imperii, 1897 god, izdanie TSSK, MVD, LKHIKH, Tiflisskaya guberniya,C.PB.,1905// [The First General Census of the Russian Empire], 1897, published by the Central Statistical Committee of the Ministry of Internal Affairs, LXIX. Tiflis Province, St. Petersburg, 1905. (in Russian)

DISTRIBUTION OF ARMENIANS IN TIFLIS UEZD AND THE CITY OF TIFLIS IN THE 1920-S

BABKEN GHAZARYAN
Yerevan State University, Department of History,
Chair of History of Adjacent Countries of Armenia,
Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The aim of the article is to present the distribution of Armenians in the Georgian Tiflis province and the capital Tiflis. Armenians have settled in Georgia since the early Middle Ages, and in subsequent centuries their number has gradually increased. This circumstance was conditioned by the loss of statehood as well as by foreign invasions. While maintaining their semi-independent statehood, Georgians have firmly relied on the potential of the Armenian population. Already since the 19th century, Armenians have begun to make up a significant part of the population in a number of Georgian cities. Eastern Georgia has always been a refuge for the Armenian people from the disasters caused by foreign invaders. This circumstance is also due to the favorable geographical conditions of that part of Georgia. In this article, we will examine the distribution of the Armenian people and demographic trends in the Georgian capital Tiflis and the Tiflis province in the 1920s. The objectives of this study are:

1. to demonstrate the causes and trends of the increase or decrease in the number of Armenians.

2. to show the historical-demographic situation before the establishment of Soviet rule in Georgia,

3. to identify and determine the causes of Armenian emigration from Georgia. The number of Armenians began to grow in East European cities from the end of the 19th century, when the Russian Empire entered the stage of capitalist development. During the study historical-comparative, analytical, as well as statistical theory methods were used with the aim of presenting an objective and unbiased coverage of the selected period and problem. According to the conducted study, it can be asserted that, based on the data of the 1926 All-Union Census, Armenians resided in all three major cities of Tiflis Province and in thirty-one rural settlements. In the article, we have addressed the

distribution of Armenians in these settlements, analyzed the reasons for the growth of their number, and the situation of the native language according to census data.

Keywords*: Eastern Georgia, Tiflis, uezd, state, sovietization, Armenians, Georgian society, Inter-Federation, Russian Empire*.

РАССЕЛЕНИЕ АРМЯН В ТИФЛИССКОМ УЕЗДЕ И В ГОРОДЕ ТИФЛИС В 1920-Е ГОДЫ

БАБКЕН КАЗАРЯН
соискатель кафедры истории сопредельных с Арменией стран исторического факультета Ереванского государственного университета, г. Ереван, Республика Армения

Цель статьи – представить расселение армян в грузинской Тифлисской области и столичном Тифлисе. Армяне обосновались в Грузии с раннего Средневековья, и в последующие столетия их численность постепенно увеличивалась. Это обстоятельство обусловлено утратой собственной государственности, а также иностранными экспансиями. Сохраняя свою полунезависимую государственность, грузины твердо полагались на потенциал армянского населения. Уже с XIX века армяне стали составлять значительную часть населения в ряде грузинских городов. Восточная Грузия всегда была убежищем для армянского народа от бедствий, причиняемых иностранными захватчиками. Это обусловлено также благоприятными географическими условиями этой части Грузии. В данной статье мы рассмотрим распределение армянского населения и демографические тенденции в грузинской столице Тифлисе и Тифлисской области в 1920-е годы.

Цели данного исследования:

1. показать причины и тенденции увеличения или уменьшения численности армян;

2. показать историко-демографическую ситуацию до установления советской власти в Грузии;

3. выявить и определить причины эмиграции армян из Грузии. Численность армян в городах Восточной Европы начала расти с конца XIX века, когда Российская империя вступила в стадию капиталистического развития. При проведении исследования мы использовали историко-сравнительные, аналитические, а также статистические методы с целью представления объективного и непредвзятого освещения выбранного периода и проблемы.

По результатам проведенного исследования можно утверждать, что по данным Всесоюзной переписи населения 1926 года армяне проживали во всех трех крупных городах Тифлисской губернии и в тридцати одном сельском поселении. В статье мы рассмотрели расселение армян в этих населенных пунктах, проанализировали причины роста их численности и положение их родного языка по данным переписи населения.

Ключевые слова: *Восточная Грузия, Тифлис, уезд, губерния, советизация, армяне, грузинское общество, Межфедерация, Российская империя.*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ *

ՀՏԴ 351/354 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-31*

ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հանրային կառավարման ամբիոնի դոցենտ,
քաղաքական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
edgar.kalantaryan@ysu.am
ORCID: 0009-0008-1759-8180

Հետազոտության հիմնական նպատակն է ուղենշել ժամանակակից հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումների տեսական հիմքերը, դրանց իրականացման հիմնական ուղղություններն ու մոդելները, ինչպես նաև գնահատել այդ վերափոխումների ազդեցությունը հանրային կառավարման արդյունավետության վրա:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- ***վերլուծել հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումների վերաբերյալ ժամանակակից տեսական մոտեցումները և մոդելները.***
- ***ուսումնասիրել կառուցվածքային փոփոխությունների ազդեցությունը հանրային կազմակերպությունների արդյունավետության, հաշվետվողականության և ծառայությունների որակի վրա.***
- ***բացահայտել կառուցվածքային վերափոխումների իրականացման ընթացքում առաջացող կազմակերպական, կառավարչական և ինստիտուցիոնալ խնդիրները:***

Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական բազա են հանդիսացել հանրային կառավարման, քաղաքագիտության, սոցիոլոգիայի դասական և ժամանակակից տեսությունների հիմական դրույթները, հայեցակարգերը, մոդելներն ու մեթոդները: Ընդհանուր մեթոդաբանական հիմքը կազմում են վերլուծության, համեմատական և համակարգային մեթոդները:

Հանրագումարելով հանգեցինք հետևյալին.

- ***դասական հիերարխիկ կառուցվածքները աստիճանաբար փոխարինվում են ավելի ճկուն, հորիզոնական և ցանցային կառավարման***

* Հոդվածը ներկայացվել է 11.10.2025թ., գրախոսվել՝ 20.11.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

մոդելներով, որոնք նպաստում են որոշումների կայացման արագացմանը և միջգերատեսչական համագործակցության խորացմանը.

- ***կառուցվածքային վերափոխումները ինքնանպատակ գործընթացներ չեն, և պետք է դիտարկվեն որպես հանրային արժեք ստեղծելու միջոցներ՝ ուղղված հանրային ծառայությունների որակի բարձրացմանը և պետական կառավարման համակարգի նկատմամբ քաղաքացիների վստահության ամրապնդմանը:***

Եզրահանգելով նշենք, որ կառուցվածքային փոփոխությունների ուսումնասիրությունը պահանջում է համալիր և համակարգային մոտեցում, ինչն էլ երաշխավորում է հետազոտության արդիականությունն ու կարևորությունը:

Հիմնաբառեր՝ *հանրային կազմակերպություններ, կազմակերպությունների կառուցվածքային վերափոխում, կազմակերպությունների արդիականացում, արդյունավետություն, կառավարման մեթոդներ, նոր հանրային կառավարում, սոցիալական երաշխիք, կազմակերպչական մշակույթ:*

Նախաբան

Մեր հասարակությունը թևակոխել է զարգացման մի այնպիսի փուլ, որտեղ հանրային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության համար կարևորագույն գործոն է հանրային կազմակերպությունների կառավարման նոր ընթացակարգերի ներդրումն ու կիրառումը: Ժամանակակից հասարակությունների զարգացման դինամիկան, պայմանավորված գլոբալացման, տեխնոլոգիական առաջընթացի, սոցիալ-տնտեսական բարդացումների և կառավարման նոր պարադիգմաների ձևավորման գործընթացներով, էապես փոխում է հանրային կառավարման համակարգերի գործառնական և ինստիտուցիոնալ հիմքերը: Հանրային կազմակերպությունները, հանդես գալով որպես պետություն–հասարակություն փոխհարաբերությունների հիմնական ինստիտուցիոնալ միջնորդներ, հարկադրված են հարմարվել արագ փոփոխվող միջավայրին՝ վերանայելով իրենց կառավարման մոդելները, կառուցվածքային կազմակերպումը և ներքին գործընթացները:

Դասական բյուրոկրատական կառավարման մոդելը, որը երկար ժամանակ ապահովել է կայունություն, կանխատեսելիություն և իրավական կարգապահություն, ժամանակակից պայմաններում հաճախ չի բավարարում արդյունավետության, ճկունության և հանրային արժեք ստեղծելու պահանջները: Այս հանգամանքը նպաստել է հանրային կառավարման նոր տեսությունների և մոտեցումների ձևավորմանը, մասնավորապես՝ նոր հանրային կառավարման (New Public Management), նոր հանրային ծառայության (New Public Service), ինչպես նաև նորագույն շրջանում՝ թվային և ցանցային կառավարման (Digital and Network Governance) մոդելների զարգացմանը: Վերջիններս շեշտադրում են արդյունքահեն կառավարումը, կազմակերպչական ապակենտրոնացումը, միջգերատեսչական և միջոլորտային համագործակցությունը, ինչպես նաև կառավարման գործընթացներում քաղաքացիական մասնակցության ընդլայնումը:

Հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումները նշված տեսական մոտեցումների գործնական արտահայտությունն են և ներառում են կառավարման մակարդակների վերաձևում, գործառույթների վերաբաշխում, նոր ստորաբաժանումների ձևավորում կամ գործողների օպտիմալացում, ինչպես նաև կառավարման կառուցակարգերի թվայնացում: Սակայն կառուցվածքային փոփոխությունները չեն կարող դիտարկվել զուտ վարչական կամ տեխնիկական միջոցառումների շրջանակում. դրանք խորը ազդեցություն ունեն կազմակերպչական

մշակույթի, աշխատակիցների վարքագծի, պատասխանատվության համակարգերի և կազմակերպության ընդհանուր արդյունավետության վրա:

Այս համատեքստում կառուցվածքային վերափոխումների գիտական ուսումնասիրությունը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն՝ որպես հանրային կառավարման արդյունավետության բարձրացման և հանրային արժեքի ստեղծման կարևոր նախապայման: Կառուցվածքային փոփոխությունների հաջողությունը պայմանավորված է ոչ միայն իրավական կամ կազմակերպչական լուծումներով, այլև ինստիտուցիոնալ միջավայրի առանձնահատկություններով, քաղաքական կամքով, մարդկային ռեսուրսների կառավարման որակով և փոփոխություններին դիմակայելու կարողությամբ: Հետևաբար, ընտրված թեման առավել քան արդիական է, և հանրային կազմակերպություններում արդյունավետության հիմնական չափանիշների համատեքստում, կառուցվածքային վերափոխումները կարող են դառնալ յուրաքանչյուր կազմակերպության առաջընթացը երաշխավորող կարևոր ազդակ:

Ժամանակակից հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումների տեսական հիմքերը և մոդելները

Արդի հասարակությունների սոցիալ-տնտեսական, քաղաքական և տեխնոլոգիական փոփոխությունների ներքո հանրային կառավարման ինստիտուտները գտնվում են անընդմեջ վերափոխման գործընթացում: Այս գործընթացները չեն սահմանափակվում միայն բյուրոկրատական կառուցվածքի օպտիմալացմամբ, այլ ընդգծում են կառավարման համակարգերի պատասխանատվության, արդյունավետության և հանրային արժեք ստեղծելու կարևորությունը: Գլոբալացման, թվայնացման, պետական կառավարման բարեփոխումների, ինչպես նաև հասարակության կողմից պետական ինստիտուտների նկատմամբ աճող պահանջների պայմաններում հանրային կազմակերպությունները կանգնած են նոր մարտահրավերների առջև: Այդ պայմաններում ավանդական, հիերարխիկ և խիստ բյուրոկրատական կառավարման մոդելները հաճախ չեն ապահովում արդյունավետություն, ճկունություն և ծառայությունների որակ, ինչի հետևանքով առաջանում է կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումների անհրաժեշտություն:

Ժամանակակից հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումները ուղղված են կառավարման համակարգերի արդիականացմանը, գործառույթների օպտիմալացմանը, որոշումների կայացման գործընթացների արագացմանը և հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը: Այս գործընթացները հաճախ արտահայտվում են կազմակերպչական կառուցվածքների պարզեցման, ապակենտրոնացման, միջգերատեսչական համագործակցության ուժեղացման, ինչպես նաև նոր կառավարման մոդելների ներդրման միջոցով:

Հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումները ներկայացնում են ոչ միայն վարչական վերակազմավորման, այլև ինստիտուցիոնալ և ռազմավարական մակարդակի փոփոխությունների համակարգված ընթացակարգ՝ ուղղված կառավարման արդյունավետության բարձրացմանը և ծառայությունների մատուցման նոր մոդելների զարգացմանը:

Սա պայմանավորում է այն փաստը, որ կառուցվածքային վերափոխումների ուսումնասիրման շրջանակը պետք է լինի բազմաբևեռ՝ ընդգրկելով թե՛ կառավարման տեսական մոտեցումները, թե՛ կազմակերպչական վարքագծի տեսությունը, թե՛ գործնական փորձը: Այս տեսանկյունից, ըստ որոշ հեղինակների, կառուցվածքային փոփոխությունների գործընթացը հանրային կազմակերպությունների համար ոչ միայն ավտոմատ տարբերակն է, այլև մի ամբողջ մշակութային և ինստիտուցիոնալ

փոփոխություն՝ կապված նոր աշխատաոճերի, ներգրավվածության մեխանիզմների և արդյունավետության չափորոշիչների մշակման հետ (Ekowati 159-162):

Հանրային կազմակերպություններն այսօր գործում են արագ փոփոխվող սոցիալ-տնտեսական, քաղաքական և տեխնոլոգիական միջավայրում, ինչը պայմանավորում է դրանց կառուցվածքային շարունակական վերափոխումների անհրաժեշտությունը: Հանրային կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացումը, հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը, ինչպես նաև հանրային ծառայությունների որակի բարելավումը պահանջում են կազմակերպական կառուցվածքների արդիականացում՝ հիմնված կառավարման ժամանակակից տեսությունների և մոդելների վրա:

Կառուցվածքային վերափոխումների տեսական հիմքերը ձևավորվել են կառավարման դասական, նեոդասական և ժամանակակից մոտեցումների զարգացման արդյունքում: Դասական կառավարման տեսության շրջանակում (Վեբեր 68-71, Թեյլոր 49-58) հանրային կազմակերպությունների կառուցվածքը բնութագրվում էր *հիերարխիկ համակարգով, ֆունկցիոնալ բաժանումով և խիստ կանոնակարգմամբ*: Վեբերյան բյուրոկրատական մոդելը երկար ժամանակ հանդիսացել է հանրային կառավարման կազմակերպական հիմքը՝ ապահովելով կայունություն և կանխատեսելիություն, սակայն ժամանակակից պայմաններում այն հաճախ դիտարկվում է որպես ճկունությունը և նորարարությունը սահմանափակող գործոն:

Նեոդասական մոտեցումները (Մեյո 112, Բարնարդ 115) շեշտադրեցին *մարդկային գործոնի, հաղորդակցության և ոչ ֆորմալ կառուցվածքների* կարևորությունը՝ ցույց տալով, որ կազմակերպության արդյունավետությունը պայմանավորված չէ միայն ֆորմալ կառուցվածքով: Այս մոտեցումները հիմք հանդիսացան հանրային կազմակերպություններում կառուցվածքային վերափոխումների մարդակենտրոն մոդելների ձևավորման համար:

Այսօր կառավարման տեսություններում կառուցվածքային վերափոխումները դիտարկվում են որպես *համակարգային փոփոխություններ*, որոնք ընդգրկում են ոչ միայն կազմակերպական կառուցվածքը, այլև գործընթացները, մշակույթը և կառավարման ընթացակարգերը: Համակարգային և կոնտինգենտային տեսությունների հեղինակների (Bertalanffy 51, Lawrence 145, Lorsch 23) կարծիքով, հանրային կազմակերպությունների կառուցվածքը պետք է համապատասխանեցվի *արտաքին միջավայրի պահանջներին, ռազմավարական նպատակներին և ռեսուրսներին*: Այս տեսանկյունից կառուցվածքային վերափոխումները չեն կարող լինել ունիվերսալ, այլ պետք է լինեն իրավիճակային:

Աշխարհը հաճախ նկարագրվում է որպես ամենատարբեր այնպիսի կազմակերպությունների ամբողջություն, որոնք որևէ նպատակի իրականացման, որևէ խնդրի լուծման ակնկալիքով միավորված մարդկանց կամ խմբերի ամբողջություն են, գործում են աշխատանքը, պատասխանատվությունը բաժանելու սկզբունքով, և աստիճանակարգային կառուցվածքով: Այս սահմանման շրջանակներում դիտարկվում են և՛ հասարակական, և՛ հանրային, և՛ պետական կազմակերպությունները: Նրանց մեջ ներգրավված անձինք նյութական, տնտեսական, իրավական և այլ պայմաններում փոխգործակցում են՝ իրենց առջև դրված նպատակների իրականացմանը հասնելու նպատակով: Կամզակերպությունների կառուցվածքը փոխկապակցված տարրերի ամբողջություն է, որոնք լինում են *տեխնիկական, սոցիալական, սոցիոտեխնիկական և նորմատիվ-իրավական* (Քալանթարյան 83-84): Հանրային կազմակերպությունների կառավարման համատեքստում գոյություն ունեն համակարգման չորս ընթացակարգեր, որոնք կարգավորում են այն կառուցակարգերը, որոնց օգնությամբ կազմակերպությունը համակարգում է իր գործունեությունը: Այդ ընթացակարգերն են՝ փոխադարձ համաձայնությունը, ուղղակի վերահսկողությունը, աշխատանքային գործընթացների, արտադրանքի, գիտելիքների և հմտությունների կամ որակավորման

միօրինակացումը (Mintzberg 210-213):

Կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումները իրենց մեջ ներառում են բազմաթիվ դրական ազդակներ, որոնք էլ ստեղծում են կառավարման նոր մոդելներ, մասնավորապես՝ **նոր հանրային կառավարում (New Public Management)** մոդելը, որը նպատակ ունի բարձրացնելու արդյունավետությունն ու արտադրողականությունը՝ մասնավոր հատվածի կառավարման գործիքների կիրառման միջոցով: Այս մոդելի շրջանակում հանրային կազմակերպությունների կառուցվածքը դառնում է ավելի հորիզոնական, դեցենտրալիզացված և արդյունքահեն, որտեղ շեշտադրում է արդյունքների վրա կենտրոնացած կառավարման սկզբունքները, և պետական ծառայությունների արդյունավետության բարելավումը: Այս մոտեցումը հաճախ քննադատության է արժանացել իր բյուրոկրատական կառուցվածքի և օրինաչափությունների նկատմամբ ոչ բավարար ուշադրության պատճառով (Hood 9): Հաջորդը **նոր հանրային ծառայության (New Public Service)** մոդելն է, որը կարևորում է քաղաքացիների մասնակցությունը, հանրային արժեքի ստեղծումը և համագործակցային կառավարումը: Այս մոտեցման շրջանակում կառուցվածքային վերափոխումները միտված են ցանցային կառույցների, միջկազմակերպական համագործակցության և բազմաստիճան կառավարման զարգացմանը: Վերջին տարիներին առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերել նաև **թվային կառավարման և ցանցային կառավարման (Digital and Network Management)** մոդելները, որոնցում հանրային կազմակերպությունների կառուցվածքը ձևափոխվում է տեղեկատվական տեխնոլոգիաների ինտեգրման, էլեկտրոնային կառավարման և թվային ծառայությունների ներդրման միջոցով: Այս մոդելները նպաստում են բյուրոկրատական շերտերի կրճատմանը, որոշումների ընդունման արագացմանը և հանրային ծառայությունների մատչելիության բարձրացմանը: Այս մոդելը հանդիսանում է կառուցվածքային վերափոխումների կարևոր բաղադրիչ՝ նորարարական տեխնոլոգիաների ինտեգրմամբ կազմակերպչական կառուցվածքի փոփոխման գործընթացներում: Թվային տեխնոլոգիաների ներդրումը ոչ միայն աջակցում է գործընթացների ավտոմատացմանը, այլև փոխազդեցություն է ապահովում կառավարման ներսում և քաղաքացիների հետ, ինչը էականորեն փոխում է ավանդական վարչարարական բյուրոկրատիայի բնույթը (European Commission: Digital economy and society index (DESI), Dunleavy, Margetts, Bastow & Tinkler 345-348, Cordella 282):

Հանրային կազմակերպությունների վերափոխման տեսական հիմքերն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է տարբեր գիտակարգերի համապարփակ վերլուծություն, որոնք իրենց մեջ ներառում են այնպիսի արժեքավոր գործիքներ, որոնց ուսումնասիրությունը և կիրառումը կարող են հիմք հանդիսանալ «*լավ կառավարման»* համար: Այդ տեսությունները բազմաթիվ են. օրինակ՝ **ինստիտուցիոնալ տեսության (Institutional Theory)** շրջանակներում մասնագետները հանգել են մի եզրահանգման, ըստ որի հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումները հաճախ պայմանավորված են ոչ միայն արդյունավետության պահանջով, այլև՝ օրենսդրական ճնշումներով, քաղաքական ակնկալիքներով և միջազգային ստանդարտներով (օր.՝ OECD, EU), (Paul Di Maggio & Walter Powell 225): Սա Շատ օգտակար կարող է լինել ՀՀ-ի և անցումային վարչարարական համակարգերի վերլուծության համար (*Հայաստանի հանրային կառավարման բարեփոխումները):* Հաջորդը՝ **կազմակերպական փոփոխությունների տեսությունն է (Organizational Change Theory),** որը թույլ է տալիս ուսումնասիրել ոչ միայն *ինչ* կառուցվածք է փոխվում, այլ՝ *ինչպես* է իրականացվում փոփոխությունը, ինչ դիմադրություն է առաջանում ներսում և ինչ կառավարչական մեխանիզմներ են անհրաժեշտ (Kurt Lewin, John Kotter 79-81): **Կազմակերպական մշակույթի տեսության (Organizational Culture Theory)** համատեքստում հանգում ենք այն եզրահանգման, որ կառուցվածքային

վերափոխումները չեն կարող արդյունավետ լինել, եթե չեն համընկնում կազմակերպության արժեքների, նորմերի և վարքագծային մոդելներին (Schein, Hofstede 927): Նույն կառուցվածքային մոդելը տարբեր կազմակերպություններում կարող է տալ տարբեր արդյունքներ՝ մշակութային տարբերությունների պատճառով: **Հանրային արժեքի տեսությունը (Public Value Theory)** կառուցվածքային վերափոխումները դիտարկում է ոչ թե արդյունավետության, այլ հանրային արժեքի ստեղծման, քաղաքացիների վստահության, հանրային շահի համատեքստում: Այս տեսությունը լավ հակակշիռ կարող է լինել New Public Management-ին (Moore 184):

Այսպիսով՝ ժամանակակից հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումները հիմնվում են բազմազան տեսական մոտեցումների և մոդելների վրա, որոնք համադրվում են՝ կախված կազմակերպության գործառույթներից, միջավայրից և ռազմավարական նպատակներից: Տեսական հիմքերի և մոդելների ճիշտ կիրառումը հնարավորություն է տալիս ապահովելու հանրային կառավարման համակարգի ճկունությունը, արդյունավետությունը և կայուն զարգացումը: Հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումների համապարփակ վերլուծությունը պահանջում է ոչ միայն կառավարման մոդելների, այլև ինստիտուցիոնալ, մշակութային և ռեսուրսային գործոնների համադրություն:

Եզրակացություն

Հանրագումարելով պետք է նշել, որ ժամանակակից հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումները հանդիսանում են հանրային կառավարման համակարգի զարգացման և արդիականացման կարևորագույն պայմաններից մեկը: Գլոբալացման, տեխնոլոգիական առաջընթացի, սոցիալ-տնտեսական փոփոխությունների և հանրային պահանջների աճի պայմաններում հանրային կազմակերպությունների ավանդական բյուրոկրատական կառուցվածքները հաճախ չեն կարող ապահովել կառավարման անհրաժեշտ ճկունություն և արդյունավետություն, ինչն առաջ է բերում կառուցվածքային փոփոխությունների օբյեկտիվ անհրաժեշտություն:

Ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումների տեսական հիմքերը ձևավորվում են կառավարման բազմազան մոտեցումների համադրման արդյունքում՝ սկսած դասական բյուրոկրատական մոդելներից մինչև ժամանակակից ցանցային, թվային և հանրային արժեքի վրա հիմնված կառավարման մոդելներ: Դրանք թույլ են տալիս կառուցվածքային վերափոխումները դիտարկել ոչ միայն կազմակերպական սխեմաների փոփոխության, այլև կառավարման գործընթացների, կազմակերպական մշակույթի և միջավայրի հետ փոխազդեցության համատեքստում:

Վերլուծությունը ցույց տվեց, որ կառուցվածքային վերափոխումների արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ արտաքին ինստիտուցիոնալ ազդեցություններով, քաղաքական կամքի առկայությամբ, մարդկային ռեսուրսների կարողություններով և կազմակերպական մշակույթի՝ փոփոխություններին պատրաստվածությամբ: Այս համատեքստում ինստիտուցիոնալ, կազմակերպական փոփոխությունների և հանրային արժեքի տեսությունները հնարավորություն են տալիս առավել ամբողջական գնահատելու կառուցվածքային բարեփոխումների պատճառները, ընթացքը և արդյունքները: Հանրային կազմակերպությունների կառուցվածքային վերափոխումները չեն կարող դիտարկվել որպես մեկանգամյա կամ զուտ տեխնիկական գործընթաց: Դրանք երկարաժամկետ, համակարգային փոփոխություններ են, որոնք պահանջում են հստակ ռազմավարություն, փուլային իրականացում և շարունակական գնահատում: Կառուցվածքային փոփոխությունների հաջող իրականացումը հնարավոր է միայն այն

դեպքում, երբ դրանք համադրվում են կառավարման մշակույթի զարգացման, հաշվետվողականության մեխանիզմների ամրապնդման և հանրային մասնակցության խթանման հետ:

Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ կառուցվածքային վերափոխումները նպատակաուղղված են կառավարման արդյունավետության բարձրացմանը, հանրային ծառայությունների որակի բարելավմանը և հանրային արժեքի ստեղծմանը: Տեսական մոտեցումների համադրումն ու դրանց կիրառումը գործնական բարեփոխումների շրջանակում կարող են նպաստել հանրային կառավարման համակարգի կայուն զարգացմանը և հասարակության վստահության ամրապնդմանը պետական ինստիտուտների նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Քալանթարյան, Էդգար. *Հանրային կազմակերպությունների տեսություն.* ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2016թ. էջ 200:
2. Apri Institute. *Հայաստանի հանրային կառավարման բարեփոխումները.* https://apri.institute/hy/hanrayin-karavarman-barepokhumnery/?utm_source=chatgpt.com, Վերջին այց՝ 06. 02. 2026.
3. Barnard, Chester Irving. *The Functions of the Executive*. Cambridge, MA: Harvard University Press, 1938, 334 p.
4. Cordella, Antonio. *Information systems in the public sector: The e-government enactment framework.* Journal of Strategic Information Systems, 2010, 279-286 p.
5. Paul, Di Maggio & Walter, Powell. *The new institutionalism in organizational.* 1999, 486 p.
6. Dunleavy, Patrick, Helen Margetts, Simon Bastow and Jane Tinkler. “New Public Management Is Dead-Long Live Digital-Era Governance”. *Journal of Public Administration Research and Theory*, 16(3), 2006, 334-359 pp.
7. Ekowati, Dian. *Organizational Change in Public Service,* Buisiness Studies, Vol. 14 | No. 2, 2021, 159-170 pp
8. European Commission: Digital economy and society index (DESI),https://ec.europa.eu/newsroom/dae/document.cfm?doc_id=670862020. Accessed: 06. 02. 2026 . .
9. Hood, Cristopher. *A Public Management for All Seasons*?. *Public Administration,* 69(1), 1991,3-19 pp.
10. Kurt, Lewin, John, Kotter. *Study on Adaptability of Change Management:* Rajiv Gandhi Business School, Pune, 2017, 79-83 pp.
11. *Lawrence, Paul R., Lorsch, Jay William. Organization and Environment*. Boston: Harvard Business School Press, 1967, 279 p.
12. Mayo, Elton. *The Human Problems of an Industrial Civilization*. New York: Macmillan, 1933, 194 p.
13. Mintzberg, Henry. *The Structuring of Organizations*. Englewood Cliffs, NJ: Prentice Hall, 1979, 261 p.
14. Moore, Mark. *Recognizing public value,* Harvard University Press, Cambrige, 2013, 430 p.
15. Schein, Edgar, Geert, Hofstede. *The Influence of National Culture over Organisational Culture in the Globalisation Context,* “Ovidius” University Annals, Economic Sciences Series, Volume XII, Issue 2/2012, 922-927 pp.
16. Frederik, W. Taylor. *The Principles of Scientific Management*. New York: Harper & Brothers, 1911, 151 p.
17. Weber, Max. *The Theory of Social and Economic Organization*. New York: Oxford University Press, 1947, 404 p.

WORKS CITED

1. K'alant'aryan, Edgar. *Hanrayin kazmakerput'yunneri tesut'yun, [Theory of Public Organizations, Yerevan]*, YePH hratarakut'yun, Yer., 2016t'. , 200 p. (in Armenian)

2. Hayastani hanrayin karravarman barep'okhumnery, *[Public Administration Reforms in Armenia] Available at:* https://apri.institute/hy/hanrayin-karavarman-barepokhumnery/?utm_source=chatgpt.com. Accessed on: 06.02.2026t'. (in Armenian)

STRUCTURAL TRANSFORMATIONS OF MODERN PUBLIC ORGANIZATIONS

EDGAR KALANTARYAN
Yerevan State University, Faculty of International Relations, Chair of Public Administration, Lecturer, Ph.D. in Political Sciences, Associate Professor, Yerevan, the Republic of Armenia

The main goal of the research is to outline the theoretical foundations of structural transformations of modern public organizations, the main directions and models of their implementation, as well as to assess the impact of these transformations on the effectiveness of public management. To achieve this goal, we have set the following objectives:

- to analyze modern theoretical approaches and models on structural transformations of public organizations,
- to study the impact of structural changes on the efficiency, accountability and quality of services of public organizations,
- to identify organizational, managerial and institutional issues arising during the implementation of structural transformations.

The theoretical basis for solving the problems posed in the research was the basic provisions, concepts, models and methods of classical and modern theories of public administration, political science, sociology. The general methodological basis is analytical, comparative and systemic methods.

Summing up, we came to the following:

- classical hierarchical structures are gradually being replaced by more flexible, horizontal and network management models, which contribute to the acceleration of decision-making and the deepening of interdepartmental cooperation,
- structural transformations are not an end in themselves and should be considered as a means of creating public value, aimed at improving the quality of public services and strengthening citizens' trust in the public administration system.

In conclusion, the study of structural changes requires a complex and systematic approach, which guarantees the relevance and importance of the research.

Keywords: *public organizations, organizational restructuring, organizational modernization, efficiency, management methods, new public management, social guarantee, organizational culture.*

СТРУКТУРНЫЕ ТРАНСФОРМАЦИИ СОВРЕМЕННЫХ ГОСУДАРСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ

ЭДГАР КАЛАНТАРЯН
преподаватель кафедры государственного управления факультета международных отношений Ереванского государственного университета, кандидат политических наук, доцент, г. Ереван, Республика Армения

Основная цель исследования заключается в том, чтобы обозначить теоретические основы структурных преобразований современных публичных организаций, определить основные направления и модели их реализации, а также оценить влияние этих преобразований на эффективность публичного управления. Для достижения этой цели были поставлены следующие задачи:

- проанализировать современные теоретические подходы и модели структурных преобразований государственных организаций;
- изучить влияние структурных изменений на эффективность, подотчетность и качество услуг общественных организаций;
- выявить организационные, управленческие и институциональные проблемы, возникающие при реализации структурных преобразований.

Теоретической основой для решения поставленных в исследовании задач послужили основные положения, концепции, модели и методы классических и современных теорий государственного управления, политологии, социологии. Общей методологической основой стали аналитический, сравнительный и системный методы.

Подводя итоги исследования, мы пришли к следующим выводам:

- классические иерархические структуры постепенно заменяются более гибкими, горизонтальными и сетевыми моделями управления, которые способствуют ускорению принятия решений и углублению межведомственного сотрудничества;
- структурные преобразования не являются самоцелью и должны рассматриваться как средство создания общественной ценности, направленное на повышение качества государственных услуг и укрепление доверия граждан к системе государственного управления.

Заключение: изучение структурных изменений требует комплексного и системного подхода, что и обеспечивает актуальность и значимость проведённого исследования.

Ключевые слова: *государственные организации, организационная реструктуризация, организационная модернизация, эффективность, методы управления, новое государственное управление, социальное обеспечение, организационная культура.*

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ. ՏԵՍԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ ԵՎ ՀԻԲՐԻԴ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ *

ՀՏԴ 323.2 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-40*

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի դասախոս, Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագետ, քաղաքագետ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tigran-ghazaryan@inbox.ru
ORCID: 0009-0004-7862-0178

Հոդվածի նպատակն է բացահայտել միգրացիայի և ազգային անվտանգության փոխազդեցության հիմնարար առանձնահատկությունները՝ համադրելով միգրացիայի դասական և ժամանակակից տեսությունները, վերլուծելով հիբրիդ սպառնալիքների դերը և գնահատելով Հայաստանի համար առաջացող մարտահրավերներն ու հնարավորությունները:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ վերլուծել միգրացիայի դասական և ժամանակակից տեսությունները՝ պարզելու դրանց անվտանգային չափաբաժինը, բացահայտել միգրացիայի և ազգային անվտանգության փոխազդեցության հիմնական մեխանիզմները, ուսումնասիրել հիբրիդ սպառնալիքների և միգրացիոն գործընթացների փոխկապակցվածությունը ժամանակակից գլոբալ և տարածաշրջանային իրողությունների պայմաններում, գնահատել միգրացիոն հոսքերի հնարավոր ազդեցությունները Հայաստանի ազգային անվտանգության համակարգի վրա:

Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմական, համեմատական, վերլուծական, տեսական, պատճառահետևանքային մեթոդները:

Հետազոտության շրջանակներում կատարված հիմնական եզրահանգումն այն է, որ միգրացիան և ազգային անվտանգությունը ինտենսիվ փոխազդեցության մեջ են, և նրանց միջև հարաբերությունը պայմանավորված է թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ քաղաքական ու անվտանգային գործոններով: Միգրացիայի դասական տեսությունները ընդգծում են տնտեսական շարժառիթների և աշխատաշուկայի դերը, մինչդեռ ժամանակակից մոտեցումները ընդգծում են քաղաքական, սոցիալական և հիբրիդ սպառնալիքների ազդեցությունը: Հիբրիդ սպառնալիքները, այդ թվում՝ տեղեկատվական, էներգետիկ և անվտանգության ճյուղերում ստեղծվող ճգնաժամերը, կարող են բազմապատկել միգրացիոն հոսքերի ազդեցությունը փոքր պետությունների վրա, այդ թվում՝ Հայաստանի պարագայում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի համար միգրացիոն գործընթացների համատեղ դիտարկումը ազգային անվտանգության համատեքստում անհրաժեշտ է ինչպես սպառնալիքների կանխարգելման, այնպես էլ նոր հնարավորությունների արդյունավետ օգտագործման համար: Նման ձևաչափով մշակված քաղաքականությունն ու ռազմավարությունը կարող են նվազեցնել միգրացիայից բխող բացասական ազդեցությունները և խթանել սոցիալ-տնտեսական կայունությունը, ինչպես նաև նպաստել

* Հոդվածը ներկայացվել է 18.09.2025թ., գրախոսվել՝ 03.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

պետության ներքին և արտաքին անվտանգության երկարաժամկետ ապահովմանը:

Հիմնաբառեր՝ *միգրացիա, ազգային անվտանգություն, հիբրիդ սպառնալիքներ, արտագաղթ, սփյուռք, ժողովրդագրական ռիսկեր, միգրացիոն քաղաքականություն:*

Ներածություն

Միգրացիան 21-րդ դարում համարվում է գլոբալ գործընթաց, որը պայմանավորված է բազմաշերտ գործոններով՝ տնտեսական անհավասարությամբ, քաղաքական անկայունությամբ, զինված հակամարտություններով, բնապահպանական ճգնաժամերով և համաշխարհային ինտեգրման խորացմամբ: Եթե դասական սոցիոլոգիական և տնտեսական մոտեցումները միգրացիան հիմնականում դիտարկում էին որպես աշխատուժի կամ բնակչության տեղաշարժի բնական գործընթաց, ապա ժամանակակից աշխարհաքաղաքական և անվտանգային իրողությունները ցույց են տալիս դրա խորքային ազդեցությունը պետությունների ներքին և արտաքին կայունության վրա:

Հայաստանի համար միգրացիայի խնդիրը առանձնահատուկ նշանակություն ունի մի քանի պատճառով: Նախ՝ երկրի սահմանափակ ժողովրդագրական ռեսուրսները և արտագաղթի երկարամյա միտումները անմիջական ազդեցություն են ունենում ազգային անվտանգության հիմնական բաղադրիչների վրա: Երկրորդ՝ տարածաշրջանային հակամարտությունները և հիբրիդ սպառնալիքների աճը միգրացիոն հոսքերը դարձնում են ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև ռազմավարական մարտահրավեր: Երրորդ՝ տեղեկատվական պատերազմների և արտաքին ազդեցությունների պայմաններում միգրացիան հաճախ շահարկվում է որպես ներքաղաքական կայունությունը թուլացնելու գործիք:

Ուսումնասիրությունը կառուցված է հետևյալ տրամա-բանությամբ. նախ ներկայացվում են միգրացիայի հիմնական տեսությունները և դրանց անվտանգային չափաբաժինը, այնուհետև ուսումնասիրվում է հիբրիդ սպառնալիքների և միգրացիայի փոխկապակցվածությունը, իսկ վերջում գնահատվում են Հայաստանի համար առկա ռիսկերն ու ռազմավարական ուղղությունները:

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՉԱՓԱԲԱԺԻՆԸ

Միգրացիան սոցիալական և քաղաքական գիտությունների շրջանակում դիտարկվում է որպես բազմաշերտ երևույթ, որն ընդգրկում է անհատների կամ մարդկանց խմբերի շարժը տարածական միջավայրում՝ պայմանավորված տնտեսական, քաղաքական, ռազմական, սոցիալական կամ էկոլոգիական գործոններով: Մինչև 19-րդ դարը միգրացիան դիտարկվում էր ավելի շատ պատմագրության, աշխարհագրության և ժողովրդագրության շրջանակում: Ներկայումս միգրացիան ներառում է տնտեսության, իրավագիտության, քաղաքականության, մշակութային, տեղեկատվական, ինչպես նաև անվտանգության ասպեկտներ: Միգրացիայի կառավարումը շատ երկրների համար քաղաքական օրակարգային հարց է, որի համատեքստում ընդգծվում է միգրացիայի և անվտանգության կապի քննարկումը: Ուստի այս հատվածում կներկայացվեն միգրացիայի տեսական մոդելները և դրանց կապն անվտանգության հետ:

Միգրացիոն գործընթացները մարդկության պատմության անբաժանելի մասն են եղել, սակայն գիտական մոտեցման առաջին փորձերը արվել են 19-րդ դարում՝ կապված երկաթուղիների, արդյունաբերականացման և քաղաքաշինության աճի հետ, երբ սկսվեց աշխատուժի զանգվածային շարժ: 1885թ. Էռնստ Ռավենշտեյնը հրապարակեց իր հայտնի «Միգրացիայի օրենքները», որ համարվում է միգրացիայի

ուսումնասիրության առաջին համակարգային փորձը: Նա ձևակերպեց հետևյալ օրինաչափությունները՝

1. Միգրանտների մեծ մասը տեղափոխվում է կարճ տարածությունների վրա, և այս շարժը ստեղծում է բնակչության տեղաշարժի հիմնական հոսքեր՝ ուղղված դեպի առևտրի և արդյունաբերության խոշոր կենտրոնները:
2. Միգրացիայի ներծծման գործընթացը տեղի է ունենում աստիճանաբար. շրջակա գյուղերի բնակիչները տեղափոխվում են դեպի մոտակա քաղաք, իսկ նրանց տեղերը լրացվում են ավելի հեռավոր շրջաններից եկողներով, մինչև որ մեծ քաղաքների գրավչությունը հասնում է երկրի ամենահեռավոր անկյուններին:
3. Ցրման գործընթացը ներծծման հակառակ կողմն է և ունի նմանատիպ առանձնահատկություններ:
4. Յուրաքանչյուր միգրացիոն հոսքին բնորոշ է փոխհատուցող հակադարձ հոսք:
5. Երկար տարածություններ անցնող միգրանտները հիմնականում ուղղվում են խոշոր առևտրի կամ արդյունաբերության կենտրոններ:
6. Քաղաքաբնակները ավելի քիչ են հակված միգրացիայի, քան գյուղաբնակները:
7. Կանայք ավելի հակված են միգրացիայի, քան տղամարդիկ, հատկապես կարճ հեռավորությունների դեպքում (Ravenstein 167–235):

Անվտանգության առումով Ռավենշտեյնի մոտեցումը ցույց է տալիս, որ երբեմն միգրացիան դառնում է ոչ թե սոցիալական շարժում, այլ զանգվածային «արտահոսք», որը կարող է նվազեցնել երկրի մարդկային պոտենցիալը և թուլացնել ազգային անվտանգությունը: Ռավենշտեյնի միգրացիոն օրինաչափություններից յուրաքանչյուրով ցույց տանք անվտանգային ռիսկերը՝

1. Կարճ տարածության միգրացիա և կենտրոնների գրավչություն.

Երբ բնակչության հոսքերը կենտրոնանում են խոշոր քաղաքներում, առաջանում է գյուղաբնակ շրջանների ամայացման վտանգ: Սա կարող է թուլացնել երկրի տարածքային անվտանգությունը, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում, որտեղ մարդկանց թվի նվազումը հանգեցնում է ռազմավարական տարածքների լքման:

2. Աստիճանաբար ներծծում.

Այս գործընթացը կարող է բերել բնակչության մշտական խտացման մեծ քաղաքներում, որը մեծացնում է սոցիալական լարվածությունը, գործազրկության մակարդակը և պետական կառավարման վերահսկելիության ռիսկերը: Անվտանգության տեսակետից սա կարող է դառնալ քաղաքային անկարգությունների և սոցիալական բևեռացման աղբյուր:

3. Ցրման գործընթաց.

Եթե ներսում տեղի է ունենում արտահոսք դեպի կենտրոններ, ապա արտաքին ուղղությամբ դա կարող է դրսևորվել որպես էմիգրացիա դեպի օտար երկրներ: Արդյունքում՝ երկիրը կորցնում է իր աշխատունակ և երիտասարդ ռեսուրսը, ինչը թուլացնում է տնտեսական և պաշտպանական ներուժը:

4. Հակադարձ հոսքեր

Թեև միշտ լինում է որոշակի վերադարձ, բայց այն հիմնականում փոքր է: Սա նշանակում է, որ միգրացիոն արտահոսքը հաճախ անդառնալի է, ինչը լրջագույն խնդիր է անվտանգության և ժողովրդագրության տեսանկյունից:

5. Երկար տարածությունների միգրացիա՝ դեպի արդյունաբերական կենտրոններ.

Սրա հիմնական հետևանքն այն է, որ աշխատուժը և ինտելեկտուալ պոտենցիալը արտահոսում են: Արդյունքում խորանում է «Ուղեղների արտահոսք»-ի վտանգը, որն ուղիղ սպառնալիք է ազգային մրցունակությանը և տեխնոլոգիական անվտանգությանը:

6. Քաղաքաբնակների պակաս շարժունակությունը.

Եթե գյուղաբնակ և սահմանամերձ բնակչությունը նվազում է, ապա պետական անվտանգությունը կորցնում է իր «բնական պաշտպանական գոտիները»:

7. Կանանց միգրացիոն գերակշռություն.

Կանանց արտագաղթը ազդում է ընտանիքի և հասարակության վերարտադրողականության վրա: Սա ժողովրդագրական սպառնալիք է, որը կարող է հանգեցնել ծնելիության կտրուկ անկման և ազգաբնակչության ծերացման:

Ռավենշտեյնի օրինաչափությունները դեռևս 19-րդ դարում ցույց էին տալիս, որ միգրացիան ոչ միայն սոցիալական-տնտեսական շարժ է, այլև ունի անվտանգության խորքային հետևանքներ: Մարդկային ռեսուրսների արտահոսքը՝ լինի դա գյուղերից դեպի քաղաքներ, թե՝ երկրից դուրս, կարող է վտանգել ազգային պետության ժողովրդագրական կայունությունը, սոցիալական հավասարակշռությունը և ռազմավարական պաշտպանունակությունը:

«Վանող–ձգող» մոդելը միգրացիայի ամենահայտնի տեսական բացատրություններից է, որը ձևավորվել է 20-րդ դարում՝ Էվերեստ Լիի կողմից: Այս մոդելը լրացրեց Ռավենշտեյնի դասական մոտեցումները՝ ավելացնելով անձնական և միջավայրային գործոնների համադրություն, որոնք որոշում են մարդկանց միգրացիոն որոշումը: Էվերեստ Լին ընդգծում է, որ մարդկանց միգրացիոն որոշումը պարզ չէ, այն պայմանավորված է մի շարք փոխազդող գործոններով: Մեկտեղելով սոցիալական, տնտեսական, քաղաքական և անձնական գործոնները՝ Լիին հաջողվել է ձևակերպել միգրացիայի պատճառների համակարգված տեսություն (Lee 47–57):

Առաջին գործոնը՝ **վանողը**, ներկայացնում է այն բացասական հանգամանքները, որոնք մարդկանց ստիպում են լքել իրենց բնակության վայրը: Սա կարող է լինել աղքատություն, գործազրկություն, քաղաքական անկայունություն կամ, անգամ,բնական աղետներ: Այս գործոնները ստեղծում են ներսում ճնշման ուժ, որը մարդկանց ստիպում է մտածել հեռանալու մասին:

Երկրորդ գործոնը՝ **ձգողը**, բաղկացած է դրական հնարավորություններից, որոնք գրավում են մարդկանց դեպի այլ տարածքներ: Այս գործոնները կարող են ընդգրկել ապահով աշխատանք, բարձր աշխատավարձ, որակյալ կրթություն և առողջապահության ծառայություններ, ինչպես նաև քաղաքական ու սոցիալական կայունություն: Ուստի այն տարածքը, որտեղ հասանելի են այս հնարավորությունները, դառնում է միգրանտների համար գրավիչ «վայրէջք»:

Երրորդ գործոնը՝ **միջնորդիչը**, ազդում է այդ որոշման իրականացման վրա: Դրանք կարող են լինել ճանապարհորդության ծախսերը, անձնական կապերը, լեզվի իմացությունը կամ միգրացիոն օրենսդրությունը: Այս գործոնները որոշում են, թե, արդյո՞ք, միգրացիան հնարավոր կլինի, և որքան հեշտ կամ դժվար կլինի այն:

Չորրորդ գործոնը՝ **անձնական առանձնահատկությունները**, ընդգրկում է յուրաքանչյուր անհատի սոցիալական, կրթական, մշակութային և հոգեբանական առանձնահատկությունները: Օրինակ՝ երիտասարդները հաճախ ավելի պատրաստակամ են տեղափոխվել, կրթված և մասնագիտական փորձ ունեցողները ավելի նպատակասլաց են իրենց կարիերայի և ապագայի համար, իսկ որոշ անձինք առավել հանդուրժող են ռիսկի նկատմամբ, ինչը նրանց դարձնում է շարժունակ:

Այս չորս գործոնները միասին ստեղծում են ամբողջական պատկեր, թե ինչպես և ինչու մարդիկ որոշում են փոխել բնակության վայրը՝ ներկայացնելով միգրացիան ոչ միայն որպես սոցիալական շարժ, այլև որպես ինքնորոշման և միջավայրային գործոնների փոխազդեցության բարդ գործընթաց:

Անվտանգային համատեքստում այս մոդելը ցույց է տալիս, որ եթե «վանող գործոնները» գերակշռում են, ապա արտագաղթը կարող է հասնել ազգային անվտանգության սպառնալիքի մակարդակի՝ նվազեցնելով երկրի ժողովրդագրական ներուժը:

Նեոկլասիկ միգրացիոն մոդելը ձևավորվել է 1960–1970-ական թվականներին, հետպատերազմյան և գլոբալ տնտեսական վերակառուցման

շրջանում: Մոդելի հիմքում ընկած է տնտեսագիտական հաշվարկների և ռացիոնալ ընտրության տեսությունը, որը դիտարկում է միգրացիան որպես աշխատուժի շուկայական շարժում: Մարդիկ տեղափոխվում են այն երկրներ, որտեղ աշխատավարձերն ավելի բարձր են, իսկ աշխատանքի պահանջարկը՝ մեծ: Մերձավոր Արևելքի նավթային երկրները՝ Քաթարը, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն, 20-րդ դարի երկրորդ կեսից ներգրավեցին միլիոնավոր աշխատողներ՝ Ասիայի տարբեր երկրներից՝ ապահովելու իրենց տնտեսական աճի և շուկաների պահանջները: Այս գործընթացը իդեալական կերպով արտացոլում է նեոկլասիկ մոդելի տնտեսագիտական տրամաբանությունը՝ աշխատուժի «էֆեկտիվ բաշխում» առավել վճարունակ շուկաներում: Լեֆ Սյաստադն առաջինը ձևակերպեց միգրացիան որպես էկոնոմիկ ընտրություն, որտեղ մարդիկ հաշվում են իրենց եկամուտները, ծախսերը և սոցիալական գործոնները (Sjaastad, 80-93): Սյաստադի մոտեցմամբ մարդիկ միգրացիոն որոշում կայացնելիս համեմատում են իրենց հնարավոր եկամուտներն ու ծախսերը՝

- Եկամուտներ՝ ավելի բարձր աշխատավարձի և եկամտի ակնկալիքներ նոր երկրում.
- Ծախսեր՝ տեղափոխության, բնակության, սոցիալական ինտեգրման և ընտանիքից կտրվելու կորուստներ.
- Սոցիալական գործոններ՝ կրթության, առողջապահության, ապագա հնարավորությունների ազդեցություն:

Այսպիսով՝ միգրացիան Սյաստադի տեսանկյունից նման է ներդրումային որոշման. անհատը որոշում է «ներդնել» իր ռեսուրսները (ժամանակ, ֆինանսներ, էներգիա) նոր միջավայր տեղափոխվելու մեջ, եթե ակնկալվող շահույթը գերազանցում է ծախսերը: Ազգային անվտանգության տեսանկյունից նեոկլասիկ մոդելը ցույց է տալիս, որ աշխատուժի արտահոսքը թույլ է տալիս հասկանալ տնտեսական կախվածության ռիսկերը. եթե երկիրը կորցնում է իր ակտիվ բնակչության զգալի հատվածը, նրա տնտեսական և պաշտպանական կարողությունները նվազում են:

1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին Օդեդ Սթարքը և նրա գործընկերները ձևակերպեցին **նոր տնտեսական միգրացիայի** տեսությունը, որը հիմնովին տարբերվում էր նեոկլասիկ միգրացիոն մոդելից: Նեոկլասիկ մոդելը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում էր անհատների վրա՝ որպես միգրացիայի շարժիչ ուժի հիմնական դերակատարներ, մինչդեռ Սթարքը փոխեց տեսանկյունը դեպի ընտանիքը և համայնքը: Այս մոտեցման հիմնական եզրակացությունը հետևյալն է՝ միգրացիան ոչ միայն անհատի եկամուտը բարձրացնելու միջոց է, այլև **ընտանիքի կամ համայնքի կողմից ռիսկերը կառավարելու ռազմավարություն**: Ընտանիքը դիտարկում է միգրացիան որպես գործիք՝ բազմազանացնելու եկամուտները, ապահովելու կենսապահովումը և նվազեցնելու տնտեսական անկայունությունը (Stark 216-236): Սթարքը մանրամասնորեն վերլուծում է, թե ինչպես միգրացիան թույլ է տալիս ընտանիքներին նվազեցնել ռիսկերը, որոնք կապված են գյուղատնտեսական անապահով մթնոլորտի, բնապահպանական ճգնաժամերի կամ շուկաների անհավասար հասանելիության հետ: Ընտանիքը որոշում է ուղարկել մեկ կամ մի քանի անդամների արտագնա աշխատանքի, մինչ մնացածները պահպանում են արտադրության կամ տնային գործունեության շարունակականությունը: Այս մոտեցումը բացատրում է նաև **միգրանտների կողմից ուղարկվող փոխանցումների** բարձր մակարդակը՝ որպես ընտանիքի եկամուտների կայունացման միջոց: Օրինակ՝ Հայաստանի գյուղական համայնքներում հաճախ ընտանիքի մի անդամը մեկնում է Ռուսաստան կամ Եվրոպա աշխատելու, իսկ նրա ուղարկած դրամական փոխանցումները դառնում են ընտանիքի գոյատևման հիմնական աղբյուրը: «The Migration of Labor»-ում Սթարքը ընդգծում է, որ միգրացիան **համայնքային և սոցիալական կապերով ձևավորվող գործընթաց է**.

նախկին միգրանտների ցանցերը խթանում են նոր միգրացիաները և նվազեցնում ինտեգրման ռիսկերը նպատակային երկրում: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ միգրացիան երկարաժամկետ տնտեսական և սոցիալական անվտանգություն ապահովելու միջոց է ոչ միայն անհատի, այլ ամբողջ համայնքի համար: Ազգային անվտանգության տեսանկյունից Նոր տնտեսական միգրացիայի տեսությունը կարևոր է, քանի որ այն ցույց է տալիս, որ աշխատուժի արտահոսքը և եկամուտների հոսքերը ունեն ռազմավարական նշանակություն. ընտանիքների կողմից միգրացիոն որոշումների կայացումը կարող է մեղմել տնտեսական անկայունությունը, սակայն որոշ պետություններում, որտեղ արտահոսքը մեծ է, նվազում է մարդկային ռեսուրսների առկայությունը, ինչը կարող է ազդել երկրի տնտեսական և պաշտպանական կարողությունների վրա:

Կախվածության տեսությունը ձևավորվեց 1960–1970-ականներին, հատկապես Լատինական Ամերիկայի քաղաքական տնտեսագիտության շրջանակում: Այն հիմնված է մարքսիստական և նեոմարքսիստական մտահղացումների վրա և ուղղված է բացատրելու այն, թե ինչու են զարգացող երկրները երկարաժամկետ հեռանկարում մնում տնտեսական հետամնացության մեջ: Ըստ այս մոտեցման՝ միգրացիան պարզապես անհատների կամ ընտանիքների որոշում չէ, այլ գլոբալ կապիտալիստական համակարգի հետևանք: Աշխարհը բաժանված է երկու մասի՝ **կենտրոն**՝ զարգացած, արդյունաբերական երկրներ, որոնք կուտակում են կապիտալ, տեխնոլոգիաներ և վերահսկում են գլոբալ շուկաները, և **պերիֆերիա**՝ զարգացող երկրներ, որոնք հիմնականում մատակարարում են հումք և էժան աշխատուժ: Այս տեսության համաձայն, միգրացիան արտացոլում է այդ անհավասար փոխհարաբերությունը. պերիֆերիայի երկրները մշտապես մատակարարում են իրենց ակտիվ աշխատուժը կենտրոնի երկրներին՝ ամրապնդելով վերջիններիս տնտեսական գերակայությունը: «Կենտրոն–պերիֆերիա» հարաբերության սկզբունքը ձևակերպեց Ռաուլ Պրեբիշը (Prebisch, 8-15): Այս տեսության հիմնական դրույթներն են՝ 1. միգրացիան ոչ թե բնական տնտեսական հավասարակշռման հետևանք է (ինչպես ենթադրում էր նեոկլասիկ մոդելը), այլ՝ կախվածության կառուցվածքային դրսևորում: 2. Զարգացած երկրները շահում են միգրացիայից՝ ստանալով էժան և պատրաստ աշխատուժ, մինչդեռ զարգացող երկրները կորցնում են իրենց արտադրողական ռեսուրսները: 3. Միգրացիան նպաստում է համաշխարհային տնտեսական անհավասարության վերարտադրմանը: Օրինակ՝ Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի բազմաթիվ երկրներից աշխատուժի զանգվածային արտագաղթը դեպի ԱՄՆ և Եվրոպա դիտարկվում է ոչ միայն որպես անհատների տնտեսական ընտրություն, այլև որպես գլոբալ կապիտալիստական համակարգի պահանջ: Զարգացած երկրները ստանում են բարձր որակի աշխատուժ առանց իրենց կրթական համակարգի ծախսերը կրելու, իսկ պերիֆերիան կորցնում է իր մարդկային կապիտալը:

Կախվածության տեսությունը ցույց է տալիս, որ աշխատուժի արտահոսքը ոչ միայն թուլացնում է երկրի ներքին տնտեսությունը, այլև երկարաժամկետ հեռանկարում ստեղծում է **քաղաքական և անվտանգային կախվածություն**՝ զարգացած պետություններից: Սա հատկապես վտանգավոր է փոքր պետությունների համար, որտեղ «Փափուկ ուժի» ազդեցությունը կարող է հեշտությամբ վերածվել քաղաքական ճնշման:

Տրանսնացիոնալիզմի տեսությունը ձևավորվեց 1990-ականներին, երբ ակնհայտ դարձավ, որ միգրացիոն շարժերը հնարավոր չէ բացատրել միայն «մեկ ուղղությամբ հոսքի» տրամաբանությամբ: Միգրանտները ոչ միայն լքում են հայրենիքը և բնակություն հաստատում նոր երկրում, այլև շարունակում են ակտիվ կապեր պահպանել երկու աշխարհի միջև՝ ձևավորելով յուրատեսակ տրանսնացիոնալ տարածք: Այս հայեցակարգը գիտական շրջանառության մեջ ներմուծեցին ամերիկացի միգրացիոն հետազոտողներ Նինա Գլիկ Շիլլերը, Լինդա Բաշը և

Կրիստինա Սզանտոն Բլանկը (Schiller, Basch, Blanc,7–24): Նրանք պնդում էին, որ միգրանտները չեն դադարում լինել հայրենիքի հասարակության անդամներ. նրանք միաժամանակ կառուցում են կյանք և գործունեություն ինչպես ընդունող երկրում, այնպես էլ իրենց պատմական հայրենիքում:

Օրինակ՝ Հայկական սփյուռքը ԱՄՆ-ում և Ռուսաստանում վառ օրինակ է տրանսնացիոնալիզմի դրսևորման: Թեպետ մարդիկ ֆիզիկապես ապրում են մեկ այլ երկրում, նրանք շարունակում են ուղարկել ֆինանսական փոխանցումներ Հայաստան, ներդրումներ կատարել, աջակցել համայնքային և կրթական ծրագրերին: Միևնույն ժամանակ նրանք ներգրավվում են նաև քաղաքական գործընթացներում՝ լոբբիստական աշխատանքների միջոցով աջակցելով Հայաստանի շահերին:

Ազգային անվտանգության տեսանկյունից տրանսնացիոնալիզմը երկակի հետևանք ունի.

- Մի կողմից՝ սփյուռքի կապերը կարող են դառնալ ռազմավարական ռեսուրս՝ ներդրումների ներգրավում, գիտելիքի փոխանցում, միջազգային աջակցություն:
- Մյուս կողմից՝ նույն այդ կապերը կարող են ստեղծել արտաքին կախվածություն, իսկ որոշ դեպքերում՝ նաև միջամտության ալիքներ, երբ սփյուռքի կազմակերպությունները կամ ընդունող երկրները փորձում են ազդել հայրենիքի ներքին քաղաքականության վրա:

Միգրացիոն գործընթացների հետազոտության մեջ 1970-ականներից սկսած ձևավորվեց **«Ինստիտուցիոնալ տեսություն»** կոչվող մոտեցումը: Այն ընդգծում է, որ ժամանակի ընթացքում միգրացիան դառնում է ինքնավերարտադրվող երևույթ, քանի որ այն ոչ միայն անհատների կամ ընտանիքների, այլև մի ամբողջ ինստիտուցիոնալ դաշտի որոշումների արդյունք է: Հիմնական գաղափարն այն է, որ միգրացիան սկսելուց հետո աստիճանաբար ստեղծվում են կազմակերպություններ, ցանցեր և ծառայություններ, որոնք նպաստում են միգրացիայի շարունակականությանը: Հեղինակների շրջանում առանձնանում է Դուգլաս Մեսսիի դիտարկումը (Douglas, 431–466), որ շեշտում էր, որ միգրացիոն հոսքերը ժամանակի ընթացքում ամրապնդվում են ոչ միայն «ձգող» ու «վանող» գործոններով, այլև սոցիալական կապերով և ինստիտուցիոնալ միջավայրով: Այս համակարգի մեջ մտնում են ինչպես օրինական կառույցներ՝ գործակալություններ, ոչ պետական կազմակերպություններ, միջազգային կազմակերպություններ, այնպես էլ ոչ ֆորմալ՝ միջնորդներ, ցանցեր ու նույնիսկ քրեական խմբավորումներ, որոնք ձևավորում են միգրացիոն շուկան: Օրինակ՝ Եվրոպա անօրինական միգրանտների տեղափոխմամբ զբաղվող կազմակերպված ցանցերը կամ Ռուսաստան մեկնող հայերի համար ձևավորված գործակալությունները:

Այսպիսով, ինստիտուցիոնալ տեսությունը բացատրում է, թե ինչու միգրացիան նույնիսկ տնտեսական կամ քաղաքական խթանների նվազման պարագայում շարունակում է պահպանվել. այն արդեն դառնում է ինքնուրույն սոցիալ-տնտեսական ենթահամակարգ, որը վերարտադրում է իրեն:

Ազգային անվտանգության տեսանկյունից միգրացիայի ինստիտուցիոնալացումը պարունակում է լուրջ ռիսկեր: Երբ միգրացիոն հոսքերը կառավարվում են ոչ միայն պետական կառույցների, այլև մասնավոր միջնորդների, ստվերային գործակալությունների կամ նույնիսկ քրեական ցանցերի կողմից, առաջանում է մի նոր իրականություն. ձևավորվում է ստվերային տնտեսություն, որն ամբողջությամբ դուրս է մնում պետական վերահսկողությունից: Այս երևույթը, ինչպես ցույց են տալիս հետազոտողները, անմիջականորեն կապված է կոռուպցիայի, մարդկանց թրաֆիքինգի և կազմակերպված հանցավորության հետ: Ինստիտուցիոնալ տեսության համատեքստում սա նշանակում է, որ միգրացիան դառնում է ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև անվտանգային խնդիր. այն կարող է թուլացնել պետության ինստիտուցիոնալ կայունությունը և խարխլել հասարակական կարգը:

20-րդ դարի վերջում միգրացիայի և անվտանգության փոխկապակցվածությունը նոր որակ ստացավ Կոպենհագենի դպրոցի շրջանակում: Բարրի Բուզանը և Օլե Վևերն առաջարկեցին **անվտանգայնացման տեսությունը**, որը կոտրեց դասական պատկերացումները սպառնալիքների մասին: Ըստ այս մոտեցման՝ որևէ երևույթ ինքնին վտանգավոր չէ. այն **վտանգ է դառնում այն պահին, երբ քաղաքական և հասարակական դերակատարները այն ներկայացնում են որպես սպառնալիք**: Այս գործընթացը կոչվում է «անվտանգայնացում»:

Միգրացիայի դեպքում տեսությունը բացատրում է, թե ինչու է միգրանտների շարժը հաճախ ընկալվում որպես անվտանգային մարտահրավեր: Օրինակ՝ Եվրոպայում մուսուլման միգրանտների զանգվածային ներհոսքը ոչ միայն տնտեսական ու սոցիալական խնդիր էր, այլև քաղաքական ուժերի և մեդիայի կողմից ներկայացվեց որպես «ազգային ինքնության», «մշակութային համակեցության» ու նույնիսկ «հասարակական կարգի» սպառնալիք: Այսինքն՝ միգրացիան վտանգ չէ իր բնույթով, այլ վտանգ է դառնում այն ժամանակ, երբ այն ներկայացվում է որպես այդպիսին: Հայաստանի համար այս մոտեցումը նույնպես կիրառելի է: Սահմանային լարված իրավիճակներում կամ, երբ երկրում ներգաղթի ալիք է նկատվում այլ պետություններից, հանրային դիսկուրսում կարող է ձևավորվել ընկալում, թե միգրանտները սպառնում են երկրի **ժողովրդագրական կայունությանը**, **աշխատաշուկայի հավասարակշռությանը** կամ նույնիսկ՝ **անվտանգային համակարգին**: Այս ընկալումը ինքնին քաղաքականացվում է և վերածվում ազգային անվտանգության խնդրի, անկախ նրանից՝ իրական վտանգը որքանով է օբյեկտիվ: Կոպենհագենի դպրոցի մոտեցումը կարևորում է ոչ թե միգրացիայի «օբյեկտիվ» հետևանքները, այլ այն, թե ինչպես է միգրացիան ներկայացվում հասարակության և քաղաքական էլիտաների կողմից. հռետորաբանությունը և ընկալումը նույնքան կարևոր են, որքան փաստացի իրողությունները:

Եթե անվտանգության դասական մոդելները կենտրոնանում էին պետության տարածքային ամբողջականության և ռազմական կարողությունների վրա, ապա, 1990-ականներից սկսած, ձևավորվեց նոր ընկալում՝ **մարդկային անվտանգություն**: Այս մոտեցումը առաջին անգամ լայնորեն ձևակերպվեց ՄԱԿ-ի Մարդկային զարգացման զեկույցում (1994), որտեղ շեշտվում էր, որ պետության անվտանգությունը չի կարող ապահովվել, եթե դրա քաղաքացիները զրկված են իրենց սոցիալական, տնտեսական և քաղաքական անվտանգությունից:

Այս տեսության շրջանակում միգրացիան ստանում է երկակի բնույթ. այն միաժամանակ և՛ հետևանք է, և՛ պատճառ:

- **Միգրանտների խոցելիությունը.** նրանք հաճախ դառնում են շահագործման, մարդու իրավունքների խախտման և անվտանգության պակասի զոհեր: Մարդկային անվտանգությունը դիտարկում է միգրանտներին որպես առավել խոցելի խումբ, որը պահանջում է հատուկ պաշտպանություն:
- **Արտագաղթող երկրի կորուստները.** միգրացիան թուլացնում է համայնքների սոցիալական հենքը. նվազում է աշխատունակ բնակչությունը, քայքայվում են սոցիալական կապերը, իսկ պետությունը կորցնում է մարդկային կապիտալի կարևոր ռեսուրս:
- **Ընդունող երկրի ինտեգրացիոն խնդիրները.** միգրանտները հաճախ բախվում են մշակութային և սոցիալական խոչընդոտների, ինչը կարող է առաջացնել լարվածություն ընդունող հասարակությունում:

Ազգային անվտանգության տեսանկյունից՝ «մարդկային անվտանգություն» մոտեցումը կարևոր դաս է տալիս. եթե պետությունը չի կարողանում ապահովել իր քաղաքացիների **տնտեսական**, **սոցիալական** և **քաղաքական անվտանգությունը**, ապա միգրացիան դառնում է այդ թուլության բնական

հետևանքը և միաժամանակ այն բազմապատկող գործոնը: Այսինքն՝ արտագաղթը ոչ միայն արտացոլում է ներքին համակարգի խոցելիությունը, այլև խորացնում է այն՝ վտանգելով պետության կայունությունը և ինքնիշխանությունը:

Այսպիսով՝ միգրացիայի տեսական մոդելների զարգացումը՝ Ռավենշտեյնի դասական «օրինաչափություններից» մինչև Կոպենհագենի դպրոցի «անվտանգայնացման» մոտեցումը և «մարդկային անվտանգության» հայեցակարգը, ցույց է տալիս, որ միգրացիան երբեք չի կարող դիտարկվել միայն որպես տնտեսական կամ ժողովրդագրական շարժ: Այն միաժամանակ ունի սոցիալական, քաղաքական, մշակութային և անվտանգային հետևանքներ: Եթե նեոկլասիկ մոդելները շեշտադրում էին ռացիոնալ ընտրության և աշխատուժի շարժունակության գործոնը, ապա կախվածության և տրանսնացիոնալիզմի տեսությունները ընդգծեցին գլոբալ համակարգի ու սփյուռքի ազդեցությունը: Ինստիտուցիոնալ մոտեցումը ցույց տվեց, որ միգրացիան դառնում է ինքնավերարտադրվող երևույթ, իսկ անվտանգայնացման տեսությունը բացահայտեց միգրացիայի քաղաքական և հռետորաբանական չափումները: Վերջապես, մարդկային անվտանգության հայեցակարգը միգրանտին դնում է կենտրոնում՝ որպես անվտանգության հիմնական շահառու:

Ազգային անվտանգության տեսանկյունից այս բազմազան մոդելները հնարավորություն են տալիս հասկանալու, որ միգրացիոն գործընթացները միաժամանակ կարող են լինել և՛ հնարավորություն՝ տնտեսության զարգացման ու միջազգային կապերի ընդլայնման համար, և՛ սպառնալիք՝ ժողովրդագրական, սոցիալական և ինստիտուցիոնալ կայունության համար: Հետևաբար միգրացիոն քաղաքականությունը պետք է հիմնված լինի ոչ միայն տնտեսական հաշվարկների, այլև անվտանգության համապարփակ մոտեցման վրա՝ ներառելով պետության, հասարակության և անհատի շահերը:

ՀԻԲՐԻԴ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՆ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Հիբրիդ սպառնալիքների կատեգորիան անվտանգության ուսումնասիրման ժամանակակից ոլորտում ձևավորվել է 21-րդ դարի սկզբին և ընդգրկում է այնպիսի բազմաշերտ ազդեցության մեխանիզմներ, որոնք միավորում են ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, կիբեռնետիկ և սոցիալական գործոններ (Hoffman, 1-20): Հիբրիդ սպառնալիքը նպատակաուղղված է թուլացնելու պետության ներքին կայունությունը, սահմանադրական կարգը և արտաքին քաղաքական սուվերենությունը՝ կիրառելով ոչ թե բացահայտ պատերազմական գործողություններ, այլ փոխլրացնող ճնշման տարբեր միջոցառումներ: Այս համատեքստում միգրացիան դիտարկվում է ոչ միայն որպես սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական երևույթ, այլև որպես անվտանգային գործոն: Միգրացիոն գործընթացները կարող են վերածվել քաղաքական ազդեցության հզոր գործիքի, երբ արտաքին ուժերը նպատակաուղղված մանիպուլյացիայի ենթարկեն միգրացիոն հոսքերը կամ օգտվեն ներպետական կառավարման բացերից: Եվրոպական փորձը հաստատում է այս դիտարկումը. Թուրքիայի կողմից միգրացիոն ճնշման կիրառումը ԵՄ-ի նկատմամբ 2015–2016թթ. , ինչպես նաև Բելառուսի կողմից միգրանտների հոսքերի կազմակերպումը Լեհաստանի և Բալթյան երկրների սահմաններին 2021թ. ցույց են տալիս, որ միգրացիան կարող է վերածվել ոչ ավանդական քաղաքական և անվտանգային զենքի:

Հայաստանի դեպքում միգրացիոն գործընթացները ձևավորում են մի շարք ռիսկեր, որոնք կարող են դիտարկվել որպես հիբրիդ սպառնալիքի բաղադրիչներ.

Արտագաղթի ժողովրդագրական հետևանքներ - Հայաստանը վերջին երեք տասնամյակում կորցրել է բնակչության զգալի մասը: Այս միտումը խաթարում է տնտեսական աճի հիմքերը, թուլացնում է մարդկային

ռեսուրսների ներուժը և վտանգում է ազգային անվտանգության ամենաառանցքային բաղադրիչներից մեկը՝ պաշտպանունակությունը:

Փախստականների և տեղահանված անձանց հոսքեր - Արցախի բնակչության 2023թ. ստեղծեց լուրջ սոցիալ-տնտեսական բեռ, իսկ արտաքին ուժերի կողմից այդ իրավիճակի մանիպուլյացիան կարող է նպաստել ներքաղաքական լարվածության աճին:

Սփյուռքի գործոնը - Հայկական սփյուռքը Հայաստանի հզոր ռեսուրսներից մեկն է, սակայն դրա քաղաքականացման վտանգը մշտապես առկա է: Արտաքին դերակատարները կարող են փորձել օգտագործել սփյուռքի կառույցները որպես ճնշման կամ ազդեցության գործիք Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության վրա:

Աշխատանքային միգրացիայի կախվածություն - Հայաստանի տնտեսությունը զգալի չափով կախված է արտագնա աշխատանքի եկամուտներից. օրինակ՝ ՌԴ-ից եկող դրամական փոխանցումները կազմում են ՀՆԱ-ի զգալի մասը: Այս հանգամանքը Հայաստանը դարձնում է խոցելի ինչպես տնտեսական տատանումների, այնպես էլ քաղաքական ճնշումների նկատմամբ:

Հիբրիդ սպառնալիքների համատեքստում Հայաստանի միգրացիոն մարտահրավերները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

Ժողովրդագրական ճգնաժամի խորացում **-** արտագաղթը և ծնելիության նվազումը վտանգում են պետության կենսու-նակությունը երկարաժամկետ հեռանկարում:

Սոցիալական բևեռացում և լարվածություն - փախստական-ների ինտեգրման խնդիրները, աշխատաշուկայի սահմանափակ հնարավորությունները և սոցիալական պաշտպանական համակարգերի ծանրաբեռնվածությունը կարող են խորացնել հասարակության մեջ լարվածությունը:

Տեղեկատվական մանիպուլյացիաներ - արտաքին ուժերը կարող են միգրացիոն խնդիրները շահարկել մեդիա դաշտում՝ թուլացնելով պետական ինստիտուտների լեգիտիմությունը:

Արտաքին քաղաքական ճնշում - որոշ պետություններ կարող են օգտագործել միգրացիոն հոսքերը որպես բանակցային լծակ՝ Հայաստանի նկատմամբ զիջումներ կորզելու համար:

Քաղաքականության առաջարկներ Հայաստանի համար

Այս մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է համապարփակ միգրացիոն քաղաքականություն, որը ներառի հետևյալ հիմնական ուղղությունները.

Միգրացիոն կառավարման ինստիտուցիոնալ ամրապնդում - ստեղծել միասնական համակարգ, որտեղ բոլոր պետական մարմինների գործողությունները կհամակարգվեն ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքի համար:

Ժողովրդագրական և սոցիալական քաղաքականության ինտեգրում - արտագաղթի նվազեցման նպատակով պետք է ձևավորել երկարաժամկետ ծրագրեր երիտասարդության և աշխատուժի պահպանման համար:

Փախստականների ինտեգրման ռազմավարություն - Արցախից տեղահանվածների սոցիալ-տնտեսական ինտեգրումը պետք է դիտարկվի ոչ միայն որպես հումանիտար խնդիր, այլև որպես ազգային անվտանգության առաջնահերթություն:

Սփյուռքի ներուժի ռազմավարական օգտագործում - սփյուռքը պետք է ներգրավվի պետական քաղաքականության մեջ համակարգված և վերահսկելի կերպով՝ նվազեցնելով արտաքին շահարկումների վտանգը:

Տեղեկատվական անվտանգության ամրապնդում -պետությունը պետք է մշակի հաղորդակցական ռազմավարություն միգրացիոն ճգնաժամերի ժամանակ՝ կանխելու արտաքին մանիպուլյացիաները:

Միջազգային համագործակցություն - Հայաստանը պետք է ակտիվացնի համագործակցությունը ԵՄ-ի, ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) և այլ կառույցների հետ՝ միգրացիոն ճնշումները մեղմելու նպատակով:

Այսպիսով՝ Հայաստանի համար միգրացիոն գործընթացները հստակորեն տեղավորվում են հիբրիդ սպառնալիքների տրամաբանության մեջ: Արտագաղթը, փախստականների ճգնաժամը, սփյուռքի քաղաքական շահարկման հնարավորությունը և արտաքին պետություններից կախվածությունը միասին ձևավորում են բարդ անվտանգային դաշտ: Հետևաբար անհրաժեշտ է մշակել միգրացիոն անվտանգության համապարփակ ռազմավարություն, որը կապահովի ոչ միայն սոցիալական և տնտեսական, այլև քաղաքական և անվտանգային կայունություն:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հոդվածում իրականացված վերլուծությունը ցույց տվեց, որ միգրացիան Հայաստանի պայմաններում պետք է դիտարկվի ոչ միայն սոցիալ-տնտեսական կամ ժողովրդագրական գործընթաց, այլև որպես անվտանգային և քաղաքական գործոն: Տեսական մոդելների ուսումնասիրությունը, ինչպես նաև հիբրիդ սպառնալիքների ժամանակակից դինամիկայի դիտարկումը հնարավորություն տվեցին բացահայտելու այն հիմնական ռիսկերն ու մարտահրավերները, որոնք միգրացիան կարող է առաջացնել ազգային անվտանգության համակարգի համար: Այս համատեքստում կարևոր է առանձնացնել հետևյալ հիմնական եզրահանգումները.

- Միգրացիան Հայաստանի համար դուրս է գալիս զուտ սոցիալ-տնտեսական երևույթի սահմաններից և ձեռք է բերում անվտանգային և քաղաքական նշանակություն. այն դառնում է գործոն, որը կարող է ինչպես ամրապնդել, այնպես էլ թուլացնել պետական կայունությունը:
- Միգրացիայի վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունները (Ռավենշտեյնի օրինաչափություններ, վանող–ձգող մոդել, նեոկլասիկ մոտեցում և այլն) Հայաստանի պայմաններում ձեռք են բերում հատուկ իմաստ՝ ցույց տալով, որ արտագաղթի գործընթացները ուղիղ ազդեցություն ունեն ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական անվտանգության վրա:
- Հիբրիդ սպառնալիքների աճը միգրացիոն հոսքերը դարձնում է արտաքին ուժերի կողմից կիրառվող մանիպուլյացիոն գործիք. տեղեկատվական պատերազմները, քարոզչական նարատիվները և ներքաղաքական շահարկումները միգրացիան վերածում են քաղաքական ճնշման լծակի:
- Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը և տարածաշրջանային հակամարտությունները նպաստում են նրան, որ միգրացիան դառնա ոչ միայն սոցիալական, այլև ռազմավարական մարտահրավեր՝ կապված տարածքային անվտանգության և պետական ինստիտուտների կայունության հետ:
- Պետական կառավարման համակարգի սահմանափակ կարողությունները միգրացիոն ճգնաժամերի պայմաններում մեծացնում են արտաքին ազդեցությունների արդյունավետությունը և նվազեցնում հասարակության դիմադրողականությունը:
- Հիբրիդ սպառնալիքների չեզոքացման և միգրացիոն գործընթացների կայուն կառավարման համար անհրաժեշտ է համապարփակ քաղաքականություն, որը պետք է ներառի ժողովրդագրական, տնտեսական, տեղեկատվական և անվտանգության բաղադրիչներ:
- Միջազգային համագործակցությունը և համաշխարհային լավագույն փորձի կիրառումը կենսական են Հայաստանի համար՝ միգրացիայի անվտանգային հետևանքները կանխատեսելի և կառավարելի դարձնելու նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Glick Schiller, Nina, Basch, Linda, & Blanc-Szanton, Cristina. *Towards a Transnational Perspective on Migration: Race, Class, Ethnicity, and Nationalism Reconsidered*. New York: New York Academy of Sciences, 1992.
2. Frederick Hoffman *Conflict in the 21st Century: The Rise of Hybrid Wars*. Potomac Institute for Policy Studies, 2007.
3. Everett Samuel Lee "A Theory of Migration". *Demography*, Vol. 3, No. 1, 1966.
4. Douglas Scott Massey, "Theories of International Migration: A Review and Appraisal". *Population and Development Review*, Vol.19 No. 3, 1993.
5. Prebisch, Raúl. "The Economic Development of Latin America and its Principal Problems". United Nations, New York, 1950.
6. Ernst Georg Ravenstein. "The Laws of Migration". *Journal of the Statistical Society of London*, Vol. 48, No. 2, 1885.
7. Larry Alan Sjaastad. "The Costs and Returns of Human Migration". Journal of Political Economy, Vol. 70, No. 5, 1962.
8. Oded Stark. "The Migration of Labor". *Blackwell*, 1991.

MIGRATION AND NATIONAL SECURITY: THEORETICAL MODELS AND HYBRID THREATS

TIGRAN GHAZARYAN
Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, Department of the Police Troops, Head, Lieutenant Colonel;
Yerevan Institute of Forensic Examination and Psychology, Lecturer;
Yerevan State University, Faculty of International Relations Department of Political Science, Ph.D. Student, Lawyer, Political Scientist,
Yerevan, the Republic of Armenia

The aim of the article is to identify the fundamental features of the interaction between migration and national security, comparing classical and modern theories of migration, analyzing the role of hybrid threats and assessing the challenges and opportunities emerging for Armenia.

To achieve the goal, we have set ourselves the following tasks: to analyze classical and modern theories of migration to determine their security dimension, to identify the main mechanisms of the interaction between migration and national security; to study the interrelationship of hybrid threats and migration processes in the conditions of modern global and regional realities; to assess the possible impacts of migration flows on the national security system of Armenia.

Historical, comparative, analytical, theoretical, causal methods were used during the research.

The main conclusion made within the framework of the research is that migration and national security are in intensive interaction, and the relationship between them is conditioned by both socio-economic and political and security factors. Classical theories of migration emphasize the role of economic motives and the labor market, while modern approaches emphasize the influence of political, social, and hybrid threats. Hybrid threats, including crises in the information, energy, and security sectors, can multiply the impact of migration flows on small states, including Armenia. The analysis shows that for Armenia, a joint observation of migration processes in the context of national security is necessary both for the prevention of threats and for the effective use of new opportunities. Policies and strategies developed in such a format can reduce the negative

impacts of migration and promote socio-economic stability, as well as contribute to the long-term provision of the internal and external security of the state.

Keywords: *migration, national security, hybrid threats, emigration, diaspora, demographic risks, migration policy.*

МИГРАЦИЯ И НАЦИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ: ТЕОРЕТИЧЕСКИЕ МОДЕЛИ И ГИБРИДНЫЕ УГРОЗЫ

ТИГРАН КАЗАРЯН
преподаватель Института судебной экспертизы и психологии,
аспирант кафедры политологии факультета международных отношений
Ереванского государственного университета,
начальник отдела кадров войск полиции Министерства внутренних дел
Республики Армения,
г. Ереван, Республика Армения

Целью статьи является выявление фундаментальных особенностей взаимодействия миграции и национальной безопасности, сравнение классических и современных теорий миграции, анализ роли гибридных угроз и оценка возникающих для Армении вызовов и возможностей.

Для достижения цели мы поставили перед собой следующие задачи: проанализировать классические и современные теории миграции для определения их аспекта безопасности, выявить основные механизмы взаимодействия миграции и национальной безопасности; изучить взаимосвязь гибридных угроз и миграционных процессов в условиях современных глобальных и региональных реалий. Оценить возможное воздействие миграционных потоков на систему национальной безопасности Армении.

В ходе исследования были использованы исторический, сравнительный, аналитический, теоретический и причинно-следственный методы.

Основной вывод, сделанный в рамках исследования, заключается в том, что миграция и национальная безопасность находятся в интенсивном взаимодействии, а взаимосвязь между ними обусловлена как социально-экономическими, так и политическими факторами и факторами безопасности. Классические теории миграции подчеркивают роль экономических мотивов и рынка труда, в то время как современные подходы акцентируют влияние политических, социальных и гибридных угроз. Гибридные угрозы, включая кризисы в сфере информации, энергетики и безопасности, могут многократно усилить воздействие миграционных потоков на малые государства, включая Армению. Анализ показывает, что для Армении совместное наблюдение за миграционными процессами в контексте национальной безопасности необходимо как для предотвращения угроз, так и для эффективного использования новых возможностей. Политика и стратегии, разработанные в таком формате, способны снизить негативное воздействие миграции и способствовать социально-экономической стабильности, а также долгосрочному обеспечению внутренней и внешней безопасности государства.

Ключевые слова: *миграция, национальная безопасность, гибридные угрозы, эмиграция, диаспора, демографические риски, миграционная политика.*

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ, ԴՈԿՏՐԻՆԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (1991-2023 ԹԹ.) *

ՀՏԴ 327 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-53*

ԱՐՏՅՈՄ ՊՈՂՈՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի հայցորդ,
ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի պետի տեղակալ, գնդապետ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
artyomhovhannesi@gmail.com
ORCID: 0009-0004-4299-1460

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, որ ժամանակակից պայմաններում Հարավային Կովկասում Ռուսաստանի Դաշնության համար առաջացել է արտաքին քաղաքական հարաբերությունների վերագնահատման և որոշակի վերափոխման անհրաժեշտություն: Հոդվածում նորովի են դիտարկվում Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հիմնական հայեցակարգային ուղղությունները, ինչպես նաև այն քաղաքական, տնտեսական և ռազմավարական լծակները, որոնք Մոսկվան օգտագործում է Հարավային Կովկասի երկրների հետ հարաբերություններում:

Ուսումնասիրության հիմնական խնդիրներից են՝

1. Նոր հիմնավորումներով բացահայտել Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական դրույթները, ներկայացնել, թե այն որ ուղղություններով է շարժվելու, և ինչ զարգացումներ կարող են տեղի ունենալ:

2. Հետևել Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության զարգացման դինամիկային՝ վերլուծելով հիմնական փաստաթղթերի՝ արտաքին քաղաքականության հայեցակարգի և ռազմական դոկտրինի հիմնադրույթները, ինչպես նաև արտաքին քաղաքականության առաջնահերթությունները Հարավային Կովկասի տարածաշրջանում:

Աշխատանքի հետազոտման համար կիրառվել են քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ոլորտում ընդունված մի շարք գիտական մեթոդներ, մասնավորապես՝ վերլուծական, համադրական, պատմա-քաղաքական համակարգային մոտեցման, բովանդակային վերլուծության և այլն:

Աշխատանքում հիմնավորվել են քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ոլորտում ընդունված տեսական մոտեցումները, վերլուծվել են Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականությանը վերաբերող պաշտոնական փաստաթղթերը, ռազմավարական հայեցա-կարգերը, գիտական հրապարակումները և փորձագիտական գնահատա-կանները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան աղբյուրներ, ինչը հնարավորություն է տվել համակողմանիորեն վերլուծելու Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում:

* Հոդվածը ներկայացվել է 12.09.2025թ., գրախոսվել՝ 20.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Հիմնաբառեր՝ *Ռուսաստան, հայեցակարգ, Հարավային Կովկաս, ռազմավարություն, համագործակցություն, արտաքին քաղաքականություն, դոկտրին:*

Ներածություն

Խորհրդային Միության փլուզմամբ ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակն առաջացրեց աննախադեպ միջազգային իրադրություն, որն իր հերթին ծնունդ տվեց տվյալ ժամանակին և իրականությանը հատուկ մարտահրավերների ու խնդիրների: Ստեղծված իրականությունը նոր մոտեցում էր պահանջում նաև պետության արտաքին քաղաքականության մշակման ու ձևավորման հարցում, ինչը ոչ թե տեսական բանավեճերի, այլ բավականին բարդ միջազգային խնդիրների վերաբերյալ հստակ լուծումների փնտրտուքի գործընթաց էր: Ունենալով կենսական շահեր մրցակցության թատերաբեմ Հարավային Կովկասում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ) մի քանի անգամ վերանայել է տարածաշրջանային իր ռազմավարությունը՝ կանխելու Հարավային Կովկասում այլ ուժային կենտրոնների ի հայտ գալը: ՌԴ-ն ունեցել է արտաքին քաղաքականության վեց հայեցակարգ՝ 1993, 2000, 2008, 2013, 2016, 2023 թվականներին: Անհրաժեշտություն էր առաջացել վերագնահատելու և որոշակիորեն վերափոխելու հարաբերություններն արդեն նոր ձևավորված մերձավոր արտասահմանի հետ: Հենց այս ամենն էլ թելադրում էր արտաքին քաղաքական գծի ձևավորման տրամաբանությունն ու բովանդակությունը: Անցումային իրադրությունը Ռուսաստանին հնարավորություն չէր տալիս հստակ տեսնելու իր նոր կերպարը, ստանալու մասնավորապես հետևյալ հարցերի պատասխանները՝ ինչի՞ց է հրաժարվում և ի՞նչ է ցանկանում վերականգնել ու նորից ստեղծել:

Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական առաջին հայեցակարգը («Կոզիրևի դոկտրին»)

ՌԴ արտաքին քաղաքական առաջին հայեցակարգն ընդունվել է 1993թ. ապրիլին, այն մասնագիտական գրականության մեջ կոչվում է «Կոզիրևի դոկտրին», որն առաջին համապարփակ արտաքին քաղաքական փաստաթուղթն էր հետխորհրդային շրջանում: Այս հայեցակարգի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ այն, լինելով հռչակագրային բնույթի փաստաթուղթ, կրում էր ժամանակի ազդեցությունը և արևմտականացման ձևավորված մթնոլորտի հետքը: Դոկտրինն արձանագրում էր, որ ժողովրդավարական Ռուսաստանի համար ԱՄՆ-ը և արևմտյան մյուս ժողովրդավարական երկրները նույնքան բնական գործընկերներ և ապագա դաշնակիցներ են, որքան որ նրանք թշնամիներ էին ամբողջատիրական ԽՍՀՄ-ի համար: Այդ ամենը հիմնավորվում էր համոզմամբ, որ գործընկերությանն այլընտրանք չկա: Հայեցակարգն ամրագրում էր, որ գաղափարախոսությունների պայքարն ավարտվել է, ժամանակն է տնտեսական, դիվանագիտական, ռազմական և այլ միջոցներով առաջ տանելու Ռուսաստանի շահը: Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրների (մերձավոր արտասահմանի) հետ հարաբերությունները դիտարկվում էին Ռուսաստանի անվտանգության, բարեփոխումների ապագայի, տվյալ երկրներում Ռուսաստանի քաղաքացիների իրավունքների համատեքստում: Ռուսաստանը նոր «կենտրոնի դեր ստանձնելու հավակնություններ չունի, քանի որ հետաքրքրություններն այնքան շատ չեն, որ դրանց իրագործման համար վճարվի ցանկացած գին»: ԱՊՀ երկրների հետ հարաբերություններում որդեգրված «սառնությունը» հանգեցրեց տարածաշրջանում ՌԴ ազդեցության կտրուկ անկման: Պատահական չէր, որ այդ բացը լրացնելու համար արդեն 1995թ. սեպտեմբերին ՌԴ նախագահի թիվ 940 հրամանագրով հաստատվեց

«ԱՊՀ անդամ երկրների հետ Ռուսաստանի ռազմավարական ուղեգիծը», որի հիմնավոր ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ ԱՊՀ զարգացումը դիտվում էր ՌԴ կենսական շահերին համապատասխանող, իսկ հարաբերությունները՝ որպես համաշխարհային քաղաքական և տնտեսական կառույցներում Ռուսաստանին ներգրավելու կարևոր գործոն: Ազգային անվտանգության առումով միանշանակ ընդգծվում էր՝ երրորդ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում հասնել նրանց կողմից այն ըմբռնման, որ ԱՊՀ-ն նախ և առաջ Ռուսաստանի շահերի գոտի է: ԱՊՀ երկրներին հաստատակամորեն և հետևողականորեն պետք է հանգեցնել միջազգային ասպարեզում խնդիրների վերաբերյալ ընդհանուր դիրքերից ներկայանալուն: Նշվում էր, որ ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերություններում գլխավոր խնդիրներից է ԱՊՀ երկրների հետ Ռուսաստանի հարաբերություններն առճակատման ոգով կառուցելու անթույլատրելիությունը, ինչպես նաև Ռուսաստանի՝ որպես առաջատար ուժի դերի ամրագրումը հետխորհրդային տարածքում միջպետական, քաղաքական և տնտեսական հարաբերությունների նոր համակարգի ձևավորման մեջ: Սա կարելի է համարել որոշակի շեղում ՌԴ արտաքին քաղաքականության 1993թ. հայեցակարգից, քանի որ, ինչպես նշեցինք, ամրագրված էր, որ ԱՊՀ շրջանակներում «Ռուսաստանը նոր կենտրոնի» դեր ստանձնելու հավակնություններ չունի:

Ռուսաստանի Դաշնության՝ 1993թ. ռազմական դոկտրինի հիմնարար դրույթները

1993թ. նոյեմբերի Ռուսաստանի նախագահի հրամանագրով հաստատվեցին ՌԴ ռազմական դոկտրինի հիմնարար դրույթները: Փորձագիտական գնահատականներով այն անցումային շրջանի առաջին ռազմաքաղաքական փաստաթուղթն էր, որում ուրվագծում էին երկիրը պաշտպանության նախապատրաստելու, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ռազմական քաղաքականության պաշտպանական բնույթը և կենսական շահերը: Արձանագրվեցին ազգային և կոլեկտիվ պաշտպանության կազմակերպումը ԱՊՀ շրջանակներում, ՄԱԿ-ի որոշումներին համապատասխան՝ խաղաղապահ գործողություններ իրականացնելու համար զինված ուժերի կիրառման հնարավորությունը: Ռազմաքաղաքական իրավիճակը ներկայացվում էր խաղաղասիրական դիրքերից՝ փորձելով հարթել արևմտյան պետությունների հետ առկա հակասությունները: Դոկտրինում շոշափվող *«մենք հակառակորդներ չունենք, և մեզ ոչ ոք չի սպառնում»* գաղափարը չէր արտացոլում օբեկտիվ պայմանները, ինչն էլ հանգեցրեց զինված ուժերի կտրուկ կրճատմանը, ռազմարդյունաբերական համալիրի փլուզմանը, որը բացասական հետևանքներ ունեցավ երկրի պաշտպանունակության վրա:

Ռուսաստանի Դաշնության՝ 2000թ. արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը

2000թ. հունիսի հաստատվեց ՌԴ արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը: Նախորդի համեմատ այն ավելի գործնական, հստակ ու իրատեսական մոտեցում էր որդեգրել քաղաքականության մեջ: ԱՊՀ անդամ երկրների հետ հարաբերությունները համարվում էին երկրի արտաքին քաղաքականության գերակա ուղղություն՝ ներառելով երկկողմ և բազմակողմ համագործակցությունը: Հայեցակարգում Հարավային Կովկասի տարածաշրջանը առանձնահատուկ դեր էր ստանում, ձեռնարկվում էին փորձեր՝ նոր կարգավիճակ ձեռք բերած հարևան երկրների հետ, իրողություններին համահունչ, հաստատել հարաբերություններ, որոնք կհամապատասխանեն քաղաքական, տնտեսական և անվտանգային պայմաններին:

Առկա հակամարտությունների համատեղ կարգավորման, բարիդրացիական հարաբերությունների հաստատման և ռազմավարական գործընկերության զարգացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը այդ հայեցակարգի հիմնարար դրույթներից էին: Մոսկվան որոշել էր տարածաշրջանի երկրների հետ իր հարաբերություններում օգտագործել ինտեգրացիոն միավորներ ստեղծելու գործելաոճը: Փաստաթուղթը բովանդակային հիմք ծառայեց հետագա՝ 2008թ. 2013թ. և 2016թ. հայեցակարգերի ձևավորման համար: ՌԴ ռազմավարությունը աստիճանաբար դառնում էր ավելի ագրեսիվ՝ հիշեցնելով, որ Ռուսաստանի հետ պետք է հաշվի նստել որպես հավասարը հավասարի: «Մենք չենք կարող և չպետք է պարտվենք ռազմավարական առումով: Մեր ներքին և արտաքին անկախ քաղաքականության հիմքը պրագմատիզմն է, տնտեսական արդյունավետությունը և ազգային նպատակների առաջնահերթությունը»,- նշել էր ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: Վրաստանը և Ադրբեջանն աստիճանաբար հեռանում էին ՌԴ-ից, և, կապերը պահպանելու համար, ՌԴ-ն նախաձեռնեց երկկողմ և բազմակողմ մի շարք հարթակներ՝ նրանց հետ համագործակցային հարաբերությունները պահպանելու և խորացնելու նպատակով:

Ռուսաստանի Դաշնության՝ 2000թ. ռազմական դոկտրինը

2000թ. ապրիլին ՌԴ նախագահի հրամանագրով հաստատվեց Ռուսաստանի Դաշնության ռազմական դոկտրինը: Փաստաթղթի վերլուծությունը ցույց է տալիս, որ միջազգային իրավիճակի որոշ դրական փոփոխություններն նվազեցրել էին Ռուսաստանի և նրա դաշնակիցների դեմ ավանդական ձևերով իրականացվող ռազմական ագրեսիայի սպառնալիքը: Այնուամենայնիվ, Ռուսաստանը շարունակում էր պահպանել միջուկային տերության իր կարգավիճակը՝ իր և կամ իր դաշնակիցների դեմ ագրեսիան զսպելու (կանխելու) նպատակով: Առաջնահերթություն էր տրվում ԱՊՀ և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ պետությունների հետ դաշնակցային հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը, ջանքերի համախմբմանը՝ կոլեկտիվ անվտանգության և համատեղ պաշտպանության ապահովման շահերից ելնելով:

Ռուսաստանի Դաշնության՝ 2008թ. արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը

2008թ. հուլիսին հրամանագիր ստորագրվեց արտաքին քաղաքականության նախորդ հայեցակարգը խմբագրելու մասին: Նոր հայեցակարգը եկավ շարունակելու իր նախորդների որդեգրած գիծն ու առավել խորացնելու դրանում ամրագրված սկզբունքները, բարձրաձայնելու մինչ այդ ոչ պատշաճ մակարդակով քննարկված դրույթները: ՌԴ-ն այս ժամանակահատվածում առաջ քաշեց ցանցային դիվանագիտության հայեցակարգը, որը հակադրվում էր դասական ռազմաքաղաքական դաշինքներին, քանի որ ենթադրում էր ճկուն, ոչ ֆորմալ կառույցների ստեղծում՝ կոնկրետ խնդիրներ լուծելու համար: Ի տարբերություն կոշտ դաշինքների՝ ցանցային դիվանագիտությունը գործում է բազմազան, այդ թվում՝ ոչ համակարգային դերակատարների (պետություններ, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ, անհատներ) ցանցի միջոցով՝ մարտահրավերներին և սպառնալիքներին ավելի ճկուն արձագանքելու համար: Տարածաշրջանային գերակայությունների սանդղակում առաջին հորիզոնականը կրկին հատկացնելով ԱՊՀ-ին և ՀԱՊԿ-ին՝ հաստատվում էր դրանց ներուժի լիարժեք իրացումը, երկկողմ և բազմակողմ համագործակցության զարգացումը: ՌԴ-ն ԱՊՀ շրջանակներում որոշակի հաջողություններ գրանցեց՝ կառույցի գործընկերների հետ ստորագրեց Ազատ

առևտրի գոտի ստեղծելու մասին համաձայնագիրը: 2010թ. հունվարի 1-ին ստեղծվեց Մաքսային միությունը, իսկ երկու տարի անց՝ Միասնական տնտեսական տարածքը:

Ռուսաստանի Դաշնության՝ 2010թ. ռազմական դոկտրինը

2010թ. փետրվարին ՌԴ նախագահի հրամանագրով հաստատվեց ՌԴ ռազմական դոկտրինը, որում Ռուսաստանը հանդես էր գալիս ՀԱՊԿ և ԱՊՀ անդամ պետությունների հետ կոլեկտիվ անվտանգության համակարգի ամրապնդման, արդյունավետության, դրա ներուժի ընդլայնման օգտին՝ աջակցելով դաշնակցային հարաբերությունների զարգացմանը, կոլեկտիվ ուժերի ձևավորմանը, փոխադարձ պաշտպանությունը բարձրացնելուն: Այն իրականացվում էր ՀԱՊԿ-ի շրջանակներում և երկկողմ համաձայնագրերի հիման վրա, համատեղ պաշտպանության և կոլեկտիվ անվտանգության ապահովմամբ: Կոալիցիոն քաղաքականությունը սահմանվում էր որպես Ռուսաստանի հանձնառություն՝ համարժեք ռազմական ուժ կիրառելու՝ ԱՊՀ և ՀԱՊԿ գործընկերներին պաշտպանելու համար: ԱՊՀ-ում կարևոր էր միջազգային անվտանգության ոլորտում համագործակցության ամրապնդումը, խաղաղապահ ուժերի՝ միջազգային խաղաղապահ առաքելության մեջ ներգրավումը ՄԱԿ-ի կամ ԱՊՀ մանդատի հովանու ներքո: ՀԱՊԿ անդամ պետություններին ուղղված ռազմական սպառնալիքներին արագ արձագանքելու համար նախատեսվում էր կիրառել արագ արձագանքման հավաքական ուժերը:

Ռուսաստանի Դաշնության՝ 2013թ. արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը

2013թ. փետրվարի 12-ին հաստատվեց ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգի հերթական տարբերակը: Փաստաթղթի վերլուծությունից պարզ է դառնում, որ ռազմաքաղաքական առումով ՀԱՊԿ-ն համարվում էր տարածաշրջանում անվտանգության ապահովման կարևորագույն օղակներից մեկը: ՀԱՊԿ-ի զարգացումը դիտվում էր որպես ԱՊՀ տարածաշրջանում կայունության և անվտանգության պահպանման հիմնական գործիք՝ այն վերածելով իր պատասխանատվության ոլորտում անվտանգության ապահովման կարևորագույն ինստիտուտի, ինչպես նաև ազդեցիկ միջազգային կազմակերպության, որն ունակ է լինելու հակազդել ժամանակակից մարտահրավերներին և սպառնալիքներին՝ տարբեր գլոբալ և տարածաշրջանային գործոնների ազդեցության աճի պայմաններում: 2013 թվականից հետխորհրդային տարածքում ՌԴ շահերը և նպատակները տեղավորվում էին ինտեգրացիոն նախագծերի խորացման ու նոր որակի համախմբման գործողություններում: Դրա առարկայական դրսևորումը 2014թ. Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ձևավորումն էր, որին միացավ նաև Հայաստանի Հանրապետությունը: Հայեցակարգը վերլուծելիս ՌԴ ԱԳ նախարար Լավրովը նշել էր. «Ռուսաստանը գլոբալ քաղաքականության մեջ վարում է անկախ արտաքին քաղաքականություն, որը, պայմանավորված լինելով երկրի աշխարհագրական չափերով, աշխարհաքաղաքական յուրահատուկ դիրքով, պատմամշակութային բազմադարյա ավանդույթներով և ռուս ազգի ինքնագիտակցությամբ, հնարավոր չէ «զսպել» անգամ տեսականորեն»:

Ռուսաստանի Դաշնության՝ 2014թ. ռազմական նոր դոկտրինը

2014թ. դեկտեմբերի ՌԴ նախագահի հրամանագրով հաստատվեց Ռուսաստանի Դաշնության ռազմական նոր դոկտրինը: Դրանում կարևոր դեր էր վերապահվում ՀԱՊԿ-ին և ԱՊՀ-ին՝ որպես տարածաշրջանային անվտանգության համակարգի ճարտարապետության տարրերի: Այդ կառույցները դիտարկվում են

որպես դաշնակիցների կոլեկտիվ անվտանգության ուժերի ու միջոցների զարգացման, ընդհանուր մարտահրավերներին ու սպառնալիքներին արդյունավետ հակազդելու, ինչպես նաև համատեղ պաշտպանության ապահովման առանցքային հարթակներ: ՌԴ նախագահ Վ. Պուտինը մասնավորապես նշել էր, որ ռազմական դոկտրինը պաշտպանական բնույթ ունի: Հիմնական նպատակն է ապահովել երկրի ինքնիշխանությունը և քաղաքացիների խաղաղությունն ու անդորրը: ՆԱՏՕ-ի ընդլայնումը համարվում էր հիմնական վտանգներից մեկը: Փաստաթղթում ներառված էին նաև ՀԱՊԿ կոլեկտիվ անվտանգության համակարգի ամրապնդումը և դրա ներուժի զարգացումը ԱՊՀ շրջանակում, Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ փոխգործակցության զարգացումը:

ՌԴ 2016թ. արտաքին քաղաքականության նոր՝ խմբագրված հայեցակարգը

2016թ. նոյեմբերին հրապարակվեց ՌԴ արտաքին քաղաքականության խմբագրված հայեցակարգը: Այս ուղենշային և հիմնարար փաստաթուղթն իր նոր շեշտադրումներով և ուղղվածությամբ տարբերվում էր նախորդներից: Հայեցակարգում բացահայտվում էր առանցքային այն դրույթը, որ պետության կողմից կիրառվող «փափուկ ուժի» գործիքները և մեթոդները դառնում են միջազգային քաղաքականության անբաժանելի բաղադրիչներ, որոնց միջոցով ձևավորում է պետության գրավչությունը և բարձրացվում նրա ազդեցությունը այլ երկրների վրա: ՌԴ արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղություններն էին ԱՊՀ անդամ պետությունների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության զարգացումը դրա ներուժի հետագա իրացման ուղղությամբ՝ ամրապնդելով այն որպես ազդեցիկ տարածաշրջանային կազմակերպություն: Ռուսաստանը ՀԱՊԿ-ն դիտարկում էր որպես հետխորհրդային տարածքում ժամանակակից անվտանգության համակարգի կարևորագույն տարրերից մեկը: Ըստ փաստաթղթի՝ Մոսկվան հետաքրքրված էր նաև Վրաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ այն ոլորտներում, որտեղ վրացական կողմը պատրաստ էր: Ռուսաստանի համար շարունակում էր առաջնահերթություն մնալ Աբխազիայի և Հարավային Օսիայի զարգացմանն աջակցելը՝ ապահովելով հուսալի անվտանգություն և սոցիալ-տնտեսական վերականգնում:

Ռուսաստանի Դաշնության՝ 2023թ. արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը

2023թ. մարտի 31-ին հրապարակվեց ՌԴ արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը: Փաստաթուղթը, անդրադառնալով նոր աշխարհակարգի ձևավորմանը, հնարավորություն էր տալիս ձևակերպելու այն հիմնավորված եզրակացությունը, որ մարդկությունն անցնում է հեղափոխական փոփոխությունների դարաշրջան, բազմաբևեռ աշխարհի ձևավորումը շարունակվում է: Հզորացող Ռուսաստանը, համարվելով ժամանակակից աշխարհի զարգացման առաջատար կենտրոններից մեկը, իսկ նրա անկախ արտաքին քաղաքականությունը՝ վտանգ արևմտյան գերիշխանությանը, նշում էր, որ միջազգային հարաբերությունների համակարգը պետք է լինի բազմաբևեռ: Տարածաշրջանային անվտանգությունն ամրապնդելու, տեղական և տարածաշրջանային պատերազմները կանխելու, ներքին զինված հակամարտությունները կարգավորելու համար ՌԴ-ն մտադիր էր առաջնահերթ ուշադրություն դարձնել քաղաքական և դիվանագիտական միջոցների ձեռնարկմանը, դաշնակիցների և գործընկերների հետ ռազմական, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը, խաղաղապահ գործունեության մեջ ՌԴ դերի բարձրացմանը, ՄԱԿ-ի ու ՀԱՊԿ-ի խաղաղապահ և հակաճգնաժամային ներուժի ամրապնդմանը և այլն: Կարևորվում

էին երկարաժամկետ բարիդրացիական հարաբերությունների ապահովումը և տարածաշրջանի երկրների ու Ռուսաստանի միջև տարբեր ոլորտներում առկա ներուժի զարգացումը: Փաստաթղթի համաձայն՝ ՌԴ-ն նախատեսում էր առաջնահերթ ուշադրություն դարձնել տարածաշրջանային երկրների միջև զինված հակամարտությունների կանխմանը և կարգավորմանը, միջպետական հարաբերությունների բարելավմանը, ինչպես նաև տարածաշրջանի կայունության և անվտանգության ապահովմանը՝ ամրապնդելով տարածաշրջանային անվտանգության համակարգը ՀԱՊԿ և այլ ձևաչափերի միջոցով: Նշվում էր, որ Ռուսաստանը ձգտում է Եվրասիան վերափոխել խաղաղության, կայունության, փոխադարձ վստահության, զարգացման և բարգավաճման միասնական համամայրցամաքային տարածքի: Այդ նպատակը ներառում էր լայն ինտեգրացիա՝ եվրասիական մեծ գործընկերության ձևավորում, ԵԱՏՄ-ի, Եվրասիայի բոլոր պետությունների, տարածաշրջանային կազմակերպությունների և ասոցիացիաների ներուժի համատեղում: Ըստ Միջազգային ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտի՝ այս հայեցակարգում Արևմուտքը ներկայացվում էր թշնամական, որը նպատակ ունի ամեն կերպ թուլացնելու Ռուսաստանը: Նախատեսվում էր ԵԱՏՄ-ի և Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության պլանների իրագործում, Եվրասիայի տնտեսական և տրանսպորտային փոխկապակցվածության ամրապնդում, Բայկալ-Ամուրյան և Անդրսիբիրյան երկաթուղիների արդիականացում, «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի վաղաժամկետ գործարկում և այլն:

Եզրակացություն

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել.

1. Ռուսաստանի Դաշնության՝ 1991–2023 թվականների արտաքին քաղաքականության կոնցեպտուալ և դոկտրինալ փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հարավային Կովկասը մշտապես առանցքային տեղ է զբաղեցրել Ռուսաստանի ռազմավարական օրակարգում: Տարածաշրջանի նկատմամբ մոտեցումների ձևավորումը պայմանավորված է եղել ինչպես հետխորհրդային տարածքում ազդեցության պահպանման անհրաժեշտությամբ, այնպես էլ գլոբալ աշխարհաքաղաքական մրցակցության խորացմամբ:

2. 1990-ական թվականներին Հարավային Կովկասը դիտարկվում էր հիմնականում որպես «մերձավոր արտասահման», որտեղ Ռուսաստանի առաջնային խնդիրն էր հակամարտությունների վերահսկումն ու անվտանգության պահպանման միջոցով ազդեցության ամրապնդումը: Այդ փուլում գերակշռում էր միջնորդական և խաղաղապահ գործառույթների շեշտադրումը:

3. 2000-ական թվականներից սկսած՝ փաստաթղթերում նկատվում է մոտեցումների համակարգային փոփոխություն. տարածաշրջանը ձևակերպվում է որպես Ռուսաստանի կենսական շահերի գոտի, որտեղ անընդունելի է արտաքին՝ հատկապես արևմտյան ռազմաքաղաքական ներկայության ընդլայնումը: Ուժային բաղադրիչը դառնում է արտաքին քաղաքականության կարևոր գործիք:

4. 2010–2020-ական թվականներին Հարավային Կովկասը դիտարկվում է արդեն գլոբալ մրցակցության, տրանսպորտային և էներգետիկ հաղորդակցությունների վերահսկման համատեքստում: 2020թ. հետո ձևավորվում է Ռուսաստանի ռազմական ներկայության նոր իրավաքաղաքական հիմք, իսկ 2023թ. կոնցեպտը ցույց է տալիս անցում միջնորդական մոտեցումներից դեպի բացահայտ ռազմավարական շահերի պաշտպանություն:

5. Ընդհանուր առմամբ, Հարավային Կովկասը Ռուսաստանի արտաքին քաղաքական կոնցեպտուալ և դոկտրինալ փաստաթղթերում էվոլյուցիայի ընթացքում

վերածվել է ոչ միայն ազդեցության գոտու, այլև բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման կարևոր տարածաշրջանային հարթակի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Воробьев, Иван Николаевич и Киселев, Валерий Александрович. О формировании военной доктрины Российской Федерации 21 века. «Вестник Академии военных наук» № 1 2012, стр. 40. //www.avnrf.ru/index.php/publikatsii-otdelenij-avn/nauchnykh-otdelenij/voennogo-iskusstva/245-o-formirovanii-voennoj-doktriny-rossijskoj-federatsii-21-veka Վերջին այց՝ 29.01.26
2. «Доктрина Козырева» https://studfile.net/preview/11653991/page: 20/. Последний визит: 20.12.2025.
3. Сергеев И. «Военная доктрина и реформирование Вооруженных Сил Российской Федерации». https://flot.com/today/ref5.htm. Последний визит: 20.12.2025.
4. «Как менялась Концепция внешней политики России». *Редакция сайта ТАСС*, 31 марта 2023, 15:471 https://tass.ru/info/17418381. Последний визит: 20.12.2025.
5. «Концепция внешней политики Российской Федерации». 15 июля 2008 года 12:40, http://kremlin.ru/acts/news/785. Последний визит: 01.12.2025.
6. «Основные положения военной доктрины РФ». https://studfile.net/preview/17181451/. Последний визит: 20.12.2025.
7. «Президент утвердил новую редакцию Военной доктрины РФ Она остаетс оборонительной и учитывает новые угрозы, в том числе связанные с Украиной». *Редакция сайта ТАСС*, 26 декабря 2014, 16:49, https://tass.ru/armiya-opk/1674958. Последний визит: 01.12.2025.
8. «Путин утвердил новую Концепцию внешней политики России: Российская Федерация не считает себя врагом Запада, не изолируется от нег». https://burkprf.ru/?p=38018. Последний визит: 20.12.2025.
9. «Становление сетевой дипломатии в России в 1996-2013 годах Валерия Булва». Атташе МИД России, кандидат исторических наук, https://interaffairs.ru/jauthor/material/3093. Последний визит: 01.12.2025.
10. ТАСС-ДОСЬЕ. *16 декабря 2015 года президент РФ Владимир Путин подписал указ о приостановлении действия договора о зоне свободной торговли СНГ в отношении Украины*, https://tass.ru/info/2534020. Последний визит: 01.12.2025,
11. «Указ Президента Российской Федерации от 14 сентября 1995 года № 940 «Об утверждении Стратегического курса Российской Федерации с государствами - участниками Содружества Независимых Государств»». 1 https://yeltsin.ru/archive/act/41879/. Последний визит: 20.12.2025.
12. «Указ Президента Российской Федерации от 05.02.2010 г. № 146 О Военной доктрине Российской Федерации». http://www.kremlin.ru/acts/bank/30593. Последний визит: 20.12.2025.
13. “Online Analysis 6th April 2023 Russia’s new foreign-policy concept: the impact of war Dr Nigel Gould-Davies Senior Fellow for Russia and Eurasia”. https://www.iiss.org/online-analysis/online-analysis/2023/04/russia-new-foreign-policy-concept-the-impact-of-war/?utm. Последний визит: 01.12.2025.
14. “President Donald J. Trump Signs Historic Peace Agreement at USIP Headquarters”. https://www.usip.org/publications/2023/05/what-you-need-know-about-russias-new-foreign-policy-concept?utm. Accessed: 01.12.2025.

WORKS CITED

1. «Doktrina Kozyrewa, [Kozyrev doctrine]. Available at: https://studfile.net/preview/11653991/page:20/. (in Russian)
2. Kak menyalas' Koncepciya vneshney politiki Rossii [How Russia's Foreign Policy Concept Has Changed – TASS Editorial Staff]; Redakcia sayta TASS, 31 Marta 2023, 15:471 Available at: https://tass.ru/info/17418381 March 31, 2023. (in Russian)
3. Koncepciya wneshney politiki Rossiyskoy Federacii 15 iyulya 2008 goda, [Foreign Policy Concept of Russian Federation of July 15, 2008] Available at: http://kremlin.ru/acts/news/785. (in Russian)
4. Osnownye polojeniya woennoy doktriny RF [Main Provisions of the Military Doctrine of the Russian Federation]. Available at: https://studfile.net/preview/17181451/ (in Russian)
5. «Sergeew, Igor "Woennaya doktrina i reformirowanie Woorujennyx Sil Rossiyskoy Federacii" [Military Doctrine and the Reform of the Armed Forces of the Russian Federation]. Available at: https://flot.com/today/ref5.htm, (in Russian)
6. «Ukaz Prezidenta Rossiyskoy Federacii ot 14 sentyabrya 1995 goda № 940 «Ob utwerjdenii Strategicheskogo kursa Rossiyskoy Federacii s gosudarstwami-uchastnikami Sodrujestva Nezawisimyh Gosudarstw, ["Decree of the President of the Russian Federation No. 940 of September 14, 1995, 'On Approving the Strategic Course of the Russian Federation with the Member States of the Commonwealth of Independent States'."]. Available at: https://yeltsin.ru/archive/act/41879/ (in Russian)
7. Westnik Akademii woennyx nauk General-mayor w otstawke I.N.Vorobyov, doctor woennyx nauk, professor; polkownik W.A.Kiselew, doctor woennyx nauk, professor, [Bulletin of the Academy of Military Sciences – Major General (Ret.) Vorobyov, Ivan, Doctor of Military Sciences, Professor; Colonel Kiselev, Valery, Doctor of Military Sciences, Professor]. Available at: www.avnrf.ru/index.php/publikatsii-otdelenij-avn/nauchnykh-otdelenij/voennogo-iskusstva/245-o-formirovanii-voennoj-doktriny-rossijskoj-federatsii-21-veka (in Russian)

CONCEPTUAL AND DOCTRINAL DOCUMENTS OF RUSSIA'S FOREIGN POLICY TOWARD THE SOUTH CAUCASUS (1991–2023)

ARTYOM POGHOSYAN
Military Academy named after Vazgen Sargsyan
of the Ministry of Defense of the Republic of Armenia,
Deputy Commandant, Colonel,
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Oriental Studies, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The aim of this article is to substantiate the argument that, in the modern geopolitical context, there is an objective need for a comprehensive reassessment and a certain transformation of the foreign policy relations of the Russian Federation with the South Caucasus. The study of current directions of Russia's foreign policy in the South Caucasus is particularly relevant in the context of the ongoing transformation of the balance of power in the region. This article provides a fresh analysis of the main conceptual directions of the Russian Federation's foreign policy, as well as the political, economic, and strategic levers Moscow uses in its relations with the countries of the South Caucasus.

The objectives of the research are:

1. to clarify the key principles of Russia's foreign policy with updated justifications, and to outline its potential directions for further development and possible transformations.

2. to trace the dynamics of the Russian Federation's foreign policy through an analysis of fundamental documents: "The Concept of the Foreign Policy of the Russian Federation" and the "Military Doctrine", as well as to examine the priorities of its foreign policy in the South Caucasus region.

For the purposes of the study, a number of scientific methods accepted in the fields of political science and international relations were employed, in particular analytical, comparative, historical-political, and systemic approaches, as well as content analysis, among others.

The paper substantiates the theoretical approaches accepted in the fields of political science and international relations and analyzes official documents of the foreign policy of the Russian Federation, strategic concepts, academic publications, and expert assessments. Both domestic and foreign sources were used in the course of the research, which made it possible to comprehensively analyze Russia's foreign policy in the South Caucasus.

Key words: *Russia, concept, South Caucasus, strategy, cooperation, foreign policy, doctrine.*

КОНЦЕПТУАЛЬНЫЕ И ДОКТРИНАЛЬНЫЕ ДОКУМЕНТЫ И ПОДХОДЫ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ В ОТНОШЕНИИ ЮЖНОГО КАВКАЗА (1991-2023)

АРТЁМ ПОГОСЯН

соискатель Института востоковедения Национальной академии наук Республики Армения, заместитель начальника Военной академии им. Вазгена Саргсяна Министерства обороны Республики Армения, полковник, г. Ереван, Республика Армения

Цель данной статьи — показать, что в современных условиях существует необходимость переоценки и некоторой трансформации внешнеполитических отношений Российской Федерации с Южным Кавказом. Изучение современных направлений внешней политики России на Южном Кавказе особенно актуально в контексте продолжающегося процесса трансформации баланса сил в регионе. В статье по-новому рассматриваются основные концептуальные направления внешней политики Российской Федерации, а также политические, экономические и стратегические рычаги, которые Москва использует в отношениях со странами Южного Кавказа. Основные задачи исследования:

1. разъяснить основные положения внешней политики России с новыми обоснованиями, представить направления ее дальнейшего развития и возможные изменения;

2. проследить динамику развития внешней политики Российской Федерации путем анализа основополагающих документов: «Концепции внешней политики Российской Федерации» и «Военной доктрины» а также изучение приоритетов внешней политики в регионе Южного Кавказа.

В ходе работы был применен ряд научных методов, принятых в области политологии и международных отношений. В частности, аналитический, сравнительный, историко-политический систематический подход, метод контент-анализа и др.

В работе обоснованы теоретические подходы, принятые в области политологии и международных отношений, а также проанализированы официальные документы, стратегические концепции, научные публикации и экспертные оценки внешней политики Российской Федерации. В ходе исследования использовались как отечественные, так и зарубежные источники, что позволило всесторонне проанализировать особенности внешней политики России на Южном Кавказе в контексте меняющегося баланса сил в регионе.

Ключевые слова: *Россия, концепция, Южный Кавказ, стратегия, сотрудничество, внешняя политика, доктрина.*

THE ROLE OF SPECIFIC ACTORS IN THE ELECTION PROCESS, ESPECIALLY THE ROLE OF THE MINISTRY OF INTERNAL AFFAIRS (ACCORDING TO THE LAW OF THE RA) *

UDC 342.4 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-64*

LUSINE SOGHOMONYAN
Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Political Science, Ph.D Student
Yerevan, the Republic of Armenia
lusine.soghomonyan.92@gmail.com
ORCID: 0009-0003-0343-316X

The purpose of this article is to emphasize the role of elections from the perspectives of political stability, the establishment of democracy, and the formation and functioning of political parties. One of the key objectives of the article is also to analyze and understand the involvement of international and local observer missions in these processes. The article examines and discusses the role of the most important institutions responsible for organizing and conducting electoral processes in the Republic of Armenia, without which the fair, free, and transparent conduct of elections would be impossible.

In this context, the article highlights several issues related to the involvement of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, which, in accordance with the Electoral Code and the Constitution of the Republic of Armenia, ensures the protection and security of electoral materials throughout the entire electoral process. Particular attention is given to issues related to the institution of the Police of the Republic of Armenia. As decisive political processes, elections shape political power at various levels; therefore, their lawful organization and conduct are of essential importance for the future stability and development of the state.

The main task of the article is to present the cooperation of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia within the framework of organizing electoral processes, focusing on the effectiveness of its interaction with the Central Electoral Commission, territorial and precinct electoral commissions, as well as with local and international observer missions. The article also aims to identify contemporary challenges and issues faced by the Ministry of Internal Affairs as an institution.

The article employs comparative, historical, and analytical research methods.

The main conclusion is that electoral processes cannot be free, fair, and transparent if the institutions necessary to ensure them do not function effectively. This, in itself, may pose a serious risk in terms of electoral fraud and manipulation. As a conclusion, the article also emphasizes political stability, the strengthening of democratic values, and the protection of electoral rights, which can be ensured and consolidated only through free and transparent elections.

Keywords: *Political stability, electoral processes, police, security, political parties, international observers, The Ministry of Internal Affairs of the Republic of Armenia.*

---

* Հոդվածը ներկայացվել է 22.09.2025թ., գրախոսվել՝ 19.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Introduction

The study of this issue is particularly relevant for countries undergoing a transitional period, including the Republic of Armenia. It can be noted that this topic, as part of the democratic process, particularly elections, has been a focus of Armenian researchers (Մարգարյան 2006, Մանուկյան 2011, Քեռյան 1996, Թոխյան 2004). However, it has not been examined from the perspective of political stability and the role of its actors. From the standpoint of organizing electoral processes, international monitoring organizations play an extremely important role. In the 21st century, international observers are an inseparable part of organizing electoral processes in states. The organization of electoral processes with the accompaniment of international observers also carries a controlling significance.

The organization and smooth conduct of electoral processes are of decisive importance for the state. This is an extremely important process both from the perspective of political development and stability in the country, as well as from the standpoint of the rule of law and the transparent implementation of justice. Electoral processes, as a concept, encompass a broad interpretation and research framework, bringing together various professional communities, such as lawyers, philosophers, sociologists, political scientists, linguists, historians, and other specialists. Therefore, we can state that elections already have their own distinct and established place within the research field of political science.

Below, we outline the key points that highlight the importance of electoral processes:

- In the context of political stability, elections contribute to a peaceful and legal transfer of power, reducing the risks of political violence and crises. When considering political stability as a concept, it should be noted that it includes larger and more important processes, such as domestic and foreign policies. When a country’s internal stability is favorable, it contributes to international cooperation, the establishment, and development of diplomatic relations in foreign affairs. Economic growth occurs when a country's stable situation contributes to the development of the economy and attracts foreign investors, which is one of the preconditions for prosperity in the country. Legality, the rule of law, and the judicial system, where political stability fosters the impartial implementation of justice, the functioning of the judiciary in accordance with the provisions enshrined in the Constitution of the Republic of Armenia, as well as other factors. From this perspective, it is worth mentioning Article 2 of the Constitution of the Republic of Armenia (Constitution of the Republic of Armenia), which states: " In the Republic of Armenia, the power belongs to the people. The people shall exercise their power through free elections, referenda, as well as through state and local self-government bodies and officials provided by the Constitution. Usurpation of power by any organization or individual shall be a crime’’ (Constitution of the Republic of Armenia). Therefore, the Constitution, as the supreme law, must ensure the rule of law with all its power and appropriately, so any violation would be evident in the harmful phenomena that may undermine political processes, including elections. Many experts note that the lack of constitutional regulation of key aspects of the electoral system negatively affects the country's political stability. Since the electoral system is a crucial link in the formation of state power, it is hard to overestimate the political and practical significance of finding a proper solution to the problem of constitutional regulation of the electoral system (Ковачов 107-113).

Many actors (Политический процесс: Основные аспекты и способы анализа, 102) participate in the organization and conduct of elections: the government, election commissions, political parties, mass media, and others. Among them is the Ministry of

Internal Affairs of the Republic of Armenia (Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարություն), specifically the police. The role of these institutions is of great value for the stability of political processes in the Republic of Armenia, and therefore, a comprehensive study could be dedicated to each of them. This article deals with the issues related to political stability, as well as the activities, functions, qualitative indicators of the police, the importance of electoral processes, and other issues that require a systematic approach and significant time, human, and technological resources.

The conduct of elections ensures the protection of fundamental human rights, providing the opportunity for free self-expression. Dr. Armenak Manukyan, a political science professor, notes: The essense of the electoral process primarily means that all candidates have the opportunity to participate in elections, with equal conditions for competition, such as political financing, access to media, control over the tabulation of results, and effective sanctions for undermining the established rules of the game (Մանուկյան 99).

The Importance of Electoral Processes in Democracy

Electoral processes are one of the cornerstones of democracy, during which citizens are provided the opportunity to participate in the governance of the country and to choose their representatives. These constitutional rights of citizens are fundamental, and their implementation is ensured through a series of specific powers and duties exercised during the various stages of the electoral process (Թոխյան 10).

In this regard, elections are a driving force in public life, contributing to the increase of political responsibility and awareness, and promoting civic participation.

In this context, elections can be seen as a powerful tool for implementing social change.

Transparent electoral processes contribute to the increase of public trust in state institutions. In this regard, high levels of voter participation are noteworthy, as voters take responsibility for their vote, valuing it by going to the polling station and exercising their constitutional right. In this case, citizens' trust in political parties is high because increased voter participation is an indicator that the electoral processes are fair and transparent.

Electoral processes provide a great opportunity for citizens to hold the elected political elite accountable for fulfilling the promises made during the election campaign.

It is important to assess to what degree the country's legal framework for elections complies with international electoral standards. This will provide a set of constructive suggestions for corrections, improvements and possible best practices to strengthen the legislation. At the same time, another country's particular system or practice of legislation should not be considered to be ideal or directly transferable. (International Electoral Standards Guidelines for reviewing the legal framework of elections). In other words, replicating another country's experience requires deep and comprehensive analysis, which will make the adoption of new practices more convincing and accurate. Indeed, studies on the constitutional regulation of electoral systems in foreign countries can greatly contribute to the improvement, modernization, and updating of Armenia's electoral system.

The Role of Law Enforcement in Electoral Processes: The Case of the Armenian Police

Throughout the organization and conduct of electoral processes, the Police of the Republic of Armenia has a unique and significant role in ensuring the safety, discipline, and uninterrupted conduct of elections. In fact, all elections held since Armenia's independence in 1991 have been qualitatively different from each other. Despite these qualitative differences and changes, it is important to note that the police have been

involved in every electoral process. Let us try to discuss the issues related to the police's activities, functions, qualitative criteria, and other related matters that require a systematic approach, along with temporal, human, and technological resources.

Security, being a multi-layered and broad system, includes not only political, economic, cultural, informational, social, educational, and other sectors, but also the law enforcement agencies, including the Ministry of Internal Affairs of Armenia, which oversees bodies such as the Migration and Citizenship Service (Migration and Citizenship Service of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia), the Police of the Republic of Armenia, and the Emergency Situations Service. From the perspective of national security, important roles are also played by the National Security Service of the Republic of Armenia, the Ministry of Defense of the Republic of Armenia and others. It should be noted that these agencies should never play a role in the country's electoral processes.

It is also worth mentioning that the Ministry of Internal Affairs of Armenia was restored on December 30, 2022. As a newly implemented reform program, we can confidently say that it has not yet proven or substantiated the effectiveness and usefulness of its activities. In this case, as a newly introduced reform, it is necessary to study, compare, analyze, and assess its performance both before and after its consolidation, so that evaluations and needs assessments can be more accurate and targeted.

As in every country undergoing a democratic transition, in Armenia too, political processes, including electoral processes, undergo complex and multi-layered developments. In general, political processes are constantly subject to changes and do not remain in a stable or fixed state. When examining any system or structure (including the socio-political one), we encounter the issue of revealing its regularities and identifying its deeper problems, which leads to uncertainties regarding its stable state, especially when trying to understand the possible regularities of movement and deeper issues (Ընտրական համակարգի ազդեցությունը ժողովրդաիշխանության իրացման գործում 110).

Political parties also play a significant role in electoral processes. Doctor of Political Science, Professor Garik Keryan writes: *A political party is an organization of people created with the goal of gaining state power, and after gaining it, to preserve and exercise that power* (Дюверже 413-433). In general, a party cannot be called political if it does not strive for power. The concept of a party in the Law on Political Parties states: "A party is a voluntary association of citizens of the Republic of Armenia, whose purpose is to contribute to the formation and expression of the political will of the people by participating in referendums, elections to state and local self-government bodies, and other forms of participation in the political life of society and the state" (ՀՀ Սահմանադրական օրենքը Կուսակցությունների մասին. 2016). The role of political parties is emphasized even more in a parliamentary system of government, making this topic a high priority in Armenia. The active, quality, and strategic activities of political parties can essentially keep the country stable and resilient. Let us present the following thought of Doctor of Political Science, Professor Ashot Aleksanyan: *It is evident that democratic effectiveness, constructiveness, and rationalism must be complemented by citizen-centeredness and civilarchetype procedures. In this regard, the political science study of the establishment of civic democracy in Armenia reveals that the consistent development of parliamentary parties, NGOs, trade unions, civil journalism, and women's political representation procedures is not only appropriate but also a historical necessity under current conditions* (Ալեքսանյան 97). The role of parties in electoral processes is particularly emphasized because their main and key mission is to conquer power through the party, which is one of the greatest achievements of the civilized world. This is an

extremely important and comprehensive topic, to which, for understandable reasons, we are addressing in a very measured and concise manner.

The political process, as a multi-layered phenomenon, emerges in space and time. In Armenia, as in any country undergoing a democratic transition, the political process is extremely complex, multi-layered, and contradictory (Margaryan 87).

With the emergence of modern states, a number of institutions were also formed, among which is the police. Its establishment and development have followed a complex path, facing numerous differing cultures, regimes, and challenges. In modern states, the role of the police is multifaceted, encompassing functions aimed at maintaining public order and security. Despite the widespread, unified opinion and attitude that the functions of the police are the same everywhere, there are still disagreements and differences of opinion. It should be noted that in true democratic states, there is great trust in the Ministry of the Interior, particularly in France, where it is responsible not only for maintaining public order but also for organizing elections. Thus, in France, the Ministry of the Interior plays a central role in organizing and overseeing the electoral process, coordinating the technical aspects of elections, managing and supervising voter lists in accordance with the law, and ensuring the safe and secure conduct of elections (Ministry of Internal Affairs of France). From this perspective, the state plays a decisive role, as it is the state that decides and implements the logic and approach through which the tasks should be carried out.

Let's highlight some of the key functions of the police:

1. **In the context of protection and support:** The police protect the citizens of the state and their constitutional rights, properties, and provide quick and effective assistance in emergencies and exceptional situations.
2. **In the context of public support:** The police implement preventive measures to prevent crimes, violence, and disturbances.

As an essential institution supporting the maintenance of public order, the police play an essential role and are deeply involved in the electoral process. In essence, we can state that without the involvement of the police, electoral processes cannot be organized, as without the participation of this institution, elections would take place in more vulnerable, unstable, unmanageable, and uncontrollable conditions and circumstances. Therefore, let us highlight the functions that the police perform in the electoral processes in Armenia. These are regulated by the Constitution of the Republic of Armenia (Constitution of the Republic of Armenia), the Law of the Police (ՀՀ օրենքը ոստիկանության մասին), the Electoral Code of the Republic of Armenia (ՀՀ ընտրական օրենսգիրք), and other legal documents.

1. **Protection of electoral materials:** This is a very crucial process, as it includes voter lists, ballots, election result protocols, seals, and other necessary documents. This function ensures transparency, impartiality, and fairness in the electoral process.
2. **Transportation of election results from polling stations:** This is one of the most important functions, as it determines whether there will be electoral violations or ballot stuffing, which could completely disrupt the electoral process.

Challenges and Reforms:

When talking about the challenges faced by the police, we must address contemporary issues. Contemporary, because the changes and reforms taking place today differ significantly from the established rules of past times. The police face a number of challenges that require continuous reforms, development measures, and programs.

Police Cooperation: The police cooperate with state bodies and organizations, including the Central Electoral Commission of the Republic of Armenia (CEC). The cooperation between the police and the CEC is established to ensure the safe and legal conduct of electoral processes. In Armenia, besides the CEC, there are other electoral bodies that ensure, organize, and facilitate the implementation of these processes at various levels. In addition to the CEC, the main electoral bodies are the Territorial Electoral Commissions (TEC) (Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք, Սահմանադրական օրենք), which are formed for organizing elections in the capital and regional areas. The TEC receives electoral documents and coordinates the organization of fair and transparent electoral processes at the polling stations. The next electoral body is the Local Electoral Commissions (LEC), which are formed at specific polling stations and are responsible for recording the results, counting votes, compiling protocols, ensuring the accuracy of voter lists, and preparing electoral materials. These three levels carry out the full, uninterrupted, and systematic course of the electoral process. The CEC performs the main supervisory role and regulates the activities of the TECs and LECs, ensuring the uniform and legal conduct of elections across the entire country.

The task of the electoral commissions is to ensure the exercise and protection of citizens' constitutionally important electoral rights. The electoral commissions ensure the free expression of citizens' political will and the lawful and civilized transfer of state power, taking into account the formed socio-economic and political conditions (Թոխյան 190).

Law Enforcement Bodies: This includes the Prosecutor's Office of the Republic of Armenia (RA Prosecutor's Office) and other judicial bodies, which can also uncover electoral violations and assist in the fight against them.

Observer Organizations: The police cooperate with both local and international observer missions, individuals, or groups who ensure the safe and smooth conduct of the electoral processes.

Cooperation with Civil Society: This cooperation is aimed at maintaining the transparency of the electoral process and protecting human rights.

Economic Consequences: The loss of public trust in the police leads not only to events occurring within the country's borders but also has an external impact, as international companies may avoid investing in countries where public order is at risk. These are just a few examples that clearly demonstrate the significant role of the police in maintaining public stability and ensuring healthy and sustainable development.

Issues of Social Justice may arise in the context of disproportionate, unnecessary, and harsh actions carried out by the police.

As mentioned earlier, the police, as an institution, have gone through a long and complex journey. This is not only true in the case of the Republic of Armenia but can be confirmed globally, as the police have undergone the turmoil of various cultures, societies, geopolitical changes, reforms, and other events. The police, as a social institution, have undergone diverse and often different processes of change and development.

Technological progress has raised the need to reassess activities in various fields, including policing and law enforcement systems. This progress opens up a vast environment of possibilities, but along with these opportunities come a number of challenges. At the forefront of contemporary challenges is cybercrime. This is a type of crime in the 21st century that is committed through computers or other technological devices. The number of users is growing daily, which creates favorable conditions for an increase in criminal activities. It is clear that this type of crime can also interfere with electoral processes.

In the Republic of Armenia, the Convention on Cybercrime came into force on February 1 (Կոնվենցիա կիբեռհանցագործության մասին), 2007. From this, there arises the pressing need to raise public media literacy, master a number of skills, and manage and use information, which is a separate topic for study and research. The police has a unique role in combating these crimes.

In general, police institutions are subject to deep reforms. However, in any case, the effectiveness of police operations begins with the internal security of the state and the individuals performing those tasks. In this context, it should be noted that a significant challenge to the effective and fair functioning of the police could arise if the police are required to work for any political faction or if they fail to maintain a politically neutral position. In such a case, there are fewer obstacles to committing crimes, as an individual with the necessary skills can commit various crimes using anonymous credentials. Among these crimes, notable examples include cyber piracy, theft of personal accounts and data, the distribution of illegal or anti-state information, online fraud, which can be used for purposes such as extortion and other illegal activities.

In this situation, the police must use their tools to uncover the issues at hand. Furthermore, this creates a need for continuous training in advanced computer skills, professional retraining, international cooperation, and the exchange of expertise. The proportionality of police actions is determined by ensuring that these actions align with both national and international standards. This is particularly important in the context of human rights protection, and in various areas, it is crucial to maintain independence, for example, by ensuring the work of independent bodies and others.

In general, the perceptions of the police by society are highly diverse and contradictory, influenced by a number of factors such as the culture of society, the political situation - particularly in terms of stability, social factors, the quality of their work, and, perhaps most importantly, post-Soviet stereotypes. During the Soviet era, the police (or militia) was characterized by features that significantly impacted the reduction of mutual trust and respect between society and the authorities. This was because there was a rigid system of control and disciplinary service in place, and power was centralized, which often turned the police into a tool in the hands of those in power to maintain party-political order. These circumstances have had a significant influence on shaping public perceptions.

Therefore, the police should strive to improve and become a trusted example of a social institution, where citizens of the state view it as the institution that ensures their security. However, today, the current situation is far from the desired image. A way to address many of these problems could be through closer engagement with society, raising awareness, and building trust. To make these results tangible, it is necessary to emphasize and reassess professional and continuous education, as well as ethical and moral standards. From the perspective of raising public awareness, it is essential to review the framework of duties and rights, and the legal regulations that govern them.

REFERENCES

1. Ալեքսանյան Աշոտ. *Դեմոկրատիայի ցիվիլիարխիկ չափման մասին*, 2019, էջ 57: Available at: https://rb.gy/bwhu4g Accessed on 18/07/2025.

2. *Ընտրական համակարգի ազդեցությունը ժողովրդաիշխանության իրացման գործում*. -Եր. : Հայպետհրատ հրատ., 2022:

3. Թոխյան Ֆելիքս, *Խորհրդարանական ընտրությունների սահմանադրա-իրավական կարգավորման հիմնախնդիրները երիտասարդ ժողովրդավարության երկրներում*.-Եր, ՌՀՀ հրատ., 2004:

4. *Կոնվենցիա կիբեռհանցագործության մասին /ուժի մեջ է մտել 2007 թ. փետրվարի 1-ին/* Available at: https://shorturl.at/A0Fnc Accessed on 15/07/2025.

5. Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք, Սահմանադրական օրենք /Ընդունված է 2016 թվականի մայիսի 25-ին/ Available at: https://shorturl.at/y7oaJ Accessed on 18/07/2025.

6. ՀՀ ընտրական օրենսգիրք Available at: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105967 Accessed on 17/07/2025.

7. ՀՀ Սահմանադրական օրենքը Կուսակցությունների մասին 2016 Available at: https://shorturl.at/Tg4A4 / Accessed on 18/07/2025.

8. ՀՀ օրենքը Ոստիկանության մասին 2001 Available at: https://www.arlis.am/documentview.aspx?docid=67163 Accessed on 22/07/2025.

9. Մանուկյան Արմենակ, *Ժամանակակից քաղաքական գործընթացներ,* Եր., 2011:

10. Մարգարյան Մարիամ, *Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում,* Եր, 2006:

11. Քեռյան Գարիկ. *Քաղաքական կուսակցություններ*, Եր.,1996:

12. *Central Electoral Commission of the Republic of Armenia*. Available at: http://www.elections.am Accessed on 20.07.2025.

13. *Constitution of the Republic of Armenia*. Available at: https://www.arlis.am/hy/acts/108723 . Available: 15.07.2025.

14. *International Electoral Standards Guidelines for reviewing the legal framework of elections*. Available at: https://surl.lt/vqsztg . Accessed on 26.07.2025.

15. *Migration and Citizenship Service of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia*. Available at: https://www.migration.am/. Accessed on 11.07.2025.

16. *Ministry of Internal Affairs of RA*. Available at: https://www.gov.am/en/structure/285/. Accessed on 11.07.2025.

17. *Ministry of Internal Affairs of France*. Available at: https://www.interieur.gouv.fr/ru. Accessed on 18.07.2025.

18. *Police of the Republic of Armenia*. Available at: https://www.police.am/. Accessed on 27.07.2025.

19. *RA Prosecutor's Office*. Available at: https://www.prosecutor.am/. Accessed on 18.07.2025.

20. Дюверже М., *Политические партии.* М. 2007, стр. 3.

21. Ковачов Д. А. *«Конституционная регламентация избирательной системы в зарубежных государствах». Журнал. Рос. Право*, N 7/8., стр. 29.

22. *Политический процесс: Основные аспекты и способы анализа*, под ред. Мелешкиной Е.Ю., М., 2006.

WORKS CITED

1. Aleqsanyan Ashot. Demokratiayi civiliarxik chap'man masin [On the Civilizational Measurement of Democracy], 2019, e'j 57. Available at: https://rb.gy/bwhu4g. Accessed on 18/07/2025. (in Armenian)

2. Y'ntrakan hamakargi azdecut'yuny' jhoghovrdaishxanut'yan iracman gorc'um [The Impact of the Electoral System on the Implementation of Popular Sovereignty].-Er.: Haypethrat hrat., 2022. (in Armenian)

3. T'oxyan Feliqs, Xorhrdaranakan y'ntrut'yunneri sahmanadra-iravakan kargavorman himnaxndirnry' eritasard jhoghovrdavarut'yan erkrnerum [Issues of Constitutional and Legal Regulation of Parliamentary Elections in Countries of Young Democracy].-Er, R'HH hrat., 2004. (in Armenian)

4. Konvencia kiber'hancagorc'ut'yan masin [Convention on Cybercrime] /ujhi mej e' mtel 2007 t'. p'etrvari 1-in/ Available at: https://shorturl.at/A0Fnc. Accessed on 15/07/2025. (in Armenian)

5. Hayastani Hanrapetut'yan Y'ntrakan o'rensgirq, Sahmanadrakan o'renq [Electoral Code of the Republic of Armenia (Constitutional Law)]. Y'ndunvac' e' 2016 t'vakani mayisi 25-in/ Available at: https://shorturl.at/y7oaJ Accessed: 18/07/2025. (in Armenian)

6. HH y'ntrakan o'rensgirq [Electoral Code of the Republic of Armenia] Available at: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105967 Accessed on 17/07/2025. (in Armenian)

7. HH Sahmanadrakan o'renqy' Kusakcut'yunneri masin 2016 [Constitutional Law of the Republic of Armenia on Political Parties]. Available at: https://shorturl.at/Tg4A4 / Accessed on 18/07/2025.

8. HH o'renqy' Vostikanut'yan masin [Law of the Republic of Armenia on the Police] 2001 Available at: https://www.arlis.am/documentview.aspx?docid=67163 Accessed on 22/07/2025. (in Armenian)

9. Manukyan Armenak, Jhamanakakic qaghaqakan gorc'y'nt'acner [Contemporary Political Processes], Er., 2011. (in Armenian)

10. Margaryan Mariam, Qaghaqakan y'ntranin ev jhoghovrdavarakan ancman himnaxndirnery' Hayastani Hanrapetut'yunum [Political Elite and the Issues of Democratic Transition in the Republic of Armenia], Er, 2006. (in Armenian)

11. Qer'yan Garik. Qaghaqakan kusakcut'yunner [Political Parties], Er.,1996. (in Armenian)

12. Dyuverje M. Politicheskie partii [Political Parties]. M. 2007, 3 s. (in Russian)

13. Kovachov D. A. ‘’Konstitucionnaya reglamentacia izbiratelnoy sistemi v zarubejnix gosudarstvax [Constitutional Regulation of the Electoral System in Foreign States]. Jurnal Ros. Pravo, N 7/8, 29 s. (in Russian)

14. Politicheskiy process. Osnovnie aspekti I sposobi analiza [The Political Process: Key Aspects and Methods of Analysis], pod red. Meleshkinoy E. YU., M., 2006. (in Russian)

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԼՈՒՍԻՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Սույն հոդվածի նպատակն է ընդգծել ընտրությունների դերը քաղաքական կայունության, ժողովրդավարության հաստատման, քաղաքական կուսակցությունների ձևավորման և գործունեության տեսանկյունից: Հոդվածի կարևոր նպատակներից է նաև վերլուծել և հասկանալ միջազգային և տեղական դիտորդական առաքելություն իրականացնողների ներգրավվածությունը այս գործընթացներում: Հոդվածում վերլուծվում և քննարկվում է ՀՀ ընտրական գործընթացների կազմակերպումն ու անցկացումն ապահովող այն կարևորագույն ինստիտուտների դերակատարությունը, առանց որոնց անհնարին կդառնար ընտրությունների արդար, ազատ ու թափանցիկ անցկացումը: Կարևորվել են նաև ՀՀ ՆԳՆ ներգրավվածության մի շարք հարցեր. նա, ըստ սահմանված կարգի, Ընտրական օրենսդրության, ՀՀ Սահմանադրության, ընտրական գործընթացի ողջ

ընթացքում ապահովում է ընտրական նյութերի պաշտպանությունն ու անվտանգությունը: Հոդվածում առանձնակի ներկայացվում են ՀՀ Ոստիկանության ինստիտուտին առնչվող մի շարք հարցեր: Որպես վճռորոշ քաղաքական գործընթացներ՝ ընտրությունները ձևավորում են քաղաքական իշխանությունը՝ տարբեր մակարդակներում: Ուստի՝ նրանց օրինական կազմակերպումն ու վարքը էական նշանակություն ունեն պետության ապագա կայունության և զարգացման համար:

Հոդվածի գլխավոր խնդիրն է ընտրական գործընթացների կազմակերպման համատեքստում ներկայացնել ՀՀ ՆԳՆ համագործակցությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային և տեղամասային հանձնաժողովների, ինչպես նաև տեղական և միջազգային դիտորդական առաքելություն իրականացնողների հետ, ինչպես նաև վեր հանել ժամանակակից մարտահրավերներն ու խնդիրները, որոնց հանդիպում է ՆԳՆ-ը՝ որպես ինստիտուտ:

Հոդվածում կիրառվել են համեմատական, պատմական և վերլուծական մեթոդներ:

Գլխավոր եզրահանգումն այն է, որ ընտրական գործընթացները չեն կարող լինել ազատ, արդար և թափանցիկ, եթե վերջինիս ապահովման գործում չեն աշխատում անհրաժեշտ ինստիտուտները: Դա ինքնին մեծ վտանգ կարող է ներկայացնել ընտրական խարդախությունների և ընտրակեղծիքների տեսանկյունից: Որպես եզրահանգում հոդվածում ընդգծվում են նաև քաղաքական կայունության, ժողովրդավարական արժեքների ամրապնդման, մարդու ընտրական իրավունքների պաշտպանվածության խնդիրները, դրանք կարող են հաստատվել և ամրապնդվել միայն ազատ և թափանցիկ ընտրությունների միջոցով:

Հիմնաբառեր՝ *քաղաքական կայունություն, ընտրական գործընթացներ, ոստիկանություն, անվտանգություն, քաղաքական կուսակցություններ, միջազգային դիտորդներ, Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարություն:*

РОЛЬ ОСОБЫХ СУБЪЕКТОВ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ, В ЧАСТНОСТИ, РОЛЬ МИНИСТЕРСТВА ВНУТРЕННИХ ДЕЛ (СОГЛАСНО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА)

ЛУСИНЕ СОГОМОНЯН
аспирант кафедры политической науки
факультета международных отношений
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – подчеркнуть роль выборов с точки зрения политической стабильности, установления демократии, а также формирования и функционирования политических партий. Одной из ключевых задач статьи является также анализ и понимание участия международных и местных наблюдательных миссий в этих процессах. В статье рассматривается и обсуждается роль наиболее важных институтов, ответственных за организацию и проведение выборов в Республике Армения, без которых справедливое, свободное и прозрачное проведение выборов невозможно.

Среди них особое внимание уделено вопросам участия Министерства внутренних дел Республики Армения, которое в соответствии с установленным порядком — Избирательным кодексом и Конституцией Республики Армения — на протяжении всего избирательного процесса обеспечивает защиту и безопасность

избирательных материаловОсобое внимание уделяется вопросам, касающимся института полиции Республики Армения. Поскольку выборы являются решающими политическими процессами, они формируют политическую власть на различных уровнях; поэтому их законная организация и проведение имеют существенное значение для будущей стабильности и развития государства.

Главная задача статьи — представить сотрудничество Министерства внутренних дел Республики Армения в контексте организации избирательных процессов с Центральной избирательной комиссией, территориальными и участковыми комиссиями, а также с местными и международными наблюдательными миссиями, с точки зрения эффективности взаимодействия. Статья также направлена на выявление современных вызовов и проблем, с которыми сталкивается Министерство внутренних дел как институт.

В статье применялись сравнительный, исторический и аналитический методы исследования.

Главный вывод заключается в том, что избирательные процессы не могут быть свободными, справедливыми и прозрачными, если необходимые для их обеспечения институты не функционируют эффективно. Это само по себе может представлять серьезную угрозу с точки зрения избирательных махинаций и фальсификаций. В качестве заключения в статье также подчеркивается значение политической стабильности, укрепления демократических ценностей и защиты избирательных прав человека, которые могут быть утверждены и закреплены только посредством свободных и прозрачных выборов.

Ключевые слова: *политическая стабильность, избирательные процессы, полиция, безопасность, политические партии, международные наблюдатели, Министерство внутренних дел Республики Армения.*

ՆՎԱԶ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ *

ՀՏԴ 343 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-75*

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
haykamkrtchyan@gmail.com
ORCID: 0009-0002-3833-0243

ԷԴԳԱՐ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարանի, Հյուսիսային համալսարանի,
Գորիսի պետական համալսարանի, Երևանի իրավատնտեսագիտական և
կառավարման քոլեջի իրավագիտության ամբիոնի դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
edgar.manucharyan.eiu@gmail.com
ORCID: 0009-0009-7472-5825

Հոդվածի նպատակն է ներկայացնել նվազ վտանգավորություն ներկայացնող արարքների՝ որպես քրեաիրավական ինքնուրույն ինստիտուտի տեղն ու դերը ՀՀ քրեական նոր օրենսգրքի համատեքստում: Մինչ օրս բացակայում է միասնական մոտեցում՝ նշված հարցի վերաբերյալ: Թեմայի ընտրությունը պայմանավորված է նվազ վտանգավորություն ներկայացնող արարքների՝ քրեաիրավական բնույթի և իրավական հետևանքների վերաբերյալ տեսական պատկերացումների մշակման և համակարգման անհրաժեշտությամբ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց քրեաիրավական գնահատման՝ գիտականորեն հիմնավորված առաջարկությունների համար: Առաջ են գալիս հակասություններ՝ նշված նորմի կիրառման կապակցությամբ: Կարծում ենք ներկայիս իրավակարգավորման պայմաններում ամբողջապես չի պահպանվում և պաշտպանվում անձանց իրավունքները և օրինական շահերը:

Աշխատանքի խնդիրներից են՝

1. ***ներկայացնել նվազ վտանգավորություն ներկայացնող արարքների քրեաիրավական բնութագիրը***
2. ***վեր հանել առկա հիմնախնդիրները***
3. ***ներկայացնել առաջարկներ օրենսդրության կատարելագործման ուղղությամբ:***

Աշխատանքի կատարման ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր համագիտական, այնպես էլ հատուկ իրավաբանական մեթոդներ՝

* Հոդվածը ներկայացվել է 28.09.2025թ., գրախոսվել՝ 03.11.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

դիալեկտիկական մեթոդը, համակարգային մեթոդը, վերլուծական և սինթեզի մեթոդները, ձևական-իրավական մեթոդը, իրավահամեմատական մեթոդը:

Աշխատանքում եզրահանգել ենք, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի ներկայիս իրավակարգավորումը պետք է ենթարկվի փոփոխությունների ոչ միայն բնորոշման, այլև ընդհանուր իրավակիրառ տեսանկյունից, որի համար էլ աշխատանքում ներկայացրել ենք գործնական առաջարկություններ:

Հիմնաբառեր՝ *քրեական, նվազ վտանգավորություն, օրենսգիրք, հանրային, հանցանք, սուբյեկտիվ, օբյեկտիվ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանք չի համարվում այն արարքը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հատկանիշներ, սակայն իր նվազ վտանգավորության պատճառով ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել (ՀՀ քրեական օրենսգիրք 2021): Նման արարքները գործնականում հանդիպում են բավականին հաճախ, սակայն աննշան արարքների քրեաիրավական գնահատականը չափազանց անհամապատասխան է և հակասական:

Իրավակիրառ մարմինների որոշումների վերլուծությունը բացահայտեց բացասական միտում՝ երկու տարբեր ուղղություններով: Մի կողմից՝ իրավապահներն անտեսում են 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որոնք որպես հանցանք դիտարկում են այն արարքները, որոնք չեն ներկայացնում բավարար հանրային վտանգավորություն և ակնհայտորեն քրեաիրավական գնահատական չեն պահանջում: Մյուս կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածը երբեմն օգտագործվում է որպես հանրային վտանգավոր արարք կատարած անձանց՝ քրեական պատասխանատվությունից անօրինական և անհիմն ազատելու գործիք:

Պետք է ընդունել այն փաստը, որ քրեաիրավական գիտությունը պրակտիկային դեռևս չի առաջարկել հստակ և հետևողական ուղեցույց նվազ վտանգավորություն ունեցող արարքների քրեաիրավական ճիշտ գնահատման համար:

Վերը նշվածն էլ պայմանավորում է հետազոտության թեմայի արդիականությունը և հնարավորություն կընձեռի լուծելու քրեաիրավական պրակտիկայում առաջացող խնդիրները:

ՆՎԱԶ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սկսելով ուսումնասիրել նվազ վտանգավորություն ներկայացնող արարքները, որոնք պարունակում են հանցագործության հատկանիշներ, մենք նշում ենք, որ այս հասկացությունը անքակտելիորեն կապված է քրեական իրավունքի հիմնական կատեգորիայի՝ հանցագործության հետ: Ներպետական քրեական իրավունքի զարգացման ընթացքում էական փոփոխություններ են կրել հանցագործության մասին տեսական պատկերացումները և դրա կարգավորման օրենսդրական մոտեցումները: Ընդ որում, քրեաիրավական դիսկուրսի առանցքային խնդիրն է հանցագործության ձևի և բովանդակության փոխհարաբերության հարցը, այսինքն՝ դրա իրավական (այսպես կոչված «ձևական») և սոցիալական («նյութական») բնութագրերը: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, «գրավոր նորմատիվ աղբյուրների հայտնվելով՝ հանցագործության գաղափարը՝ որպես վարքագծի ամենավտանգավոր ձև, անքակտելիորեն կապվում է դրա իրավական և բովանդակային (սոցիալական) կողմերի տարանջատման հետ» (Соловьев 47):

Քրեական իրավունքի զարգացման պատմությունը ցույց է տալիս այս հիմնարար, մեթոդաբանական խնդրի լուծման տարբեր տարբերակներ: Օրինակ՝ 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի քրեական իրավունքում տրվել է հանցագործության պաշտոնական սահմանում, որի հիմքում դրվել է հանցավոր անօրինականության առկայությունը:

Հանցանքի իրավական և սոցիալական բնութագրերի հավասարակշռությունը գտնվել է (մեծապես քրեական իրավունքի դոկտրինայի ներկայացուցիչների ջանքերի շնորհիվ (Дурманов 1943)) ԽՍՀՄ-ի և միութենական հանրապետությունների քրեական օրենսդրության հիմունքներում և 1960 թվականին դրանց համապատասխան ընդունված ՌՍՖՍՀ Քրեական օրենսգրքերում: Համաձայն ՌՍՖՍՀ 1960թ. քրեական օրենսգրքի՝ «Հանցագործությունը հանրորեն վտանգավոր արարքն է (գործողություն կամ անգործություն), որը նախատեսված է քրեական օրենսդրությամբ, որը ոտնձգություն է կատարում ԽՍՀՄ սոցիալական համակարգի, նրա քաղաքական և տնտեսական համակարգերի, անձի, քաղաքական, աշխատանքային, գույքային և այլ իրավունքների ու ազատությունների նկատմամբ, քաղաքացիների, սեփականության բոլոր ձևերի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ նախատեսված սոցիալիստական իրավակարգի նկատմամբ ոտնձգություն իրականացնող այլ սոցիալիստական վտանգավոր արարքը»:

Հատկանշական է, որ ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը նույնպես տալիս էր հանցագործության նույնաբովանդակ սահմանումը:

Այդ իսկ պատճառով ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի ապաքրեականացումը կարծում ենք անընդունելի է:

Արարքի նվազ վտանգավորության վերաբերյալ դրույթները պահանջված կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ առկա է հանցագործության ձևի (քրեական հակահիրավականություն) և բովանդակության (հանրային վտանգավորություն) միջև հակասությունը: Այս հակասությունը, ըստ երևույթին, պետք է դասել «հավերժական», անփոփոխելի: Դա պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի տարբեր գործոններով:

Հանցագործության ձևի և բովանդակության անհամապատասխանությունն առաջին հերթին անխուսափելի է դառնում քրեահրավական նորմերի վերացականության և դրանցով արգելված արարքների հստակության միջև եղած հակասության պատճառով: Ինչպես հայտնի է, «ձևակերպելով հանցագործության կոնկրետ տարրերը՝ օրենսդիրը վերանում է բազմաթիվ ակտերին բնորոշ յուրահատկություններից և բացառիկ հատկանիշներից՝ որպես իրավաբանորեն նշանակալից առանձնացնելով միայն այն հատկանիշները, որոնք ընդհանրացված են, անհրաժեշտ և բավարար՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար» (Яцеленко 79): Պրակտիկան ցույց է տալիս բազմաթիվ նմանատիպ օրինակներ:

Կողոպուտի տարրերը (ՀՀ Քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մաս) կազմում են ուրիշի ցանկացած արժեքի գույքի բացահայտ հափշտակությունը: Սակայն գործնականում կողոպուտը, որի առարկան եղել է ցածր արժեք ունեցող գույքը, առանձին դեպքերում, հաշվի առնելով տուժողին պատճառված աննշան վնասը, դեռևս բարձր հանրային վտանգավորություն չունի:

Նմանատիպ օրինակները, որոնց ցանկը կարելի է շարունակել, մեզ համոզում են, որ «օրենսդիրը հանցագործություններ սահմանելիս օբյեկտիվ գործոններից ելնելով՝ (չասած սուբյեկտիվը) երբեմն ի վիճակի չէ հաշվի առնելու կյանքի իրավիճակների ողջ բազմազանությունը և պահպանելու քաղաքական, սոցիալական փոփոխություններով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը:

Այսպիսով, չնայած քրեական օրենսդրության ազատականացման մասին պաշտոնական կարգախոսներին, դրանում ակնհայտորեն ցույց է տրվում ռեպրեսիվ ուղղվածություն, որն արտահայտվում է քրեական օրենսդրական արգելքների թվի

մշտական աճով և թույլատրելի վարքագծի քրեաիրավական սահմանների նեղացմամբ» (Капинус 38-39): Համաձայնելով նման գնահատականներին՝ նշենք, որ քրեորեն ճանաչված արարքների թիվը միայն աճել է:

ՀՀ վճռաբեկ դատարանը իր թիվ ՏԴ1/0078/01/17 որոշման մեջ անդրադարձել է նշված հարցին: Համաձայն այդ որոշման՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել»: Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Նարեկ Արմենակյանի գործով որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. «(…) [Հ]անրային վտանգավորությունը հանդիսանում է հանցագործության պարտադիր հատկանիշներից մեկը»: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի վերոգրյալ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը հանցագործություն է համարում միայն հանրային (հասարակական) վտանգավորության որոշակի աստիճան ունեցող արարքը (ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՏԴ1/0078/01/17, 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշում) :

Նշված հիմնախնդրի ուսումնասիրության ժամանակ չպետք է նաև մոռանալ նյութական և դատավարական իրավունքների փոխհարաբերակցության մասին: Շատ դեպքերում նվազ վտանգավորություն ներկայացնող դրույթի կիրառման արդյունքում կարճվում են մի շարք քրեական վարույթներ: Սա կարող է հիմք հանդիսանալ՝ ուսումնասիրելու վիճակագրությունը և դրա արդյունքում կատարելագործել քրեական օրենսգիրքը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք եզրակացնել, որ նվազ վտանգավորություն ունեցող արարքները այն արարքներն են, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցանքի հատկանիշներին, սակայն միևնույն ժամանակ բովանդակային առումով զուրկ է հանրային վտանգավորությունից, որը բնորոշ է հանցագործությանը:

Նվազ վտանգավորություն ներկայացնող արարքների իրավական բնույթի վերաբերյալ մեր կողմից հիմնավորված դրույթները, առանց չափազանցության, հիմնարար նշանակություն ունեն, քանի որ դրանք թույլ են տալիս վերաիմաստավորել կամ որոշ չափով հստակեցնել քրեաիրավական որոշ հիմնարար չափորոշիչներ:

Մասնավորապես, դրանք կարող են ծառայել որպես հանցանքի և հանրային վտանգավորության տարրերի փոխհարաբերությունների վերաբերյալ երկարամյա տեսական վեճի լուծման բանալին: Առանց խորանալու մանրամասների մեջ՝ նշենք, որ այս վեճի էությունը հետևյալն է. որոշ գիտնականներ կարծում են, որ հանցանքն իր մեջ պարունակում է հանրային վտանգավորություն, կենտրոնացված է դրա տարրերի մեջ (Трайнин 30, 32), «հանցանքի անբաժան մասն է» (Кудрявцев 88): Մյուսները կարծում են, որ հանրային վտանգավորությունը գտնվում է հանցանքի հատկանիշներից դուրս (Иванчин 20):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մեր հետազոտությունը վերջ է դնում այս քննարկմանը՝ ապացուցելով, որ հանցանքի տարրերին համապատասխանող արարքը չի կարող հանրային վտանգ չներկայացնել: Սա նշանակում է, որ արարքի հանրային վտանգավորությունը չի կարող ներառվել հանցանքի բովանդակության մեջ: Առավել կարևոր է, որ նվազ վտանգավորություն ներկայացնող արարքների քրեաիրավական բնույթի մասին մեր եզրակացությունը ստիպում է վերանայել քրեական պատասխանատվության հիմքը կարգավորելու օրենսդրական մոտեցումը:

Ստացվում է, որ «քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքի բոլոր հատկանիշները պարունակող» արարք կատարելը բավարար չէ քրեական պատասխանատվության հիմք ստեղծելու համար: Անհրաժեշտ է լրացուցիչ սահմանել, որ այդ արարքն ունի հանցանքին բնորոշ հանրային վտանգավորություն:

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը հանցանքի հասկացության մեջ չի ընդգրկել *հանրային վտանգավորություն* բառակապակցությունը հենց այն հիմնավորմամբ, որ քրեական օրենսգրքով նախատեսված և պատժի սպառնալիքով արգելված ցանկացած արարք արդեն իսկ իրենով հանդիսանում է հանրորեն վտանգավոր: Այնուամենայնիվ, այս հարցի շուրջ դեռևս միասնական մոտեցում գոյություն չունի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետք է նաև նշել՝ որքան էլ որ իդեալական չլինի սահմանումը, անհնար է հասնել իրավակիրառի համար բացարձակ ցանկալի արդյունքի, քանի որ քրեական օրենսգրքում նման հատկանիշների ներդնումը գրեթե անհնար է: Նվազ վտանգավորության վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները անխուսափելիորեն պահանջում են հստակեցում, գործիքակազմ, տարբեր իրավիճակներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում ապացուցման ենթակա փաստական հանգամանքների մեջ նշվում է, որ պետք է ապացուցվեն ենթադրյալ հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները: Կարծում ենք ավելորդ չէր լինի ավելացնել ևս մեկ կետ: Մենք առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 102-րդ հոդվածը համալրել հետևյալ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Արարքի հանրային վտանգավորությունը, որը հիմք է տալիս անձին ենթարկելու քրեական պատասխանատվության, եթե առկա չեն քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները…»: Կարծում ենք սա կհանդիսանա ոչ միայն լրացում, այլև հստակություն կմտցնի իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրների լուծման համար: Նույն տրամաբանությամբ նպատակահարմար կլիներ նաև դատավարական օրենսգրքում ևս ամրագրել դատարանի՝ որպես վարույթ իրականացնող մարմնի կողմից պարտադիր պարզման հանգամանքը. արդյո՞ք առկա են հիմնավորումներ արարքը որպես նվազ վտանգավորություն դիտելու համար, թե ոչ:

1. ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասից հեռացնել անհասկանալի «ձևականորեն պարունակում է» արտահայտությունը: Պետք է փոխարենը հստակ սահմանել, որ նվազ վտանգավորություն ունեցող արարքները համապատասխանում են հանցանքի հատկանիշներ.
2. Հստակեցնել նվազ վտանգավոր արարքների հիմքերը՝ մատնանշելով, որ այն ոչ թե կապված է հանրային վտանգավորության բացակայությամբ, այլ արարքի ոչ բավարար հանրային վտանգավորությամբ, որը չի հասնում քրեորեն կարևորության մակարդակի:

ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանցանք չի համարվում նվազ վտանգավորություն ունեցող այն արարքը, որը թեկուզև պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքի հատկանիշներ, սակայն հանցանքի ուղղվածությամբ, իրավիճակով, եղանակով, շարժառիթով, նպատակով, բնույթի և ծանրության աստիճանով, ինչպես նաև այլ հատկանիշներից ելնելով՝ չունի հանրային վտանգավորություն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ *Սահմանադրություն*. ընդունված 2015թ:
2. ՀՀ *Վճռաբեկ դատարան*. թիվ ՏԴ1/0078/01/17, 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշում:
3. ՀՀ *քրեական օրենսգիրք*. ընդունված՝ 05.05.2021, ՀՕ-199-Ն, սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2021.05.17-2021.05.30 Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021.
4. Иванчин, Артем Владимирович. «Теоретическая модель предписаний Уголовного кодекса РФ об основании уголовной ответственности и малозначительности» // *Lex Russica*, 2015, No 6, стр. 20.
5. Капинус, Ольга. «Криминализация и декриминализация деяний: поиск оптимального баланса» // *Общественные науки и современность*, 2018, No 4., стр. 38-39.
6. Кудрявцев, Владимир Николаевич. *Теоретические основы квалификации преступлений.* М.: Госюриздат, 1963, стр. 88.
7. Плотников, Алексей Иванович. *Объективное и субъективное в преступлении: автореф. дис. ... д-ра юрид. Наук*, М., 2012, стр. 9.
8. Соловьев, Алексей Николаевич. *Понятие преступления: теоретические, законодательные и правопримени-тельные аспекты: дис. ... канд. юрид. наук.* Волгоград, 2000, стр. 47.
9. Трайнин, Арон Наумович. *Избранные труды / сост., вступ. ст. Н.Ф. Кузнецовой.* СПб.: Юрид. центр Пресс, 2004, стр. 30- 32.
10. Яцеленко, Борис Викторович. *Противоречия уголовно-правового регулирования. Монография.* М.: МЮИ МВД России, 1996, 79 с.

WORK CITED

1. Ivanchin Artem Vladimirovoch. Teoreticheskaya model' predpisaniy Ugolovnogo kodeksa RF ob osnovanii ugolovnoy otvetstvennosti i maloznachitel'nosti [Theoretical Model of the Provisions of the Criminal Code of the Russian Federation on the Grounds of Criminal Liability and Insignificance] // Lex Russica. – 2015. – No 6. – S. 20. (in Russian)
2. HH Sahmanadrut’yun. yndunvats 2015t’ [Constitution of Armenia] (in Armenian)
3. HH Vchrrabek dataran. t’iv TD1/0078/01/17, 2019 t’vakani noyemberi 7-i voroshum [Decision N1/0078/01/17 of Court of Cassation of Armenia], (in Armenian)
4. HH k’reakan orensgirk’. yndunvats` 05.05.2021, HO-199-N, skzbnaghbyury, miasnakan kayk’ 2021.05.17-2021.05.30 Pashtonakan hraparakman ory 27.05.2021 [Criminal code of Armenia], (in Armenian)
5. Kudryavtsev Vladimir Nikolaevich. Teoreticheskiye osnovy kvalifikatsii prestupleniy. [Theoretical Foundations of the Classification of Crimes] – M.: Gosyurizdat, 1963. – S. 88. (in Russian)
6. Kapinus Olga. Kriminalizatsiya i dekriminalizatsiya deyaniy: poisk optimal'nogo balansa [Criminalization and Decriminalization of Acts: The Search for an Optimal Balance] // Obshchestvennyye nauki i sovremennost'. – 2018. – No 4. – S. 38-39. 37 S. (in Russian)
7. Plotnikov Aleksej Ivanovich. Ob"yektivnoye i sub"yektivnoye v prestuplenii [The Objective and the Subjective in a Crime]: avtoref. dis. ... d-ra yurid. Nauk, 385 S. (in Russian)
8. Solov'yev Aleksej Nikolaevich. Ponyatiye prestupleniya: teoreticheskiye, zakonodatel'nyye i pravoprimeni-tel'nyye aspekty [The Concept of Crime: Theoretical,

Legislative, and Law-Enforcement Aspects]: dis. ... kand. yurid. nauk. – Volgograd, 2000. – S. 47. 235 S. (in Russian)

9. Traynin Aron Naumov. Izbrannyye Trudy [Selected Works] / sost., vstup. st. N.F. Kuznetsovoy. – SPb.: Yurid. tsentr Press, 2004. – S. 30, 32. (in Russian)

10. Yatselenko Boris Viktorovich. Protivorechiya ugolovno-pravovogo regulirovaniya [Contradictions in Criminal Law Regulation]. Monografiya. – M.: MYUI MVD Rossii, 1996. – 79 S. (in Russian)

CRIMINAL CHARACTERISTICS OF LESS-DANGEROUS ACTS AND CURRENT ISSUES

HAYK MKRTCHYAN
Eurasia International University, Lecturer
Ph.D. in Law,
Yerevan, the Republic of Armenia

EDGAR MANUCHARYAN
Eurasia International University, Lecturer;
Northern University, Department of Law, Lecturer;
Goris State University, Lecturer;
Yerevan College of Law, Economics and Management, Lecturer
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to present the place and role of acts of minor dangerousness as an independent criminal-law institution within the context of the new Criminal Code of the Republic of Armenia. To date, a unified approach to the issue in question is lacking. The choice of the topic is conditioned by the necessity to develop and systematize theoretical conceptions regarding the criminal-law nature and legal consequences of acts of minor dangerousness, as well as to formulate scientifically grounded proposals for their criminal-law assessment in law-enforcement practice. Contradictions arise in connection with the application of the aforementioned norm. We believe that, under the current legal regulation, the rights and legitimate interests of individuals are not fully preserved and protected.

The objectives of the work are: to present the criminal-law characteristics of acts of minor dangerousness; to identify the existing issues; to present proposals aimed at improving the legislation.

In the course of the research, both general scientific and special legal methods were applied: the dialectical method, the systemic method, methods of analysis and synthesis, the formal-legal method, and the comparative-legal method.

In the work, we have concluded that the current legal regulation of the new Criminal Code of the Republic of Armenia should be subject to amendments not only from the standpoint of definition but also from the general law-enforcement perspective, for which practical proposals have been presented in the study.

Key words: *criminal, less dangerous, code, public, crime, subjective, objective.*

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ДЕЯНИЙ, ПРЕДСТАВЛЯЮЩИХ ПОНИЖЕННУЮ ОБЩЕСТВЕННУЮ ОПАСНОСТЬ, И ЕЕ АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ

АЙК МКРТЧЯН
преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук
г. Ереван, Республика Армения

ЭДГАР МАНУЧАРЯН
преподаватель кафедры права Международного университета Евразия,
Ереванского Северного университета, Горисского государственного
университета, Ереванского колледжа права, экономики и менеджмента,
г. Ереван, Республика Армения

Цель статьи — представить место и роль деяний, представляющих пониженную общественную опасность, как самостоятельного уголовно-правового института в контексте нового Уголовного кодекса Республики Армения. До настоящего времени отсутствует единый подход к данному вопросу. Выбор темы обусловлен необходимостью разработки и систематизации теоретических представлений о правовой природе и последствиях таких деяний, а также потребностью в научно обоснованных рекомендациях для их уголовно-правовой оценки в правоприменительной практике. При этом выявляются противоречия, связанные с применением соответствующей нормы. Считаем, что в условиях действующего правового регулирования права и законные интересы лиц не обеспечиваются и не защищаются в полной мере.

Задачи исследования:

1. Представить уголовно-правовую характеристику деяний, обладающих пониженной общественной опасностью.
2. Выявить существующие проблемы.
3. Сформулировать предложения по совершенствованию законодательства.

В работе применены как общенаучные, так и специальные юридические методы: диалектический, системный, аналитический и синтетический, формально-правовой, а также сравнительно-правовой.

В результате исследования сделан вывод о необходимости внесения изменений в действующее регулирование нового Уголовного кодекса Республики Армения не только в части дефиниции, но и в целом с точки зрения правоприменения. В статье представлены практические предложения по совершенствованию законодательства.

Ключевые слова: *уголовный, менее опасный, кодекс, публичный, преступление, субъективный, объективный.*

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ *

ՀՏԴ 342 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-83*

ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆ
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս,
«Թաուեր Ինթերնեյշնլ Քոնսալթանտս» ՓԲԸ
իրավաբանական ծառայության ղեկավար,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
elin.geghamyan@ysu.am
ORDID: 0000-0003-0186-6941

Սույն գիտական հոդվածի նպատակն այն չափանիշների սահմանումն ու վերհանումն է, որոնց առկայության դեպքում վարչական կարգով բողոքարկումը կարող է որակվել որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

Սույն գիտական հոդվածի խնդիրներն են վարչարարության վարչական կարգով բողոքարկման իրավունքի վերլուծությունը՝ որպես ՀՀ Սահմանադրության և կոնվենցիոն պարտավորությունների համատեքստում պաշտպանության արդյունավետ միջոց, վարչական բողոքարկման համակարգի արդյունավետության բաղադրատարրերի առանձնացումը՝ բողոքը քննող մարմնին առաջադրվող պահանջների, բողոքի քննության ընթացակարգի և բողոքարկման համակարգին առաջադրվող ընդհանուր պահանջների տեսանկյունից, ինչպես նաև վարչական կարգով բողոքը քննող մարմնի «անկախությանը» առաջադրվող պահանջների սահմանումը:

Հետազոտությունն իրականացվել է դոկտրինալ և նորմատիվ վերլուծության, սահմանադրական և կոնվենցիոն դրույթների համակարգային և թելեոլոգիական մեկնաբանության, համեմատական և քննադատական մեթոդներով:

Վերոնշյալ մեթոդների կիրառման արդյունքում հեղինակը վեր է հանում վարչական բողոքարկման համակարգի արդյունավետության բաղադրատարրերը՝ բողոքը քննող մարմնին առաջադրվող պահանջների, բողոքի քննության ընթացակարգի և բողոքարկման համակարգին առաջադրվող ընդհանուր պահանջների տեսանկյունից: Բողոքը քննող մարմնին առաջադրվող չափանիշների համատեքստում հեղինակն եզրահանգում է, որ բողոքը քննող մարմնի «անկախությունը» պետք է գնահատվի՝ հիմք ընդունելով ոչ թե դրա կառուցվածքային, ինստիտուցիոնալ կարգավիճակը, այլ գործառութային անհրաժեշտ ինքնուրույնությունը, վարչարարությունն իրականացրած մարմնից առանձնացվածությունը, լիազորությունների շրջանակը և բողոքի քննության գործնական չափանիշները: Հեղինակն եզրակացնում է նաև, որ վարչական կարգով բողոքարկման համակարգի արդյունավետության չափման հիմնաքարային չափանիշը այդ համակարգի օբյեկտիվ և գործնականում արդյունավետ կարողությունն է՝ ապահովել խախտված իրավունքների իրական վերականգնումը:

* Հոդվածը ներկայացվել է 13.10.2025թ., գրախոսվել՝ 02.11.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Հիմնաբառեր. *վարչական բողոք, արդյունավետ պաշտպանության միջոց, խախտված իրավունքների վերականգնում, վարչարարության բողոքարկում, գործառութային անկախություն, դատարանների ծանրաբեռնվածություն, վարչական մարմին:*

Ներածություն

Իրավական արդյունավետ պաշտպանության միջոցների սկզբունքը իրավունքի գերակայությունը որպես իրենց իրավական համակարգի սկզբունք հռչակած երկրների իրավական համակարգերում ներկայումս իր ուրույն և ծանրակշիռ տեղն ունի: Իրավունքի գերակայության անբաժանելի մաս հանդիսանալով՝ իրավական արդյունավետ պաշտպանության միջոցների իրավունքը սերտորեն կապված է նաև օրենքի առաջ հավասարության, անձի արժանապատվության, իրավունքների հավասար պաշտպանվածության, դատական պաշտպանության և դատական ակտերի անփոփոխելիության սկզբունքների հետ:

Այս սկզբունքը նախևառաջ պահանջում է, որ պետությունն իր իրավական համակարգը կառուցի այնպես, որ երաշխավորի անձի իրավունքների իրական և արդյունավետ պաշտպանություն (von Colson 23), և չստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ իրավունքների իրականացումն ու պաշտպանությունը կդառնա անհնար կամ զգալիորեն դժվար (Fisscher et al. 37; Palmisani 27; Courage and Crehan 29; Preston et al. 39; Kutz-Bauer 57; Recheio-Cash & Carry 17–18; Adeneler et al. 95; Jonkman et al. 28, Galetta et al. 15): Չնայած ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում իրավունքների պաշտպանության արդյունավետության սկզբունքը, այն ներպետական իրավական համակարգում իր անժխտելի տեղն ունի՝ հաշվի առնելով Սահմանադրության 61-րդ հոդվածում դատական պաշտպանության հիմնարար իրավունքի ամրագրումը որպես «արդյունավետ դատական պաշտպանության» իրավունք, իսկ մյուս կողմից՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջը՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս դրանց արդյունավետ իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ամրագրելու վերաբերյալ: Այս սկզբունքն ուղղակիորեն ամրագրված է նաև ներպետական իրավական համակարգի անբաժան մասը հանդիսացող՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածով:

Թեև այս սկզբունքն ավանդաբար կապվել է դատական պաշտպանության իրավունքի հետ, իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը միայն դատական գործընթացներին առաջադրվող պահանջ չէ: Կոնվենցիան արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքն ամրագրող 13-րդ հոդվածում չի օգտագործում «տրիբունալ» հասկացությունն այն իմաստով, ինչ 6-րդ հոդվածում՝ իրավունքի պաշտպանության միջոցի արդյունավետության հիմքում դնելով բողոքը քննող մարմնի՝ գործնականում արդյունավետ կարողությունը՝ հասցեագրելու իրավունքի խախտումը և ապահովելու խախտված իրավունքի վերականգնումը:

Այսպիսով՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը ժամանակակից ժողովրդավարական իրավական համակարգերում կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունք է, որը կիրառելի է նաև վարչական իրավահարաբերություններում: Խարսխված լինելով իրավունքի գերակայության սկզբունքի վրա՝ այն պահանջում է, որ իրավունքը խախտված անձի համար երաշխավորված լինի այնպիսի գործիքակազմին հասանելիությունը, որը կապահովի իր խախտված իրավունքի իրական վերականգնումը:

Վարչական իրավունքի համակարգում պաշտպանության արդյունավետ միջոցի ներքո նախևառաջ ներառվում է վիճելի վարչական ակտը վարչական կամ դատական կարգով վիճարկելու իրավունքը (Đanić Čeko and Kovač 3): Չնայած այն հանգամանքին, որ վարչական կարգով բողոքարկումը շատ երկրներում հանդես է

գալիս որպես դատական վերանայմանը նախորդող պարտադիր կամ կամընտրելի փուլ, հաճախ նաև՝ դատական կարգով բողոքարկման այլընտրանք, պաշտպանության արդյունավետ միջոցի չափանիշների կիրառելիությունը վարչարարության վարչական կարգով բողոքարկման համակարգի նկատմամբ դեռևս վիճելի է: Գիտական աղբյուրներում այս առնչությամբ բանավեճի հիմքում հաճախ դրվում է այն գաղափարը, որ գործադիր իշխանության համակարգում, հաճախ վարչարարությունն իրականացրած մարմնի հետ միևնույն համակարգում գտնվող մարմնի կողմից վարչական բողոքի քննարկումը, երբ չկա ինստիտուցիոնալ անկախություն, արդեն իսկ բացառում է իրավական պաշտպանության միջոցի արդյունավետության ամենակարևոր՝ բողոքը քննող մարմնի անկախության պահանջին համապատասխանությունը, հետևաբար նաև՝ բողոքարկման համակարգի համապատասխանությունն այդ պահանջներին:

Թե՛ գիտական մակարդակում, թե՛ միջազգային մարմինների դիրքորոշումներում ընդգծվում է, որ վարչական բողոքարկման հնարավորությունն ինքնին չի կարող վկայել իրավունքի արդյունավետ պաշտպանության միջոցի առկայության մասին. բողոքարկումը որպես արդյունավետ միջոց կարող է համարվել միայն, եթե ապահովված են անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքները, վերանայման անհրաժեշտ շրջանակը և բողոքարկման արդյունքում կայացվող որոշումների կատարելիությունը: Որպես կարևորագույն սկզբունք՝ ընդգծվում է, որ վարչական բողոքարկումը չի կարող համարվել արդյունավետ պաշտպանության միջոց, եթե ապահովված չէ բողոքը քննող մարմնի՝ գործադիր իշխանությունից ինստիտուցիոնալ անկախությունը և կառուցվածքային առանձնացումը՝ միաժամանակ ընդգծելով, որ միայն այս ձևական առանձնացումը բավարար չէ արդյունավետությունը փաստելու համար, եթե բողոքը քննող մարմինը գործառութային պատշաճ կարողություն չունի՝ հասցեագրելու խախտումները և գործնականում տրամադրելու իրավական պաշտպանության արդյունավետ միջոց (ReNEUAL; Craig 749–52):

Վերոգրյալի համատեքստում նախևառաջ քննարկման ենթակա է այն հարցը, թե, արդյո՞ք, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը կիրառելի է վարչարարության բողոքարկման, այդ թվում՝ վարչական կարգով բողոքարկման նկատմամբ, և, արդյո՞ք, վարչարարության բողոքարկման համակարգի արդյունավետությունը ենթակա է գնահատման, ի թիվս այլնի, նաև պաշտպանության արդյունավետ միջոցին առաջադրվող պահանջներին վերջինիս համապատասխանության տեսանկյունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), անդրադառնալով Կոնվենցիայի 13-րդ հոդվածում կիրառվող «պետական մարմին» եզրույթին, ընդգծել է, որ այդ հասկացության ներքո միայն դատարանները չեն, և, ի տարբերություն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, որը կոնվենցիոն իմաստով տրիբունալին խիստ պահանջներ է առաջադրում (Golder 33, Klass 67, Rotaru 69, Driza 116), 13-րդ հոդվածի համատեքստում որպես իրավասու մարմին կարող են հանդես գալ նաև օմբուդսմենը (Leander), վարչական մարմինը, օրինակ՝ նախարարը (Boyle and Rice), կամ քաղաքական մարմինը, ինչպիսին է, օրինակ, խորհրդարանական հանձնաժողովը (Silver 114–115)՝ այլ գործերի շրջանակում ընդգծելով, որ իրավունքի պաշտպանության միջոցն արդյունավետ համարելու տեսանկյունից կարևոր է ոչ թե կոնկրետ մարմնի անվանումը կամ կարգավիճակը, այլ այն լիազորությունները և ընթացակարգային երաշխիքները, որոնցով օժտված է տվյալ մարմինը (Silver 114–115, Kudła 157, Mugemangango 67): ՄԻԵԴ-ը պարտադիր է համարում նաև այդ մարմնի՝ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող որոշում կայացնելու լիազորության առկայությունը (Silver 114–115), և այս համատեքստում պարզապես խորհրդատվական բնույթի եզրակացություններ կայացնելու լիազորություն ունեցող մարմինների կողմից բողոքների քննությունը չի դիտարկում որպես պաշտպանության

արդյունավետ միջոց (Zazanis 47): Մյուս կողմից, քննարկվող իրավունքը կիրառելի է վարչական մարմնի կամ գործադիր մարմնի կողմից կայացված բոլոր վարչական ակտերի նկատմամբ (Al-Nashif 137):

Այսպիսով, վարչարարության բողոքարկման իրավունքն ինքնին վարչական իրավահարաբերություններում վարչարարության հասցեատիրոջ համար պաշտպանության արդյունավետ միջոցի կարևորագույն բաղադրատարր է, որից մեխանիկորեն, պարզապես վարչական բողոքը քննող մարմնի՝ դատարան չհանդիսանալու հանգամանքի ուժով, չի կարող դուրս թողնվել վարչարարության վարչական կարգով բողոքարկումը: Իրավունքի գերակայության սկզբունքը և պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը ենթադրում են բողոքարկման թե՛ վարչական, թե՛ դատական համակարգի համապատասխանություն՝ այս իրավունքի համատեքստում արդյունավետության չափանիշներին:

Վարչական կարգով բողոքը քննող մարմնի ինստիտուցիոնալ անկախությունը. ձևական առանձնացումից դեպի գործառութային ինքնուրույնություն

Պաշտպանության միջոցների արդյունավետության սկզբունքը, այսպիսով, իրավունքի գերակայության սկզբունքից ածանցվող իրավունք է, քանի որ այն իրավական համակարգը, որը հիմնարար իրավունքները ճանաչելով չի ապահովում դրանց խախտման դեպքում գործնականում արդյունավետ վերականգնումը, չի կարող համարվել այդպիսի իրավունքների պաշտպանությունն ապահովող համակարգ: Այս համատեքստում իրավական արդյունավետ պաշտպանության միջոցների սկզբունքը հիմնարար իրավունքի նորմատիվ ամրագրման և գործնականում կիրառելիության կամուրջն է:

Հետևաբար՝ իրավական պաշտպանության միջոցների արդյունավետության սկզբունքը նաև այդպիսի կամուրջ է՝ վարչարարության բողոքարկման՝ օրենսդրորեն ամրագրված իրավունքի և այդպիսի բողոքարկման արդյունքում խախտված իրավունքի գործնականում իրական վերականգման միջև: Նաև այս համատեքստում, ինչպես վերը նշվել է, վարչարարության վարչական կարգով բողոքարկումը չպետք է ապրիորի կերպով դուրս թողնվի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների համակարգից: Կարծում ենք, որ բողոքարկման համակարգի արդյունավետությունը թե՛ ընդհանուր առմամբ, և թե՛ նաև արդյունավետ պաշտպանության միջոցի համատեքստում պետք է քննարկման առարկա դարձվի վարչական բողոքը քննող մարմնի գործառութային ինքնուրույնության, վարութային երաշխիքների և խախտումները գործնականում շտկելու կարողությունից ելնելով, և գնահատման առարկա դարձվի ինչպես կոնկրետ վարչական բողոքի քննության տեսանկյունից, այնպես էլ վարչական բողոքարկման ընդհանուր համակարգի արդյունավետության տեսանկյունից:

Այսպես, վարչական բողոքարկման արդյունավետության բովանդակային ամենակարևոր չափանիշը բողոքի քննության արդյունքում անձի խախտված իրավունքի վերականգնման **իրական հնարավորության առկայությունն է.** պաշտպանության միջոցը կարող է արդյունավետ համարվել միայն այն դեպքում, երբ ունակ է ապահովելու խախտված իրավունքի ամբողջական վերականգնումը (Pine Valley 1989): Այս համատեքստում խախտված իրավունքի վերականգնման հնարավորության ապահովման առաջին նախապայմանն այն է, որ անձի համար պետք է երաշխավորված լինի իր իրավունքների և օրինական շահերի խախտման դեպքում իրավասու մարմնին համապատասխան բողոք ներկայացնելու իրավունքը: Ինչպես իրավական պաշտպանության այլ միջոցները, այնպես էլ վարչարարության բողոքարկման իրավունքը, նույնիսկ լավագույն վարույթային երաշխիքներ ունենալու և ժամանակակից չափանիշներին բավարարելու դեպքում չեն կարող իրավական

պաշտպանության արդյունավետ միջոց համարվել, եթե բողոքարկման իրավունքն ընձեռված է անհամաչափ նեղ շրջանակի սուբյեկտների, և վարչարարության հետևանքով իր իրավունքը կամ օրինական շահը խախտված անձը չունի գործնականում երաշխավորված՝ վարչարարության բողոքարկման իրավունք (Csüllög 46, Petkov 82):

Մյուս կողմից, վարչարարության բողոքարկման արդյունքում խախտված իրավունքի վերականգնման իրական հնարավորությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ արդյունավետ համարվի միայն այն ընթացակարգը, որը վարչարարությունը բողոքարկող անձի համար երաշխավորում է բողոքի քննության բարենպաստ ելք: Չնայած նրան, որ բողոքարկող անձի տեսանկյունից իրավունքի պաշտպանությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ երաշխավորում է վերջինիս համար բարենպաստ արդյունքը, իրավական պաշտպանության միջոցի ընդհանուր արդյունավետությունը, այդ թվում՝ բողոքարկման արդյունավետությունը, չի կարող պայմանավորվել զուտ այդ գործոնով (Swedish Engine Drivers' Union 50, Costello-Roberts 40, Hilal 78). բողոքի քննության գործընթացն արդյունավետ է, եթե երաշխավորվում է շահագրգիռ անձի համար գործնականում հասանելի և համապատասխան լիազորություն ունեցող մարմնի կողմից իր բողոքի ամբողջական քննությունը՝ անկախ գործի փաստացի ելքից (C.): Այսպիսով՝ պատշաճ կազմակերպված և բավարար թափանցիկություն ունեցող վարչական կարգով բողոքարկման համակարգն ընդունակ է ֆիզիկական ու իրավաբանական անձանց մոտ բավարար վստահություն և դրա արդյունավետության նկատմամբ համոզմունք առաջացնելու նույնիսկ այն դեպքում, երբ իրենց կողմից ներկայացված բողոքը մերժվում է:

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցին առաջադրվող չափանիշների համատեքստում վարչարարության վարչական կարգով բողոքարկման համակարգի արդյունավետության չափման հաջորդ չափանիշների խումբը կապված է բողոքը քննող մարմնի հետ: Ինչպես վերը նշվել է, այս առումով մինչ օրս թե՛ տեսական աղբյուրներում, թե՛ Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի իրավասու մարմինների դիրքորոշումների համատեքստում գերակշռում է այն տեսակետը, որ վարչական բողոքարկման արդյունավետության տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի բողոքը քննող մարմնի՝ վարչարարությունն իրականացրած մարմնից անկախությունը և առանձնացվածությունը (CPT 87):

Հարկ է, սակայն, փաստել, որ չնայած այն հանգամանքին, որ իր վճիռներում ՄԻԵԴ-ը ևս կարևորում է վարչական բողոքը քննող մարմնի անկախությունը, դատարանը «անկախություն» հասկացության չափանիշը չի բարձրացնում այնքան, որ դա համադրելի լինի վարչարարության դեմ բերված բողոքները միայն պետական իշխանության այլ ճյուղի մարմնի, օրինակ՝ միայն դատարանի կողմից քննվելուն: Այս համատեքստում գտնում ենք, որ «անկախություն» եզրույթը պետք է մեկնաբանվի ոչ թե զուտ բողոքը քննող մարմնի կառուցվածքից, ինստիտուցիոնալ դիրքավորումից ելնելով, այլ հիմք ընդունելով տվյալ մարմնի գործառութային ինքնուրույնությունը և լիազորությունների շրջանակը: Հետևաբար, մեր մոտեցմամբ, վարչական կարգով բողոքը քննող մարմինները, անկախ նրանից, թե դրանք ներառված են գործադիր իշխանության համակարգում, թե՝ ոչ, անկախ նրանից, թե ինստիտուցիոնալ ինչ հարաբերակցության մեջ են վարչարարությունն իրականացրած մարմնի հետ, կարող են բավարարել իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի համատեքստում առաջադրվող անկախության չափանիշին, եթե լիազորությունների շրջանակի և բողոքի քննության գործնական չափանիշների տեսանկյունից ապահովում են ոչ իրավաչափ վարչարարության ցանկացած դրսևորում արձանագրելու բավարար գործիքակազմ: Ուստի հաջորդիվ քննարկման ենթակա են այն չափանիշները, որոնց առկայության դեպքում բողոքը քննող մարմինը կարող է

համարվել գործառութային բավարար ինքնուրույնություն և խախտված իրավունքների՝ գործնականում արդյունավետ վերականգնումն ապահովող:

Այսպես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքը քննող մարմնի անկախության հիմքում դրվող չափանիշը պետք է լինի այդ մարմնի լիազորությունների շրջանակը և իրական կարողությունը՝ բողոքը քննել արդյունավետության չափանիշին բավարարող ընթացակարգով, ուստի՝ օրենսդրի, մյուս կողմից՝ վարչական մարմնի պարտականությունն է՝ ապահովել բողոքը քննող պաշտոնատար անձանց գործառութային անկախությունը և ինքնուրույնությունը՝ վարչարարությունն իրականացրած անձանցից: Սա նախևառաջ ենթադրում է, որ գործնականում պետք է բացառվի Հայաստանի Հանրապետությունում վարչական մարմինների պրակտիկ գործունեության մեջ հաճախ հանդիպող այն իրավիճակը, երբ վարչարարության դեմ վերադասության կարգով բերված բողոքները, այդ թվում՝ վերադաս վարչական մարմնին ներկայացված բողոքները (օրինակ՝ նախարարությունն ներկայացված՝ նախարարությանը ենթակա մարմնի կողմից կայացված վարչական ակտի դեմ բերված բողոքը) մակագրվում և քննվում են այն նույն պաշտոնատար անձի կամ ստորաբաժանման կողմից, որն իրականացրել է տվյալ վարչարարությունը:

Եվրոպայի խորհրդի կողմից հրապարակված մի շարք փաստաթղթերում վերը հիշատակված խնդրի լուծման համար խորհուրդ տրվող ամենահասանելի քայլերից մեկը վարչական մարմնում բողոքները քննող առանձին ստորաբաժանում ունենալն է կամ առնվազն այդ գործառույթն այնպիսի պաշտոնատար անձանց վերապահելը, որոնք ներգրավված չեն բողոքարկվող վարչարարության իրականացման գործընթացում՝ բացառելով բողոքը քննող պաշտոնատար անձանց՝ բողոքարկվող որոշման, գործողության կամ անգործության առնչությամբ նախկինում ունեցած ուղղակի ներգրավվածությունը (Cooke et al. 33):

Հարկ է ընդգծել նաև, որ նույնիսկ այն դեպքում, երբ թե՛ օրենսդրական և թե՛ գործնական մակարդակում ապահովված կլինի վարչական բողոքը քննող մարմնի՝ գործառութային բավարար ինքնուրույնությունը և առանձնացվածությունը վարչարարությունն իրականացրած վարչական մարմնից, դա չի կարող համարվել բավարար՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի տեսանկյունից: Անհրաժեշտ է նաև, որ արդյունավետության չափանիշներին համապատասխանեն բողոքի քննության ընթացակարգը, բողոքը քննող մարմնի լիազորությունները, բողոքի քննության արդյունքում կայացվող որոշման իրավական բնույթն ու գործնականում կատարելիությունը:

Նույնիսկ բողոքի ըստ էության քննությանն առաջադրվող վերոնշյալ պահանջների ապահովման դեպքում վարչարարության բողոքարկումն արդյունավետ չի կարող համարվել, եթե իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է ուշացած, ուստի վարչարարության բողոքարկման արդյունավետության հաջորդ չափանիշը վարչական բողոքի քննությունն է ողջամիտ ժամկետում (Kadiķis 62, Pine Valley, Payet 131–134): Ուստի վարչարարության՝ ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով բողոքարկման դեպքում պետք է երաշխավորվի բողոքի քննությունը, դրա արդյունքում համապատասխան որոշման կայացումը և անձի խախտված իրավունքների փաստացի վերականգնումը ողջամիտ, իսկ վարչական կարգով բողոքարկվելու դեպքում՝ նաև առավելագույն սեղմ ժամկետում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 11-րդ հոդվածով ամրագրված՝ տնտեսվարության սկզբունքի պահանջը:

Բողոքը քննող վարչական մարմինը պետք է ապահովի հանգամանքների ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ քննությունը, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների բացահայտումը, ունենա բավարար գործիքակազմ՝ հաստատելու համապատասխան փաստերը, ըստ անհրաժեշտության պարզելու որոշ հանգամանքներ սեփական նախաձեռնությամբ՝ չսահմանափակվելով բողոքի հիմքերով կամ վարչարարությունն իրականացրած վարչական մարմնի

ներկայացրած պարզաբանումներով (European Standards 5): Հատկանշական է, որ վարչարարության բողոքարկման արդյունավետության՝ վերը քննարկված չափանիշները, ըստ էության, առանձնացվել են նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից (CDL-AD(2016)007-e):

Այս համատեքստում յուրաքանչյուր կոնկրետ գործի քննության շրջանակում վարչարարության բողոքարկման համակարգի արդյունավետությունը գնահատելիս հիմնաքարային նշանակություն ունի նաև ընթացակարգային առանձին երաշխիքների ապահովվածությունը, ինչպիսիք են վերևում քննարկված՝ վարչական բողոքի քննարկման արդյունքում խախտված իրավունքի իրական վերականգնման հնարավորությունը, վարչարարության արդյունքում «տուժող» անձի համար բողոքարկման իրավունքի երաշխավորվածությունը, վարչական բողոքի արդարացի, ողջամիտ ժամկետում քննությունը՝ բողոքի քննության առնչությամբ իրական շահագրգռվածություն ունեցող անձանց՝ բողոքարկման վարույթում մասնակցության ապահովմամբ, ինչպես նաև բողոքի առնչությամբ կայացվող որոշման պարտադիր բնույթը և դրա՝ գործնականում կատարելիության ապահովման հնարավորությունը:

Բողոքարկման համակարգի արդյունավետության ընդհանուր չափանիշները

Բացի վարչական կարգով բողոքարկման համակարգին առաջադրվող վերոնշյալ՝ առավելապես կոնկրետ գործի քննության արդյունավետության չափանիշներից, կարևորագույն նշանակություն ունի վարչարարության բողոքարկման ընդհանուր համակարգի արդյունավետության ապահովումը և վարչական կարգով բողոքարկման համակարգի վերակառուցումն այնպես, որ վարչական կարգով բողոքարկումը, պարզապես վարութային իրավունք ու հնարավորություն հանդիսանալուց զատ, փոխակերպվի խախտված իրավունքների իրական վերականգնման միջոցի:

Նշվածը հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում վարչական բողոքարկման համակարգի զարգացման ներկայիս փուլում, երբ դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը, մյուս կողմից էլ՝ վարչական բողոքարկման համակարգի զարգացումը հաճախ փորձ է արվում կապել պարզապես վարչական կարգով բողոքարկումը պարտադիր դարձնելու անհրաժեշտության հետ: Վարչական կարգով բողոքարկման փոխակերպումը դատական պաշտպանության այլընտրանքից դեպի դատական պաշտպանության իրավունքի իրացման նախապայմանի, սակայն, առանց պատշաճ ուշադրություն հատկացնելու նախևառաջ վարչական բողոքարկման համակարգի՝ պաշտպանության արդյունավետ միջոցի տեսանկյունից վերակառուցմանը և գործնականում արդյունավետ՝ վարչական բողոքարկման երաշխավորմանը, կարծում ենք, անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության կոնվենցիոն պարտավորությունների հետ: Նախ, վարչական կարգով բողոքարկման համընդհանուր պարտադիրությունը բողոքարկման համակարգի՝ ներկայիս՝ գործնականում անարդյունավետության պայմաններում ողջամտորեն կհանգեցնի խախտված իրավունքների իրական վերականգնման արհեստական հետաձգմանն ու խոչընդոտմանը: Մյուս կողմից՝ այն, հանդես գալով որպես դատական պաշտպանության իրավունքի սահմանափակում, այդպիսի սահմանափակմանն առաջադրվող ՀՀ Սահմանադրությամբ ու ՄԻԵԴ-ի կողմից առաջադրված պահանջներին չբավարարելու դեպքում հանգեցնելու է նաև դատական պաշտպանության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման:

Ուստի գտնում ենք, որ վարչական կարգով բողոքարկման՝ որոշ դեպքերում կամ որպես ընդհանուր կանոն, պարտադիրության հարցը, ժամանակակից վարչական իրավունքում կարևորագույն նշանակություն ունենալով հանդերձ, պետք է քննարկման առարկա դառնա միայն վարչական բողոքարկման այնպիսի համակարգ

ունեցող իրավական համակարգում, որն ապահովում է իրավական պաշտպանության միջոցի արդյունավետության ամենաբարձր չափանիշները:

Ուսումնասիրված աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս բավականին տարածված է այն մոտեցումը, որ վարչարարության վարչական կարգով բողոքարկման համակարգն արդյունավետ է, եթե բողոքների քննության և ծագած վեճերը լուծելու շնորհիվ էականորեն նպաստում է դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը (Kovač 2): Նշված մեկնաբանությունը, սակայն, թեպետ ընդհանուր առմամբ բողոքարկման համակարգի արդյունավետության կարևորագույն չափանիշ է առանձնացնում, այնուամենայնիվ, միայն շատ ընդհանուր և մակերեսային է բնութագրում այն: Նախևառաջ, ինչպես վերն արդեն նշվել է, վարչարարության բողոքարկման արդյունավետությունը որոշվում է ոչ թե բողոքը բավարարված կամ մերժված լինելու հանգամանքից ելնելով, այլ տվյալ մարմնի՝ բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահոված լինելով և վերջինիս՝ բողոքը վերջնականորեն լուծող որոշում կայացնելու՝ գործնականում երաշխավորված լիազորության առկայությամբ:

Արդյունավետ պաշտպանության միջոցի համատեքստում «անկախության» նույնիսկ ամենաբարձր չափանիշներին բավարարող վարչական մարմնի կողմից քննված բողոքների արդյունքում կայացված որոշումները կարող են դատական վիճարկման առարկա դառնալ, և շատ դեպքերում դրանք վիճարկվելու են, քանի որ արդյունավետությունը չի կարող կապվել բացառապես բողոքարկող սուբյեկտի՝ բողոքի արդյունքում կայացված որոշմանը համաձայն լինելու հետ: Դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը կարող է լինել արդյունավետության հետևանք, սակայն չի կարող դիտարկվել որպես դրա ինքնուրույն չափանիշ, քանի որ բողոքարկման մեխանիզմը կարող է նվազեցնել դատարանների ծանրաբեռնվածությունը նաև ոչ արդյունավետ քննության հաշվին: Վարչական բողոքարկումից հետո դատարան ներկայացված հայցերի ուսումնասիրության տեսանկյունից առավել արժեքավոր տվյալներ կարող է հաղորդել վարչական կարգով մերժված բողոքներից հետո վարչական դատարան ներկայացված հայցերը հետագայում դատարանի կողմից բավարարվելու տոկոսային ցուցանիշը՝ այն համատեքստում, որ այս ցուցանիշի էական բարձր լինելը կվկայի վարչական մարմինների կողմից բողոքների՝ գործնականում ոչ լիարժեք ու արդյունավետ քննության մասին:

Եզրակացություն

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ.

1. Իրավական արդյունավետ պաշտպանության միջոցի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը, որպես իրավունքի գերակայության հիման վրա խարսխված կարևորագույն իրավունք և սկզբունք, կիրառելի է նաև վարչարարության վարչական կարգով բողոքարկման համակարգի նկատմամբ, և վարչական կարգով բողոքը քննող մարմինների՝ ոչ դատական կարգավիճակը, ինչպես նաև վերջիններիս՝ վարչական մարմինների ընդհանուր համակարգում տեղակայվածությունը, ինքնին չեն բացառում վարչական կարգով բողոքարկման՝ արդյունավետ պաշտպանության միջոց համարվելը:

2. Իրավական արդյունավետ պաշտպանության միջոցի ապահովման տեսանկյունից վարչական բողոքը քննող մարմնի «անկախությունը» պետք է մեկնաբանվի ոչ թե ձևական, այլ գործառութային համատեքստում, և բողոքը քննող մարմինն անկախության այդ աստիճանին բավարարում է ոչ թե վերջինիս՝ գործադիր իշխանության համակարգում ներառված լինելուց ելնելով, այլ վերջինիս՝ գործառութային անհրաժեշտ ինքնուրույնությունից, վարչարարությունն

իրականացրած մարմնից առանձնացվածությունից, լիազորությունների շրջանակից և բողոքի քննության գործնական չափանիշներից ելնելով:

3. Վարչական բողոքարկման արդյունավետությունն ուղղակիորեն պահանջում է խախտված իրավունքների վերականգնման իրական հնարավորություն, ինչն իր հերթին ենթադրում է վարչական բողոքարկման վարույթում ընթացակարգային բավարար երաշխիքների առկայություն, վարչարարության բողոքարկմամբ իրական շահագրգռվածություն ունեցող անձանց բողոքարկման իրավունքի երաշխավորում, բողոքների արդարացի, ողջամիտ ժամկետում քննության ապահովում, և բողոքարկման մարմնի՝ օրենսդրորեն ամրագրված և գործնականում երաշխավորված՝ բողոքարկման արդյունքում հարցին վերջնական ու ամբողջական լուծում տալու լիազորություն:

4. Վարչական կարգով բողոքարկման համակարգի արդյունավետությունը պետք է գնահատվի ոչ միայն անհատական, այլև համակարգային մակարդակում, և այս համատեքստում վարչական բողոքարկման համակարգի արդյունավետության չափման հիմքում պետք է դրվի ոչ թե դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման ձևական չափանիշը, այլ վարչարարության՝ վարչական կարգով բողոքարկման համակարգի օբյեկտիվ և գործնականում արդյունավետ կարողությունը՝ ապահովելու խախտված իրավունքների իրական վերականգնումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Adeneler, Case C-212/04, *Adeneler and Others v. Council of the European Union and Commission of the European Communities.* Court of Justice of the European Communities, 18 May 2006, para, 95.
2. “Al-Nashif v. Bulgaria”. Appl. No. 50963/99, European Court of Human Rights 2002,137 p.
3. “Boyle and Rice v. United Kingdom”. Appl. Nos. 9650/82 & 11801/85, European Court of Human Rights 1988.
4. “C. v. United Kingdom”. Commission Decision, European Commission of Human Rights 1983.
5. “Costello-Roberts v. United Kingdom”. Appl. No. 13134/87, European Court of Human Rights 1993, 40 p.
6. “Csüllög v. Hungary”. Appl. No. 36711/10, European Court of Human Rights 2011, 46 p.
7. Ćeko, A. Đanić, and Polonca Kovač. “Comparative Analysis of an Administrative Appeal in Croatian, Slovenian, and EU Law.” *EU and Comparative Law Issues and Challenges Series (ECLIC)*, vol. 4, 2020, 1065–1096 pp. available at: https://doi.org/10.25234/eclic/11940.
8. “Driza v. Albania”. Appl. No. 33783/02, European Court of Human Rights 2007, 116 p.
9. European Committee on the Prevention of Torture. *27th General Report on Activities*. Section on “Complaints mechanisms”, 2017, para. 87.
10. “European Standards on Legal Remedies, Complaints Mechanisms and Effective Investigations at Borders”. *Council of Europe & European Union Agency for Fundamental Rights*, 2021, 5 p., Available at: https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/coe-fra-2021-effective-remedies-european-borders_en.pdf. Accessed on: 15. 02. 2026.
11. “Fisscher v. Voorhuis Hengelo BV and Stichting Bedrijfspensioenfonds voor de Detailhandel”. Case C-128/93, Court of Justice of the European Communities, 28 Sept. 1994), [1994] ECR I-4583, para.37.

12. “Golder v. United Kingdom”. Appl. No. 4451/70, European Court of Human Rights 1975, 33 p.

13. “Guide to Good Administrative Practices for Administrative Appeals”. Mary Cooke, Nilay Arat, Doğan Nadi Leblebici, Barış Övgün,Council of Europe, May 2023), 33 p., Available at: https://rm.coe.int/guide-good-administrative-practices-web/1680abd88b. Accessed on: 15. 02. 2026

14. “Hilal v. United Kingdom”. Appl. No. 45276/99, European Court of Human Rights 2001, 78 p.

15. “Jonkman and Others”. Joined Cases C-231/06 to C-233/06, *Jonkman and Others v. Council of the European Union*, Court of Justice of the European Communities, 4 Oct. 2007, [2007] ECR I-5149, para. 28.

16. “Kadiķis v. Latvia”. No. 2, Appl. No. 62393/00, European Court of Human Rights 2006, 62 p.

17. “Klass and Others v. Germany”. Appl. No. 5029/71, European Court of Human Rights 1978, 67 p.

18. “Kudła v. Poland”. Appl. No. 30210/96, European Court of Human Rights 2000, 157 p.

19. “Leander v. Sweden”, Appl. No. 9248/81, European Court of Human Rights 1987.

20. “Mugemangango v. Belgium [GC]”. Appl. No. 21963/15, European Court of Human Rights 2020, 67 p.

21. “Palmisani v. Istituto Nazionale della Previdenza Sociale (INPS)”. Case C-261/95, Court of Justice of the European Communities, 10 July 1997, [1997] ECR I-4025, para. 27.

22. “Payet v. France”. Appl. No. 33291/11, European Court of Human Rights 2011, 131–134 pp.

23. “Pine Valley Developments Ltd and Others v. Ireland”. Commission Decision, European Commission of Human Rights 1989.

24. “Pine Valley Developments Ltd and Others v. Ireland”. Appl. No. 12742/87, European Court of Human Rights 1991, 47 p.

25. “Preston and Others v. Wolverhampton Healthcare NHS Trust and Others”. Case C-78/98, Court of Justice of the European Communities, 20 July 2000, [2000] ECR I-3201, para. 39.

26. “Recheio-Cash & Carr”y Case C-30/02, Court of Justice of the European Communities, 30 Sept. 2004, [2004] ECR I-6051, paras. 17–18.

27. ReNEUAL. *Model Rules on Article 13 Remedies*, Available at: https://reneual.eu/projects-and-publications/reneual-2-0?catid=2&id=29&view=article. Accessed on: 15. 02. 2026.

28. “Rotaru v. Romania”. Appl. No. 28341/95, European Court of Human Rights 2000, 69 p.

29. “Silver and Others v. United Kingdom”. Appl. Nos. 5947/72 & 6205/73, European Court of Human Rights 1983, 114-115 pp.

30. “Swedish Engine Drivers’ Union v. Sweden”. Appl. No. 6239/73, European Court of Human Rights 1976, 50 p.

31. “Zazanis v. Greece”. Appl. No. 43765/02, European Court of Human Rights 2004, 47 p.

ADMINISTRATIVE APPEALS AS AN EFFECTIVE LEGAL REMEDY

ELINA GEGHAMYAN
Yerevan State University, Faculty of Law, Chair of Constitutional Law, Lecturer;
"Tower International Consultants" CJSC, Legal Department, Head;
Yerevan, the Republic of Armenia

This scientific article aims to define and identify the criteria under which administrative appeal procedures may be qualified as an effective remedy.

The objectives of the study include analyzing the right to administrative appeal within the framework of the Constitution of the Republic of Armenia and convention-based obligations as an effective means of protection; identifying the structural elements of effectiveness within the administrative appeal system from the perspective of the requirements imposed on the reviewing authority, the procedure for examining complaints, and the general standards applicable to the appeal mechanism; as well as defining the requirements for the "independence" of the body reviewing administrative complaints.

The research is conducted through doctrinal and normative analysis, systemic and teleological interpretation of constitutional and convention provisions, as well as comparative and critical methods.

As a result of applying these methods, the author identifies the key components of effectiveness within the administrative appeal system, particularly with regard to the standards applicable to the reviewing authority, the complaint examination procedure, and the general requirements of the appeal framework. In assessing the criteria applicable to the reviewing body, the author concludes that its "independence" should be evaluated not on the basis of structural or institutional status, but rather on its functional autonomy, separation from the administrative authority whose act is being challenged, scope of powers, and practical standards of complaint review. The article further concludes that the fundamental criterion for assessing the effectiveness of the administrative appeal system is its objective and practical capacity to ensure the genuine restoration of violated rights.

Keywords: *administrative appeal, effective remedy, restoration of violated rights, administrative review, functional independence, court workload, administrative body.*

АДМИНИСТРАТИВНОЕ ОБЖАЛОВАНИЕ КАК ЭФФЕКТИВНОЕ СРЕДСТВО ЗАЩИТЫ ПРАВ

ЭЛИНА ГЕГАМЯН
преподаватель кафедры конституционного права
юридического факультета Ереванского государственного университета,
начальник юридического департамента ЗАО «Tower International Consultants»,
г. Ереван, Республика Армения

Настоящая научная статья направлена на определение и выявление критериев, при наличии которых административное обжалование может быть квалифицировано как эффективное средство правовой защиты.

Задачами исследования являются анализ права на административное обжалование в контексте Конституции Республики Армения и конвенционных

обязательств как эффективного средства защиты; выделение структурных элементов эффективности системы административного обжалования с точки зрения требований, предъявляемых к органу, рассматривающему жалобу, процедуре её рассмотрения и общим требованиям к системе обжалования; а также определение требований к «независимости» органа, рассматривающего административные жалобы.

Исследование осуществлено с применением доктринального и нормативного анализа, системного и телеологического толкования конституционных и конвенционных положений, а также сравнительного и критического методов.

В результате применения указанных методов выделяются основные элементы эффективности системы административного обжалования, включая требования к органу, рассматривающему жалобу, к процедуре рассмотрения и общие стандарты функционирования системы. В контексте критериев, предъявляемых к органу, рассматривающему жалобу, автор приходит к выводу о том, что его «независимость» должна оцениваться не исходя из структурного или институционального статуса, а с учетом функциональной самостоятельности, обособленности от органа, принявшего оспариваемое решение, объема полномочий и практических стандартов рассмотрения жалобы. Автор также заключает, что ключевым критерием оценки эффективности системы административного обжалования является её объективная и практическая способность обеспечивать реальное восстановление нарушенных прав.

Ключевые слова: *административная жалоба, эффективное средство защиты, восстановление нарушенных прав, административное обжалование, функциональная независимость, загруженность судов, административный орган власти.*

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ *

ՀՏԴ 342.7 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-95*

ԱՆՆԱ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Միասնական սոցիալական ծառայության պետի առաջին տեղակալ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anna.mkrtumyan85@gmail.com
ORCID: 0000-0002-8274-2061

Հոդվածի նպատակն է վերլուծել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության հայեցակարգը բացասական իրավունքների (պաշտպանություն՝ միջամտությունից կամ վնասից) և դրական իրավունքների (պետական աջակցության և ռեսուրսների իրավունքներ) երկատման համատեքստում:

Վերը նշված նպատակին հասնելու համար առաջադրված խնդիրներն են՝ կատարել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության՝ որպես դրական և բացասական իրավունքների հայեցակարգային վերլուծություն, տարբերակել բացասական իրավունքները և դրական իրավունքները՝ կիրառելով դրանք ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան ասպեկտների վրա՝ ընդգծելով դրանց բարոյական, իրավական և սոմատիկ ասպեկտները, որոնք հիմնված են մարմնական ինքնավարության և արժանապատվության վրա:

Հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի, սինթեզի դեդուկցիայի, իրավական համեմատության մեթոդները:

Հետազոտության շրջանակներում կատարված հիմնական եզրահանգումն այն է, որ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը բացասական և դրական իրավունքների տեսանկյունից բացահայտում է դրանց ներքին փոխկախվածությունը՝ ձևավորելով մարդկային արժանապատվության պաշտպանության համապարփակ շրջանակ՝ թե՛ ավանդական, թե՛ զարգացող համատեքստերում: Այդ իրավունքները պահանջում են միջամտությունների սահմանափակումներ, անհատների պաշտպանություն՝ ֆիզիկական ներգործությունից, հոգեբանական մանիպուլյացիաներից և չարտոնված նեյրոտեխնոլոգիական միջամտությունից: Դրական իրավունքները պետություններին և հասարակություններին պարտադրում են դրական պարտավորություններ՝ ապահովելու ռեսուրսներ՝ առողջապահության և բարեկեցության, նեյրոտեխնոլոգիաների կիրառման անվտանգության, հոգեկան առողջության պահպանման նպատակով աջակցության, բռնության նկատմամբ դիմադրողականության խթանման համար: Նեյրոտեխնոլոգիաների և թվային սպառնալիքների դարաշրջանում քաղաքականություն մշակողները պետք է ինտեգրեն այս պարտավորությունները՝ խթանելով իրավական բարեփոխումները, միջազգային համագործակցությունը և վերանայելով էթիկական նորմերը:

* Հոդվածը ներկայացվել է 09.10.2025թ., գրախոսվել՝ 30.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Հիմնաբառեր՝ *ֆիզիկական անձեռնմխելիություն, հոգեկան անձեռնմխելիություն, դրական իրավունք, բացասական իրավունք, արժանապատվություն, ինքնավարություն, պետության պարտավորություն, նեյրոտեխնոլոգիա:*

Ներածություն

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը մարդու իրավունքների և էթիկական դիսկուրսի հիմնարար հասկացություններ են, որոնք մարդու իրավունքների դոկտրինում վերլուծվում են բացասական իրավունքների (խոչընդոտներից, միջամտությունից ազատություն) և դրական իրավունքների (աջակցության, երաշխիքների կամ ռեսուրսների ապահովում) երկատման շրջանակում: Բացասական իրավունքները պարտականություններ են դնում այլոց (անհատների, հաստատությունների կամ պետությունների) վրա՝ ձեռնպահ մնալու անձի ինքնավարությունը կամ բարեկեցությունը խաթարող գործողություններից՝ ապահովելով «status negativus»՝ դրական իրավունքները՝ հակառակը, պահանջում են կոնկրետ գործողություններ՝ ապահովելով «status positivus» (Mônia Clarissa Hennig Leal 63-74):

Այս տարբերակումը համապատասխանում է Իսայա Բեռլինի «Ազատության երկու հայեցակարգի»՝ բացասական և դրական ազատության հասկացություններին: Ըստ Բեռլինի՝ «բացասական» ազատությունը սահմանափակումների բացակայությունն է, որոնք խոչընդոտում են անձի կամ մարդկանց խմբի գործողությունները՝ գիտակցական ցանկությունները կյանքի կոչելու իրենց մտադրությունների մեջ: Հակառակը, «դրական» ազատությունը մեկնաբանվում է որպես անձի կամ մարդկանց խմբի ունակություն՝ ինքնուրույն որոշելու իր ճակատագիրը՝ առանց արտաքին գործոնների միջամտության (Berlin Isaiah 118–172):

Ֆիզիկական անձեռնմխելիությունը՝ որպես բացասական իրավունք

Ֆիզիկական անձեռնմխելիությունը լայնորեն ճանաչվում է որպես ֆիզիկական վնասվածքից, հարկադրանքից կամ անցանկալի ֆիզիկական միջամտությունից զերծ լինելու իրավունք: Այն ներառում է պաշտպանություն՝ հարձակումից, խոշտանգումներից, ինչպես նաև չհամաձայնեցված բժշկական միջամտությունից: Ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը մարդկային արժանապատվության առանցքն է, քանի որ այն ապահովում է մարդու մարմնի նկատմամբ վերահսկողությունը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածը («Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի, ազատության, անձի անձեռնմխելիության իրավունք») և 5-րդ հոդվածը («Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, իր արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի») իրենց հերթին ամրագրում են այս սկզբունքը:

Երեխաների իրավունքների տեսանկյունից ֆիզիկական անձեռնմխելիությունը, որպես բացասական իրավունք, արգելում է ֆիզիկական մարմնի վրա ոտնձգությունները, ինչպիսիք են դաժան վերաբերմունքը կամ հարկադրական բժշկական միջամտությունները, (բացառությամբ բացառիկ հանգամանքներով արդարացված դեպքերի, օրինակ՝ կյանքը փրկելը), ինչը ամրագրված է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածում, որը նախատեսում է պաշտպանություն՝ ֆիզիկական բռնության բոլոր ձևերից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով դառավճռում ընդգծել է, որ ֆիզիկական անձեռնմխելիությունը ներառում է պետության կողմից պարտադրված մարմնական միջամտությունից ազատում՝ ամրապնդելով վնաս պատճառելուց զերծ մնալու բացասական պարտականությունը, եթե դա օրենքով չի արդարացվում:

Հոգեկան անձեռնմխելիությունը՝ որպես բացասական իրավունք

Բեռլինի բացասական ազատությանը համահունչ՝ հոգեկան անձեռնմխելիությունը՝ որպես բացասական իրավունք, համապատասխանում է մարդու ճանաչողական գործընթացներին չմիջամտելու սկզբունքին՝ ընդգծելով անհատի ինքնիշխանությունը իր մտքերի և հոգեկան վիճակների նկատմամբ: Հոգեկան անձեռնմխելիությունը՝ որպես բացասական իրավունք, պաշտպանում է անհատներին հոգեբանական մանիպուլյացիաներից, հարկադրանքից կամ միջամտությունից, որը խաթարում է անձի հոգեկան ինքնավարությունը: Այն ներառում է ուղեղի լվացումից, հարկադիր հոգեբուժական բուժումից կամ վնասակար նեյրոտեխնոլոգիաներից պաշտպանությունը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածը («ոչ ոք չպետք է ենթարկվի իր անձնական կյանքում կամայական միջամտության») և Մարդու իրավունքների Եվրոպական միության խարտիայի 3-րդ հոդվածը (անձեռնմխելիության իրավունք) անուղղակիորեն պաշտպանում են հոգեկան անձեռնմխելիությունը՝ արգելելով հոգեբանական ինքնավարության խախտումները: Այս դրույթները ներկայում ավելի ու ավելի հաճախ են մեկնաբանվում որպես թվային և նեյրոտեխնոլոգիական սպառնալիքներին հակազդելու միջոցներ:

Այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Մարսելո Իենկան և Ռոբերտո Անդորնոն (Ienca & Andorno 18) պնդում են, որ հոգեկան անձեռնմխելիությունը տարբերվում է ֆիզիկական անձեռնմխելիությունից և պահանջում է հատուկ պաշտպանություն նեյրոտեխնոլոգիաների դարաշրջանում, քանի որ նեյրոտեխնոլոգիայի, մասնավորապես՝ ուղեղ-համակարգիչ ինտերֆեյսերի զարգացումը բանավեճեր է առաջացնում անձի մտավոր գաղտնիության և ինքնավարության ապահովման հարցում: Բուբլիցը և Մերկելը (Bublitz & Merkel 51–77) առաջարկում են «մտավոր ինքնորոշման իրավունք» հասկացությունը, որը պաշտպանում է մտավոր վիճակի չհամաձայնեցված այնպիսի փոփոխություններից, ինչպիսիք իրականացվում են նեյրոմոդուլյացիայի կամ տվյալների մանիպուլյացիայի միջոցով:

Նեյրոէթիկայի ոլորտում գիտնականները պաշտպանում են թերապևտիկ տեխնոլոգիաներին հասանելիության իրավունքը՝ մտավոր գաղտնիությունը նեյրոտեխնոլոգիական ներխուժումներից պաշտպանելու համար: Լավացան (Lavazza 1-10) ենթադրում է, որ պետությունները կարող են պարտավորված լինել կարգավորել նեյրոտեխնոլոգիական կիրառելիության գործընթացները և տրամադրել մտավոր ինքնապաշտպանության գործիքներ:

Ֆիզիկական անձեռնմխելիությունը՝ որպես դրական իրավունք

Ֆիզիկական անձեռնմխելիությունը՝ որպես դրական իրավունք, անձին պատճառվող վնասը կանխելու և նրա բարեկեցությունը խթանելու նպատակով ենթադրում է պետության կամ հասարակության պարտավորություններ՝ ապահովելու բժշկական օգնություն, սնուցում, մաքուր ջուր և շրջակա միջավայրի պաշտպանություն: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածը սահմանում է «առողջության և բարեկեցության համար բավարար կենսամակարդակի իրավունքը»՝ ներառյալ բժշկական օգնությունը և սոցիալական ծառայությունները:

Մարմոտը (Marmot 2442-2444) պնդում է, որ ֆիզիկական անձեռնմխելիությունը կախված է սոցիալական խնդիրների լուծումից (օրինակ՝ աղքատություն, բնակարանային խնդիրներ), ինչը պահանջում է կառավարության նախաձեռնողական միջամտություն: Այս տեսակետը ռեսուրսներին հասանելիությունը դիտարկում է որպես ֆիզիկական վնասը կանխելու ամենակարևոր գործոնը:

Նուսսբաումը (Nussbaum 1-33, 78-80) պնդում է, որ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը պահանջում է լուծել համակարգային անհավասարությունները՝ (օրինակ՝ գենդերային բռնություն, աղքատություն), համատեղելով բացասական պաշտպանությունները (վնասից) դրական պարտավորությունների հետ (կառուցվածքային խոչընդոտները վերացնելու համար):

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 24-րդ հոդվածը պարտադրում է պետություններին ապահովել երեխաների առողջապահության և սննդի հասանելիությունը՝ ճանաչելով ֆիզիկական զարգացմանը աջակցելու և վնասից պաշտպանելու դրական պարտականությունները:

Հոգեկան անձեռնմխելիությունը՝ որպես դրական իրավունք

Հոգեկան անձեռնմխելիության դրական իրավունքը ներառում է հոգեկան առողջության ծառայություններից, կրթությունից և անվտանգ միջավայրից օգտվելու հնարավորություն՝ դիմադրողականության և ինքնավարության զարգացման համար:

Շուի «Հիմնարար իրավունքների» հայեցակարգը (Shue 51-55), թեև ուղիղ չի հիշատակում «հոգեկան բարեկեցություն», «հոգեկան առողջություն» կամ «հոգեբանական բարեկեցություն» հասկացությունները, սակայն ներառում է անվտանգությունն ու կենսապահովման պարտավորությունները, որոնք լայն մեկնաբանության դեպքում տարածվում են նաև հոգեկան բարեկեցության վրա: Ըստ նրա հայեցակարգի՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը ենթադրում է ինչպես բացասական (պաշտպանություն վնասից), այնպես էլ դրական (ռեսուրսների տրամադրում) պարտականություններ, հետևաբար՝ փոխկապակցված հասկացություններ են և պահանջում են և՛ զսպվածություն, և՛ աջակցություն:

Իր հերթին Դվորկինը (Dworkin 121-129) նշում է, որ պետության չափազանց միջամտությունը հղի է պատերնալիզմի վտանգով:

Գործնականում բացասական և դրական իրավունքները փոխկախված են: Օրինակ՝ հոգեկան անձեռնմխելիությունը հոգեբանական բռնությունից պաշտպանելու համար (բացասական կողմ) կարող է պահանջվել հոգեկան առողջության աջակցություն (դրական կողմ): Եվրոպական միության տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը սա ցույց է տալիս՝ տվյալների չարաշահումից պաշտպանությունը համատեղելով թափանցիկության և հասանելիության պահանջների հետ:

Եզրակացություն

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության վերլուծությունը բացասական և դրական իրավունքների տեսանկյունից բացահայտում է դրանց ներքին փոխկախվածությունը՝ ձևավորելով մարդկային արժանապատվության պաշտպանության համապարփակ շրջանակ՝ թե՛ ավանդական, թե՛ զարգացող համատեքստերում: Որպես բացասական իրավունքներ՝ այս իրավունքները պահանջում են միջամտության սահմանափակումներ, անհատների պաշտպանություն՝ ֆիզիկական ներգործությունից, հոգեբանական մանիպուլյացիաներից և չարտոնված նեյրոտեխնոլոգիական միջամտությունից: Դրական իրավունքները պետություններին և հասարակություններին պարտադրում են դրական պարտավորություններ՝ ապահովելու ռեսուրսներ՝ առողջապահության և բարեկեցության, նեյրոտեխնոլոգիաների կիրառման անվտանգության, հոգեկան առողջության պահպանման նպատակով աջակցության, բռնության նկատմամբ դիմադրողականության խթանման համար: Ի վերջո, բացասական և դրական չափումների միջև երկատվածությունը ոչ թե հակադիր է, այլ սիմբիոտիկ. վնասից (բացասական) արդյունավետ պաշտպանությունը պահանջում է նախաձեռնողական

օգնություն (դրական): Զարգացող նեյրոտեխնոլոգիաների և թվային սպառնալիքների դարաշրջանում քաղաքականության մշակողները պետք է ինտեգրեն այս պարտավորությունները՝ խթանելով իրավական բարեփոխումները, միջազգային համագործակցությունը և վերանայելով էթիկական նորմերը՝ իրական անձեռնմխելիության հասնելու համար: Այս մոտեցումը ոչ միայն աջակցում է անձի ինքնավարությանը, այլև խթանում է կոլեկտիվ բարեկեցությունը՝ ապահովելով, որ անձեռնմխելիությունը դառնա մարդու իրավունքների դոկտրինայի դինամիկ հենասյուն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Amnesty International. *The State of the World's Human Rights:* April 2025 (POL 10/8515/2025). London: Amnesty International, 2025, https://www.amnesty.org/en/documents/pol10/8515/2025/en/. Accessed: 02.10.2025.
2. Berlin Isaiah. *Two concepts of liberty.* In I. Berlin, Four Essays on Liberty. Oxford University Press, 1969, 118–172 pp.
3. Bublitz Jan Christoph, & Reinhard Merkel. "Crimes against minds: On mental manipulations, harms and a human right to mental self-determination". *Criminal Law and Philosophy, 8*(1), 2014, 51–77 pp.
4. "Case of Pretty v. The United Kingdom". The European Court of Human Rights, https://hudoc.echr.coe.int/eng#{"itemid":["001-60448"]}. Accessed: 02.10.2025.
5. Dworkin Gerald. *The theory and practice of autonomy*. Cambridge University Press, 1988, 121-129 pp. https://doi.org/10.1017/CBO9780511625206,
6. European Court of Human Rights. *Pretty v. United Kingdom.* Application no. 2346/02, 2002.
7. European Union. "Charter of Fundamental Rights of the European Union". *Official Journal of the European Communities*, C 364/1, 2000, https://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf. Accessed: 05.10.2025.
8. European Union. *General Data Protection Regulation (GDPR)*. Regulation (EU) 2016/679, 2016, https://eur-lex.europa.eu/eli/reg/2016/679/oj. Accessed: 05.10.2025.
9. Ian Carter. "Positive and Negative Liberty". *The Stanford Encyclopedia of Philosophy (Spring 2022 Edition)*, Edward N. Zalta (ed.), https://plato.stanford.edu/entries/liberty-positive-negative/. Accessed: 07.10.2025.
10. Ienca M, Andorno R. Towards new human rights in the age of neuroscience and neurotechnology. Life Sci Soc Policy. 2017 Dec;13(1):5. doi: 10.1186/s40504-017-0050-1. Epub 2017 Apr 26. 18 p PMID: 28444626; PMCID: PMC5447561,.
11. Lavazza Andrea. "Freedom of thought and mental integrity: The moral requirements for neurotechnologies and neural data". *Frontiers in Neuroscience,* 12, 443, 1-10 pp.
12. Marmot Michael. "The health gap: The challenge of an unequal world". *Bloomsbury Publishing,* Volume 386, Issue 10011, 2015, 2442-2444 pp.
13. Mônia Clarissa Hennig Leal. "Digital democracy: from status activus digitalis to disinformation – towards a new wave of judicialization of politics?". UNIO – EU Law Journal, 5(2), 2019, 63–74 pp.
14. Nussbaum Martha. *Women and human development: The capabilities approach*. Cambridge University Press, 2000, 1-33, 78-80 pp.https://doi.org/10.1017/CBO9780511841286.
15. Shue Henry. *Basic rights: Subsistence, affluence, and U.S. foreign policy* (2nd ed.), Princeton University Press, Apr 28, 2020, 51-55 .

16. United Nations. *Universal Declaration of Human Rights*. United Nations General Assembly, 1948, https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights. Accessed: 08.10.2025

17. United Nations. *Convention on the Rights of the Child*. United Nations General Assembly. 1989, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-rights-child. Accessed: 08.10.2025

18. United Nations. *Global Digital Compact.* Adopted at the Summit of the Future, 22–23 September 2024. New York: United Nations, 2024, https://www.un.org/global-digital-compact/sites/default/files/2024-09/Global%20Digital%20Compact%20-%20English_0.pdf. Acccessed: 08.10.2025.

19. World Health Organization. *Constitution of the World Health Organization*, 1946, https://www.who.int/about/governance/constitution. Accessed: 08.10.2025.

PHYSICAL AND MENTAL INTEGRITY AS POSITIVE AND NEGATIVE RIGHTS

ANNA MKRTUMYAN
Unified Social Service of the Republic of Armenia,
First Deputy Head; Yerevan State University, Chair of
Constitutional Law, Ph.D.Student
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to analyze the concept of physical and mental integrity in the context of the dichotomy of negative rights (protection from interference or harm) and positive rights (the right to state support and resources).

The objectives set to achieve this goal are to conduct a conceptual analysis of physical and mental integrity as positive and negative rights, to distinguish between negative and positive rights, and to apply this analysis to both physical and mental aspects, with an emphasis on their moral, legal, and somatic aspects, based on bodily autonomy and dignity.

The study utilized methods of analysis, synthesis, deduction, and legal comparison.

The main conclusion reached within the study is that physical and mental integrity, in terms of negative and positive rights, reveals their inherent interdependence, forming a comprehensive basis for the protection of human dignity in both traditional and developing contexts. These rights require limitations on interventions, protection of individuals from physical harm, psychological manipulation, and unauthorized neurotechnological intervention, and impose positive obligations on states and societies to provide resources for health and well-being, ensure safety in the use of neurotechnologies, support mental health, and build resilience to violence. In the era of neurotechnology and digital threats, policymakers must take these obligations into account when promoting legal reform, international cooperation, and the revision of ethical norms.

Key words: *physical integrity; mental integrity; positive law; negative law; dignity; autonomy; state obligations; neurotechnology.*

ФИЗИЧЕСКАЯ И ПСИХИЧЕСКАЯ НЕПРИКОСНОВЕННОСТЬ КАК ПОЗИТИВНЫЕ И НЕГАТИВНЫЕ ПРАВА

АННА МКРТУМЯН
соискатель кафедры конституционного права Ереванского государственного университета, первый заместитель начальника Единой социальной службы Республики Армения, г. Ереван, Республика Армения

Цель статьи — проанализировать концепцию физической и психической неприкосновенности в контексте дихотомии негативных прав (защита от вмешательства или вреда) и позитивных прав (право на государственную поддержку и ресурсы).

Задачи, поставленные для достижения указанной цели, заключаются в проведении концептуального анализа физической и психической неприкосновенности как позитивных и негативных прав, в разграничении негативных и позитивных прав, применении его как к физическому, так и к психическому аспектам, с акцентом на их моральные, правовые и соматические аспекты, основанные на телесной автономии и достоинстве.

В ходе исследования использовались методы анализа, синтеза, дедукции, правового сравнения.

Главный вывод, сделанный в рамках исследования, заключается в том, что физическая и психическая неприкосновенность с точки зрения негативных и позитивных прав выявляет их внутреннюю взаимозависимость, формируя всеобъемлющую основу для защиты человеческого достоинства как в традиционном, так и в развивающемся контексте. Эти права требуют ограничений на вмешательства, защиты отдельных лиц от физического вреда, психологических манипуляций и несанкционированного нейротехнологического вмешательства, а также налагают на государства и общества позитивные обязательства по предоставлению ресурсов для здоровья и благополучия, обеспечению безопасности при использовании нейротехнологий, поддержке психического здоровья и повышению устойчивости к насилию. В эпоху нейротехнологий и цифровых угроз политики должны учитывать эти обязательства, содействуя правовой реформе, международному сотрудничеству и пересмотру этических норм.

Ключевые слова: *физическая неприкосновенность, психическая неприкосновенность, позитивное право, негативное право, достоинство, автономия, государственные обязательства, нейротехнологии.*

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԸ *

ՀՏԴ 342.3 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-102*

ՇՈՒՇԱՆԻԿ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության գիտությունների
ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ ներքին գործերի նախարարության
ոստիկանության ավագ լեյտենանտ,
ք. Սպիտակ, Հայաստանի Հանրապետություն
ani.varderesyan@mail.ru
ORCID: 0009-0003-2304-206X

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել նախագահական կառավարման մոդելը Հայաստանի Հանրապետությունում՝ բացահայտելով դրա առավելություններն ու թերությունները, ինչպես նաև համեմատական վերլուծություն կատարել խորհրդարանական կառավարման մոդելի հետ, վերհանել նախագահական կառավարման համակարգի հիմնական ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը գործադիր իշխանության կառուցվածքի վրա:

Սույն հոդվածի խնդիրներն են՝

1. Վերլուծել նախագահական կառավարման համակարգի առավելություններն ու սահմանափակումները Հայաստանի Հանրապետության քաղաքական համատեքստում:

2. Իրականացնել նախագահական և խորհրդարանական կառավարման մոդելների համեմատական վերլուծություն՝ բացահայտելով կառուցվածքային և գործառնական տարբերությունները:

3. Ուսումնասիրել նախագահի ինստիտուտի դերի դրական և բացասական դրսևորումները պետական իշխանության համակարգում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ գիտական մեթոդները՝ համեմատական վերլուծություն, պատմական և իրավաքաղաքական վերլուծություն, փաստաթղթերի և օրենքների բովանդակային վերլուծություն, սինթեզի և համադրության մեթոդ:

Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ այն համադրում է ՀՀ նախագահի ինստիտուտի իրավաքաղաքական վերլուծությունը կառավարման արդյունավետության տեսանկյունից՝ հիմնվելով ինչպես Գիտական Արցախի, այնպես էլ ՀՀ գիտական պարբերականների արդի ուսումնասիրությունների վրա:

Հոդվածում դիտարկվում է նաև հասարակական ընկալումների դերը կառավարման մոդելի կայացման հարցում:

Աշխատանքում հիմնավորել ենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի կայացման գործընթացում կարևոր է կառավարման ձևի ընտրությունը:

Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ նախագահական կառավարման մոդելը կարող է ապահովել քաղաքական կայունություն և

* Հոդվածը ներկայացվել է 15.09.2025թ., գրախոսվել՝ 24.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

իշխանության պատասխանատվության հստակություն՝ պայմանով, որ գործեն արդյունավետ հակակշիռներ և սահմանափակումներ:

Հիմնաբառեր՝ *նախագահական համակարգ, կառավարման ձև, Հայաստանի քաղաքական իշխանություն, սահմանադրական բարեփոխումներ, ժողովրդավարություն, խորհրդարանական կառավարում, պետական կառավարման մոդելներ:*

Ներածություն

Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգի ձևավորումն ու զարգացումը պետության անկախացման գործընթացի առանցքային բաղադրիչներից են եղել: 1991 թ.–ին՝ անկախություն ձեռք բերելուց հետո, Հայաստանը կանգնեց պետական ինստիտուցիաների ստեղծման և կառավարման արդյունավետ համակարգ կառուցելու լրջագույն մարտահրավերների առջև:

Անկախությունից ի վեր՝ ՀՀ-ն անցել է տարբեր կառավարման մոդելների փորձությունների միջով՝ ջանալով գտնել արդյունավետ հավասարակշռություն՝ իշխանության ճյուղերի միջև, ապահովել կայունություն, ժողովրդավարություն և պետական ինստիտուցիոնալ զարգացում:

Կառավարման համակարգի ընտրությունը կախված է եղել ինչպես ներքին քաղաքական գործընթացներից, այնպես էլ միջազգային փորձից և հայ հասարակության զարգացման տրամաբանությունից:

Պետական կառավարումը՝ իբրև նպատակամղված գործունեություն, հանդես է գալիս որպես հասարակական կյանքի կարևորագույն մաս և բնորոշվում վերջինիս վիճակով՝ կարիքներով և շահերով: Միևնույն ժամանակ, պետության կենսագործունեության օբյեկտիվ օրենքները սոցիալական կառավարման այն օրենքներն են, որոնք ունեն ինֆորմացիոն բնույթ (Քալաշյան 81):

Պետության կառավարման որակն անմիջականորեն կապված է կառավարող ընտրանու գործունեության որակի հետ: Պետական կառավարման որակի վրա ազդող ցուցանիշների համակարգի հստակեցումը հնարավորություն է տալիս կառավարող ընտրանուն մշակելու ու իրականացնելու այնպիսի ռազմավարական ծրագրեր, որոնք նպաստում են պետության դրական իմիջի ձևավորմանն ու արդիականացմանը: Այդ համատեքստում կարևորվում է նաև արդյունավետ պետական քաղաքականության մշակման ռազմավարական նպատակադրման անհրաժեշտությունը (Չիչոյան 112):

Նախագահական կառավարման մոդելի էությունը

Ի՞նչ է նախագահական կառավարման մոդելը.

Նախագահական կառավարման մոդելը այնպիսի համակարգ է, որտեղ՝

- Նախագահը պետության և գործադիր իշխանության ղեկավարն է.
- Նախագահն ընտրվում է **ուղղակիորեն ժողովրդի կողմից**.
- Նախագահը ձևավորում է կառավարությունը (նախարարների կաբինետը).
- Կառավարությունն **պատասխանատու չէ խորհրդարանի առջև**, այլ՝ նախագահի:

Այս մոդելը բնորոշ է, օրինակ, ԱՄՆ-ին, Բրազիլիային, Մեքսիկային:

Նախագահական համակարգը պետական կառավարման այն ձևն է, որտեղ նախագահն ընտրվում է ժողովրդական քվեարկությամբ և միաժամանակ հանդիսանում է պետության և գործադիր իշխանության ղեկավար: Այս մոդելում նախագահի վերընտրության ինստիտուցիաները, նրա լիազորությունների շրջանակը և մյուս իշխանությունների նկատմամբ նրա կախվածությունն են հանդիսանում որոշիչ գործոններ:

Նախագահական համակարգի հիմնական առանձնահատկություններից է իշխանության կենտրոնացումը մեկ անձի ձեռքում, ինչը թույլ է տալիս արագ կայացնել որոշումներ և ապահովել իշխանության շարունակականություն՝ նվազեցնելով կառավարական ճգնաժամերի ռիսկը: Միաժամանակ, այն ենթադրում է, որ իշխանության երեք ճյուղերը՝ օրենսդիր, գործադիր և դատական, պետք է ունենան ճշգրիտ սահմանված դերեր և վերահսկող մեխանիզմներ՝ չառաջացնելով անժամկետ ու անկառավարելի իշխանություն:

Հայաստանի՝ 1995 թ. Սահմանադրությամբ հաստատվեց կիսանախագահական համակարգ, որը որոշ դեպքերում հակված էր նախագահականին: Նախագահը նշանակալի ազդեցություն ուներ գործադիր և օրենսդիր մարմինների վրա, ինչը հաճախ բացասաբար էր անդրադառնում քաղաքական հավասարակշռության վրա:

ՀՀ-ում նախագահական մոդելի առանձնահատկությունները (1991–2015 թթ.)

Հայաստանը անկախանալուց հետո (1991 թ.) ընդունեց կառավարման **նախագահական ձև**, որը սահմանվեց 1995 թ. Սահմանադրությամբ:

Հիմնական առանձնահատկությունները.

1. **Նախագահը պետության ղեկավարն էր՝** լայն լիազորություններով:
2. Նա նշանակում էր վարչապետին և կառավարությանը, կարող էր նաև ազատել նրանց:
3. Կարող էր լուծարել Ազգային ժողովը որոշ դեպքերում:
4. Ուներ վետոյի իրավունք՝ օրենքների նկատմամբ:
5. Ղեկավարում էր երկրի արտաքին և անվտանգության քաղաքականությունը:
6. Ընտրությունն իրականացվում էր ժողովրդի կողմից՝ **5 տարի ժամկետով** (հետագայում՝ 7 տարի):

Այսինքն՝ նախագահն ուներ և՛ **գործադիր**, և՛ մասամբ՝ **օրենսդրական վերահսկողություն**, ինչը նրան դարձնում էր քաղաքական համակարգի առանցքային գործիչ (Սարգսյան 121):

Համեմատություն՝ խորհրդարանական մոդելի հետ

Աղյուսակ 1. Նախագահական և խորհրդարանական կառավարման մոդելների բնութագրիչ հատկանիշները

Բնութագիր	Նախագահական մոդել	Խորհրդարանական մոդել (ներկայում ՀՀ-ում)
Գործադիր իշխանության ղեկավար	Նախագահը	Վարչապետը
Նախագահի ընտրություն	Ժողովրդի կողմից	Ազգային ժողովի կողմից
Կառավարության պատասխանատվությունը	Նախագահի առջև	Խորհրդարանի առջև
Նախագահի լիազորությունները	Լայն	Սահմանափակ, հիմնականում ներկայացուցչական
Օրենսդիր և գործադիր իշխանությունների կապ	Առանձնացված	Փաստացի փոխկապակցված

Նախագահական մոդելում նախագահը միաժամանակ հանդիսանում է պետության և գործադիր իշխանության ղեկավար:

Նա ընտրվում է ուղղակիորեն ժողովրդի կողմից և ունի սահմանադրությամբ ամրագրված լայն լիազորություններ:

Կառավարությունը ձևավորվում է նախագահի կողմից և նրա առջև է կրում պատասխանատվություն: Այս մոդելին բնորոշ է իշխանությունների խիստ բաժանումը, որտեղ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները գործում են համեմատաբար անկախ:

Խորհրդարանական մոդելում առանցքային դերակատարումն ունի խորհրդարանը, որը ձևավորում է գործադիր իշխանությունը:

Կառավարությունը գլխավորում է վարչապետը, որն ընտրվում է խորհրդարանի կողմից կամ խորհրդարանական մեծամասնության աջակցությամբ: Նախագահը ունի հիմնականում ներկայացուցչական և խորհրդանշական գործառույթներ:

Այս մոդելի առավելությունն է իշխանության արդյունավետ վերահսկողության ապահովումը և կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև:

Սակայն բազմակուսակցական համակարգի պայմաններում հնարավոր են կառավարությունների հաճախակի փոփոխություններ, ինչը կարող է ազդել քաղաքական կայունության վրա:

Նախագահական կառավարման մոդելի առավելությունները

Հայաստանի Հանրապետությունը անկախացումից հետո ընդունեց նախագահական կառավարման ձև, որը գործում էր մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները: Այս մոդելում երկրի ղեկավարը՝ նախագահը, ուներ լայն լիազորություններ և իրականացնում էր ինչպես պետության, այնպես էլ գործադիր իշխանության ղեկավարի գործառույթներ (Սարգսյան 67-85):

Առավելություններ.

1. Կենտրոնացված և արդյունավետ կառավարում.

Նախագահը կարող էր արագ որոշումներ ընդունել առանց երկար խորհրդարանական համաձայնությունների:

2. Քաղաքական կայունություն.

Գործադիր իշխանության անկախությունը խորհրդարանից որոշ չափով նվազեցնում էր կառավարության հաճախակի փոփոխությունների վտանգը:

3. Արտաքին քաղաքականության միասնականություն

Նախագահը, լինելով պետության գլուխ, ապահովում էր արտաքին քաղաքականության կայուն ու հետևողական ուղղություն:

4. Պատասխանատվության հստակություն.

Քանի որ հիմնական իշխանությունն էր նախագահը, պարզ էր՝ ով է պատասխանատու երկրի ընդհանուր քաղաքականության համար:

Նախագահական կառավարման մոդելի կարևոր առավելություններից է իշխանության կենտրոնացումը և կայունությունը:

Նախագահական համակարգը ապահովում է որոշումների կայացման արագություն և պատասխանատվության հստակ գիտակցում: Երբ որոշումներ կայացնում է մեկ մարմին՝ նախագահը, այդ դեպքում հնարավոր է բացառել անորոշությունը, որը կարող է առաջանալ խորհրդարանական համակարգերում, որտեղ որոշումները հաճախ կախված են բազմակուսակցական համաձայնություններից:

Կառավարության կայունություն.
Նախագահը ընտրվում է ֆիքսված ժամկետով և չի կարող հեշտությամբ հեռացվել խորհրդարանի կողմից: Սա երաշխավորում է կառավարության քաղաքական և կազմակերպական շարունակականությունը:

Ազգային միասնության խորհրդանիշ.

Նախագահը հանդես է գալիս որպես ազգի միավորող դեմք, ներկայացնում է պետության անկախությունը, համախմբում է հասարակությունը և ապահովում քաղաքական ոչ կողմնակալության զգացողություն՝ հատկապես ներքին հակասությունների կոնֆլիկտների դեպքում: Այս առումով խիստ կարևոր է դեմոկրատական կառավարումը, որը կարող է լինել ուղիղ կամ միջնորդավորված՝ կախված նրանից, թե քաղաքացիները վերականգնում են իրենց իշխանությունը անմիջապես (ուղիղ ժողովրդավարություն) կամ ընտրում են ներկայացուցիչներ, որոնք կառավարում են նրանց փոխարեն (միջնորդավորված ժողովրդավարություն): Օրինակ՝ Միացյալ Նահանգների նախագահական համակարգը կամ Հայաստանի խորհրդարանական համակարգը (Զալինյան 71-86):

Արտաքին քաղաքականության հետևողականություն. Նախագահական համակարգում արտաքին քաղաքականության իրականացումը առավել կենտրոնացված կանխատեսելի է, ինչը թույլ է տալիս Հայաստանի համար ռազմավարական ծրագրերի իրականացման երկարաժամկետ պլանավորում, անվտանգային և դիվանագիտական նախաձեռնությունների համակարգում հետևողականություն (Օրդյան 117):

Նախագահական կառավարման մոդելի թերությունները

1. Իշխանության գերիզորացում.
2. Նախագահը ուներ չափազանց մեծ լիազորություններ, ինչը կարող էր հանգեցնել իշխանության անձնավորման և ավտորիտար միտումների:
3. Խորհրդարանի դերի նվազում .
4. Օրենսդիր իշխանությունը հաճախ մնում էր երկրորդական՝ սահմանափակ վերահսկողությամբ:
5. Քաղաքական հավասարակշռության խախտում.
6. Իշխանության ճյուղերի տարանջատման սկզբունքը լիովին չէր ապահովվում:
7. Քաղաքական մրցակցության թուլացում
8. Նախագահական համակարգում ընդդիմադիր ուժերը քիչ ազդեցություն էին ունենում կառավարման վրա:

Իշխանության չափազանց կենտրոնացում.
Երբեմն նախագահական համակարգը կարող է հանգեցնել ավտորիտար միտումների, քանի որ ողջ քաղաքական իշխանությունը կենտրոնացած է մեկ անձի կամ պաշտոնյայի շուրջ, ինչը նվազեցնում է իշխանության ճյուղերի անկախությունը և ժողովրդավարական վերահսկողությունը:

Հակակշիռների և զսպումների մեխանիզմների թուլացում.

Խորհրդարանը և դատական իշխանությունը կարող են կորցնել իրենց ազդեցությունը, քանի որ նախագահը վերահսկում է կառավարության գործունեությունը, նշանակում է բարձր պաշտոնյաներին և ունի որոշումներ կայացնելու լայն լիազորություններ:

Քաղաքական պատասխանատվության նվազում.

Նախագահը հաճախ հանդես է գալիս որպես «բոլորի պատասխանատու, բայց ոչ մեկին ենթակա չէ», ինչը կարող է նվազեցնել քաղաքական հաշվետվողականությունը հասարակության և օրենսդիր մարմնի առջև:

Համակարգի ճգնաժամի վտանգ.

Եթե նախագահը կորցնում է հանրային աջակցությունը, ամբողջ համակարգը կարող է դառնալ անկայուն, և սա կարող է հանգեցնել ոչ միայն քաղաքական ճգնաժամի, այլև պետական կառավարման գործունեության խափանման:

Համեմատական վերլուծություն և համաշխարհային փորձ.

Նախագահական և խորհրդարանական համակարգերի հիմնական տարբերությունները.

Նախագահական համակարգում գործադիր իշխանության ղեկավարը ընտրվում է ժողովրդական քվեարկությամբ՝ առանձին օրենսդիրից:

Խորհրդարանական համակարգում գործադիր ղեկավարը (վարչապետը) ընտրվում է օրենսդիր մեծամասնության կողմից կամ քվեարկությամբ և պատասխանատու է նրան:

Նախագահական համակարգում կառավարությունը միշտ չէ, որ կախված է օրենսդիր մարմնից, իսկ խորհրդարանական համակարգում վարչապետը կարող է դուրս գալ իր զբաղեցրած պաշտոնից՝ քվեարկությամբ «հանրահաճո վարկանիշի անկման» կամ ոչ հավասարակշռված խորհրդարանական մեծամասնության պատճառով, ինչը ենթադրում է քաղաքական հաշվետվողականություն:

Հայաստանի օրինակը

Ինչպես վերը նշեցինք, Հայաստանում 1995 թ. ընդունված Սահմանադրությունը ձևավորեց կիսանախագահական համակարգ: 2015 թ. Երկրորդ փոփոխությամբ երկիրն անցավ խորհրդարանական կառավարման մոդելի: Այս անցումը ենթադրում էր, որ կառավարությունը (վարչապետ, կառավարություն) ստանձնում է պետության գործադիր գերակատարությունը, իսկ նախագահը ավելի խորհրդատու ինստիտուտի դեր է ստանձնում և, հետևաբար, առավել չեզոք է կառավարման գործում: Այսպիսի փոփոխությունը նպատակ ուներ կանխելու իշխանության կենտրոնացումը, ամրապնդելու ժողովրդավարությունը և կառավարող մարմինների նկատմամբ վերահսկողական մեխանիզմները (Արսենյան 204):

Միջազգային փորձի արձանագրումներ.

Վերլուծական գրականության մեջ հաճախ հանդիպում են դիրքորոշումներ, որ խորհրդարանական համակարգերն ունեն մի շարք առավելություններ տնտեսական և քաղաքական զարգացման տեսանկյունից:

Օրինակ՝ որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ նախագահական համակարգի պայմաններում տնտեսական աճը կարող է լինել ավելի պակաս և, հակառակը՝ խորհրդարանական կառավարման դեպքում, օրինակ՝ Վրաստան-Նորվեգիա օրինակները ցույց են տալիս ավելի բարձր ինստիտուցիոնալ կայունություն:

Մյուս կողմից, նախագահական համակարգերը հարմար են այն երկրներում, որտեղ անհրաժեշտ է ուժեղ կենտրոնացված իշխանության որոշումներ և արտաքին քաղաքականության արագ արձագանք, հատկապես անվտանգության սպառնալիքների պայմաններում:

Նախագահի դերի դրական և բացասական կողմերը

Դրական կողմեր.

1. Պետական իշխանության կենտրոնական համակարգում:
2. Արտաքին քաղաքականության կայուն իրականացում:
3. Քաղաքական չեզոքություն (թեև ոչ միշտ է իրականանում):

Բացասական կողմեր.

1. Կարող է վերածվել գերիշխող գործոնի՝ շրջանցելով խորհրդարանը:

2. Պետական կառավարման համակարգը դառնում է անձնային:

3. Հասարակության մեջ կարող է ձևավորվել քաղաքական կախվածության հոգեբանություն:

Հայաստանի համար կառավարման արդյունավետ մոդելի առաջարկություններ.

Որպես ամփոփում կարելի է շեշտել, որ Հայաստանի համար ապագա կառավարման արդյունավետ մոդելը պետք է լինի այնպիսի համակարգ, որը միաժամանակ ապահովի իշխանության կենտրոնացման անհրաժեշտ աստիճան, ժողովրդավարական վերահսկողություն և ինստիտուցիոնալ կայունություն: Դա հնարավոր կլինի հետևյալ ուղղություններով.

- Համակարգը պետք է ունենա հստակ սահմանափակումներով լի լիազորություններ նախագահի համար, սակայն գործադիր իշխանությունը լինի վերահսկվող:
- Հարցերի ընդունման, կառավարության ձևավորման և վերահսկման մեխանիզմները պետք է ապահովեն, որ կառավարությունը պատասխանատվություն ունենա օրենսդիր մարմնի առջև:
- Հասարակության ներգրավվածության և գործնական վերահսկման մեխանիզմները (ընտրություններ, հանրաքվեներ, անկախ դատական համակարգ) պետք է թույլ տան, որ իշխանությունը չկենտրոնանա մեկ միավորի շուրջ:
- Միջազգային փորձից ելնելով՝ պետք է ապահովել նաև բազմակուսակցականության զարգացում, ինչը կծառայի ի նպաստ տնտեսական աճի:

Անկախ պետական կառավարման ձևից՝ պետության պոտենցիալի համախառն և պաշտպանական հզորության հիմքը նրա տնտեսական ներուժն է, որը կազմում է մնացած բոլոր ներուժների հիմքը, քանի որ դրանք ենթադրում են համապատասխան տնտեսական աջակցություն (Զալինյան 71-86):

Խորհրդարանական մշակույթը բազմաշերտ կառուցվածք ունեցող իրավաքաղաքական երևույթ է: Արդի քաղաքագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խորհրդանական մշակույթի բաղկացուցիչ տարրերը և գործառույթները ժողովրդավարացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում դիտարկվում են պառլամենտարիզմի, քաղաքացիականության, սահմանադրականության, արդիականացման, համախմբման և այլ երևույթների շարքում: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս պարզելու խորհրդարանական մշակույթի քաղաքակրթական, արժեքաբանական ու ինստիտուցիոնալ չափումները և ապա նախորոշելու խորհրդարանական մշակույթի զարգացման այն մոդելը, որը կարող է արդիական լինել քաղաքական մշակույթի նույնանման փորձառություն ունեցող երկրների պարագայում (Արսենյան 83):

Եզրահանգումներ

Սույն հոդվածում կատարված վերլուծությունը ցույց է տալիս,որ նախագահական և խորհրդարանական կառավարման մոդելները ներկայացնում են պետական իշխանության կազմակերպման տարբեր մեխանիզմներ, որոնք ձևավորվել են պատմական զարգացման, քաղաքական փորձի և իրավական ավանդույթների ազդեցությամբ: Նախագահական կառավարման մոդելին բնորոշ է գործադիր իշխանության հստակ տարանջատումը օրենսդիր իշխանությունից, ինչպես նաև նախագահի՝ որպես պետական և գործադիր իշխանության ղեկավարի լայն լիազորությունները: Այս մոդելը կարող է նպաստել պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը և քաղաքական որոշումների օպերատիվ ընդունմանը, սակայն միաժամանակ պարունակում է իշխանության կենտրոնացման, քաղաքական հակամարտությունների խորացման և ինստիտուցիոնալ փակուղիների առաջացման վտանգներ: Ի տարբերություն դրա՝ խորհրդարանական կառավարման

մոդելը հիմնված է օրենսդիր և գործադիր իշխանությունների սերտ փոխկապակցվածության վրա, որտեղ կառավարությունը ձևավորվում է խորհրդարանական մեծամասնության կողմից և իր գործունեության համար պատասխանատու է խորհրդարանի առաջ:

Այս մոդելը նպաստում է քաղաքական պատասխանատվության ամրապնդմանը, իշխանությունների փոխադարձ վերահսկողությանը և քաղաքական գործընթացների ճկունությանը, սակայն որոշ դեպքերում կարող է հանգեցնել կառավարության հաճախակի փոփոխությունների և կառավարման կայունության նվազման: Վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ կառավարման որևէ մոդել ինքնին չի կարող դիտարկվել որպես համընդհանուր և միանշանակ առավել արդյունավետ: Պետական կառավարման արդյունավետությունը մեծապես կախված է ոչ միայն սահմանադրական մոդելից, այլ նաև քաղաքական ինստիտուտների կայացածությունից, իրավական մշակույթից և հասարակության քաղաքական մասնակցության մակարդակից:

Հետևաբար, կառավարման մոդելի ընտրությունն ու կիրառումը պետք է իրականացվեն տվյալ պետության սոցիալ-քաղաքական առանձնահատկությունների համատեքստում՝ նպատակ ունենալով ապահովելու իշխանությունների հավասարակշռված գործունեություն և ժողովրդավարական կառավարման կայուն զարգացում:

❖ Նախագահական մոդելը Հայաստանի համար արդյունավետ էր պետականության ձևավորման սկզբնական փուլում՝ ապահովելով կայունություն և կենտրոնացված ղեկավարում: Սակայն ժամանակի ընթացքում այն հանգեցրեց իշխանության գերծանրաբեռնվածությանը և ժողովրդավարական վերահսկողության թուլացմանը: Այս հանգամանքները դարձան անցման հիմք դեպի խորհրդարանական կառավարման մոդել, որը նպատակ ունի ապահովելու իշխանության հավասարակշռություն և ժողովրդավարական պատասխանատվություն:

1. Հայաստանում կառավարման համակարգի անցումը նախագահականից խորհրդարանականի ցույց է տալիս, որ իշխանության ճյուղերի հավասարակշռությունը և ժողովրդավարական վերահսկողությունը կարևոր են պետության կայունության և ինստիտուցիոնալ զարգացման համար:
2. Նախագահական համակարգն ապահովում է որոշումների կայացման արագություն, արտաքին քաղաքականության հետևողականություն և պետական իշխանության կենտրոնացում, սակայն, միևնույն ժամանակ, կարող է հանգեցնել իշխանության չափազանց կենտրոնացման, քաղաքական կախվածության ձևավորման և համակարգի ճգնաժամի ռիսկերի:
3. Խորհրդարանական համակարգը նպաստում է քաղաքական հաշվետվողականության, բազմակուսակցականության և ինստիտուցիոնալ կայունության զարգացմանը, քանի որ գործադիր իշխանությունը պատասխանատու է օրենսդիր մարմնի առջև, իսկ նախագահը պահպանում է խորհրդատու և չեզոք դեր:
4. Հայաստանի համար արդյունավետ կառավարման մոդելը պետք է լինի հիբրիդային կամ համակարգված՝ ապահովելով անհրաժեշտ կենտրոնացում, բայց միաժամանակ պահպանելով ժողովրդավարական մեխանիզմները, ինստիտուցիոնալ վերահսկողությունը և հասարակության ակտիվ մասնակցությունը քաղաքական գործընթացներին:
5. Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հաջողակ կառավարման համակարգերը այն երկրներում են, որտեղ իշխանության ճյուղերը հավասարակշռված

են, իշխանության կենտրոնացումը սահմանափակված է օրենքներով, իսկ դատական և օրենսդիր մարմինները գործում են անկախ ու արդյունավետ՝ ապահովելով պետության կայուն զարգացում և քաղաքական վստահություն հասարակության շրջանում:

6. Ուստի՝ Հայաստանի քաղաքական ապագայի համար առաջնահերթություն պետք է լինի պետական ինստիտուցիոնալության ամրապնդումը, ժողովրդավարական մեխանիզմների կիրառումը և նախագահական ու խորհրդարանական գործառույթների միջև հստակ սահմանների պահպանումը:

Առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման կատարելագործման համար

1. Ամբողջացնել և ամրապնդել ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ իշխանությունների հավասարակշռության պահպանման համար, հատկապես գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև:
2. Բարեփոխել կուսակցական և քաղաքական համակարգը՝ ապահովելով խորհրդարանական մեծամասնության կայունություն և արդյունավետ կառավարում:
3. Խթանել իրավական մշակույթի և քաղաքական պատասխանատվության ձևավորումը՝ հասարակության լայն մասնակցությամբ:
4. Ուժեղացնել կառավարության ծրագրերի վերահսկողությունն և արդյունավետության գնահատումը Ազգային ժողովի կողմից:
5. Նպաստել ժողովրդավարական գործընթացների զարգացմանը՝ քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ՝ պետական քաղաքականության ձևավորման գործընթացներում:

Այս մոտեցումները կարող են նպաստել այն բանին, որ խորհրդարանական կառավարման մոդելի կիրառումը Հայաստանում լինի առավել արդյունավետ, քաղաքական գործընթացները՝ կայուն և ինստիտուցիոնալ հուսալի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արսենյան, Գևորգ և ուրիշներ. «Պետական կառավարման հիմունքներ». ՀՀ *ԳԱԱ «Գիտություն»*. 2001, էջ 204:
2. Արսենյան, Մագդա. «ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները նեոքաղաքականության պայմաններում». *Գիտական Արցախ*, Երևան,№3 (6), 2020, էջ 82-95:
3. Ձալինյան, Աշոտ. «Ժամանակակից պետական հանրային կառավարման նոր մոդելների շուրջ». Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա, *«Հանրային կառավարում» գիտական հանդես*, Երևան 2024,էջ 71-86:
4. Չիչոյան, Լիլիթ. «Պետական կառավարման որակը որպես պետության իմիջի արդիականացման գործոն. ազատության վիճակն աշխարհում (freedom in the world) միջազգային ինդեքսը հայաստանի ու արցախի համար». *Գիտական Արցախ*, Երևան,№2(3), 2019, էջ 112-123:
5. ՀՀ Նախագահի հրամանագիր *«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին».* ՀՀԱԺՏ 1995. 1-2:

6. Սարգսյան, Մերի. «ՀՀ կառավարման ձևի բարեփոխման հրամայականը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համատեքստում». *ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների՝ 2014թ. նստաշրջանի նյութերի ժողովածու,* Երևան, 2015, էջ 67-85:

7. Քալաշյան, Վաչե. «Պետական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները և առաջնահերթությունները». *«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ*, Երևան, 2003, 81 էջ:

8. Օրդյան, Էդուարդ. «Պետական կառավարման համակարգը Հայաստանում, ձևավորումը, բարեփոխումները և հիմնահարցերը». Երևան, ՀՀԿԴ, *«Պետական ծառայություն»,* 1998, էջ 60:

WORKS CITED

1. Arsenyan, Gevorg. et al. *Petakan karavarman himunk'ner* (p. 204). Yerevan: HH GAA "Gitut'yun.[*Science of the National Academy of Sciences of the Republic of Armenia*] 2001, p. 204 (in Armenian)

2. Arsenyan, Magda. «HH khorhrdaranakan mshakuyt'i zhoghovrdavarats'man himnakhndirnery neok'aghak'akanut'yan paymannerum». Gitakan Arts'akh, Yerevan,2020. [*The Problems of Democratization of Parliamentary Culture in the Republic of Armenia in the Conditions of Neo-politics, Yerevan*], (in Armenian).

3. Ch'ich'oyan, Lilit'. Petakan karravarman voraky vorpes petut'yan imiji ardiakanats'man gortson. azatut'yan vichakn ashkharhum (freedom in the world) mijazgayin indek'sy hayastani u arts'akhi hamar. Gitakan Arts'akh, Yerevan,2019. [*The Quality of Public Administration as a Factor in Modernizing the Image of a State: the International Freedom in the World Index for Armenia and Artsakh*, Yerevan], (in Armenian)

4. HH Nakhagahi hramanagir *«Hayastani Hanrapetut'yan karravarut'yan karruts'vatsk'y yev gortsuneut'yan kargy sahmanelu masin».*HHAZHT, [On Establishing the Structure and Procedure for the Activities of the Government of the Republic of Armenia] 1995. 1-2. (in Armenian)

5. Kalashyan, Vache. *Petakan karavaruman hamakargi zargac'man herankarner yev arajnahertut'yunner*. Yerevan: Noravank Gitakrt'akan Himnadram. [*Prospects and Priorities for the Development of the Public Administration System]. Noravank, Scientific and Educational Foundation. Yerevan*] 2003, 81 p. (in Armenian).

6. Ordian, Eduard. *Petakan karavaruman hamakargy Hayastanum: dzevavorumy, barepokhmner@ yev himnaharcer@>>.* Yerevan: HHKD "Petakan Tsarayut'yun. [*The Public Administration System in Armenia, its Formation, Reforms and Key Issues. Yerevan, Republican Democratic Party, State Service*] 1998.(in Armenian).

7. Sargsyan, Meri. *HH karavaruman dzevi barepokhelu hramayakany ishkhanut'yunneri bazhanman yev havasarakshrman sahmanadrakan karuc'akargeri ardarutyun*. In YePU iravagitut'yan fakulteti aspirantneri yev hayc'ordneri nstazhoghovatsi nyuter zhoghovadzu (pp. 67–85). Yerevan, 2014, [*The Imperative of Reforming the Form of Government of the Republic of Armenia in the Context of Increasing the Effectiveness of the Constitutional Mechanisms of Separation and Balance of Powers,Yerevan*]. *Yerevan],* (in Armenian).

8. Zalinyan, Ashot. *«Petakan karavaruman hamakargeri tesaknery u arandznahatkut'yunner@: mtorumner petakan karavaruman barepokhmelneri yev petakan tsarayut'yan zargac'man masin. Teghekatuakan teknologianer yev karavarum.* Gitakan ashkhatut'yunneri zhoghovadzu, [*Types and Characteristics of Public Administration Systems. Reflections on Public Administration Reforms and the*

Development of Public Service. Information Technologies and Management, Collection of Scientific Papers] 2002. p.10-22. (In Armenian).

THE PRESIDENTIAL MODEL OF GOVERNMENT IN ARMENIA

SHUSHANIK VARDERESYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Philosophy, Sociology and Law, Ph.D. Student,
Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, Police, Senior Lieutenant,
Spitak, the Republic of Armenia

The purpose of this article is to study the presidential government model in the Republic of Armenia, identifying its advantages and disadvantages, as well as to conduct a comparative analysis with the parliamentary government model, to reveal the main institutional features of the presidential government system and their impact on the structure of the executive branch.

The objectives of this article are:

1. to analyze the advantages and limitations of the presidential government system in the political context of the Republic of Armenia.
2. to conduct a comparative analysis of the presidential and parliamentary government models, identifying structural and operational differences.
3. to study the positive and negative manifestations of the role of the presidential institution in the system of state power.

The following scientific methods were used during the research: comparative analysis, historical and legal and political analysis, content analysis of documents and laws, synthesis and comparison method.

The scientific novelty of the article lies in the fact that it combines the legal and political analysis of the institution of the President of the Republic of Armenia from the perspective of management efficiency, based on modern studies of both the Scientific Artsakh and scientific journals of the Republic of Armenia.

The article also examines the role of public perceptions in the establishment of a governance model.

In the work, we have substantiated that the choice of the form of governance is important in the process of establishing the political system of the Republic of Armenia.

As a result of the research, it was revealed that the presidential governance model can ensure political stability and clarity of government responsibility, provided that effective checks and balances are in place.

Keywords: *presidential system, form of government, political power of Armenia, constitutional reforms, democracy, parliamentary governance, models of public administration.*

ПРЕЗИДЕНТСКАЯ МОДЕЛЬ ПРАВЛЕНИЯ В АРМЕНИИ

ШУШАНИК ВАРДЕРЕСЯН
соискатель Института философии,
социологии и права Национальной Академии
Наук Республики Армения,
старший лейтенант полиции Министерств внутренних дел
Республики Армении,
г. Спитак, Республика Армения

Цель данной статьи – изучение модели президентского правления в Республике Армения, выявление ее преимуществ и недостатков, а также проведение сравнительного анализа с парламентской моделью правления для раскрытия основных институциональных особенностей президентской системы правления и их влияния на структуру исполнительной власти.

Задачи данной статьи:

1. анализ преимуществ и ограничений президентской системы правления в политическом контексте Республики Армения;
2. проведение сравнительного анализа президентской и парламентской моделей правления, выявление структурных и оперативных различий;
3. изучение позитивных и негативных проявлений роли президентского института в системе государственной власти.

В ходе исследования использовались следующие научные методы: сравнительный анализ, историко-правовой и политический анализ, контент-анализ документов и законов, метод синтеза и сравнения.

Научная новизна статьи заключается в том, что она сочетает в себе правовой и политический анализ института Президента Республики Армения с точки зрения эффективности управления, основанный на современных исследованиях как научного журнала «Научный Арцах», так и научных журналов Республики Армения. В статье также рассматривается роль общественного мнения в формировании модели управления.

В работе обосновывается что выбор формы правления важен для процесса формирования политической системы Республики Армения.

В результате исследования было выявлено, что президентская модель управления может обеспечить политическую стабильность и ясность ответственности правительства при условии наличия эффективных механизмов сдержек и противовесов.

Ключевые слова: *президентская система, форма правления, политическая власть Армении, конституционные реформы, демократия, парламентское управление, модели государственного управления.*

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ԱՆԹԻԼԻԱՍԻ Հ^ՄՐ 150 ՁԵՌԱԳՐԻ ԳՐԱՌԱՋՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՏԻՊ ԽՈՒՄԲԸ *

ՀՏԴ 82.091 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-114*

ՕՎՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Մատենադարանի (Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի) գիտական աշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ovsannakhachatryan77@gmail.com
ORCID: 0000-0001-6136-2222

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել գրառաջքի՝ որպես հայ միջնադարյան գրականության յուրահատուկ գրական երևույթի դրսևորումները և առանձնահատկությունները Անթիլիասի Հ^մր 150 ձեռագրում: Ի տարբերություն հայերեն ձեռագրերում տարածված գրառաջքային խմբերի՝ 150 ձեռագրում այդ խումբն ունի յուրահատուկ բնույթ և դրսևորում: Հոդվածում ներկայացրել ենք սույն ձեռագրում գրառաջքային խմբի ընդհանրական պատկերը, օրինակով ցույց տվել առկա առանձնահատկությունը. հոգևոր և աշխարհիկ անձանց ուղղված գրառաջքները ընդմիջարկում են մի բնագիր, որը սուրբգրային և հայրախոսական գրականությունից մեջբերումների ժողովածու է:

Հոդվածի խնդիրն է հասկանալ Անթիլիասի Հ^մր 150 ձեռագրում գրառաջքային յուրահատուկ խմբի՝ այլ բնագրի մեջ ընդգրկման պատճառը, նպատակը, հանգամանքները:

Աշխատանքը շարադրված է պատմահամեմատական և համադրական մեթոդների կիրառմամբ:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ նմանատիպ բնագրի (ընդհանուր՝ գրառաջքները ներառյալ) կազմումը, հնարավոր է, պայմանավորված է այս ձեռագիր ժողովածուի ստեղծման նպատակով. գուցե այն ստեղծվել է որպես ուսուցողական ձեռնարկ, և գրառաջքները ընդգրկվել են սուրբգրային և հայրախոսական գրականությունից մեջբերումների ժողովածուի մեջ, որպեսզի նամակագիրը չշեղվի դրանցում եղած ճշմարտություններից:

Հիմնաբառեր՝ *միջնադարյան հայ գրականություն, ձեռագիր, գրառաջք, Անթիլիասի Հ^մր 150 ձեռագիր, նամակագրություն, հիշատակարան, ժանր:*

Ներածություն

Հայերեն ձեռագիր մատյաններում տարածված են *գրառաջք* կամ *թղթառաջք* կոչվող գրություններ, որոնք պաշտոնական դիմելաձևեր են՝ ստեղծված թղթերից,

* Հոդվածը ներկայացվել է 25.09.2025թ., գրախոսվել՝ 21.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

կոնդակներից, հրովարտակներից կամ նմանատիպ գրություններից առաջ դրվելու նպատակով, որոնք ի վերջո դառնում են այդ գրությունների մի մասը (տե՛ս Դոլուխանյան, Խաչատրյան 306-315, Խաչատրյան 81-89): Այս գրվածքները մեծ հավանականությամբ ստեղծված են տարբեր ժամանակաշրջաններում, հունական և հռոմեական մատենագրություններում եղած բանաձևերի նմանությամբ (Hunger)՝ փոքր-ինչ փոփոխություններով, բնականաբար, հարմարեցնելով ժամանակի և միջավայրի առանձնահատկություններին: Այս կամ այն գրառաջքը ստեղծել է կա՛մ որևէ հեղինակ (և հնարավոր է այդ գրառաջքը երբեք էլ օգտագործված չլինի որևէ գրվածքի մեջ), կա՛մ որոշները արտագրված են արդեն եղած թղթերից կամ թղթերի կազմման բանաձևերից[1]: Ինչպես գրում է Ազատ Բոզոյանը. «1198 թվականին Կիլիկիայի տարածքի վրա Հայոց նոր թագավորության ստեղծումով, իսկ ԺԳ դարի վերջին Հայոց կաթողիկոսարանի՝ Սիս տեղափոխվելուց հետո, ստեղծվեցին պետությանը և կաթողիկոսարանին կից դպրատուն-նոտարատներ, որոնք մշակում էին վավերագրերի ու թղթերի կազմման նոր բանաձևեր... **Այդ գրասենյակներում ստեղծված վավերագրերն իրենց արձագանքն են գտել բազմաթիվ ձեռագրերում ընդօրինակված թղթառաջքների և թղթավարտների բանաձեւերի ժողովածուներում**» (Բոզոյան 9):

Գրառաջքի մասնավոր օրինակը թղթառաջքն է, որը, հավանաբար, մեծամասնություն է կազմում գրառաջքների ձեռագրային խմբերում: Ըստ Աշոտ Ալեքսանյանի, որ ուսումնասիրել է հայ միջնադարյան նամակը, «միջնադարյան հայ պատմիչները ճանաչում են նամակագրության հիմնականում մեկ ընդհանրական կաղապար՝ այն, որ նամակը բաղկացած է **թղթառաջքից,** նամակային բուն տեքստից կամ հաղորդումից և վերջաբանից (կատարած կամ հորդորակ): Ընդհանրական կաղապարի այս երեք բաղկացուցիչներն ունեն հետևյալ ներքին ստորաբաժանումները. **թղթառաջքում** արտահայտվում են նամակագրի և հասցեատիրոջ անունները, նրանց պաշտոնը, դիրքը, նամակագրի վերաբերմունքը հասցեատիրոջ նկատմամբ, նրանց միջև գործող բարեկամական կապի պարբերաչափը, նամակագիրների տիտղոսները, ողջույնի, առողջության ցանկության և երկրպագության բանաձևումները: Նամակային բուն տեքստը կամ հաղորդումը բաղկացած է հետևյալ հինգ հիմնական միավորներից. **նախաշավիղ**, խնդրադրություն, վճռադրություն, պատժի սպառնալիք և ամրագրում: Վերջաբանը սովորաբար շատ կարճառոտ է և հաճախ սահմանափակվում է միայն վերջողջույնի բանաձևումով՝ «ողջույն», «ողջ լեր», «խնդալ», «բերկրիլ» և այն» (Ալեքսանյան 203):

Այսինքն՝ թղթառաջքում և՛ գրառաջքում նույնպես, դեռ հայտնի չէ, թե նամակը ինչի մասին պետք է լինի և՝ ինչ խնդրանքով, ընդամենը պաշտոնական դիմելաձևն է, նաև կարելի է համարել գովք, որով հայտնի է դառնում միայն, թե ում է ուղղված այդ գրառաջքը: Օրինակ՝ Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) Հմր 8030 ձեռագրի՝ քահանային ուղղված գրառաջքը.

Քահանայի
Հոգէհանճար եղբայր պանձալի
Եւ վաճառական գանձին գովելի,
Զորս տարել ունիս յոգոյդ սէնէկի,
Սեւեռնագոյն բանիւ հրաշալի:
Սաղմոս երգող անդադարելի,
Եւ գրակարդաց հոգով ի լի,
Աշտարակ ի բարձրի եւ սպասաւոր յեկեղեցի,
Հրամանատար Քրիստոսի,
Եւ ձեր նմանեացն պարծանք, **ով որ լինի** (ՄՄ 8030, 423ա):

[1] Գրառաջքների ծագման հանգամանքների հետ կապված մեր ուսումնասիրությունը դեռևս ընթացքի մեջ է:

Այսպիսով՝ թղթառաջքը կամ գրառաջքը չպետք է նույնացնել նախաշավիղներին և համեմատել պատճառի, «Աստվածաշնչի ներածության» կամ «Իսագոգիկայի» (հուն. «εἰσαγωγή»՝ «ներածություն», «նախագիտելիք», «նախակրթություն») հետ, որը **նախագիտելիք է տալիս առաջիկա տեքստի մասին** («իսագոգիկայի» մասին տե՛ս Շիրինյան 11-17): Պատճառի կամ իսագոգիկայի հետ կարելի է համեմատել նախաշավիղը (կամ ներածությունը), ինչպես նշեցինք, գրառաջքից հետո եկող հատվածը, որն արդեն թղթի կառուցվածքում այլ դեր ունի, այն ներտեքստային առաջին միավորն է՝ առաջաբանը, որը լատիներեն՝ Arenga, հուն. προοιμιον»՝ «Պիտոյից գրքում» բառացիորեն թարգմանվում է «նախաշաւիղ» բառով (Ալեքսանյան 24):

Գրառաջքները ձեռագրերում հիմնականում հանդիպում են խմբերով՝ մեկ ընդհանուր խորագրի ներքո, Ժողովածու կոչվող ձեռագրերում, և միակ ձեռագիրը, որն ամբողջովին գրառաջքների ժողովածու է Վիեննայի Հմր 377-ն է, որի սկզբի գրառաջքները դասավորված են ըստ հայ եկեղեցու նվիրապետական աստիճանների և կոչումների՝ կաթողիկոս, եպիսկոպոս, քահանա (Վիեն. 377, 1ա-2բ):

Գրառաջքը, որն ունի իր ուրույն տեղը ձեռագրում, մենք շատ անգամ քննարկել ենք որպես «ձեռագրական» ժանր, սակայն **ոչ ինքնուրույն-կախյալ** ժանր, և անգամ համեմատական ենք անցկացրել հիշատակարանի հետ, որն ի տարբերություն գրառաջքների, **ոչ ինքնուրույն-կիսանկախ** ժանր է (Խաչատրյան 81-89):

Հնագույն հայերեն ձեռագիրը, որում հանդիպել ենք գրառաջքային խումբ Մաշտոցի անվան Մատենադարանի Հմր 8030-ն է, որն ունի «Գրառաջ» ընդհանոր խորագրով գրառաջքային խումբ, իսկ լուսանցքներում նշվում են գրառաջքի հասցեատերերի կոչումները կամ պաշտոնները՝ քահանային, եպիսկոպոսին, տանուտերանց և այլն (ՄՄ 8030, 422բ-424ա): Իսկ մեզ հայտնի հնագույն գրառաջքները ԺԳ դարի բանաստեղծ **Հովհաննես Երզնկացու** գրչին են պատկանում, դրանք պահպանված են Մաշտոցի անվան Մատենադարանի Հմր 652 ձեռագրում «**Ազդմունք նորին Յոհանու Ըզընկեցոյ ասացեալ է**» ընդհանուր խորագրի տակ. «Գովասանութիւն եպիսկոպոսաց եւ կաթողիկոսաց. յօրժամ գրեն թուղտ ղրկելոյ, յառաջ զայս գրեն, ապա՝ զծանուցումն: Գովասանութիւն իշխանաց եւ աշխարհականաց: Վարդապետաց է բանս» (ՄՄ 652, 75բ-7բ):

Այսպիսով՝ Անթիլիասի Հմր 150 ձեռագրում գրառաջքային խումբն ունի բոլորովին այլ կառուցվածք և դրսևորում. ընդմիջարկում է մեկ այլ բնագիր. այս առանձնահատկությունն էլ առիթ հանդիսացավ, որ ձեռնամուխ լինենք սույն հոդվածը գրելուն:

Անթիլիասի Հմր 150 ձեռագիրը

Անթիլիասի Հմր 150 ձեռագիրը Ժողովածու է՝ գրված 1367 թվականին Երուսաղեմում, Վարդան գրչի ձեռքով, ստացողն է Մխիթար վարդապետը, ինչպես նշված է ձեռագրի հիշատակարանում. 84բ «Ո՛վ հայր սուրբ, Մխիթար խոստովանահայր, զսակաւ գիրս ընկալ ի Վարդան մեղաւոր հոգւոյ եւ անմեղադիր լեր սխալին եւ աւելոյն, զի կար մեր այս էր եւ յիշէ յաղօթս աղաչեմ զիս՝ զքո անառակ որդիս: Ի թվին ՊԺԶ. (1367), յԵրուսաղէմս սուրբ»: Այն բաղկացած է 84 թերթից՝ գրված բոլորգրով, ունի երկաթագիր պատառիկ-պահպանակ՝ 12-րդ դարի Աստվածաշնչից: Ձեռագրի պատմության մասին կան վկայություններ՝ գրված հետագայի ձեռքով՝ 1ա «Սարգիս Շատօյեան, Հալէպ, 1905, Մայիս 19», և 1բ «Առ գերապատիւ Տ. Բաբգէն սրբազան եպիսկոպոս Կիւլէսերեան որդիական ակնածանօք, մատուցանէ Յարութիւն քիյ Եսայեան, 4 Սեպտ. [1]925, Հալէպ»: Այսինքն՝ ձեռագիրը նվեր է Հարություն քահանա Եսայանից Բաբգեն եպս. Կյուլեսերյանին:

Հմր 150 ձեռագիրը սկսվում է Հաղորդ տալու կանոնով՝ 2ա-6ա, որի վերջում կա գրչի հիշատակարան՝ 6ա «Զսակաւ գիրս ընկալ հայր սուրբ եւ զՎարդան խաբողաս

յիշէ ի Տէր»: Այս կանոնին հաջորդում է բնագիր՝ աստվածաշնչյան և հայրախոսական գրականությունից մեջբերումների ժողովածու, որն ընդմիջարկված է գրառաջքներով:

Գրառաջքների ձեռագրական առանձնահատկությունը
Անթիլիասի 150 ձեռագրում

Մեր ունեցած տվյալներով Անթիլիասի Հմ 150 ձեռագիրը երկրորդ հնագույն ձեռագիրն է, որը պարունակում է գրառաջքներ: Վերջիններս ունեն առանձնահատուկ դասավորություն և դրսևորումներ՝ ընդմիջարկում են սուրբգրային և սուրբ հայրերի վկայությունները պարունակող բնագիր: Ծանոթ լինելով գրառաջքային խմբերի տարածվածությանը հայերեն ձեռագրերում՝ կարող ենք ասել, որ սա հետաքրքիր եզակի երևույթ է, որին հանդիպում ենք միայն այս ձեռագրում:

Բնագրի պատկերը հետևյալն է.

7ա-84բ *Յաղագս Սուրբ Երրորդութեանն. վկայութիւն յամենայն յԱստուածաշունչ գրոց ի Նորոց եւ Հնոց,* **Առաջք եպիսկոպոսաց,** Վասն հաւատոյ են բանքս, **Առաջք եպիսկոպոսաց,** Վասն յուսոյ է բանքս, **Առաջք քահանայից,** Վասն աստուածասիրութեան է բանս, **Առաջ վարդապետաց,** Վասն համբերութեան է բանս, **Վասն սարկաւագաց է բանս,** Վասն պահոց է բանս, **Վասն կրաւնաւորաց է բանս,** Վասն աղաւթից է բանս, **Առաջք միաբանից,** Վասն հայրապետաց, **Առաջի թագաւորաց,** Վասն սքանչելեացն Աստուծոյ, **Առաջք կանանց համեստից,** Խոստովանութեան, **Առաջք զաւրավարաց,** Վասն նուիրաց, **Առաջք իրիցուհոյ,** Խրատք հասարակաց, **Կանանց համեստից,** Վասն աղաչանաց է բանս, **Առաջք ծերոց,** Վասն ողորմութեան է բանս, **Առաջք ամենայն քրիստոնէից,** Վասն կրաւնաւորաց է բանքս, **Առաջք մանկտեւագաց,** Վասն ստախաւսաց է, **Առաջք երիտասարդաց,** Վասն հալածանաց է բանս, **Առաջք աշխարհականաց,** Վասն հալածանաց, **Առաջ կաթողիկոսաց,** Վասն թերահաւատից է բանս, **Առաջք եպիսկոպոսաց,** Վասն կիրակէի բանին է բանս, **Առաջ քահանայից,** Վասն ուխտաւորաց է բանս, **Առաջ անձնեղ եւ ուժեղ մանկանց,** Վասն հպարտաց է բանս, **Առաջք ամենայն բարի քրիստոնէից,** Վասն ոխակալաց է բանս, **Առաջք կրաւնաւորաց է բանս,** Վասն անհնազանդութեան, **Առաջք վիրաւորելոց է բան,** Վասն այր եւ կնոջ է բանս, **Առաջք հայրապետաց,** Հրաման է ընդ ատելիս Աստուծոյ սէր ոչ առնել, **Առաջ վարդապետաց,** Վասն արբեցողաց է բանս, **Առաջք քահանայից է բանս,** Վասն բողոքելոյ առ Աստուած ի ձեռաց թշնամեաց, **Առաջք կանանց,** Վասն մահուան է բանս, **Առաջք տղայոց,** Վասն քինուհանության, **Առաջք քահանայից,** Պատասխան, որոց խմոր դնեն ի խորհուրդն, Երկրորդ զճշմարիտ Յարութեանն յայտ առնէ Պօղոս բանիւն, որ ասէ. . . (դժվար է ասել այս վերջին միավորը, որը նկարագրության մեջ խորագրված է «Հարցմունք և պատասխանիք յաղագս Յարութեան», մտնում է այս ընդհանուր տեքստի մեջ, թե ոչ. սա պահանջում է մանրամասն ուսումնասիրություն, որը նախատեսում ենք կատարել հետագայում):

Ի՞նչ նպատակ է ունեցել հեղինակը կամ գրիչը այս բնագիրը ստեղծելով:

Ինչպես տեսնում ենք, առաջին գրառաջքից հետո հանդիպող տեսքտերը, որոնք գրառաջքներ չեն, քրիստոնեական երեք մեծ առաքինությունների (**հավատ, հույս, սեր)** մասին վկայությունների փունջ են, իսկ գրառաջքները ուղղված են ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ[1] անձանց: Այսինքն՝ նմանատիպ բնագիր (ընդհանուր՝

[1] 21աբ **Առաջի թագաւորաց**. Թագ պարծանաց եւ վահան հաւատոյ, բարձր դիտանոց, եւ պարիսպ ամրութեան ամենայն հաւատացելոց, քրիստոնէից թագաւորին երկնաւորին ախոյեան եւ քաջայաղթ քրիստոսասէր զաւրօք եւ զօրավարաւք, որ ընդ ամենայն երկիրս, եւ ընդ ոլորտս տիեզերաց, յեկեղեցի Աստուծոյ օ[ր]հնեն եւ գովեն յամենայն բերանոյ, զբարձր եւ զանյաղթելի, անուն սուրբ թագաւորի*ն* Հայոց մեծաց, իշխանաւք եւ իշխեցելեօք եւ ամենայն զարմիւք: Եւ երանելին Եփրեմ գովեաց զսպասաւոր թագաւորին ասելով. Ընդունելի է թագաւորին ըսպասաւոր իմաստուն, եւ Տէրն գովեաց ասելով. Աբգար թագաւոր, վա՛շ ամենայն աշխարհիս Հայոց մեծաց, եւ խոստացաւ զոչ ընդունողսն թագաւորաց ի կորուստ արկանել, զի ի միոյ վիմի*ն* հաստատեալ կան ամենայն եկեղեցիք, գովելոլ ի գնա*ն*է եւ մեծարեալ ի

գրառաջքները ներառյալ) ստեղծվել է, քանի որ, հնարավոր է, ժողովածուն ծառայել է որպես դասագիրք կամ օժանդակ ուսուցողական ձեռնարկ, և գրառաջքները ընդգրկվել են այդ մեջբերումների ժողովածուի մեջ, որպեսզի նամակագիրը թուղթ գրելու ժամանակ, օգտվելով այդ գրառաջքներից, չշեղվի սուրբ գրքերում եղած ճշմարտություններից. նախնական գաղափար ունենա սուրբգրային, հայրախոսական մեջբերումներում ընդգծված մտքերի մասին. գուցե այստեղ է արտահայտված է նաև **քարոզի տարրը**:

Նման բնագրի ստեղծումը գուցե պայմանավարված լինի նաև ստացողի անձով, ինչպես տեսնում ենք, ձեռագրի ստացողը Մխիթար վարդապետն է, որին, հնարավոր է, դասավանդման նպատակով է պետք եղել այս ձեռագիրը:

Ահա առաջին գրառաջքի և դրան հաջորդող վկայությունների փնջի մի օրինակ.

ԱՌԱՋՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Բանալի արքայութեան երկնից, հովուապետ եւ առաջնորդ բանաւոր հաւտին Քրիստոսի, տաւմար անլուծանելի, եւ ակն լուսափայլ ի մէջ ժողովրդեանն, կատարիչ հաճոյից կամացն Աստուծոյ, իմաստուն ուռկանաւոր եւ հեծանոց սուրբ ի ձեռինն Աստուծոյ, արեւելեան ճառագայթ եւ ջահ արփիական, եդեալ ի վերայ լուսընկալ եւ բարձրագոյն աշտանակի, լոյս ծագելով ընթ[հ]անուր հայաստանեաց սեռիցն, գովեալդ յազգէ եւ մեծարեալդ ի Քրիստոսէ: (Անթիլ. 150, 9ա)

ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՆ ԲԱՆՔՍ

Ա. **Սողոմոն ասէ.** Ուրա՛խ լեր երիտասարդ ի մանկութեան քում եւ զվարճացուսցէ զքեզ սիրտ քո յաւուր մանկութեան եւ դարձեալ, թէ յիշեա՛ զարարիչն քո յաւուր մանկութեան քո:

Դաւիթ. Հաւատարիմ է Տէր յամենայն բա՛, եւ սուրբ է յամենայնի գործս:

Մովսէ՛ ասէ. Զի՞նչ խնդրէ ի քէն Տէր, երկնչիլ ի Տեառնէ Աստուծոյ քումմէ, եւ գնալ յամենայնի ճանապարհս նորա արդարութեամբ:

Պօղոս ասէ. Մի՛ լինիք լծակիցք անհաւատիցն, զի զինչ հաղորդութիւն է, արդարութեան ընդ անաւրէնութեան կամ լուսոյ ընդ խաւարի կամ Քրիստոսի ընդ Բելիարա: Դարձեալ եղիցի ամենայն մարդ սուտ եւ Աստուած ճշմարիտ:

Սողոմոն. Ոչ աւգնեսցեն ինչք յաւուր բարկութեան, այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ:

Եսա[յ]ի. Հաւատացելոցն ասէ շինեսցեն տունս եւ ինքեանք բնակեսցեն:

Պօղոս ասէ. Մի է Տէր, մի՛ հաւատք, մի մկրտութիւն, մի Աստուած եւ հայր ամենեցուն:

Յերգս երգոց ասէ. Որդիք սիրեցեալք մտէք ի բուրաստան ի մէջ գիշերի:

Կրաւնաւ՛. Լաւ է հպարտութեամբ յերկիս ելանել, քան թէ խոնարհութեամբ յանդունդս իջանել:

Աւետարանն. Թէ զամենայն, զոր ինչ խնդրէք հաւատոյ ի Հաւրէ յանուն Որդւոյ, եւ ոչ երկմտիցէք հաւա՛ առնուցուք:

Եփրեմ. Որք կամեցան յերկինս մեծանալ զաղքատութիւն եւ զխոնարհութիւնըն ընտրեցին:

Պօղոս. Փառք եւ խաղաղութիւն ամենայն, որ գործէ զբարի, նախ հրէի եւ ապա հեթա՛ի, զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ:

Աւետարա՛. Յորժամ ասացին աշակերտք. Տէր յաւել մեզ հաւատս՛: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Եթէ ունիցիք հաւատս, քան զհատ մանանխոյ, ասասցջիք լերինս այսմիկ բարձիր եւ անկիր ի ծով, ամէն ասեմ ես ձեզ, եղիցի:

Քրիստոսէ, սուրբ թագաւորդ ի բարեպաշտ հաւատոյ, որոյ քաղցրասցին կամք Արարչին, ի սիրտդ սուրբ թագաւորի*ւ*, եւ սուրբ թագաւորին ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս:

Եփրեմ. Հաւատացելոյն Տէրն է բաժին, իսկ անհաւատիցն՝ խաւարային դեւքն եւ սատանայ:

Ամբակում. Թէ արդարն ի հաւատոց կեցցէ:

Աւետ՛՛. Յորժամ ասաց Մարթա զՏէր՝ Տէր եթէ աստ էիր լեալ, եղբայրն իմ չէր մեռեալ: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Թէ հաւատասցես, տեսցես զփառս Աստուծոյ:

Եփրեմ. Անհնարին է միով ակամբ յերկիս հայել եւ միովն ի խոնարհ: Արդ, ԳՃԺԸ. (318) հայրապետքն զամենայն գրեանս հաւատով աւարտով աւարտեցին՝ ասելով զհաւատամքն: Այլ ասէ. Թէ հաւատք առանց գործ մեռ՛՛: Զի ի ծննդեան աւրն հաւատով առնու զմկրտութիւն, իսկ մահուան աւրն եւ ի յարութեան՝ գործովք համարս տալոց եմք: (Անթիլ. 150, 9ա-10բ):

Եվս մեկ նկատառում. Անթիլիասի ձեռագրացուցակում նկարագրողը՝ Անուշավան վարդապետ Դանիելյանը, ձեռագրի նկարագրության մեջ այլ բնագրական բաժանումեր է կատարել (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան 435-437)՝ ձեռագրի 9ա-46բ էջերի բնագրերը համարելով գրառաջք, բայց մենք կարծում ենք, որ առաջին միավորից (Կանոն հաղորդ տալոյ) հետո եկող տեքստը մի ամբողջական բնագիր է՝ աստվածաշնչյան և հայարխոսական մեջբերումների կամ վկայությունների ժողովածու, որն ընդմիջարկված է գրառաջքներով:

Եզրակացություն

Անթիլիասի Հմր 150 ձեռագրում ընդգրկված գրառաջքները, որոնք նախատեսված են ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ անձանց ուղղված նամակների մեջ գործածվելու նպատակով, ի տարբերություն գրառաջքներ պարունակող մյուս ձեռագրերի, ունեն յուրահատուկ դասավորություն և դրսևորումներ: Դրանք ընդմիջարկում են մի բնագիր, որն աստվածաշնչյան և հայրախոսական գրականությունից մեջբերումների փունջ-բնագրերի ժողովածու է, ինչպես տեսնում ենք, առաջին գրառաջքից հետո հանդիպող տեքստերը քրիստոնեական երեք մեծ առաքինությունների (**հավատ, հույս, սեր)** մասին վկայություններ են: Նմանատիպ բնագրի (ընդհանուր՝ գրառաջքը ներառյալ) ստեղծումը, հնարավոր է, պայմանավորված է այս ժողովածուի ստեղծման նպատակով, քանի որ գուցե ժողովածուն ստեղծվել է որպես դասագիրք կամ օժանդակ ուսուցողական ձեռնարկ, և գրառաջքները ընդգրկվել են այդ մեջբերումների ժողովածուի մեջ՝ ընդմիջարկելով այն, որպեսզի նամակագիրը չշեղվի սուրբ գրքերում եղած ճշմարտություններից՝ նախնական գաղափար ունենալով սուրբգրային, հայրախոսական գրականությունից մեջբերված կարևոր մտքերի մասին. և գուցե այստեղ արտահայտված է **քարոզի տարրը**:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան, Աշոտ. *Հայ միջնադարյան նամակը (IV-XIV դարեր)*. Երևան, 1997:
2. Բոզոյան, Ազատ. *Հայ-Բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.)*. Երևան, 1995:
3. Դոլուխանյան, Աելիտա. «Գրառաջքները» հայ միջնադարյան մատենագրության մեջ». Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը. Երևան, 2012, էջ 89-101:
4. Խաչատրյան, Օվսաննա. «Գրառաջքի գրական տեսակի ժանրային առանձնահատկությունները». *Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ, Մատենադարանի երիտասարդ գիտաշխատողների միավորում*. Երևան, 2018, էջ 306-315:

5. Խաչատրյան, Օվսաննա. «Գրառաջք-հիշատակարան ժանրային առնչությունները հայ միջնադարյան մատենագրության մեջ». *Լևոն Խաչիկյան. հարյուրամյակ (Նյութեր ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի, 28-30 հունիսի, 2018 թ.)*. Մատենադարան. Երևան, 2019, էջ 81-89:

6. *Ձեռագրեր - Անթիլիաս 150*. Մատենադարան 8030, 652, Վիեննա 377:

7. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան.* կազմեց՝ Անուշավան վարդապետ Դանիէլեան. Անթիլիաս-Լիբանան, 1984:

8. Շիրինյան, Էռնա Մանյա. «Աստվածաբանությունը և մեկնությունը». *Աստվածաբանության տարեգիրք*. Երևան, 2017, էջ 7-35.

9. Hunger, H. Prooimion. *Elemente der byzantinischen Kaiseridee in den Arengen der Urkunden*. Wiener byzantinische Studien. Band I, Wien, 1964, 252 p.

WORKS CITED

1. Alek’sanyan, Ashot. *Hay mijnadaryan namaky’ (IV–XIV darer).* Erevan. [*The Medieval Armenian Letter (4th–14th Centuries).* Yerevan], 1997. (in Armenian)

2. Bozoyan, Azat. *Hay-Byuzandakan yekeghecakan banakcut’yunneri vaveragrery’* (1165–1178 t’t’.). Erevan. [*Documents of the Armenian-Byzantine Ecclesiastical Negotiations (1165–1178).* Yerevan] 1995. (in Armenian)

3. Doluxanyan, Aelita. *“Grar’ajk’nery’ hay mijnadaryan matenagrut’yan mej”. Hay mijnadaryan grakanut’yan himnakan ughghut’yunnern u jhanrery’*, Erevan. [“*The ‘Grar’ajk’s’ in Medieval Armenian Literature.”* In *Main Directions and Genres of Medieval Armenian Literature*. Yerevan] 2012, ej 89–101. (in Armenian)

4. Xachatryan, Ovsanna. *“Grar’ajk’i grakan tesaki jhanrayin ar’and’nahatkut’yunnery’”, Eritasardakan 3-rd gitajhoghovi zekucumner*, Matenadarani eritasard gitashxatoghneri miavorum. Erevan. *[“The Genre Characteristics of the Literary Type ‘Grar’ajk’.” Papers of the III Youth Conference,* Union of Young Researchers of the Matenadaran. Yerevan] 2018, eǰ 306–315. (in Armenian)

5. Xachatryan, Ovsanna. *“Grar’ajk’-hishatakaran jhanrayin ar’nchut’yunnery’ hay mijnadaryan matenagrut’yan mej”*, *Levon Xachikyan. Haryuramyak (Nyut’er akademikos Levon Xachikyani c’nndyan haryuramyakin nvirvac’ hayagitakan mijazgayin gitajhoghovi,* 28–30 Hunisi, 2018 t.), Matenadaran, Erevan, [*“Genre Relations between the Grar’ajk’ and the Colophon in Medieval Armenian Literature.” In Levon Xachikyan Centennial: Materials of the International Conference Dedicated to the 100th Anniversary of Academician Levon Xachikyan’s Birth (June 28–30, 2018)*. Matenadaran, Yerevan] 2019, ej 81–89. (in Armenian)

6. D’er’agrer - Ant’ilias 150, Matenadaran 8030, 652, Vienna 377 [Mss Antelias 150, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts, Matenadaran 8030, 652, Vienna 377].

7. Mayr cucak hayere’n d’eragrac Mec’i Tann Kilikioy kat’oghikosut’ean. kazmec – Anushawan vardapet Danie’lean. Ant’ilias-Libanan. [*Catalogue of the Armenian Manuscripts in the Collection of the Armenian Catholicosate of Cilicia.* Antelias-Lebanon] 1984. (in Armenian)

8. Shirinyan, Er’na Manya. “*Astvac’abanut’yuny’ ev meknut’yuny’”, Astvac’abanut’yan taregirk’*. Erevan [“Theology and Commentary.” *Yearbook of Theology*. Yerevan] 2017, e’j 7-35. (in Armenian)

A UNIQUE GROUP OF GRAR’AJK’S IN ANTELIAS MANUSCRIPT NO. 150

OVSANNA KHACHATRYAN

Matenadaran, Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts,
Researcher, Ph.D of Philology,
Yerevan, the Republic of Armenia

The aim of this article is to present the manifestations and characteristics of the *grar’ajk’* in Antelias Manuscript No. 150 as a distinctive literary phenomenon of medieval

Armenian literature. Unlike the commonly attested groups of *grar'ajk's* in other Armenian manuscripts, the group in Manuscript 150 exhibits a unique nature and expression. The article presents a general overview of the *grar'ajk'* group found in this manuscript and highlights its distinctive feature through a specific example. The *grar'ajk's* addressed to both clerical and secular individuals interrupt a main text that consists of a compilation of quotations from biblical and patristic literature.

The central research question of this article is to understand the reasons, purpose, and circumstances behind the inclusion of a unique group of *grar'ajk'* texts within a different textual context in Manuscript No. 150 of Antelias.

The study is conducted using historical-contextual and comparative methods.

As a result of the research, we have concluded that the creation of such a manuscript was likely motivated by the purpose of producing this collection. Perhaps it was made as a textbook or auxiliary instructional treatise, and the *grar'ajk's* were interspersed into that anthology of quotations so that the epistle-writer who uses those *grar'ajk's* might have a preliminary idea of the important concepts of Holy Scripture and patristic literature, and not deviate from the truths contained therein.

Keywords: *Medieval Armenian literature, manuscript, grar'ajk', Antelias Manuscript No. 150, epistolary writing, colophon, genre.*

УНИКАЛЬНАЯ ГРУППА ГРАРАДЖКОВ В АНТЕЛИАССКОЙ РУКОПИСИ № 150

ОВСАННА ХАЧАТРЯН
научный сотрудник Матенадарана, Научно-исследовательского института древних рукописей имени Месропа Маштоца,
кандидат филологических наук,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи — представить проявления и характеристики *грараджка* как уникального литературного явления в армянской средневековой литературе на примере рукописи Антилиаса №150. В отличие от широко засвидетельствованных групп грараджков в других армянских рукописях, группа в данной рукописи имеет уникальный характер и форму выражения. В статье даётся общий обзор группы *грараджков*, представленных в этой рукописи, и на конкретных примерах отмечаются их отличительные черты. Грараджки, адресованные как духовным, так и светским лицам, вставлены в основной текст, который представляет собой собрание цитат из Священного Писания и патристической литературы.

Задача статьи — понять причины, цели и обстоятельства включения особой прологовой группы в иной текст рукописи Антилиаса №150. Работа изложена с применением историко-сравнительного и сопоставительного методов.

В результате исследования мы пришли к выводу о том, что создание подобной рукописи, вероятно, было обусловлено целью составления данного рукописного сборника: возможно, он был создан как учебник или вспомогательное дидактическое пособие, и *грараджки* вставлены в этот антологический сбор цитат так, чтобы автор посланий, использующий эти *грараджки*, мог получить предварительное представление о ключевых идеях Святого Писания и патристической литературы и не отклонялся от содержащихся в них утверждений.

Ключевые слова: *средневековая армянская литература, рукопись, грараджк, Антелиасская рукопись № 150, эпистолярное письмо, колофон, жанр.*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ԵՐԳԻԾԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

ՀՏԴ 82 DOI: 10.52063/25792652-2025.3.26-122

ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
arpinanyan21@gmail.com
ORCID: 0000-0002-8593-0957

Հոդվածում քննվում են Հ. Թումանյանի արձակ ստեղծագործություններում (պատմվածք, հեքիաթ) առկա երգիծանքի բացառիկ առանձնահատկությունները, ինչպես նաև թումանյանական գեղարվեստական այն հնարքները, որոնք բանաստեղծը ներկայացրել է իրեն բնորոշ ինքնատիպ գեղարվեստական ճաշակի և ստեղծագործական անկրկնելի երևակայության շնորհիվ:

Հոդվածի նպատակը Հովհաննես Թումանյանի երգիծական ստեղծագործություններում երգիծանքի և գրողի անկրկնելի պատկերամտածողության վերլուծությունն է, ինչպես նաև հոդվածում առկա գեղարվեստական ստեղծագործությունների կերպարների հոգեբանական նկարագրի լիարժեք բացահայտումը:

Քննության առարկան հեղինակի երգիծական արձակ ստեղծագործություններն են (որոնք հնարավոր է եղել ներառել), իսկ ուսումնասիրությունը կատարվել է համեմատական ու կառուցվածքային վերլուծության մեթոդներով:

Հոդվածի գիտական նորույթը այդ ստեղծագործությունների միջև համեմատության եզրեր և զուգահեռներ անցկացնելու միջոցով Հովհաննես Թումանյանի երգիծական ինքնատիպ հնարքների վերհանումն է:

Գտնում ենք, որ Հ. Թումանյանի վերոհիշյալ ստեղծագործություններում երգիծանքն ուղղված է կյանքի բացասական, ինչպես նաև մերժելի երևույթների դեմ: Մեր խնդիրն ենք համարել համապարփակ կերպով ներկայացնել թումանյանական երգիծանքի այն էական հատկանիշները, որոնց շնորհիվ, ըստ մեզ, բանաստեղծը հանգել է գեղարվեստական ընդհանրացման:

Գեղարվեստական գրականության զարգացման գլխավոր ակունքը ժողովրդական ստեղծագործությունը համարող մարդկային ցավերի սրտառուչ երգիչ բանաստեղծը այդտեղից էր իդեալներ փնտրում, իր հերոսներին էր ընտրում և նրանցից անկրկնելի կերպարներ էր կերտում:

Հիմնաբառեր՝ Հովհաննես Թումանյան, երգիծանք, սյուժե, բանաստեղծ, չար, բարի, կեղծիք, գեղարվեստական պատկեր, ստեղծագործական երևակայություն, հերոսի ներաշխարհ:

* Հոդվածը ներկայացվել է 29.09.2025թ., գրախոսվել՝ 20.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Ներածություն

Իրականության ճշմարտացի ընկալումը և այն գեղարվեստական խորությամբ, նրբանկատությամբ ու առանց ավելորդ գունազարդումների ներկայացնելը Հ. Թումանյանի ստեղծագործական վարպետության վկայությունն են: Նրա ստեղծած ինքնատիպ գրականությունն իր ապրած ժամանակի հասարակական մտքի հարցադրումների համարժեք և ներդաշնակ արձագանքն է, որովհետև աշխարհը խորասուզվել էր անորոշության անծայրածիր մղձավանջներում, ինչի պատճառով մարդկանց մեջ մարդուն էին որոնում: Հենց այս անորոշության ճնշող պահերին բանաստեղծը հոգու անկեղծ ճիչն է բարձրաձայնում իր ստեղծագործություններով: Ստեղծագործական վառ երևակայության արգասիք թումանյանական երազներն աննահանջ սլանում էին դեպի լուսավոր արահետներ, և մարդկանց լսելի էր դառնում նրա դառնացած հոգու ճիչը:

Հ. Թումանյանը, հինն ու ավանդականը գնահատելուն և արժևորելուն զուգահեռ, առաջավորի ու նորի շեփորահար էր, ինչը ճշմարիտ ստեղծագործողի և մտածողի անբեկանելի դիրքորոշում էր, որովհետև ճշմարտությունը, ազնվությունն ու արդարամտությունը նրա համար ի սկզբանե անվիճարկելի գործոններ էին: Ավ. Իսահակյանի գնահատմամբ. «Հեղեղի պես եկավ նա առասպելական Լոռու վայրենի լեռներից՝ բերելով իր հետ մի ամբողջ բնություն՝ հուռթի և բազմատարր, մի ամբողջ հինավուրց ժողովուրդ՝ իր տոհմիկ երգերով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ… Պղտոր էր սկզբում այս տարերային հեղեղը, բայց, ժամանակի մեջ գտնվելով ու մաքրվելով, բյուրեղացավ ու ոճավորվեց այն սքանչելի անմահ լեգենդների ու պոեմների մեջ, որ կազմում են մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը» (Ջրբաշյան 3):

Ժամանակը ճակատագրական դեր ունի ստեղծագործող անհատի կայացման գործընթացում, որովհետև այն գրողին ոչ միայն իրատեսական գաղափար, իսկ նրա ստեղծագործություններին լիարժեք բովանդակություն է տալիս, այլև աննկատ փոխանցում է ժամանակի ռիթմը՝ երկերում տեսանելի դարձնելով բարության, լույսի, ազատության և ճշմարտության ոգին: Ստեղծագործելու պահերին Թումանյանն իր անլռելի ձայնն ու հոգու ճիչն է բարձրաձայնում մարդկանց սրտերն ու հոգիներն անվերջ բզկտող անարդարությունների, նրանց կյանքի և մտքի անարդարացի սահմանափակումների դեմ, որովհետև ճշմարիտ խոսքն այն աստիճան էր արժեզրկվում, որ մարդն ինքնաբերաբար կարծում էր, թե մտածելը վտանգավոր է և գերադասում էր գլխահակ ու լուռ համակերպվել գոյությունն այդ կերպ քարշ տալու մտքի հետ ու վաղվա օրվա հանդեպ հավատն ընդմիշտ կորցրածի նմանվել: Գրականագետ Լ. Հախվերդյանը, այս ճշմարտությունն ի նկատի ունենալով, գրել է. «Իր ստեղծագործության ոչ մի էջում Թումանյանը բարոյախոս չէ, բայց նրա ամեն մի էջ ունի իր բարոյական խորհուրդը, իր խրատը: Խրատ՝ առանց խստրականության, բարոյականություն՝ առանց բարոյախոսության, նպատակ՝ առանց նպատակաբանության: Այստեղից էլ՝ ներշնչման զորությունը» (Հախվերդյան 40):

Երգիծանքն իր բոլոր ձևերով՝ հումոր, հեգնանք, կատակ, սատիրա, գրոտեսկ, սարկազմ, առկա են նրա երգիծական ստեղծագործություններում, ինչի տիրույթում ներկայացվող իրականությունն աստիճանաբար դառնում է իրականության գաղջ պատկերն արտացոլող հայելի, ինչը բանաստեղծը քողարկում է նուրբ հումորով: Հենց սա է թումանյանական ոճը՝ ներկայացնել կյանքի դատապարտելի երևույթները և մատնանշել դրանցից ձերբազատվելու հստակ ուղիները: Այս անչափ կարևոր փաստը նկատի ունենալով՝ Ա. Դոլուխանյանը գրում է. «Երգիծական ստեղծագործության հիմքում կանխամտածված դրել է կոմիկականի գեղագիտական կատեգորիան, իդեալն արտահայտում է բացասականի ժխտմամբ՝ այն դարձնելով հետադիմականի դեմ պայքարի գլխավոր զենքը: …Թումանյանի կարծիքով ճշմարիտ բոլոր գրողների ստեղծագործությունների աղբյուրը մարդու սիրտն է, իսկ սիրտը պետք է լինի

բարի՝«Արևի նման նայեցեք աշխարհին»,- պատգամում էր բանաստեղծը (Դուլուխանյան 101):

Չարի և բարու հակադրությունը

Հ. Թումանյանը գեղարվեստական մտածողության և ստեղծագործության հիմնական սկզբունքների համար առանց երկմտելու ելակետ է ընդունել իրականության բացարձակապես ճշմարտացի և օբյեկտիվ վերարտադրելը: Հավատարիմ մնալով կյանքի ճշմարտության սկզբունքին՝ նա բացառիկ նրբանկատությամբ ներկայացնում է հերոսների քայլերն ու արարքները, յուրովի իմաստավորում դրանք, որոնք միանգամայն բնական են ու համոզիչ, որովհետև նրանք կայացել ու գործունեություն են ծավալել իրենց ապրած իրականությունում, որի ծնունդն են: Արձակ ստեղծագործություններում բանաստեղծի հեգնանքը ոչ միշտ է ծաղրի վերածվում, այն ինչ-որ պահ քողարկված ծաղր է նաև, որովհետև, արտաքուստ գովեստի խոսքեր շռայլելով ինչ-որ մեկի հասցեին, իրականում հակառակն է ցանկանում ասել՝ բառերը տրամագծորեն հակառակ իմաստով օգտագործելով և երգիծանքին ինքնատիպ երանգ հաղորդելով: Հինն ու ավանդականը գնահատելուն զուգահեռ անարդարությունների դեմ պայքարող գրողը փորձում է գտնել չարիքի դրդապատճառները, բարձրաձայնում է կյանքի արատավոր երևույթները՝ դառնալով դարի հավատավոր զավակ, խոսքի ու ցավի շեփորահար, մարդուն դեպի լուսավոր ճանապարհ ուղղորդող ճշմարտախոս, որպեսզի մարդը, հարկ եղած դեպքում սեփական ես-ը զոհաբերելով, հասնի իր նպատակին: Հենց այս նկատառումով էլ «Իր հանճարեղ պարզ ու շքեղ ստեղծագործության մեջ Հ. Թումանյանը ժողովրդական աշխարհը ներկայացնող հերոսներին հասցրեց ստեղծագործության բարձունքներին՝ հանդես գալով մարդու էպիկական իդեալի և կյանքի իդեալական ձևերի, ճիշտ է, որոշ չափով ուտոպիական, գունավորում ունեցող ծրագրով»,- նկատում է Ս. Աղաբաբյանը (Աղաբաբյան 292):

Հեքիաթն ամենաբարձր ստեղծագործություն համարող բանաստեղծը նախապատվությունը տվել է իրապատում և երգիծական սյուժեներին, որոնք իրապես կենսական ճշմարտություններ են պարունակում հեղինակի բացատրություններին և եզրակացություններին զուգահեռ: Թումանյանի բնորոշմամբ «Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ… հարուստ ու շքեղ աշխարհ է: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում» (Թումանյան 1010): Թումանյանական հեքիաթներն առանձնանում են հատկապես բովանդակության բազմազանությամբ՝ խորիմաստ եզրահանգումներով և ընդհանրացումներով, որովհետև նրանցից յուրաքանչյուրի հիմքում ժողովրդի երջանիկ ու անհոգ ապրելու, կյանքում գոյություն ունեցող տարատեսակ չար ուժերի դեմ և անողոք պայքար մղելու բնածին ձգտում է առկա, որն իրականացվում է իր իսկ կերտած բարի, ազնիվ ու քաջ հերոսների հաղթանակների շնորհիվ: Նա իր հերոսների մեջ տեսավ ապրող, երազող ու մտածող անհատին՝ իր մարդկային զգացմունքներով, ապրումներով և հույզերով, ինչի պատճառով էլ նրա գրական ժառանգության մաս կազմող այդ ստեղծագործություններն իրենց բովանդակությամբ ու գեղագիտական սկզբունքներով շարունակում են արդիական մնալ: Իրապատում հեքիաթներում գործողության տեղը և ժամանակը բացարձակապես չեն նշվում, սակայն դրանք անպայմանորեն իրականության տարրեր են պարունակում՝ կյանքի ճշմարտության խոր ընդհանրացմամբ: Այդ ստեղծագործություններին քնարական երանգ հաղորդելու նպատակով բանաստեղծը մեծ տեղ է հատկացրել լիրիկականությանը և անգամ փոքր ձևի մեջ կարողացել է ճշմարտությունը լիովին բացահայտել: Ի դեպ, թումանյանական հեքիաթներում բարու և չարի հակադրությունն առաջին հերթին բարոյախրատական

նպատակ է հետապնդում, որովհետև հակամարտությունը վերջնաարդյունքում ավարտվում է բարու, ազնիվի ու գեղեցիկի սպասելի հաղթանակով:

Թումանյանն առանձնահատուկ խստությամբ դատապարտում և խարազանում է մարդկանց բացահայտ տգիտությունը, որովհետև մարդիկ, իրենց կամքից անկախ, իրապես խարխափում էին տգիտության ճիրաններում՝ այդպես անիմաստ ապրելով իրենց բաժին ընկած կյանքը: Բանաստեղծի հեգնանքով ասված ոչ մի բառ կամ արտահայտություն ինքնանպատակ չի հնչում: Բնավ էլ զարմանալի չէ, որ նրա հեքիաթները մարդկային հոգեբանության ամբողջական բացահայտում են, որտեղ գրողն իր համակրանքն ու հակակրանքը, սերն ու ցավը, ուրախությունն ու ատելությունը, տագնապն ու հիմնավոր անհանգստությունն արտահայտում է իրատեսական արձակի սկզբունքով և իրեն բնորոշ նուրբ հումորով ու խորիմաստ շարադրանքով: Միանգամայն արդարացիորեն ծաղրելով հասարակական և մարդկային կյանքի տեսանելի տարատեսակ արատները, նպատակային օգտագործելով չափազանցություն, հեգնանք, ծավալուն, դիպուկ և նպատակային համեմատություններ՝ կենսական ճշմարտություններով հագեցած ստեղծագործություններում թեև հանդես չի գալիս սեփական եզրահանգումներով, սակայն հերոսների հանդեպ նրա ունեցած վերաբերմունքից ակնհայտ ուրվագծվում է հեղինակի ներկայությունը: «Թումանյանը հեքիաթի մեջ տեսնում էր ժողովրդի դարավոր իմաստության և կենսափորձի լավագույն խտացումը, որին դիմելով՝ անհատ-հեղինակը կարող է ոչ միայն տոգորվել ժողովրդական ոգու այդ մեծ հարստությամբ, այլև գտնել իր ստեղծագործական անհատականության դրսևորման լայն ասպարեզ»,-իրավացիորեն արձանագրում է Էդ. Ջրբաշյանը (Թումանյան 1009):

Կյանքի լուսանցքում հայտնված մարդուն ներկայացնելիս նրա հեգնանքին միախառնվում է նաև բնական զայրույթը, երբ ժամանակի շունչը չզգացող դատարկագլուխ մեծամիտը հաշտվում է այն մտքի հետ, որ պարզապես ծնվել ու լույս աշխարհ է եկել, զարմանքով պիտի քարշ տա իր գոյությունը: Վերջինս նույնիսկ չի ընդվզում, երբ բացահայտ ոտնահարվում են իր իրավունքները կամ պատվազրկվում է, ընդհակառակը, լուռ ու մունջ հաշտվում է անարդարության հետ:

Այդպիսի հերոսներից է **«Աղքատի պատիվը»** (1894 թ.) պատմվածքի աղքատ գյուղացի Սիմոնը, որն ապրում էր ինքնամփոփ կյանքով, օրավարձով աշխատում և դառը քրտինքով օրվա հաց էր վաստակում: Խելքի պակասության պատճառով համագյուղացիները նրան Շաշ Սիմոն էին ասում, ինչից բնավ չէր վիրավորվում: Ի զարմանս գյուղացիների, նա չափազանց գեղեցիկ կին ուներ, որը կարծես «մի երկնային պարգև էր, որ բաժին էր ընկել աղքատին» (Թումանյան 36): Անբան Սիմոնի կնոջը շատերն էին հիացմունքով նայում, փորձում սիրահետել, ինչի մասին կնոջ դժգոհությանն ամուսինը կարևորություն չէր տալիս: Ի վերջո, մի գիշեր, քաջ գիտենալով, որ Սիմոնը հարևան գյուղում է գիշերել, երկու հոգի ներս են մտնում, բռնությամբ տիրանում նրան ու հեռանում: Մի պահ կարծես Սիմոնի մոտ ինքնասիրության զգացումն արթնանում է, և նա դիմում է դատարան, որտեղ էլ լիովին բացահայտվում է նրա էությունը: Գյուղական դատարանում Սիմոնի գանգատը քննելիս տարաբնույթ կարծիքներ են հնչում: Սիմոնը հոխորտում է, թե արյուն կթափի, սակայն ամեն ինչ գլխիվայր շուռ է գալիս, երբ ներս է մտնում գյուղի հարուստներից Պետրոս աղեն, որը տանուտերի հետ մի քանի բառ փոխանակելուց հետո հանցանք գործած Սանդրոյին առաջարկում է հինգ ռուբլի փոխհատուցում վճարել Սիմոնին ու հաշտվել: Պատվի ինքնատիպ զգացում ունեցող Սիմոնը, որը քիչ առաջ պատրաստ էր կնոջը պատվազրկելու համար արյուն թափել, անգամ մտքերը խառնվել էին իրար, երբ տանուտերը պահանջում է, որ գեղեցկուհի կնոջը բժիշկը պետք է զննի և հաստատի բռնաբարության փաստը, հինգ ռուբլու գայթակղությանը չի դիմանում, վերցնում է գումարը, հաշտության ձեռք մեկնում Սանդրոյին, համբուրվում նրա հետ ու «Էնպես թաքուն դուրս եկավ դատարանից, որ ոչ ոք չնկատի…» (Թումանյան 41): Խոսելով կյանքի և մարդկային էության թումանյանական ըմբռնման մասին՝ Լ. Հախվերդյանը

նկատում է. «Կյանքի և մարդկային էության թումանյանական մեկնաբանությունում մարդու բնությունը պայմանավորված է ոչ թե ի վերուստ, այլ նրա կեցության հանգամանքներով: Սա մարդկային բնության թումանյանական մեկնաբանությունն է առհասարակ. մարդիկ բարի և չար, ազնիվ ու անազնիվ, մեծահոգի ու փոքրոգի ոչ թե ծնվում, այլ դառնում են» (Հախվերդյան 437):

Օրնիբուն աշխատող ու աղքատ մնացող մարդը **«Անխելք մարդ»** (1894 թ.) որոշում է Աստծու մոտ իր բախտից ու ճակատագրից գանգատվելու գնալ և պարզել, թե ե՞րբ է այդ վիճակից դուրս գալու: Ճանապարհին հանդիպում է զօր ու գիշեր թափառող, սակայն կեր չգտնող ու քաղցած մնացող գայլին, սիրունատես մի հարուստ աղջկա, որը չի կարողանում ուրախանալ ու բախտավոր զգալ իրեն և ջրի ափին բուսած մշտապես չոր մնացող ծառին, լսում է նրանց գանգատները՝ խոստանալով խնդրանքները նույնպես փոխանցել Աստծուն: Աստված լսում է նրան, օրհնում և հարցերի հստակ պատասխանները տալիս է: Տունդարձի ճանապարհին նա հրաժարվում է չորացած ծառի տակից ոսկին հանել և հարստանալ՝ պատճառաբանելով, որ շտապում է իր բախտը գտնելու, նույն պատճառաբանությամբ մերժում է նաև աղջկա՝ իր կյանքի ընկերը դառնալու առաջարկը: Քաղցած գայլն ուշադրությամբ լսում է Աստծու պատասխաններն ու իսկույն արձագանքում. «Էլ քեզանից անխելք մարդ ո՞րտեղից գտնեմ, որ ուտեմ» (Թումանյան 183) և ուտում է անխելք ու դատարկագլուխ աղքատին, որն իրական կյանքն անգիտակից կյանքով ապրեց ու համարժեք վախճան ունեցավ: Չվարճալի զրույցի և երկխոսության միջոցով բանաստեղծը ծաղրում է մարդու հիմարությունն ու բթամտությունը: Նրա հեգնանքը նմանատիպ հերոսների էության ու ներաշխարհի անկատարության և սնանկության մասին է: Երևակայությունն ու իրականությունը միմյանցից չզանազանող հերոսն աշխարհին նայում է իր սնամեջ հոգու պատուհանից, ինչը ներկայացվում է խորիմաստ հումորով:

Թումանյանական հումորը բացահայտում է նահապետական կարծրացած մտածողության տեր հասարակ գյուղացու հետամնացությունն ու անկոտրում համառությունը: Գաբո բիձեն **«Գաբո բիձու շերամապահությունը»** (1899թ.) համառ ու իր ասածի տեր անձնավորություն է, ցանկացած նորամուծություն, ինչը նրան խորթ ու հոգեհարազատ չէ, դժկամությամբ ընդունելու հետ մեկտեղ ծիծաղելի բացատրություններ է տալիս: Շերամապահությամբ զբաղվելու մտադրության մասին լսելով՝ նա քմծիծաղ է տալիս, խոսում «նոր ուսում առածների» (Թումանյան 76) մասին, որոնք իրենից առաջ եղածներից ավելին չեն հասկանում, մինչդեռ իրենք կյանքի փորձով ավելի իմաստացած են, իսկ նոր ուսում առածները չեն հասկանում, որ. «Էնպես երկիր կա՝ հավք չի ապրում, էնպես երկիր կա՝ ցորեն չի դուրս գալի, ամեն աշխարհք մի տեսակ բնություն ունի» (Թումանյան 77),- պնդում է նա չարդարացվող համառությամբ: Գաբոն հաշվի չի նստում ոչ մի փաստի հետ, անտեսում է ամեն ինչ՝ ձգտելով հասնել իր նպատակին՝ ապացուցել, որ շերամապահությունը եկամտաբեր չէ: Թումանյանը միանգամայն պարզ ու հասկանալի հումորով ներկայացնում է ինքնահավան Գաբո բիձու պարզունակ մտածողությունը, նրբանկատորեն բացահայտում նրա անմիջական ու սնամեջ դատողությունները:

Չարի և բարու հակադրությունն իր բազմազանությամբ պարզորոշ երևում է **«Ոսկու կարասը»** (1908 թ.) հեքիաթում: Երբ դաշտում գտած ոսկու կարասը գյուղացին մեծահոգաբար ցանկանում է հարևանին զիջել, հայտնվում է ագահության խորհրդանիշ թագավորը և մեծամտորեն հայտարարում. «Ոչ քունն է, ոչ դրանը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել, իմն է» (Թումանյան 209): Թումանյանը ոսկու կարասի պատկերի միջոցով կարևոր բացահայտում է անում խելամիտ ու անկաշառ իմաստունների օգնությամբ: Երբ գյուղացիները կամ ներկաներից որևէ մեկը մոտենում է կարասին, ոսկիներն է տեսնում, իսկ երբ ագահ թագավորն է մոտենում, կարասի պարունակությունը անակնկալ փոխակերպվում է օձի: Որքան էլ տարօրինակ է, թագավորի իմաստունները երևույթին հստակ բացատրություն են

տալիս՝ նախապես արքային զգուշացնելով, որ անտեղի չբարկանա. «Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար» (Թումանյան 210): Անակնկալի եկած թագավորը լռում է, որից հետո որոշում են հողատիրոջ և գյուղացու տղային ու աղջկան ամուսնացնել և ոսկին նվիրել նրանց: Այս որոշմանն անմիջապես հաջորդում է խորիմաստ դարձվածքը՝ «Բարին էստեղ, չարն էն ագահ թագավորի մոտ» (Թումանյան 211):

«Անհաղթ աքլորը» (1909թ.) հեքիաթն առանձնանում է հեգնական մեկնաբանությամբ, որովհետև թագավորը ոչ թե մեծարվում կամ պաշտամունքի առարկա է ներկայացվում, այլ ծաղրանքի է ենթարկվում քուջուջ անելիս ոսկի գտած և նրա փորում բռնությամբ հայտնված աքաղաղի կողմից: Երբ թագավորը վերջնականապես համոզվում է, որ աքաղաղից խլած ու ետ վերադարձրած ոսկու պատմությունը ամենքին հասանելի դառնալու վտանգը գնալով ահագնանում է, որովհետև շատախոս ու ճշմարտախոս աքլորը նրա փորում անգամ ձայնը չի կտրում, նազիր-վեզիրներին հրամայում է թրերը պատրաստ պահել: Աքլորի հերթական ծուղրուղուից հետ նրանք թրատում են թագավորին, իսկ աքլորը փախչում, բարձրանում է կտուրն ու ծուղրուղու կանչելով՝ իր հաղթանակն է ազդարարում, ինչը ժողովրդի անհաշտ վերաբերմունքի վկայությունն է բռնակալ իշխանավորի հանդեպ: Այս հեքիաթի իմաստն այն է, որ մարդ արարածն իր նպատակին հասնելու և ցանկությունն իրականություն դարձնելու համար պետք է կշռադատված համառություն ցուցաբերի: Հարկ է նկատել, որ բանաստեղծի հեգնանքը ոչ միշտ է բացահայտ ծաղրի վերածվում, այն պարզապես քողարկված ծաղր է, որովհետև, արտաքուստ գովաբանելով ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան, իրականում հեղինակը հակառակն է ցանկանում ասել՝ բառերը տրամագծորեն հակառակ իմաստով օգտագործելով և երգիծանքին յուրատեսակ երանգ հաղորդելով: Հենց այսպես են զարգանում **«Անհաղթ աքլորը», «Բարեկենդանը», «Կիկոսի մահը» և «Սուտլիկ որսկանը»** հեքիաթները:

«Նեսոյի քարաբաղնիսը» (1910 թ.) պատմվածքի բովանդակության բացահայտման հիմնական միջոցը հերոսների՝ երգիծական երանգ ունեցող խոսքն է: Գեղարվեստական արտացոլման սկզբունքով և ակնարկային նկարագրության եղանակով բացահայտվում է տիպական երևույթը: Նեսոյի պատմություններին զուգահեռ ներկայացվում են Կիրակոսի տառապանքները, որոնք աստիճանաբար զարգանում են ծավալվող իրադարձություններին համընթաց: Հիվանդն աղաղակում է, գոռում, որ այլևս անկարող է դիմանալ, խեղդվում է, փորձում է ազատվել կապանքներից, սակայն Նեսոն մեծահոգաբար հանգստացնում է նրան, որ ոչինչ էլ չի պատահի, պարզապես դիմանալ է պետք ու համբերել: Նեսոյի հետաքրքրաշարժ պատմությունները քարաբաղնիսի, արջը բնից հանելու և Աբգարի վախկոտության մասին իրական կյանքի գեղարվեստական պատկերներն են: Զավեշտականն, անշուշտ, հիվանդի մահվանը ներկաներից մեկի պարզունակ արձագանքն է. « Տո՛, դե ճակատի գիր ա, էլի…» (Թումանյան 106):

Դրան հակառակ, **«Կիկոսի մահը»** (1913 թ.) հեքիաթում, երգիծանքով խոսելով մարդու՝ ոչնչով չարդարացվող վախերի, սահմանափակ ու կաղապարված մտածողության մասին, չթաքցվող ու բացահայտ ծաղրանքով է խոսում այն մասին, որ մարդիկ իրականում երբեմն սեփական անհիմն ու ոչնչով չարդարացվող երևակայության գերին են դառնում՝ հավատալով անհավատալիին՝ «…վեր ելավ ծառին, ցած ընկավ քարին. . . » (Թումանյան 264): Թումանյանի բացահայտ հեգնանքն ակնհայտորեն ուղղված է կյանքի բացասական երևույթին կանխամտածված կամ անգիտակցաբար ինչ-որ անիմաստ արժանիք վերագրող անձին՝ դրանով ցույց տալով դրա լիակատար բացակայությունն ու անլիարժեքությունը: Անիրատեսականն իրական ներկայացնող մարդիկ իրենց իսկ մեղքով ոչ միայն սեփական ձեռքի խաղալիք, այլև ծաղրի առարկա են դառնում՝ չգիտակցելով այդ ամենի ծանր հետևանքները: Իրականում կյանքը որքան ողբերգական, նույնքան էլ զավեշտական

է, որովհետև դրանց միակ հեղինակը մարդ արարածի կաղապարված մտածողությունն է: Հեքիաթում բանաստեղծի հեգնանքն ուղղված է կյանքի բացասական երևույթին ինչ-որ անհավատալի ու անիրատեսական արժանիք վերագրող անհատին՝ դրանով ցույց տալով դրա լիակատար բացակայությունն ու անարժանահավատությունը: Վկայությունը չծնված ու լույս աշխարհ չեկած Կիկոսն է, նրա անարժանահավատ մահը, երբ չամուսնացած աղջկա երևակայական որդին իբր ճակատագրի հեգնանքով դրամատիկ վախճան է ունենում: Խոսելով ողբացող աղջիկների մասին՝ հեղինակը հպանցիկ ակնարկ է անում. «Սրանց միջի խելոքը հերն է լինում» (Թումանյան 267): Երգիծանքով հստակ ընդգծելով, որ հայրն իրապես բացարձակ անխելք է, որովհետև նա միանգամայն անսպասելիորեն առաջարկում է չծնված ու լույս աշխարհ չեկած Կիկոսի մահվան առիթով ժամ ու պատարագ անել, քելեխ տալ: Սահմանափակ մտածողության տեր մարդկանց մասին ծաղրանքը վկայում է, որ, անհավատալիին հավատալով, մարդիկ սեփական երևակայության գերին են դառնում: Ժողովրդի անսպառ ոգին և փիլիսոփայությունը ստեղծագործության նյութ դարձնող բանաստեղծը գյուղաշխարհի հետամնաց կյանքի վերարտադրումով ոչ թե բացասական վերաբերմունք է արթնացնում ընթերցողի մեջ, այլ լիարժեք բացահայտում է իրական կյանքի հակասությունները:

Հարկ է նկատել, որ թումանյանական հումորը միանշանակ դառնության երանգ ունի՝ կապված տխուր մարդկանց ճակատագրերի հետ՝ կենսակերպի միօրինակության, առօրյայի սահմանափակվածության պատճառով, ինչը նրբանկատորեն հուշում է, որ ամեն գեղեցկություն իր խորքում կարող է նաև անմարդկային ինչ-որ բան ունենալ: Խոսելով մշակութաբանական փոխակերպման գրական մեկնության մասին և անդրադառնալով գեղարվեստական աշխարհների՝ բանահյուսության և գրականության միջև գոյություն ունեցող սահմանաբաժանին՝ Վ. Եփրեմյանը բարձր է գնահատում Հ. Թումանյանի վարպետությունը՝ «Հայ գրականության մեջ իրոք առանձնակի դիրք են գրավում Հովհ. Թումանյանի բանահյուսակերպ և բանահյուսահիմք ստեղծագործությունները, նրանցում առավել շոշափելի է ժամանակի մեջ անխաթար տևելու բացառիկ հատկությունը», այնուհետև ավելացնում՝ «Կիկիոսի մահը» հեքիաթը առանձնանում է իմաստային և իմացաբանական ընդարձակ «աշխարհագրությամբ», պատումի բազմաշերտ կազմաբանման սկզբունքով» (Եփրեմյան 24):

«Քաջ Նազարը» (1912թ.) անկրկնելի հեքիաթի սյուժեն վերցված է ժողովրդական բանահյուսությունից, որը մշակվել, հղկվել ու դարձել է խորիմաստ և սրամիտ ստեղծագործություն, ուր անգիտակից ու միամիտ ժողովուրդը կուրորեն հավատում է վախկոտ, ստախոս, հիմար և անարժան մարդուն: Այդ նույն ժողովրդի կույր հավատի և հանդուրժողականության պատճառով Նազարը անշտապ շարունակում է իր հաղթական երթն ու իր կամքից անկախ հայտնվում թագավորական գահին: Թումանյանի քննադատությունն այստեղ ինքնատիպ է իր բացառիկությամբ: Նա դատապարտում է սնապարծությունը, փառասիրությունը, տգիտությունն ու վախկոտությունը: Ծաղրելու հետ մեկտեղ մերժում է դրանք՝ միաժամանակ բարձրացնելով կյանքի առաջադրած խնդիրների լուծման անհրաժեշտությունը: Իրեն գերմարդ համարող և երևակայող հերոսի կերպարի ամբողջական բացահայտումը Թումանյանը բացառիկ նրբանկատությամբ իրականացնում է Նազարի ծիծաղելի ինքնադրսևորումների և ժողովրդի հետ ունեցած տարատեսակ հարաբերությունների միջոցով: Խեղաթյուրված երևակայությամբ և ստելու բացառիկ մոլուցքով տարված հերոսի այդ դրսևորումները վախկոտ և անարժան մարդուն բնորոշ հատկանիշներ են: Անսխալ ներկայացնում է Նազարի ակնհայտ վախկոտությունն ու անճարակությունը, որոնք ժողովրդի կողմից ընդունվում են որպես քաջագործության դրսևորում, որից հետո ճանճասպանն ու վախից «վագր հեծած» Նազարի անհասկանալի պաշտամունքը անասելի մասշտաբների է հասնում: Երբ վերջինս լսում է պատերազմի լուրը, ցանկանում է

սարսափահար փախչել հայրենի գյուղ, մինչդեռ շրջապատում կարծում են, թե պատրաստվում է թշնամու վրա հարձակվել: Զավեշտի են հասնում նրա զարմանալի և նույնքան անհավատալի «քաջագործությունների» մասին քամու արագությամբ տարածվող ստահոդ լուրերը: Բանն այնտեղ է հասնում, որ ավազակ հսկաները իրենց նրա խոնարհ ծառաներ են հայտարարում, հլու-հնազանդ ենթարկվում ու քրոջն ամուսնացնում Նազարի հետ: Արքայական գահին բազմելուն մի քայլ էր մնացել ընդամենը, որից հետո Նազարն անգամ զարմանում է, որ աշխարհը հայտնվել է իր բռան մեջ, ինչպես ցանկանա, այնպես կվարվի ժողովրդի հետ: «Բախտ ունե՞ս՝ քեֆ արա...», **-** մեծամտորեն հայտարարում է նա (Թումանյան 263):

Ակնհայտ է, որ կոմիզմը բխում է հերոսի բնավորությունից, իսկ ծիծաղը ինքնաբերաբար ծնվում է նրա էության մեջ առկա հակադրությունից ու անհամապատասխանությունից: Նազարն արքայական գահին բազմում է բախտի բերմամբ՝ անկառավարելի ու տգիտության խորհրդանիշ դարձած ամբոխի աջակցությամբ: Իրեն բնորոշ խորիմաստությամբ բանաստեղծը չի թաքցնում, որ հերոսը գահին հայտնվում է ամենավտանգավոր և անկառավարելի ուժի՝ տգիտության զոհ ամբոխի աջակցությամբ՝ հստակ տարբերակելով ամբոխն ու ժողովուրդը: Եթե առաջինը ցանկացած ժամանակ միմիայն բացասական դերակատարում ունի պատմության մեջ, և նրա դառը պտուղներն իրենց վաղ թե ուշ զգացնել են տալու, ապա ժողովուրդը իմաստուն, սթափ մտածող և իրավիճակը միանգամայն ճիշտ և սառնասրտորեն գնահատող ուժ է, գիտակցաբար է կերտում իր պատմությունը և այն անշտապ տանում իր նախանշած ուղիով: «Թումանյանի իմաստությունը նրան հասցնում, բերում է Նազարի իրավիճակի ճիշտ լուծման՝ նրա սարսափեցնող մշտագոյությանը»,- իրավացիորեն գրում է Ե. Ալեքսանյանը (Գրականագիտական և բանասիրական ուսումնասիրություններ 61): Ի դեպ, նազարականությունը ազգային կեղծ հերոսի ապացույցն է, որի կայացմանն ու հարատևությանը նպաստում է նրան կուրորեն հավատացող և երկրպագող հասարակությունը: Հենց այդ նկատառումով էլ բանաստեղծը նրա յուրաքանչյուր արարք ներկայացնում է հումորի և սարկազմի, կատակերգականի և ողբերգականի զուգադրմամբ՝ հերոսին ներկայացնելով որպես հակահերոս: Իրականության և երևակայության համադրմամբ լիարժեքորեն բացահայտվում է Նազարի գաղափարական սնանկությունը, դատարկաբանությունը, ստորաքարշությունն ու ստրկամտությունը. Նազարը հավերժ գահին է բազմելու, քանի դեռ մարդկանց գիտակցությունը մթագնած է, կամ էլ խուլ ու կույր են ձևանում:

Խոսելով Հ. Թումանյանի գրական ժառանգության մասին՝ Հ. Թամրազյանը նկատում է. «Սկսած առաջին իսկ երկերից Թումանյանը փորձում է տեսնել կյանքի ներքին բարդությունները, երևույթների ներքին պատճառավորված կապերը և հակասությունները, որոնք հսկայական նյութ են տալիս գեղարվեստին՝ բերելով կենսական-հոգեկան դրամայի անսպառ նյութ: Թումանյանը ձգտում է ստեղծել բարդ կյանքի բարդ արվեստ՝ գլխավոր ուշադրությունը դարձնելով անհատի անձնական և ժողովրդի հավաքական հոգեբանության վրա, տեսնելով նրանց ներքին մեծ առնչությունը» (Թամրազյան 393): Թումանյանը, կանխամտածված չարն ու բարին հակադրելով, միախառնում է՝ վեր հանելով այն արատավոր երևույթները, երբ միշտ չէ, որ հաջողությունն ուղեկցում է արժանավորին: Զավեշտի պայմաններում անարժանը նույնպես կարող է բարձր դիրքի հասնել և արհամարհել ու ծաղրել հասարակությանն ու շրջապատի մարդկանց: Ժողովրդական ոգուն հավատարիմ բարին հաղթում է չարին **(«Ոսկու կարասը», «Կռնատ աղջիկը», «Խելոքն ու հիմարը», «Տերն ու ծառան», «Անխելք մարդը»)**: Սեղմ և նպատակասլաց պատմելաձևով հեքիաթներում իր պատումով անտեսանելի, բայց իրական կապ է ստեղծում ընթերցողի հետ, որն առանց երկմտելու հավատում է դեպքերի և դեմքերի ճշմարտացիությանը: Գեղարվեստական ճշմարտության հասնելու նպատակով առանց նախատիպերի հերոսներ ընտրելով՝ Հ. Թումանյանը երկու հարց է լուծում՝

պահպանել և սերունդներին փոխանցել հասարակական կյանքում առկա մարդկային առաքինությունները և մերժել բացասական երևույթները: Անդրադառնալով հայ գրականության մեջ Հ. Թումանյանի դերին՝ Հ. Սուխաթյանը գրում է. «Նրա ոգևորության ազդակը, ստեղծագործական պաթոսը նահապետական բնաշխարհում դեգերող ժողովրդական աղբյուրն է: Իր բանաստեղծական հյուսվածքների ծաղիկները նա քաղել է ժողովրդական այն ծաղկանոցից, որի թարմաշունչ գույներն ու վառ պատկերների բուրմունքը հիշեցնում են բնական տնտեսության շրջանը վերապրող երկրագործ ժողովրդի պատկերը» (Սուրխաթյան 78):

Եզրակացություն

Իրականության գեղարվեստական վերարտադրման սեփական սկզբունքին հավատարիմ՝ Հ. Թումանյանը կյանքի իրական փաստերից նրբանկատորեն է ընտրություն կատարում՝ պատկերվող երևույթների և դեպքերի հանդեպ հեղինակային վերաբերմունքը և տեսակետը բնավ չթաքցնելով:

Թումանյանի երգիծանքը՝ դատապարտելի երևույթը ծաղրելը՝ նրան կանխամտածված ինչ-որ արժանիքներ վերագրելով, այն բացասաբար գնահատելը և իրականության երբեմն անիրատեսական վերարտադրումը չափազանց բնական է, չափից ավելի պարզ և դյուրըմբռնելի: Բանաստեղծի երգիծանքի սլաքն ուղղված է նաև համընդհանուր իրողություններին: Նա իրեն բնորոշ հումորով է ներկայացնում իր տեսածն ու լսածը, զգացածն ու ապրածը, իրեն մտահոգողն ու հուզողը, որոնք ընթերցողի դատին է հանձնում բնական, տիպական գծերով, առանց ավելորդ գունազարդումների: Իրական կյանքը պատկերելով բոլոր մանրամասնություններով՝ նկարագրությունների անկրկնելի վարպետը բացարձակապես աչք չի փակում կյանքի ստվերոտ կողմերի և բացասական երևույթների առաջ և հմտորեն անհատականացնում է հերոսներին՝ երբեմն նրանց նաև հավաքական կերպար ներկայացնելով:

Թումանյանը բազմախորհուրդ հումորով լիովին բացահայտում և ներկայացնում է հերոսի մտածողության սնանկությունը, քայլերի և արարքների անիմաստ լինելը, ստեղծում է կատարյալ ծաղրական վիճակ՝ ցույց տալով հերոսի ոչնչով չարդարացվող երևակայությունը, կյանքը սթափ գնահատելու անկարողությունը, մտածողության և ներաշխարհի սահմանափակությունը: Իրականությունն ու երևակայությունը միմյանցից չզանազանող նրա գրական հերոսը աշխարհին նայում է իր սնամեջ հոգու փակ պատուհանից, ինչը Հ. Թումանյանը գիտակցաբար ներկայացնում է նուրբ, բայց խորիմաստ հումորով՝բացահայտելով հերոսի մտածողության սնանկությունը, անիմաստ քայլերն և արարքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Աղաբաբյան, Սուրեն. *Արձագանքներ*. Երևան, Հայպետհրատ, 1968:
2. *Գրականագիտական և բանասիրական ուսումնասիրություններ*, Երևան, 2004:
3. Դոլուխանյան, Ալիտա. *Դրվագներ հայ գրականության մտքի պատմությունից*. Երևան, 2009:
4. Եփրեմյան, Վաչագան. *20-րդ դարի հայ գրականություն. Մշակութաբանական ենթատեքստեր*. Երևան, 2007:
5. Թամրազյան, Հրանտ. *Գրական դիմանկարներ, հոդվածներ*, Երևան. 1975:
6. Թումանյան, Հովհաննես. *Երկերի լիակատար ժողովածու*. հ 5, Երևան, 2022:
7. Հախվերդյան, Լևոն. *Թումանյանի աշխարհը*. Երևան, 1968:
8. Ջրբաշյան, Էդուարդ. *Թումանյանի պոեմները*. Երևան, 1986:
9. Սուրխաթյան, Հարություն. *Գրականության հարցեր*. Երևան, 1970:

WORKS CITED

1. Aghababyan, Suren. *Ard'aganqner. Erevan, Haypethrat, [Responses. Yerevan, Haypethrat]* 1968. (in Armenian)
2. Doluxanyan, Aelita. *Drvagner hay grakanut'yan mtqi patmut'yunic. Erevan, [Episodes from the History of Armenian Literary Thought. Yerevan]* 2009. (in Armenian)
3. *Ep'remyan*, Vachagan. *20-rd dari hay grakanot'yun. Mshakut'abanakan ent'ateqter. Erevan, [20th Century Armenian Literature: Cultural Contexts. Yerevan]* 2007. (in Armenian)
4. *Grakanagitakan ev banasirakan usumnasirut'yunner. Erevan, [Literary and Philological Studies. Yerevan]* 2004. (in Armenian)
5. Haxverdyan, Levon. *T'umanyani ashxarhy'. Erevan, [Tumanyan's World. Yerevan]* 1968. (in Armenian)
6. Jrbashyan, E'duard. *T'umanyani poemnery'. Erevan, [Tumanyan's Poems. Yerevan]* 1986. (in Armenian)
7. T'amrazyan, Hrant. *Grakan dimankarner, hodvac'ner. Erevan, [Literary Portraits, Articles. Yerevan]* 1975. (in Armenian)
8. T'umanyan, Hovhannes. *Erkeri liakatar jhoghovac'u, h 5. Erevan, [Complete Collection of Works, vol. 5. Yerevan]* 2022. (in Armenian)
9. Surxat'yan, Harut'yun. *Grakanut'yan harcer. Erevan, [Issues of Literature. Yerevan]* 1970. (in Armenian)

CHARACTERISTIC FEATURES OF H. TUMANYAN'S PROSE SATIRE

ANI GHAZARYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Literature after Manuk Abeghyan, researcher,
Ph.D. in Philology,
Yerevan, the Republic of Armenia

The article examines the distinctive features of satire present in Hovhannes Tumanyan’s prose works, including short stories and fairy tales, as well as the artistic techniques through which the writer expressed his uniquely individual aesthetic taste and his unparalleled creative imagination.

The aim of the article is to analyze the nature of satire in Tumanyan’s satirical writings and to explore the writer’s exceptional figurative thinking, while also providing a thorough interpretation of the psychological portrayal of the characters found in these literary works.

The subject of the study is the author’s satirical prose compositions that could be included in the analysis, and the methodology is based on comparative and structural approaches.

The scientific novelty of the article lies in revealing Tumanyan’s original satirical techniques by drawing parallels and points of comparison among the selected works.

The study concludes that in the aforementioned writings, satire is directed against negative and socially unacceptable phenomena of life.

The poet, who regarded folklore as the primary source of artistic literature, sought ideals there, selected his heroes, and shaped them into unforgettable literary characters.

Keywords: *Hovhannes Tumanyan, satire, plot, poet, evil, good, forgery, literary image, creative imagination, inner world of the protagonist.*

ОСОБЕННОСТИ ПРОЗАИЧЕСКОЙ САТИРЫ О. ТУМАНЯНА

АНИ КАЗАРЯН
научный сотрудник Института литературы им. Манука Абегяна Национальной академии наук Республики Армения, кандидат филологических наук, г. Ереван, Республика Армения

В статье рассматриваются исключительные особенности сатиры, представленные в прозаических произведениях Ованнеса Туманяна, в частности в рассказах и сказках, а также художественные приёмы, с помощью которых писатель выразил свой самобытный эстетический вкус и неповторимое творческое воображение.

Целью исследования является анализ сатиры в произведениях Туманяна, раскрытие своеобразия его образного мышления и выявление особенностей авторского художественного метода. Особое внимание уделяется всестороннему исследованию психологических характеристик персонажей и их роли в раскрытии идейного содержания произведений.

Объектом исследования являются сатирические прозаические тексты писателя, включённые в данную работу, а методологическую основу составляют сравнительный и структурный методы анализа.

Научная новизна статьи заключается в выявлении оригинальных сатирических приёмов Туманяна путём проведения параллелей и сопоставлений между его произведениями.

Делается вывод о том, что сатира в указанных произведениях направлена против отрицательных, социально неприемлемых и нравственно порицаемых явлений жизни.

Поэт, считавший народное творчество главным источником художественной литературы, именно в нём искал идеалы, выбирал героев и создавал яркие, запоминающиеся и художественно обобщённые образы.

Ключевые слова: *Ованес Туманян, сатира, сюжет, поэт, зло, добро, подделка, литературный образ, творческое воображение, внутренний мир главного героя.*

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՐԲԱՊԱՏՈՒՄ. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՈՂԲԸ» «ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔՈՒՄ» *

ՀՏԴ 82. 9 DOI: 10.52063/25792652-2025.3.26-133

ԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ,
ք. Վեդի, Հայաստանի Հանրապետություն
kostanyananna5@gmail.com
ORCID: 0009-0005-1213-1838

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել Մովսես Խորենացու «Ողբի» ընդգրկումը տպագիր «Յայսմաւուրքներում»՝ քննելով դրա տեքստային տեղաբաշխման տրամաբանությունը, հատվածի ընտրության հիմքերը, գաղափարական շեշտադրումները և ժանրային առանձնահատկությունները, քանի որ այն դասական առումով սրբի վարք չէ: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև այն հանգամանքին, որ 1834 թ. (տպագիր հրատարակությունները՝ 1706, 1706–1708, 1730, 1834) տարբերակում «Ողբը» բացակայում է՝ ընձեռելով հնարավորություն՝ հասկանալու դրա խմբագրական ընտրության կամ գաղափարական գրաքննության դրդապատճառները:

Հետազոտությունը արդիական է, քանի որ մինչ օրս բացակայում է գիտական վերլուծություն, որը դիտարկում է «Ողբի» ընդգրկման խնդիրները «Յայսմաւուրքներում»:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել «Ողբի» ընդգրկման և տեղաբաշխման սկզբունքները տպագիր «Յայսմաւուրքներում», պարզել վերարժևորման ձևերը սրբապատում ժանրում, բացատրել 1834 թ. հրատարակությունից բացակայության հնարավոր պատճառները և գնահատել տպագրական ավանդույթի ու պատմաքաղաքական միջավայրի ազդեցությունը:

Հոդվածում կիրառվում են երեք փոխլրացնող մոտեցումներ՝ տեքստաբանական և համեմատական վերլուծություններ, պատմաքաղաքական և գաղափարական մեկնաբանություն:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ Մ. Խորենացու «Ողբի» ընդգրկումը «Յայսմաւուրքներում» բացառիկ երևույթ է, քանի որ այն դուրս է սրբի վարքի և նահատակության դասական ձևաչափից: Ուստի «Ողբի» ուսումնասիրությունը ոչ միայն բացահայտում է հայ միջնադարյան ժառանգության ժանրային բազմաշերտությունը, այլև հնարավորություն է տալիս նոր դիտանկյունից մեկնաբանելու հոգևոր հիշողության ձևավորման գործընթացները:

Հիմնաբառեր՝ *Մովսես Խորենացի, «Ողբը», «Յայսմաւուրք», տպագիր տարբերակներ, հայ միջնադարյան գրականություն, պատմագրություն, սրբապատում ժանր:*

* Հոդվածը ներկայացվել է 29.09.2025թ., գրախոսվել՝ 25.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Ներածություն

Հայ միջնադարյան գրավոր մշակույթում «Յայսմաւուրք» ժողովածուն զբաղեցնում է առանցքային տեղ՝ իբրև սրբերի հիշատակներին նվիրված բարոյախրատական պատմություն և քրիստոնյաների համար պարտադիր ամենօրյա հիշեցում: «Հայսմավուրք» ժողովածուն Հայ եկեղեցու ծիսական գրքերից մեկն է: Այն պարունակում է տարվա յուրաքանչյուր օրը նահատակված կամ ննջած սրբերի համառոտ վկայաբանություններն ու վարքերը (Պետրոսյան 5):

Նշենք՝ «Յայսմաւուրքը» ներկայացնում է քրիստոնեական արժեքների տարածման, նահատակության գաղափարի հիմնավորման և բարոյական վարքի ձևավորման մի համակարգ: Այս հավաքածուները միաժամանակ հայ միջնադարյան արձակի բազմաշերտ զարգացումների վկայություններն են. առանց այս հավաքածուների ուսումնասիրության մեր պատկերացումները միջնադարյան գրականության մասին կլինեին ոչ լիարժեք և թերի: Նույնիսկ կա կարծիք, որ հայ միջնադարյան գրականության որոշ երևույթներ անխուսափելիորեն կապված են այդ ժողովածուների հետ, և դրանց հատկությունների ու զարգացման միտումների բացահայտմամբ միայն հնարավոր կլինի ուրվագծել գրական որոշ տեսակների զարգացման ընթացքը, ուղիներն ու առանձնահատկությունները (Ավդալբեգյան 7):

«Յայսմաւուրք»-ի ծագման մասին պատմությունները սկսել են գրի առնվել դեռ վաղ ժամանակներից: Սուրբերու վկայութեանց պատմութիւնները շատ կանուխ սկսած էին գրի առնուիլ, այնպէս որ Դ. դարուն Եւսեբիոս Կեսարացի կրնար մեծ հաւաքածոյ մը ձեւացնել զանազան ժամանակներու եւ այլեւայլ վայրերու մէջ նահատակուած վկաներու վարքերը ժողվելով (Պողարեան 47-48):

Այսպես, «Յայսմաւուրք» ժողովածուներն ի սկզբանե շրջանառվել են ձեռագիր տարբերակներով, որոնք վկայում են ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի գրչության բարձր մակարդակի, այլև դրանց լայն տարածման և կիրառության մասին՝ եկեղեցական կյանքում: Իսկ «Յայսմաւուրք»-ի հրատարակությունը թե՛ ծավալի, թե՛ տպագրական բարդության և թե՛ ձեռագրի բնագիրը հրատարակության պատրաստելու պատճառով չէր համարձակվել ձեռնարկել որևէ տպագրիչ՝ պայմանավորված 16-17-րդ դարերի տպագրական սահմանափակ տեխնիկական հնարավորություններով: Մեծ զրկանքների և դժվարությունների գնով այն իրականացնելը 18-րդ դարի սկզբին վիճակված էր Գրիգոր Մարզվանեցուն (Կորկոտյան 36):

Խիստ ծավալուն գրքի տպագիր տարբերակները՝ 1706, 1706–1708, 1730, 1834 թթ. հրատարակությունները, բացահայտում են ոչ միայն տոնացուցային կանոնակարգումի ընթացքը, այլև փոխանցում են միջնադարյան հոգևոր և ազգային մտածողության գագաթները: Թեև այս ժողովածուները կառուցվածքային առումով հիմնված են սրբերի կենսագրական նյութի վրա, տպագիր տարբերակներում հաճախ ներառված են նաև այդ ժանրից դուրս, սակայն գաղափարապես համարժեք տեքստեր: Նման դեպքերից է Մովսես Խորենացու անունով մեզ հասած «Ողբը»՝ զետեղված «Պատմութիւն Հայոց» պատմագրական երկի վերջաբանում:

«Պատմութիւն Հայոց» երկը՝ որպես հայ ազգային ինքնաճանաչման առանցքային գրավոր հուշարձան, իր վերջին՝ «Ողբը» բաժնով ամփոփում է պատմահայր Խորենացու հայրենասիրական ծրագրի ամենախտացված ձևակերպումը: Վերջաբանի այս գլուխը միաժամանակ հանդես է գալիս որպես մեզ հասած հնագույն գրական ողբի նմուշներից մեկը: Խորենացին այստեղ պատկերում է Հայաստանի պետականության անկումից հետո ձևավորված քաղաքական քայքայման և բարոյահոգևոր նահանջի խորը պատկերը՝ ընդգրկելով գրեթե բոլորին՝ բացի ռամիկներից: Այս առումով ուշագրավ է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունից ընտրված «Ողբի» ընդգրկումը «Յայսմաւուրք» ժողովածուում՝ իբրև սրբապատում բնույթի ժողովածուում ներառված պատմագեղարվեստական

պատում: Մովսես Խորենացու «Ողբի» հատվածը ընդգրկված է «Յայսմաւուրքի»՝ 1706, 1706–1708 և 1730 թթ. տպագրություններում, մինչդեռ 1834 թ. հրատարակված տարբերակում այն բացակայում է: Այս բացակայությունը միաժամանակ կարելի է մեկնաբանել ժանրային, գրաքննության պայմանների, բնագրային ավանդույթի սահմանափակության և հեղինակային վերագրումների փոփոխականության համատեքստում: Տեքստի բացառումը վկայում է ոչ միայն սրբապատումի ժանրի կանոնակարգման, այլև եկեղեցական տպագրության ընտրողական քաղաքականության մասին, որն ուղղված էր դավանական և ազգագրական վտանգների վերահսկմանը: Մովսես Խորենացու «Ողբի» ընդգրկումը «Յայսմաւուրքում» բացառիկ երևույթ է: Խորենացու «Ողբի» ընտրությունը հստակ ազդակ է, որ քրիստոնեական բարոյագիտության և պատմական ազգային ինքնության միջև գործել է խորը գաղափարական փոխառնչություն:

Ինչու՞ է 1834 թ. հրատարակված «Յայսմաւուրքում» բացակայում «Ողբը»

Ինչպես նշվել է, «Յայսմաւուրքը» տպագրվել է 1706, 1706–1708, 1730 և 1834 թթ., սակայն Մովսես Խորենացու «Ողբի» հատվածը ընդգրկված է միայն առաջին երեք տպագրություններում: Այս փաստը ինքնին մատնանշում է տեքստի խմբագրական ընկալման փոփոխական բնույթը՝ պայմանավորված ինչպես ժանրային, այնպես էլ գաղափարական և քաղաքական գործոններով:

Առաջին հերթին՝ 18-րդ դարի տպագրական ավանդության մեջ դեռևս նկատվում է ազատություն սրբապատում ժողովածուների կառուցվածքում: Այդ ժամանակահատվածում հնարավոր էր ընդգրկել ոչ միայն նեղ իմաստով սրբերի վարքեր, այլև պատմագրական բնույթի կամ բարոյախրատական տեքստեր: Այս համատեքստում Մ. Խորենացու «Ողբը», չնայած իր պատմագրական բնույթին, կարող էր ընկալվել որպես հոգևոր-քարոզչական արժեք ունեցող տեքստ, որը լրացնում էր ժողովածուի գաղափարական ամբողջությունը:

Սակայն 1834 թ. հրատարակության կառուցվածքը բնորոշվում է ավելի խիստ կարգապահությամբ և սրբապատում ժանրի կանոններին հավատարիմ խմբագրական մոտեցմամբ: Այստեղ առաջնային է դառնում դասական սրբապատումի սահմանափակումը՝ սրբի վարք, նահատակություն և աղոթքներ: Այսպիսով՝ Խորենացու «Ողբը» դուրս է մնում ընտրության շրջանակից արդեն ժանրային «մաքրության» նկատառումներով:

Բացի ժանրային մոտեցումից, կարևոր է ընդգծել նաև քաղաքական և գաղափարական գործոնը: «Ողբը» պարունակում է արտահայտված ազգային-քաղաքական շեշտադրումներ. այն անդրադառնում է հայոց թագավորության կործանմանը, եկեղեցու թուլացմանը և օտար տիրապետությունների նվաճումներին: Այսպիսի շեշտադրումները 1830-ականների Կ. Պոլսի միջավայրում, երբ հայ եկեղեցին ու համայնքը գտնվում էին օսմանյան իշխանությունների քաղաքական վերահսկողության ներքո, կարող էին ընկալվել իբրև գաղափարական վտանգ:

Այսպիսով՝ Խորենացու «Ողբի» բացակայությունը 1834 թ. հրատարակությունից կարելի է բացատրել փոխկապակցված երկու պատճառներով. մի կողմից՝ ժանրային խստապահանջությամբ և սրբապատումի կանոնների պահպանման ձգտումով, մյուս կողմից՝ քաղաքական զգուշավորությամբ և գաղափարական վերահսկողության պայմաններով: Դրանով իսկ «Ողբի» տպագրական ճակատագիրը դառնում է յուրօրինակ վկայություն այն մասին, թե ինչպես է ազգային հիշողության և պատմագրության գրական ժառանգությունը ենթարկվել տարբեր դարաշրջանների խմբագրական ու գաղափարական ընտրություններին:

«Ողբի» ընդգրկման առանձնահատկությունները տպագիր «Յայսմաւուրքում»

«Յայսմաւուրք» ժողովածուում զետեղված «Ողբը» իր ձևով մոտ է մարգարեական խրատին և ողբերգական ներբողին, իսկ բովանդակությամբ վեր է հանում ինչպես հոգևոր, այնպես էլ ազգային անկման պատկերները: Իր ձևով այն հարում է մարգարեական խրատին և ողբերգական ներբողին, իսկ բովանդակային մակարդակում ներկայացնում է թե՛ հոգևոր, թե՛ ազգային անկման խորապատկերը՝ անհատական հուսահատության ձայնը վերածելով համազգային կորստի խորհրդանիշի: Խորենացու այս տեքստը, թեև ժանրային առումով վարք չէ, սակայն տեղ է գտել տպագիր «Յայսմաւուրք» ժողովածուում հույզերի և գաղափարների այնպիսի հզոր համադրության շնորհիվ, որն արտահայտում է սրբապատումի առանցքային նպատակը՝ հավատի կորուստ, ողբ՝ սրբազան անցյալի համար և հավատք ապագա փրկության հանդեպ: Տպագիր «Յայսմաւուրքում» այն առանձնահատուկ տեղ ունի, քանի որ վկայակոչում է ոչ միայն կրոնական հավատի ճգնաժամը, այլև քաղաքական և մշակութային ինքնության կորուստը: Որպես համահունչ ձևակերպված ողբ՝ այն ներհյուսվում է սրբապատումի ժանրին, կատարում է հիշողության սրբագործման և հավաքական հույսի վերակենդանացման գործառույթ: Այս վերլուծության նպատակը Խորենացու ողբի ընդգրկման պատճառների և գործառույթի բացահայտումն է՝ հատկապես դրա ազգային–հոգևոր ողբերգության միաձուլված պատկերների համատեքստում: Այդ նպատակով անդրադառնում ենք տեքստի սիմվոլիկ կառուցվածքին, լեզվական ձևակերպումներին և դրա տեղին՝ տպագիր «Յայսմաւուրքի» գաղափարական ու ժանրային տրամաբանության մեջ:

Խորենացու «Ողբը», ի տարբերություն տպագիր «Յայսմաւուրքի» մնացյալ նյութերի, ներառված չէ որևէ տոնացուցային ամսաթվի ներքո: Այն զետեղված է որպես առանձին սրբապատում-մտորում՝ առանց կոնկրետ օրվա կամ սրբի հիշատակի հետ կապվելու: Գրքում այն կրում է հետևյալ ենթավերնագիրը. «Ողբ վասն բառնալս թագաւորութեն հայոց Յազգեն Արշակունեաց եւ Քահանայութեն ի ցեղէն Սրբոյն Գրիգորի: Ասացեալ մեծին Մովսէսի Քերթողին»: Տվյալ ձևակերպումը վկայում է, որ այն դիտարկվել է որպես ընդհանուր ազգային ու եկեղեցական կորուստների վերապրում՝ ոչ թե առանձին սրբի կամ պատմական դրվագի հիշատակության շրջանակում:

Խորենացու անունով փոխանցված «Ողբը», որն ընդգրկված է տպագիր «Յայսմաւուրք» ժողովածուում, դասական իմաստով վարքագրություն չէ: Սակայն այն տեղ է գտել սրբերի վարքերով լի այս ժողովածուում, քանի որ հույզերի և հոգևոր իմաստների մակարդակում կատարում է սրբապատումի համարժեք գործառույթ: Այս ողբը սգում է սրբազան կարգերի խաթարումը, հուսաբեկվածության միջից հղում է ապագա փրկության ակնկալիք և հորդորում է հավատարիմ լինել հոգևոր իդեալներին: Այս կերպ «Յայսմաւուրքը» ստանում է ոչ միայն բարոյախրատական, այլև ազգային ողբերգության հաղորդիչի գործառույթ, հանդես գալիս որպես հավաքական ինքնության հիշողության ու ապաշխարության տեղ:

«Ողբը» ձևավորում է միաձուլ հյուսվածք՝ ազգային և հոգևոր կորստի միախառնումով: Այս ձևակերպումը՝ «մեր թշվառությունը գերազանցել է ամեն բան», իր սաղմոսային և ավետարանական հնչեղությամբ միաժամանակ արտահայտում է հայոց պատմական ճակատագրի խորագույն ցավը: Այս լեզվամտածողությունը «Յայսմաւուրքին» հաղորդում է եկեղեցականից անդին ձգվող արժեքային հարթություն՝ դարձնելով այն ոչ միայն սրբերի վկայագրերի ժողովածու, այլև ազգային հիշողության կրող:

Հատկապես խոսուն է Մովսեսի և Հեսուի փոխաբերական համադրությունը՝ «Մովսէս բարձրեալ լինի և Յեսու ոչ յաջորդէ...» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Այս հատվածը սիմվոլիկ գագաթնակետ է, որը պատմագրական լեզվով արտահայտում է երկրի

առաջնորդազուրկ գոյության ցավը՝ թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ իմաստով: Այն թափանցիկորեն հղում է ոչ միայն աստվածաշնչյան նախատիպին, այլև հղկված ձևով անդրադառնում է հետագա դարերի ընթացքում հաճախ կրկնվող ազգային տագնապին՝ առաջնորդի բացակայությանը՝ որպես ինքնավստահության խախտում:

«Յայսմաւուրք» ժողովածուում շեշտադրվում է քաղաքական, հոգևոր և հասարակական առաջնորդության բացակայությունը. «Ոռբովամ մերժեցաւ յիւրմէ ժողովրդենէ՝ և փոխանորդեաց որդին Նաբատայ... Եղիա համբարձաւ և Եղիսէ ոչ մնաց…» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Աստվածաշնչյան դրվագների ներգրավումը նպաստում է այն տպավորության ձևավորմանը, թե հայոց ծանր վիճակը համարժեք է բիբլիական իսրայելացիների ապստամբությանը և դրա հետևանքներին:

Վերլուծական իմաստով հատկապես ուշագրավ է անցումը պատմական հերոսների դիցաբանական հիշատակումից դեպի ողբերգության գագաթնակետը. «Արդ՝ փոխանակ խրախճանութեն ի վերայ գերեզմանի ողբ ասելով: Ողորմելի՛ հառաչեմ...» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Այս հատվածում ողբի լեզուն ի մի է բերում ազգային մերժվածության և հոգևոր որբության զգացումը, որը համակված է ոչ միայն կորստի փաստով, այլև անարժանության խղճով. «Այսպիսեաւ անձկեաւ՝ հեղձամղձուկ եղեալ փղձկիմ, կարօտութեամբ մերոյ հօրն» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Ուսուցչի խրատը, հովվական հոգատարությունը դարձել են անտեղի լռություն. «...Կորեաւ ժողովողն, թագեաւ նաւահանգիստն...» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Սրանք ձևավորում են կորստի հուզական աղետը՝ «ազգային որբություն», որն ակնհայտորեն նպատակ ունի սրբապատում տոնացուցային ժողովածուում կերտելու հոգևոր ապաշխարության հիմք:

Նկատելի է նաև անձնավորում՝ ողբացողը խոսում է մենավոր ձայնով, լքված ու խոցված. «Լքաւ օգնականն: Լռեաց ձայնն յորդորիչ» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Այստեղ բացակայում է ուսուցիչը, առաջնորդող խրատը, ճշմարիտ ուղեցույցը, որը կպահեր հոգևոր ու բարոյական ուղղությունը: Այս նույն տրամաբանությամբ շարադրվում են շարունակական հռետորական հարցադրումներ, որոնք ամփոփում են գիտության, արժանապատիվ կրթության և սրբազան ավանդույթի ընդհատումը. «Ո՞վ այսու հետև զմերս յարգեսցէ զուսմունս: Ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութի աշակերտիս...» (Մարզվանեցի ԲՃՀԱ):

Շեշտվում է, որ ողբալն անգամ դարձել է խնդրահարույց, քանի որ ոչ ոք չի դիմավորում ճշմարիտ խրատը, իսկ լացն ու հոգեվիճակը մերժվում են իբրև խեղկատակություն. «Ձծիծաղելն զմեջք և զարհամարհելն իբր զանհաստատնօք...» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Հեղինակը անցում է կատարում անձնականից դեպի հասարակական դատողության՝ ներկայացնելով ժամանակի տարբեր խավերի աղճատված բնութագրերը: Առաջին պլանում են եկեղեցական և հոգևոր առաջնորդները՝ «Եպիսկոպոսք տխմարք և ինքնահաճք... Արծաթով ընտրեալք և ոչ հոգւով սրբով... Կրօնաւորք կեղծաւորք... Քահանայք կարգ ընկէցք» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Այսպես ներկայացվում է ավանդական հոգևոր կարգի կորուստը՝ մի աշխարհ, ուր հոգևոր հեղինակությունը փոխարինված է նյութական դրդապատճառով: Իսկ հասարակության մնացած շերտերն այս տեքստում ներկայացված են առավել սուր քննադատությամբ՝ զինվորականներից մինչև իշխանավորներ, աշակերտներից մինչև վաճառականներ: Սա վկայում է հեղինակի նպատակը՝ «ոչ թե միայն անհատների, այլ ամբողջ ազգի բարոյական կազմաքանդման մասին»:

Վերջին հատվածում կա մի ընդարձակ հարցում՝ միաժամանակ ուղղված անցյալին, մարգարեներին, ապագային, Աստծուն. «Ո՞վ զմեզ յայսոսիկ կարկառեսցէ ձեռն հաւասարելով տրտմութես...» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Հեղինակը չի փնտրում միայն մխիթարություն, այլ՝ վերակառուցում, վերածնունդ. «Զարթի՛ր Երեմիայ, զարթի՛ր և ողբայ հանդերձ մարգարէանալով...» (Մարզվանեցի ԲՃՀԱ): Երեմիայի անունը այստեղ ոչ թե ուղղակի պատմական հղում է, այլ՝ ճշմարիտ մարգարեության վերակոչում՝ ըստ Աստվածաշնչի Հին կտակարանի:

«Եւ ի վերայ այսր ամի խռովուիք յամէն կողմանց ըստ այնմ, թէ չիք խաղաղութիւն ամբարշտաց» (Մարզվանեցի ԲՃՀԳ): Այս ձևակերպումը ընթերցողին մղում է հասկանալու, որ խաղաղությունը՝ որպես աստվածային պարգև, վերացած է, քանի որ ամբարիշտությունն է իշխում: Ողբի լեզուն չի սահմանափակվում միայն քաղաքական անկայունության արձանագրմամբ, այլ ցույց է տալիս բարոյահոգեբանական խեղաթյուրումը, որում իշխաններն ու ղեկավարները այլևս չեն ծառայում արդարության: «Ողբը» չի մնում միայն բարոյական մակարդակում. այն տեղափոխվում է սոցիալ-քաղաքական աղետի պատկերների հարթություն: Իշխանության պաշտպանության մակարդակները փուլ են եկել:

Հատուկ ուշադրության է արժանի խորհրդանշական ձևակերպումը. «Սատանայ հրճուեալ և հրեշտակք տրտմեալ» (Մարզվանեցի ԲՃՀԳ): Այս հակադրությամբ հեղինակը բարոյական աշխարհի ամբողջական ճեղքումն է ընդգծում. բարիքի և չարիքի սահմանները խախտված են այն աստիճան, որ սատանան ուրախ է, իսկ հրեշտակները՝ տրտում: Այս պատկերը ընդգծում է «աշխարհի կարգի հակադարձումը», որն առավել հստակ է դառնում հաջորդ հարցադրման մեջ. «Արդ՝ ո՞վ եղբարք ողբասցուք զմեզ թէ յորպիսի արանց զըկեցաք...» (Մարզվանեցի ԲՃՀԳ): Այնուամենայնիվ, հատվածը ավարտվում է մեղմ մխիթարությամբ ու ներողամտության խնդրով: Տեսական հուսալքության միջից ծնվում է հոգևոր կապի հավատալիքի հաստատում. «Բայց գոհութիւն զարդարողին զնոսա Աստուծոյ հոգւոյն: Չի թէպէտ մարմնով հրաժարեցին ի մէնջ, այլ իմաստութեամբ հոգւոյն առ մեզեն...» (Մարզվանեցի ԲՃՀԳ): Այս տողերը վկայում են, որ թեև սրբերը և ուսուցիչները ֆիզիկապես այլևս ներկա չեն, սակայն հոգևոր հաղորդակցությունն ու բարեխոսությունն անխզելի են:

Եզրակացություն

Այսպիսով, Խորենացու «Ողբը» տպագիր «Յայսմաւուրքում» հանդես է գալիս ոչ թե որպես դասական սրբապատում տեքստ, այլ որպես խրատական արձագանք՝ ուղղված համայնքային և ազգային ինքնագիտակցության ճգնաժամին: Այն ներկայանում է որպես մի ձայն, որ հիշեցնում է ազգային հիշողության խաթարումը, հավատքի թուլացումը և հոգևոր դատարկության խորացումը:

Տպագիր «Յայսմաւուրքում» «Ողբի» ընդգրկված հատվածը փաստում է, որ սրբապատում ժանրի շրջանակներում ներմուծվել է պատմագրական և գաղափարախոսական լեզու՝ վերարժևորելով ողբը ոչ միայն որպես պատմական արձագանք, այլև որպես հոգևոր ինքնաքննության գործիք: Այս համատեքստում «Ողբը» վերաձևակերպվում է որպես բարոյական հորդոր՝ ուղղված «սրբագործված, գիտակից և խրատված հոգու» վերադարձին:

«Ողբի» բացակայությունը 1834 թ. տպագիր հրատարակությունից կարելի է մեկնաբանել փոխկապակցված երկու հիմնական գործոններով. մի կողմից՝ սրբապատում ժողովածուի ժանրային խստապահանջությամբ և վարքագրական կանոնների հետևողական պահպանման ձգտումով, մյուս կողմից՝ քաղաքական զգուշավորությամբ և գաղափարական վերահսկողության պայմաններով, որոնք բնորոշ էին տվյալ ժամանակաշրջանի խմբագրական միջավայրին: Այս համատեքստում «Ողբի» տպագրական ճակատագիրը դառնում է յուրօրինակ վկայություն այն մասին, թե ինչպես է ազգային հիշողությունն ու պատմագրական ժառանգությունը տարբեր դարաշրջաններում ենթարկվել խմբագրական վերարժևորման և գաղափարական ընտրության՝ կախված ժամանակի հոգևոր ու քաղաքական պահանջներից:

Ընդհանրական եզրահանգմամբ կարելի է արձանագրել, որ Մ. Խորենացու «Ողբի» ընդգրկումը տպագիր «Յայսմաւուրքում» հնարավորություն է տալիս նոր դիտանկյունից մեկնաբանելու հայ միջնադարյան հոգևոր ժառանգությունը՝ որպես

կենդանի, վերարժևորվող և պատմական պայմաններով ձևափոխվող մշակութային համակարգ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավդալբեգյան, Մայիս. *Յայսմաւուրք ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը.* ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1982:
2. Կորկոտյան, Քնարիկ. *Հայ տպագիր գիրքը Կ. Պոլսում.* Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրություն, Երևան, 1964:
3. Մարզվանեցի, Գրիգոր. *Յայսմաւուրք.* տպ. Գրիգոր դպիր, Կ. Պոլիս, 1706:
4. Պետրոսյան, Եզնիկ. *Համաբարբառ Յայսմաւուրք,* Ա. Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրատ, Էջմիածին, 2008:
5. Պողարեան, Նորայր. *Ծիսագիտութիւն.* «Թագուհի Թամսըն» հիմնադրամի հրատ., Նիւ Եորք, 1990:

WORKS CITED

1. Avdalbegyan, Mayis. *Yaysmawurk joghovats'unnery yev nrants patmagrakan arzheqy,* HSSR GA hrat., [The Yaysmawurk Collections and Their Historiographical Value, Armenian SSR Academy of Sciences Publishing House] Yerevan, 1982. (in Armenian)
2. Korkotyan, Knarik. *Hay tpagir girky K. Polisum,* Haykakan SSR kulturayi ministrut'yun, [The Armenian Printed Book in Constantinople, Ministry of Culture of the Armenian SSR] Yerevan, 1964. (in Armenian)
3. Marzvanetsi, Grigor. *Yaysmawurk,* tp. Grigor dpir, [Yaysmawurk (Synaxarion), printed by Grigor Dpir] Constantinople, 1706. (in Armenian)
4. Petrosyan, Eznig. *Hamabarbar Yaysmawurk,* A. Mayr At'or S. Ejmiatsin hrat., [Comparative Yaysmawurk, Etchmiadzin Publishing House] Etchmiadzin, 2008. (in Armenian)
5. Pogharian, Norayr. *Tsisagit'ut'yun,* «T'aguhi Tamson» himnadrami hrat., [Liturgiology, "Queen Thomson" Foundation Publishing House] New York, 1990. (in Armenian)

FROM HISTORIOGRAPHY TO HAGIOGRAPHY: MOSES KHORENATSI'S "LAMENT" IN THE "YAYSMAVURK"

ANNA KOSTANYAN

Khachatur Abovian Armenian State Pedagogical University,
Department of Ancient and Medieval Armenian Literature and
Its Teaching Methodology, Ph.D. Student,
Vedi, the Republic of Armenia

The aim of this article is to analyze the inclusion of *The Lament* by Movses Khorenatsi in the printed editions of the *Yaysmavurk'* (Synaxarion), examining the logic of its textual placement, the principles of selection, the ideological emphases, and the genre-specific features, since the text is not a saint's vita in the classical sense. Particular attention is paid to the fact that in the 1834 edition (*Yaysmavurk'* 1706, 1706–1708, 1730, 1834) *The Lament* is omitted, which allows to trace possible reasons for editorial choice, ideological censorship, or shifts in the compilation's conceptual framework.

The relevance of the study lies in the absence of comprehensive research specifically addressing the inclusion of *The Lament* in the *Yaysmavurk'* and its significance in shaping national and spiritual memory.

To achieve the goal stated, the article examines the principles of inclusion and textual arrangement, explores forms of reinterpretation within the hagiographic genre, clarifies the reasons for its omission in the 1834 edition, and assesses the influence of the historical-political context.

The study applies textual, comparative, and historical-ideological methods.

The inclusion of *The Lament* is viewed as a unique phenomenon that reveals the genre's multilayered nature within the medieval Armenian tradition and highlights new aspects in the formation of spiritual memory.

Keywords: *Moses Khorenatsi, Lament, Yaysmavurkʿ, printed editions, medieval Armenian literature, historiography, hagiographic genre.*

ОТ ИСТОРИОГРАФИИ К АГИОГРАФИИ: «ПЛАЧ» МОВСЕСА ХОРЕНАЦИ В «ЯЙСМАВУРКЕ»

АННА КОСТАНЯН
аспирант кафедры древней и средневековой армянской литературы и методики её преподавания Армянского государственного педагогический университет имени Хачатура Абовяна, г. Веди, Республика Армения

Цель настоящей статьи — проанализировать включение «Плача» Мовсеса Хоренаци в печатные издания «Яйсмавурка», рассмотрев логику его текстуального размещения, принципы отбора фрагмента, идейные акценты и жанровые особенности, поскольку данное произведение не является по жанру житием святого в классическом смысле. Особое внимание уделяется тому обстоятельству, что в издании 1834 года («Яйсмавурк» 1706, 1706–1708, 1730, 1834 гг.) «Плач» отсутствует, что позволяет выявить мотивы редакторского выбора или идеологической цензуры.

Актуальность исследования определяется отсутствием работ, специально анализирующих включение «Плача» в состав «Яйсмавурка».

Для достижения цели работы поставлены задачи: изучить принципы включения и размещения «Плача» в печатные издания «Яйсмавурка», выявить формы его переосмысления в агиографическом жанре, объяснить причины отсутствия текста в издании 1834 года и оценить влияние печатной традиции и историко-политического контекста.

В статье применяются три взаимодополняющих подхода:текстологический и сравнительный анализ, а также историко-политическая и идеологическая интерпретация.

Основной вывод исследования заключается в том, что включение «Плача» Мовсеса Хоренаци в «Яйсмавурк» является исключительным явлением, поскольку этот текст выходит за рамки классических форм жанра жития и мученичества святого. Таким образом, изучение «Плача» раскрывает жанровую многослойность средневекового армянского наследия и позволяет по-новому осмыслить формирование духовной памяти.

Ключевые слова: *Мовсес Хоренаци, «Плач», «Яйсмавурк», печатные издания, средневековая армянская литература, историография, агиографический жанр.*

ՁԵՌԱԳԻՐ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ *

ՀՏԴ 82.09 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-141*

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,
Ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
kristine.melqumyan.83@mail.ru
ORCID: 0000-0001-6099-7007

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել ու վերլուծել ձեռագիր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների բնույթն ու կիրառությունը միջնադարյան հայ իրականության մեջ:

Հոդվածում խնդիր է դրված վեր հանելու միջնադարում կրթական գործընթացների յուրահատկությունները և դրանցով պայմանավորված՝ ձեռագիր ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի տեսակները, հիմնավորելու դրանց կիրառելիության օգտակարությունը: Այդ նպատակով առանձնացվել, հիշատակվել ու վերլուծվել են միջնադարյան հատկապես այն ձեռագիր դասագրքերը, որոնք կիրառվել են ոչ միայն կոնկրետ կրթօջախներում կամ դպրոցներում, այլև առավել լայն տարածում ու կիրառականություն են ունեցել՝ ձեռք բերելով, այսպես ասած, երաշխավորված դասագրքի կարգավիճակ:

Հոդվածը գրված է վերլուծական, պատմական և համեմատական մեթոդների կիրառմամբ:

Հոդվածում հանգում ենք այն եզրակացությանը, որ միջնադարյան Հայաստանում դասագրքերը և ուսումնական ձեռնարկները անցել են զարգացման բավական երկար ու արդյունավետ ճանապարհ՝ պնակիտի սկզբնական կիրառումից մինչև «Ոսկեփորիկ» դասագրքեր և «Քերականներ», գործառնականության հատկանշվող գրական ու պատմագրական երկերից մինչև թեմատիկ ուսումնական ձեռնարկներ:

Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ ձեռագիր դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները հետագայում դարձան այն հենքը, որով ձևավորվեց ու զարգացավ դրանց տպագիր ուղին, ավելին՝ դրանցից լավագույնները հետագայում ձեռագիր դասագրքից նույնությամբ վերածվեցին տպագիր դասագրքի՝ այդ կերպ դարեր շարունակ մնալով կրթական-ուսումնական գործընթացների կարևոր մաս:

Հիմնաբառեր՝ *դպրոց, կրթություն, մանկավարժություն, ձեռագիր դասագիրք, միջնադար, կիրառականություն, գրականություն, ձեռնարկ:*

Ներածություն

Կրթությունն ու դաստիարակությունը, դպրոցն ու դասագիրքը հայ իրականության մեջ հազարամյակների պատմություն ունեն և պայմանավորել են հայ ժողովրդի՝ ինչպես կենսագործունեության, այնպես էլ մշակութային գիտակցության կարևորագույն հատույթները: «Հնագույն մշակութային այն հարստությունը, որ առկա

* Հոդվածը ներկայացվել է 18.09.2025թ., գրախոսվել՝ 09.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

է Պատմական Հայաստանի ողջ տարածքում,– գրում է Ցոլակ Սիմոնյանը,– ապացույց է, որ առանց դպրոցի, առանց կազմակերպված ուսուցման ու կրթության անհնարին էր այդ մակարդակի ապահովումը» (Սիմոնյան 7):

Հայ դպրոցի և մանկավարժության պատմության հարցերին նվիրված աշխատություններում խոսվում է նաև այսպես կոչված՝ հեռագնաց ուսուցման մասին, երբ տարբեր պատճառներով հայ պատանիներն ու երիտասարդները կրթություն ստացել են այլ երկրներում[1], բայց դա բնավ անհամոզիչ չի դարձնում այն աներկբա փաստը, որ, սկսած նախամաշտոցյան ժամանակների կրթարաններից, միջնադարյան հռչակավոր համալսարաններից (Գլաձոր, Տաթև, և այլն) մինչև Մխիթարյան միաբանության դպրոցներ ու կրթօջախներ, հայ իրականությունը հատկանշվում է կրթության ու մանկավարժական գործի բարձրակարգ համակարգերով, կրթական մեծանուն ու մեծահամբավ գործիչներով, ուսուցիչներով ու դպրապետերով, և, որ ամենակարևորն է, կրթական գործընթացն ապահովող տարաբնույթ դասագրքերով ու ուսումնական ձեռնարկներով[2]:

Դասագրքերի ու ձեռնարկների ընդհանուր բնույթը

Անշուշտ, տարբեր դարաշրջաններում այդ համակարգերը դրսևորվել են յուրովի, և, բնականաբար, տարբեր դարաշրջաններում տարբեր է եղել նաև դասագրքերի և ուսումնական ձեռնարկների բնույթը (առավել մանրամասն տե՛ս Մովսիսյան 447, Սիմոնյան 64-66):

Որքան էլ իրավացի է Աբգար Մովսիսյանի այն դիտարկումը, թե «Այն ժամանակ (նկատի ունի միջնադարում – Ք.Մ.) Հայաստանում գրքերը հազվագյուտ էին (եղածներն էլ սուրբ գրքեր էին), և բացառիկ դեպքում աշակերտը կարող էր սեփական գիրք ունենալ», և որ՝ «Ուրեմն հնում ուսուցումը մեծ մասամբ պետք է առանց գրքի լիներ, բանավոր, խոսքային ուսուցման ձևով» (Մովսիսյան 447), այնուամենայնիվ, առավել կարևոր է տարբեր հիշատակությունների վրա հենված այն պնդումը, ըստ որի՝ որպես դասագրքի նախօրինակ է դիտարկվում պնակիտը, որի վրա սովորողները գրում էին ուսուցիչների թելադրած բազմաթիվ ու բազմազան նյութեր, նաև պատկերում էին սխեմաներ, գծանկարներ: Հանրագումարում, եթե, իհարկե, այդ նյութերը չէին ջնջվում նորը գրելու համար, ըստ ամենայնի, ձևավորվում էր պնակիտ-դասագիրք: Այդ առումով պատահական չէ, որ «Պնակիտի վերին մասն ու կողերը երբեմն զարդարում էին թանկարժեք մետաղներով, փղոսկրով կամ սադաֆով» (Մովսիսյան 448): Այս երևույթը հենց այդպիսի ընկալման արտահայտություն է:

Եթե պնակիտը, որպես դասագիրք, կարելի է դիտարկել և՛ գրաճանաչության, և՛ հետագա ընդհանուր գիտելիքների ձեռք բերման տեսանկյունից, ապա դասագրքի հետագա փոխակերպումները արդեն հատկանշվում են այսպես ասած՝ առարկայական կոնկրետությամբ, այլ խոսքով՝ առանձնացվում են կրթական առարկաները: Եվ քանի որ գիտելիքի և կրթության հիմքը նախևառաջ

---

[1] Այդ մասին իր «Հայոց պատմության» մեջ գրում է նաև Մովսես Խորենացին: Հեռագնաց ուսուցման անհրաժեշտությունը նա բացատրում է այն հանգամանքով, որ որոշ գիտելիքների Հայաստանում դեռևս, ինչպես հարկն է, չէին տիրապետում, իսկ սկիզբ առած թարգմանական շարժումը մղում էր օր առաջ տիրապետելու տարբեր գիտելիքների և խորացնելու դրանք. «Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորոգմամբ: Բայց քանզի ***անգէտք էին մերումս արուեստի***՝ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրայ, ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան» (Խորենացի 426, ընդգծումը մերն է.– Ք.Մ.):

[2] Հարցի պատմությունը առավել մանրամասն տե՛ս ***Մովսիսյան Ա.,*** Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958; ***Խաչերյան Լ.,*** Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները և համալսարանները Միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում, Լիզպոն, 1998, հատոր 1-ին և 2-րդ; ***Սիմոնյան Ց.,*** Հայ մանկավարժության պատմություն, Երևան, 2012:

գրաճանաչությունն է, ապա, տրամաբանական է, որ պնակիտից հետո պետք է նախ ձևավորվեր գրաճանաչության դասագիրք, այսինքն՝ այբբենարան:

Հետագա դարերում «Այբբենարանների» կամ ավելի ուշ շրջանում տրված անվամբ՝ «Քերականների»[1] տրամաբանությամբ են ձևավորվում կոնկրետ առարկայական տարբեր դասագրքեր՝ թվաբանության, պատմության, աշխարհագրության, ճարտասանության, փիլիսոփայության, աստղագիտության, մարդակազմության, նույնիսկ՝ երաժշտության և նկարչության:

Ավելին՝ հայ իրականության մեջ ստեղծվում է դասագիրք, որն իր տեսակով ու բնույթով բացառիկ է համաշխարհային մանկավարժության պատմության մեջ: «7-րդ դարի անվանի մանկավարժ Անանիա Շիրակացու թվաբանության լրիվ չորս գործողություններով և խնդիրների ժողովածու՝ «խնդրագրքով» դասագիրքը,– գրում է Աբգար Մովսիսյանը,– համարյա թե միակ և բացառիկ երևույթն է հին ու անտիկ աշխարհի գրականության մեջ և մենաշնորհ տեղ է գրավում գրքերի ու դասագրքերի հնադարյան կուլտուրայի գանձարանում» (Մովսիսյան 450):

Հայ միջնադարյան դասագրքաստեղծ գործունեության կարևոր հատույթներից մեկն էլ հատկապես հունական և հռոմեական բազմաթիվ ու տարաբնույթ դասագրքերի թարգմանությունն է: Սա չափազանց կարևոր էր երկու առումով:

Նախ՝ այդ կերպ հայ մանկավարժական միտքն ու կրթական համակարգերը չէին մնում ինքնաբավ և յուրացնում էին համաշխարհային լավագույն փորձը՝ դրա շնորհիվ նաև քիչ տեղ թողնելով, այսպես կոչված, հեռագնաց ուսուցման համար, մյուս կողմից՝ այդ դասագրքերի հետևությամբ և յուրացմամբ տեղում էին գրվում նոր դասագրքեր: Այսինքն՝ լուծվում էր նաև դասագրքերի տեղայնացման խնդիր: Դրա ապացույցն է և այն, որ շատ հաճախ, ինչպես նկատում է Ցոլակ Սիմոնյանը, այդ թարգմանական դասագրքերից շատերը «ոչ այնքան թարգմանություններ են եղել, որքան ազգայնատեղագործական փոխադրություններ» (Սիմոնյան 66):

Եվ, վերջապես, չափազանց ուշագրավ ու կարևոր են գրչության արվեստին վերաբերող հատուկ ձեռնարկները, որոնք կանոնակարգել են միջնադարյան հայ մատենագրության որակական մակարդակը, պայմանավորել լեզվաբանական, տառադարձական, գրադարձական բազմաթիվ օրինաչափություններ հայոց լեզվի զարգացման գործում (մանրամասն տե՛ս Խաչերյան2):

Հայ միջնադարյան դասագրքերի և ուսումնական ձեռնարկների բնույթի վերաբերյալ պատկերն ամբողջականացնում են կրթական նպատակներով ստեղծված և լայնորեն կիրառված տարաբնույթ ժողովածուները, որոնց շարքում ամենանշանավորը «Ոսկեփորիկն» է:

«Ոսկեփորիկի» առաջաբանում ասվում է, որ այն Ոսկեփորիկ է կոչվում, որովհետև գիրքն իր փորում, այսինքն՝ կազմից ներս ունի ազնիվ ոսկի: «Ոսկեփորիկը» Գրիգոր Տաթևացին գրել է Մասուրշահի խնդրանքով: Գրքի հիշատակարանում Տաթևացին գրում է, որ այն մի քիչ աստվածաբանությունը, որ հավաքեց Սուրբ Գրքից, ընծայում է իրեն (Մասուրշահին) որպես հոգևոր գանձ: Մասուրշահին, որի պատվերով գրել է «Ոսկեփորիկը», խրատական այնպիսի խոսքեր է ասում, որոնք վերաբերում են ընդհանրապես բոլոր աշակերտներին: Առաջին՝ միշտ աշխատասեր պետք է լինել մտքով: Երբեք չպետք է ձանձրանալ այս գիրքն ընթերցելուց: Հարաժամ պետք է կարդալ, այսինքն՝ սերտել: Դժվարալույծ, դժվար մեկնաբանվող հատվածները թող հարցնեն, դա նշանակում է աշակերտի չհասկացած նյութը պիտի հարցնեն ուսուցչին : Ոչ միայն սովորել, այլև ուրիշներին սովորեցնել, դա գիտելիքների փոխանցականությունն է: Պատահական չէ շարունակ «այլ դու որդյակ» խոսքերով դիմելը, ինչպես որ աշխարհական միջավայրում ուսուցիչն էր դիմում աշակերտին (տե՛ս Տաթևացի 573-574):

[1] Գրաճանաչության դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները միջնադարում հանդիպում են նաև «Գիրք տառից», «Գիրք գրոց», «Գիրք վարժելոյ», «Ժոլանք մանկան», «Գիրք այբուբենից» վերնագրերով (տե՛ս Մովսիսյան 449):

Ինչպես գրում է Հակոբ Քյոսեյանը. «Իր մեջ ներառնելով հայ բազմադարյան աստվածաբանական մտքի բոլոր կարևորագույն հիմադրույթները, «Ոսկեփորիկ»-ը դառնում է Հայ եկեղեցու դավանաբանության կարևոր ձեռնարկ» (Ոսկեփորիկ VI):

Միջնադարյան հայ գրականության ընդգրկման հարցերը դասագրքերում

Անդրադառնալով այդ դասագրքերում միջնադարյան հայ գրականության ներկայությանն ու գրականության հետ կապված հարցերին՝ պետք է կարևորել հետևյալը. այս հատույթում նկատելի է մի երևույթ, որը հետագայում չափազանց բնորոշ դարձավ նաև հայերեն տպագիր գրքին՝ հատկապես սկզբնական շրջանում:

Հարցն այն է, որ միջնադարում ևս կան բազմաթիվ գրքեր, որոնք ոչ թե դասագրքեր կամ ուսումնական ձեռնարկներ են ինքնին, այլ այդպիսին են դառնում իրենց գործառնականության ու կիրառելիության շրջանակի թելադրանքով, այնպես, ինչպես հայ տպագրության արշալույսին Հակոբ Մեղապարտի և նրան հաջորդած հայ տպագրիչների ու հրատարակիչների գրքերը նախևառաջ հատկանշվում էին գործառնականությամբ: Այն է՝ դրանց տպագրությունը հետապնդում էր կոնկրետ նպատակ, կոնկրետ կիրառելիություն, և գրեթե կոնկրետ հասցեատեր:

Հասցեականության ու կիրառելիության գործնական արդյունքը երևանվում էր ոչ միայն առևտրական դասի՝ այսպես ասած՝ ինտելեկտուալ պահանջները հոգալու կամ հայոց եկեղեցու տոնացույցների պահանջարկը սպասարկելու հարցում, այլև ուսումնական և կրթական որոշակի ձևավորված խնդիրներ լուծելու հատույթում:

Այլ հարց է, որ, ամենատարբեր հանգամանքներով պայմանավորված, հատկապես 16-17-րդ դարերում և 18-րդ դարի առաջին քառորդում տպագրված գրքերը գրեթե անխտիր ունեն կրթական և ուսումնական արժեք, կամ, համենայն դեպս, ունեցել են այդպիսի գործառնականություն, բայց այդ ամենի հետ մեկտեղ, ինչպես հայ տպագրիչներն ու հրատարակիչները, այնպես էլ օտար անհատները տարբեր նպատակներով նույն ժամանակաշրջանում հետամուտ են եղել նաև բուն կրթական և ուսումնական տպագրություններ ձեռնարկելուն: Խոսքը վերաբերում է հատկապես հայոց լեզվի, կրոնի դասագրքերին և մեծ կամ փոքր քերականություններին ու բառարաններին[1]:

Նույն տրամաբանությամբ՝ միջնադարում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» և հայ մատենագիրների բազմաթիվ ու բազմաժանր երկեր կիրառվում էին ուսումնական նպատակներով, և այդ կերպ՝ վերաձևակերպվում դասագրքերի կամ ուսումնական ձեռնարկների, այսինքն՝ դրանց բնույթը սահմանվում կամ գիտակցվում էր ըստ գործառնականության և կիրառելիության թիրախի: Եվ պատահական չէ, որ միջնադարյան Հայաստանի գրչության կենտրոններում այդտեսակ մատյանների ընդօրինակումը նախևառաջ էր կարևորվում. «Հատկապես գրչության կենտրոններում հրատապ խնդիր էր դրված ընդօրինակել և բազմացնել հայ մատենագրության սկզբնավորումից՝ 5-րդ դարից ստեղծված պատմագրության, գրականության, գիտության, վարքագրության վերաբերող բոլոր այն երկերը, որոնցում իր արտացոլումն է գտել հայ ժողովրդի հոգևոր աշխարհը» (Խաչերյան 17): Հավելենք, որ դա կրթական-ուսումնական պահանջարկի արգասիք էր նաև:

[1] Նման միտում նկատելի է նաև, օրինակ, ռուսական իրականության մեջ, երբ թե՛ ձեռագիր, թե՛ հետագայում նաև տպագիր ժողովածուների որոշ տիպեր այլ գործառույթներից զատ՝ ունեցել են նաև կրթական-ուսումնական գործառնություններ և կիրառվել են որպես դասագրքեր կամ ձեռնարկներ: Այդ առումով ուշագրավ է «Азбуковник» կոչվող ժողովածուների օրինակը: Դրանք իրենց հղացմամբ, ըստ էության, բառարաններ են, բայց դրանցում ընդգրկված նյութերը ծառայել են կրթական նպատակների՝ ժողովածուները յուրովի վերածելով ուսումնական ձեռնարկների (առավել մանրամասն տե՛ս Словарь 10-20):

Այսպիսին է ընդհանրության մեջ ձեռագիր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների բնույթը: Հետևաբար՝ գրականության հարցերը դիտարկելի են այս տրամաբանության մեջ: Այս առումով՝ պետք է արձանագրել, որ ամենակարևոր դերակատարություն ունեն հայ պատմագրության երկերը: Դրանք որպես դասագիրք են ընկալվել ու կիրառվել և՛ պատմության, և՛ գրականության, և՛ լեզվի առարկայական ուսուցման տեսանկյունից:

Ընդհանրապես, 16-17-րդ դարերում, մանավանդ հայ տպագրիչների ու հրատարակիչների՝ հայ միջնադարյան ձեռագիր ժառանգությունն իր ամբողջ բազմազանությամբ ոչ միայն ներշնչանքի առարկա էր (տառատեսակներ, գլխագրեր, ձևավորման նրբություններ ու յուրահատկություններ), այլև կոնկրետ հենք՝ տպագիր գիրք նախաձեռնելու և հրատարակելու առումով: Այդ թվում նաև՝ դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ:

Բնական է, որ հայ տպագրության արշալույսին, ըստ էության, այսպես ասած՝ գրատպվում էին միջնադարյան հայ ձեռագրերը, կամ դրանց բովանդակությունը, երբեմն՝ ուղիղ, իսկ որոշ ժամանակ անց նաև՝ որոշակի գիտաքննական մոտեցումներով, ժամանակի պահանջներին հարմարացումներով:

Մյուս կողմից՝ միջնադարյան հայ ձեռագրերի և, ընդհանրապես, տեքստերի հրատարակությունը նույնիսկ այս ժամանակահատվածում պայմանավորված է դիտարկելի բնագրագիտական կամ տեքստաբանական գործոններով, որոնց մեր առաջին տպագրիչները հավատարիմ են մնացել: Այս առումով ռուս ականավոր գիտնական Դմիտրի Լիխաչյովի մի դիտարկումը շատ կարևոր է այդ երևույթը ըմբռնելու համար. «Եթե վեպը հրատարակում ենք որպես տվյալ դարաշրջանի փաստաթուղթ, ապա այն պետք է տպագրվի այնպես, ինչպես պատմաբանն է հրապարակում պատմական փաստաթղթերը: Ի վերջո, պատմական փաստաթղթի համար ամենակարևորը իր պատմական նշանակությունը չկորցնելն է: Այն պետք է հրապարակվի այն տեսքով, որով դեր է խաղացել պատմական տվյալ ժամանակահատվածում կամ որով մարմնավորել է այդ ժամանակաշրջանի էական տարրերը» (Лихачёв 588):

Այդուհանդերձ, այստեղ կարևոր է նաև ընդգծել, որ միջնադարյան ***ձեռագիր*** դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները նոր ժամանակներում արդեն ***տպագիր*** կատարում էին նույն գործառույթները: Հետագայում էր, որ ստեղծվեցին նոր դասագրքեր ու ձեռնարկներ:

Կրկին անդրադառնալով ձեռագիր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հարցին՝ կարևոր ենք համարում ներկայացնել, թե ինչպես էին դրանք կիրառվում գործնականում: Բնականաբար, խնդրի մանրամասն վերլուծությունն ու հայ միջնադարյան՝ թեկուզև ամենակարևոր կրթօջախներին անդրադառնալը դուրս է մեր այս հոդվածի շրջանակից, մանավանդ որ՝ այդ հատույթը հայագիտության մեջ ուսումնասիրվել և վերլուծվել է արժեքավոր մենագրությունների տեսքով[1]:

Այդուհանդերձ, նկատի առնելով Ռաֆայել Իշխանյանի մի շատ կարևոր դիտարկումը, թե «Հայկական տպագրության զարգացումը 17-րդ դարում շատ թելերով կապված է… Սյունյաց մեծ անապատի հետ» (Իշխանյան 327), որը ոչ միայն պատմական փաստի ամրագրում է, այլև էական է հետահայաց մեկնակետերի ու մեկնաբանությունների առումով, ամրագրենք, որ ամբողջ հայ միջնադարում, բազմաթիվ դպրոցների, դպրեվանքերի, ճեմարանների, և, ընդհանրապես, ուսումնագիտական կենտրոնների մեծածավալ գործունեության պայմաններում, այդուհանդերձ, նախևառաջ Սյունյաց վարդապետարաններ էին հատկանշվում ոչ

[1] Տե՛ս մասնավորապես ***Մովսիսյան Ա.,*** Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958; ***Խաչերյան Լ.,*** Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները և համալսարանները Միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում, Լիզպոն, 1998, հատոր 1-ին և 2-րդ:

միայն կրթական և ուսումնական ուրույն մոտեցումներով, այլև յուրովի պարագրկում էին մյուս կրթական կենտրոնների մեթոդներն ու մոտեցումները:

Ուստի՝ այդ առումով Սյունյաց վարդապետարանների օրինակը, ըստ ամենայնի, ընդհանրական է և կարող է տալ ամբողջականին մոտ պատկերացում: Մյուս կողմից՝ Սյունյաց վարդապետարանները յուրովի կամրջում են ***ձեռագիր*** դասագրքերից և ուսումնական ձեռնարկներից ***տպագիր*** դասագրքերին և ուսումնական ձեռնարկներին անցումը, համենայն դեպս՝ պատմամշակութային խորքի ու խորհրդանշականության առումով:

Եզրակացություն

Ձեռագիր դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների բնույթը միջնադարյան Հայաստանում պայմանավորված էր նախևառաջ ժամանակի ընձեռած հնարավորություններով և կրթական համակարգի յուրահատկություններով: Ժամանակի ընթացքում դրանք ավելի ու ավելի են կատարելագործվում՝ պնակիտների վրա ամրագրված դասընթացների նկարագրությունից հասնելով մինչև թեմատիկ դասագրքեր: Դա պայմանավորված է նաև կրթական համակարգի զարգացմամբ, ինչպես նաև համաշխարհային փորձը թարգմանությունների միջոցով կիրառելու գործոնով: Միջնադարյան ձեռագիր դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները կարևոր հենք դարձան տպագիր դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների համար՝ այն աստիճան, որ շատ հաճախ ձեռագիրը, առանց լուրջ փոփոխությունների, պարզապես տպագրվում էր՝ շարունակելով կարևոր դեր խաղալ և օգտակար լինել կրթական գործընթացներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգոր Տաթևացի. *Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ*. Կ. Պոլիս, 1746, 592 էջ:
2. ---. *Ոսկեփորիկ.* Երևան, 1995, 272 էջ:
3. Իշխանյան Ռաֆայել. *Հայ գրքի պատմություն.* Երևան, 2012, 534 էջ:
4. Խաչերյան Լևոն. *Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները և համալսարանները Միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում.* Լիզպոն, 1998, հատոր 1-ին և 2-րդ, 546 էջ:
5. Խաչերյան Լևոն. *Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում*. Երևան, 1962, 410 էջ:
6. Խորենացի Մովսես. *Հայոց պատմություն.* Երևան, 1981, 588 էջ:
7. Մովսիսյան Աբգար. *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության.* Երևան, 1958, 528 էջ:
8. Սիմոնյան Ցոլակ. *Հայ մանկավարժության պատմություն.* Երևան, 2012, 308 էջ:
9. *«Словарь книжников и книжности Древней Руси»*. Вып. 2 (вторая половина XIV – XVI в.). Ч. 1: А–К Отв. ред. Д. С. Лихачев, Ленинград, 1988, 516 с.
10. Лихачёв Дмитрий. *Текстология: На материале русской литературы X—XVII веков.* Издание второе. перераб. и доп. — Ленинград, 1983, 640 с.

WORKS CITED

1. Tat’evats’i Grigor, Girk’, vor koch’i Voskep’vorik, [The Book Called ‘Vosgeporik’, Constantinople] 1746, 592 ej. (in Armenian)
2. ---, Voskep’vorik, [Vosgeporik ("The Golden Inner Book") Yerevan], 1995, 272 ej. (in Armenian)

3. Ishkhanyan R. Hay grk'i patmut'yun, [History of the Armenian Book, Yerevan], 2012, 534 ej. (in Armenian)

4. Khach'eryan Levon. Hayagir dprut'ean usumnagitakan kentronnery, dprots'nery, dprevank'ery, vardapetarannery, chemarannery, akademianery yev hamalsarannery Mijnadaryan Hayastanum yev Kilikiayum, [The Scientific and Educational Centers of Armenian-Language Scholarship, Schools, Monastic Schools, Theological Colleges, Seminaries, Academies, and Universities in the Medieval Armenia and Cilicia, Lizbon], 1998, hator 1-in yev 2-rd, 546 ej. (in Armenian)

5. Khach'eryan Levon. Grch'ut'yan arvesti lezvakan-k'erakanakan tesut'yuny mijnadaryan Hayastanum, [The Linguistic and Grammatical Theory of the Art of Calligraphy in the Medieval Armenia, Yerevan], 1962, 410 ej. (in Armenian)

6. Khorenats'I Movses. Hayots' patmut'yun, [History of the Armenians, Yerevan], 1981, 588 ej. (in Armenian)

7. Movsisyan Abgar. Urvagtser hay dprots'i yev mankavarzhut'yan patmut'yan, [The Outlines of the History of Armenian Education and Pedagogy, Yerevan], 1958, 528 ej. (in Armenian)

8. Simonyan Ts'volak. Hay mankavarzhut'yan patmut'yun, [History of the Armenian Pedagogy, Yerevan], 2012, 308 ej (in Armenian):

9. «Slovar' knizhnikov i knizhnosti Drevney Rusi». [Dictionary of Scribes and Literary Culture of Ancient Rus, St. Pererburg] Vyp. 2 (vtoraya polovina XIV – XVI v.). CH. 1: A–K Otv. red. D. S. Likhachev,1988, 516 s. (in Russian)

10. Likhachov Dmitrij. Tekstologiya: Na materiale russkoy literatury KH—XVII vekov. [Textology: Based on Russian Literature of the 10th - 17th Centuries, St. Pererburg] Izdaniye vtoroye, pererab. i dop., 1983, 640 s. (in Russian)

THE NATURE AND FUNCTIONALITY OF HANDWRITTEN TEXTBOOKS AND EDUCATIONAL MANUALS IN THE MIDDLE AGES

KRISTINE MELKUMYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Literature after M. Abegyan, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The aim of this article is to present and analyze the nature and functionality of handwritten textbooks and educational manuals in the context of the Medieval Armenian reality. The article seeks to uncover the characteristics of educational processes in the Middle Ages and, in connection with it, to classify the types of the handwritten textbooks and manuals, substantiate their practical utility. For this purpose, particular handwritten textbooks of the medieval period have been identified, cited, and analyzed – especially those that were used not only in the specific educational centers or in schools but also gained broader circulation and practical applicability, eventually attaining the status of widely recognized and reliable textbooks.

The article employs analytical, historical, and comparative methods of studies.

It concludes that in medieval Armenia, textbooks and educational manuals underwent a long and productive process of development – from the early use of wooden tablets (pnakits) to the creation of the canonical textbooks such as the Vosgeporik ("The Golden Inner Book") and K'erakanner ("Grammar manuals"), as well as from the functionally educational literary and historiographical works to more thematically specialized instructional manuals.

The study also emphasizes that handwritten textbooks and manuals later on served as the foundation for the development of printed educational materials. Moreover, the most effective among them were directly reproduced from handwritten form into print ones, thus continuing to play a significant role in the educational processes for centuries.

Keywords: *school, education, pedagogy, manuscript textbook, Middle Ages, functionality, literature, manual.*

ХАРАКТЕР РУКОПИСНЫХ УЧЕБНИКОВ И УЧЕБНЫХ ПОСОБИЙ И ИХ ПРИМЕНЕНИЕ В СРЕДНИЕ ВЕКА

КРИСТИНЕ МЕЛКУМЯН
младший научный сотрудник Института литературы имени М.Абегяна НАН РА,
г. Ереван, Республика Армения

Целью настоящей статьи является представление и анализ характера и функциональности рукописных учебников и учебных пособий в контексте средневековой армянской действительности.

В статье ставится задача выявить особенности образовательных процессов в средние века и, исходя из этого, определить типы рукописных учебников и учебных пособий, обосновав их функциональность. С этой целью были выделены, названы и проанализированы те средневековые рукописные учебники, которые использовались не только в отдельных учебных заведениях или школах, но и получили более широкое распространение и практическое применение, приобретя статус нак называемого «гарантированного» учебника.

Статья написана с применением аналитического, исторического и сравнительного методов.

В заключение исследования делается вывод о том, что в средневековой Армении учебники и учебные пособия прошли достаточно долгий и эффективный путь развития: от первоначального использования пнакытов (деревянных дощечек для письма) до таких учебников, как «Восгепорик» («Золотник») и «Кераканнер» («Грамматики»), а также от литературных и историографических трудов с выраженной образовательной функцией до тематических учебных пособий. Особо подчеркивается тот факт, что рукописные учебники и учебные пособия впоследствии стали основой для формирования и развития печатной учебной традиции. Более того, лучшие из рукописных учебников были дословно воспроизведены в печатном виде, продолжая на протяжении веков оставаться важной частью образовательного процесса.

Ключевые слова: *школа, образование, педагогика, рукописный учебник, Средневековье, функциональность, литература, учебное пособие.*

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՑԱՂԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՄԱԿԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆՑԻ «ՄԻՐԶԱՅ ԵՎ ԱՆՆԱՅ» ԵՐԿՈՒՄ *

ՀՏԴ 82:001.8 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-149*

ՍՈՆԱ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտության ասպիրանտ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արտիմետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ք. Էջմիածին, Հայաստանի Հանրապետություն
mousayelyan1999@gmail.com
ORCID: 0009-0004-1028-9140

Հոդվածի նպատակն է դիտարկել, թե ինչպես են սոցիալական միջավայրը և ավանդական մտածողությունը որոշիչ դեր ունենում մարդկային ճակատագրերի կործանման վրա:

Հոդվածի նպատակին հասնելու համար առաջադրվել է հետևյալ խնդիրը. բացահայտել և վերլուծել ազգային կենցաղին բնորոշ տարրերը Մակար Բարխուդարյանցի «Միրզայ և Աննայ» երկում:

Հոդվածում կիրառվել են հերմենևտիկայի, կենսագրական մասնագիտական մեթոդը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Մակար Բարխուդարյանցի հիշյալ երկը գիտական շրջանառության մեջ ներառվում է առաջին անգամ՝ բացահայտելով հեղինակի աշխարհայացքը և գեղարվեստական մտածողությունը: Քիչ ուսումնասիրված լինելու հանգամանքով պայմանավորված՝ այն բացահայտում է ժամանակաշրջանի և սոցիալ-մշակութային միջավայրի բնութագրման առումով մինչ այժմ չընդգծված մի շարք նոր շերտեր: Ներկայացվում են նաև ազգային կենցաղի փոփոխության խնդիրները՝ ժամանակի անցումային շրջափուլում: Ազգային կենցաղին բնորոշ տարրերի վերհանումը ունի նաև դաստիարակչական նշանակություն:

Աշխատանքի գիտական նորույթը Մակար Բարխուդարյանցի գեղարվեստական ժառանգության, մասնավորապես՝ «Միրզայ և Աննայ» երկի՝ ազգային կենցաղի և սոցիալ-հոգեբանական շերտերի համադրական ուսումնասիրության մեջ է: Ուսումնասիրության համար նյութ են հանդիսացել արխիվային և տպագիր նյութերը: Հետազոտության արդյունքում բացահայտվել է ազգային կենցաղի, սոցիալական միջավայրի և ավանդական մտածողության փոխկապակցված համակարգը՝ ցույց տալով դրանց գործառույթը մարդկային ճակատագրերի կործանման պատճառահետևանքային շղթայում:

Հիմնաբառեր՝ *Միրզա, Աննա, գեղարվեստական երկ, ազգային կենցաղ, սոցիալական միջավայր, ավանդական մտածողություն, Արցախ:*

---

* Հոդվածը ներկայացվել է 04.11.2025թ., գրախոսվել՝ 27.11.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Ներածություն

Հայագիտության մեջ Մակար Բարխուդարյանցի գրական ժառանգությանը անդրադարձել են Ա. Առաքելյանը (Առաքելյան 72), Պ. Չոբանյանը (Չոբանյան 7-15), Զ. Բալայանը (Բալայան 604), Վ. Եղիազարյանը (Եզիազարյան 320), Թ. Մինասյանը (Մինասյան 20) և այլք: Վերոնշյալ հեղինակների համար հիմնականում քննության նյութ է դարձել «Արցախ» աշխատությունը:

«Միրզայ և Աննայ» երկի ուսումնասիրությունը առաջին փորձն է՝ Մակար Բարխուդարյանցի գեղարվեստական մտածողությունը դիտարկելու գրականագիտական տեսանկյունից:

Մակար Բարխուդարյանցի գրական ժառանգությունը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ գրական-գեղարվեստական, կրոնական և գրապատմական-գիտական երկեր: Այս բազմաշերտ ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Միրզայ և Աննայ» ստեղծագործությունը, որը կարելի է դիտարկել որպես հեղինակի գրական երախայրիք և գեղարվեստական մտածողության ձևավորման սկզբնակետ: Երկն ուսումնասիրելիս առավելապես կենտրոնացել ենք երեք հիմնական թեմատիկ բաժանումների վրա՝ գյուղական միջավայր, ընտանեկան բարքեր, հասարակություն-անհատ հարաբերություններ: Վերջիններիս ամբողջական քննությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ու ներկայացնելու ազգային կենցաղը: Ներածությունը ծառայում է որպես սյուժեի զարգացման հիմք, որն ընթերցողին ի ցույց է դնում ավանդապաշտ և կարծրատիպերով պայմանավորված հասարակական մտածողության ճնշող ազդեցությունը անհատի հոգեբանության և ճակատագրի վրա: Մակար Բարխուդարյանցը ստեղծագործության ներածության մեջ մանրամասն ներկայացնում է Աննայի հոգեվիճակը և նրա ծանր հոգեկան դրությունը՝ Միրզայի մահվանից հետո:

Արցախյան պարզ ու հասարակ գետնափոր, միհարկանի տներում դաստիարակվում է սերունդ, որն ունի ազգային ոգի, լավն ու վսեմը ժառանգաբար փոխանցելու՝ ի վերուստ տրված ուխտ: Հասարակ գյուղական գործիքները, կահկարասիները, որոնք մի ուրիշ շքեղություն են հաղորդում քողտիկներին, առավել հյութեղ ու բնական են դարձնում գյուղական միջավայրը: Այդ առումով Մակար Բարխուդարյանցը գրում է. «Մանր պարագաներն նկարագրելով՝ մեր նպատակն է Ղարաբաղու բոլոր գիւղօրէից տանց վերայ ճիշտ գաղափար տալ, և հասկացընել, որ սոյն պարզ, գետնափոր և անպաճոյճ տանց մէջ կը յարատևեն ցարդ նահապետական քաղցր կեանք, համեստ պարզութիւն, բնական առաքինութիւն և միանգամայն հովուական անկեղծ կենցաղավարութիւն» (Բարխուդարեանց 30):

Այս առումով «արցախյան պարզ ու հասարակ գետնափոր, միհարկանի տներ» արտահայտությունը անմիջապես ստեղծում է **հակադրություն**՝ պարզության ուղղակի պատկերումը հակադրելով դաստիարակվող սերնդի **բարձր և վսեմ** առաքելությանը:

«Գետնափոր» բառը ընդգծում է **հողի հետ կապը, հնամենի լինելը,** գրականության մեջ այն հաճախ ծառայում է որպես **մաքրության և անկեղծության** մետաֆոր:

Աշխատավոր գյուղացու առօրյան ավելի մանրամասն ներկայացվում է «Գուդաններ», «Քաղհան», «Խոտհարք», «Հունձ և կալ» ենթագլուխներում. «Պատումի մեջ ներառվում են կա՛մ իրադարձություններ, դեպքեր (դրանք ձևավորում են բուն պատմությունը), կա՛մ էլ առարկաների, արտաքին աշխարհի նկարագրություններ» (Գրականության տեսության արդի խնդիրներ 268):

Մակար Բարխուդարյանցը պարզ ու ջերմ նկարագրությամբ է ներկայացնում աշխատավոր գյուղացու կերպարը: Գյուղացին հեղինակի երկում պատկերված է համեստ, արժանապատիվ կյանքով ապրող և սեփական քրտինքով հաց վաստակող մարդ: Հեղինակը կարևորում է ոչ միայն գյուղացու ֆիզիկական աշխատանքը, այլև

նրա հոգևոր ներուժը և ազգային ինքնությանը հավատարիմ մնալը: Նա համեմատում է արցախյան գյուղական միջավայրը եվրոպական քաղաքային կյանքի հետ՝ նախապատվություն տալով առաջինին: Բարխուդարյանցի համար գյուղացու ձեռքով պատրաստված ուտեստն ունի յուրահատուկ քաղցրություն, քանի որ այն պատրաստված է սիրով ու անձնական ջանքով: Այս պատկերացմամբ հեղինակը վեր է հանում գյուղական կյանքի հիմնական արժեքները՝ ազնիվ աշխատանքը, պարզությունն ու բնության հետ ներդաշնակությունը. «Թագաւորաց և իշխանաց պալատից մէջ պատրաստուած անթիւ նիւթերէ բաղկացեալ քաղցրահամ կերակուրքն և Եւրոպայի մէջ հնարուած և արուեստակեալ ոգելից ըմպելիք ի՞նչ են այն պարզ ճաշի և ջրոյ հետ բաղդատելով» (Բարխուդարեանց 30):

Նույնիսկ գյուղատնտեսական ծանր աշխատանքների ընթացքում Միրզայի միտքը չէր հեռանում Աննայից: Տարիների ընթացքը ոչ թե տարանջատել, այլ կապել էր նրանց հոգիներն ու սրտերը՝ հասունացնելով թե՛ զգացմունքները, թե՛ գաղափարները: Նրանց սերը, որ միաժամանակ էր ծնվել, դարձել էր ներքին ներդաշնակություն՝ մշտապես ուղեկցելով կյանքի ամեն պահի.

«Մեճլիսով, սազանտայով, քեամնչայով պատուական,
Եսիր (Սարգսյան 535) տանին ինձ Տաղստան և քեզ Ամերիկան,
Թաք լինիս դու իմ սրտումն ես քո, իմ սիրական
Մին մինու համար մեճլիս, սազանտայ և քեամանչայ ենք,
Անթառամ» (Բարխուդարեանց 30):

Շինական հայի համար երջանկությունը և կյանքի իմաստը ծնվում են աշխատանքի մեջ: Աշխատասիրությունը դառնում է ինչպես գոյատևման, այնպես էլ հոգևոր ինքնակատարելագործման միջոց: Այդ հատկանիշի շնորհիվ արցախցին մաքրագործվում է, կանգնում է կյանքի փորձությունների առջև առավել հաստատ և ինքնավստահ. «Եթե աշխատութիւնն մարդկային հնարած բոլոր դեղերէն աւելի զօրաւոր դեղ և ամենագէտ բժիշկներէ կատարեալ և անսխալ բժիշկ անուանեմ, կարծեմ թէ ամենայն մարդ ինձ իրաւունք կը տայ: Ըստ որում աշխատութեան շնորհիւ այնպէս ախորժակով կերին կերակուրներն և խմեցին…» (Բարխուդարեանց 30):

Ընտանեկան բարքերը ներկայացնելիս Մակար Բարխուդարյանցը կենտրոնանում է մի կարևոր հարցի վրա, ինչը խիստ առաջընթաց է հեղինակի ապրած ժամանակաշրջանի համար. ընդգծվում է մաքուր ու պարզ սիրո գաղափարը, որում կարևոր չեն ոսկին ու արծաթը, այլ սիրտն ու լռությամբ ասվող սերն է, որ առաջնային են. «Սոյն վիպասանութեան մեջ ակներեւ, պէտք է տեսնէք, որ սէրն կը խօսի, քան թե լեզուն, զգացումն կը խօսի, քան թե բերանն, սիրտն ու հոգին քան թէ արիւն ու մարմինն: Սոյն վիպասանութեան մէջ պէտք է պարզապէս տեսնէք, որ Միրզայի և Աննայի սէրն չ՚նմանիր այն երիտասարդաց եւ օրիորդաց սիրոյն, որք յետ նշանախօսութեան առ ժամանակ մի զիրեար պատրեյեն զկնի կը բաժանին՝ կեղտ անուն թողլով հասարակութեան մէջ» (Բարխուդարեանց 4):

Միրզայի ու Աննայի սերը բարձր է մարդկային սովորական հարաբերություններից, որոնք վեր են ածվել առուծախի: Հեղինակի նպատակն է ներկայացնել սիրո այն նախնական, դեռևս չաղավաղված վիճակը, որն ի սկզբանե բնորոշ էր հայ մարդուն:

Միրզայի ու Աննայի սերը տրված էր ի վերուստ՝ Տիրոջ օրհնությամբ. «Ուրեմն, Մարիամ ջան, դու ևս յիշէ՛ և կրկնէ՛ այն ուխտն, եթէ հաստատ ես խօսքիդ վերայ, երբ քանի մի տարիէն յետոյ Աննայիս ծնունդն և մկրտութիւնն շնորհաւորելու համար մեր տուն գալով՝ Աննայիս երկու միւռոնած աչքերն համբուրեցիր: **Արդ՝ յիշէ՛, որ այն օրէն ու ուխտեցիր և օրորոցին լուծն խազելով ասացեր.** «Եթէ Աստուած յաջողէ, Միրզայիս հարս պէտք է առնում» (Բարխուդարեանց 23):

Օրորոցախազը (Լալայան 97) ազգային հին ավանդական բարքերից է, որով կանխորոշվում է զավակների ամուսնության հարցը ապագայում:

Հարսանեկան բարքերից Մակար Բարխուդարյանցը անդրադառնում է նաև սափրելու ծեսին. «-Կառավարիչ, գոչեց քահանայն, փեսան ներս հրաւիրէ՛, որ երեսն ածիլուի, որպէս զի ժամանակաւ խնամու տունն երթանք» (Բարխուդարեանց 71):

Սափրելու ծեսի առավել ամբողջական նկարագիրը հանդիպում ենք Երվանդ Լալայանի (Լալայան 111) մոտ: Վերջինս մանրամասն նկարագրում է ծեսի ողջ ընթացքը:

Նշանադրության արարողակարգը ենթադրում է նվիրական երազանքի իրականացում. ընթերցողը ակնկալում է երջանիկ ավարտ, միայն Աստծո օրհնությունն է անհրաժեշտ, այստեղ երևում է մարդու կյանքի և ճակատագրի միջև հակադրությունը: Բայց այլ է ճակատագրի նախախնամությունը: Այս հակադրությունը ստեղծում է պատմության դրամատիկ լարվածություն և ընթերցողին ներգրավում հուզական-մտածողական համակարգի մեջ. «Խոյի կռածոյ եղջիւրներէն կոթաւոր խնձորներով և անուշահոտ վարդերով զարդարուած շարաններ կախուած էին և կարգաւ, զետեղուած ոսկեզօծ մոմերն կը վառուէին» (Բարխուդարեանց 116):

Մակար Բարխուդարյանցի գեղարվեստական երկերում առանձնահատուկ նշանակություն ունեն նվազագույն տարրերը: Վերջիններիս միջոցով հեղինակը ստեղծում է գործառույթների մի ամբողջ շղթա: Ըստ Բարտի՝ այդ նվազագույն տարրերը (դրանք Տոմաշևսկին նույնպես անվանում էր մոտիվներ) սյուժեի ընդհանուր կառույցի մեջ ունեն որոշակի գործառույթ և դրանց միջև անպայմանորեն առկա են փոխադարձ կապի հարաբերություններ (Գրականության տեսության արդի խնդիրներ 284):

Զարդարված խոյը տղայի տնից աղջկա տուն ուղարկելը նշանադրության ծեսի կարևոր բաղադրիչներից է. «Որոշված օրը առավոտյան փեսացուի տնից ուղարկում են աղջկա տունը մի ոչխար (եթե միայն հարուստ են), ճակատը սպիտակ և կարմիր ներկած, պոզերից և վզից խնձորներ և ընկույզի շարուկ ձգված, մի շիշ օղի, մի թունգի գինի, մրգեղեն և շաքարեղեն» (Լալայան 102):

Աննայի ձեռքում պահվող նվիրական թաշկինակը կերպարային խորհրդանիշ է, որն արտահայտում է հերոսի հոգեբանական վիճակը և զգացմունքային աշխարհը. «Յուրաքանչյուր գործառույթի մեջ կա որոշակի սերմ, որն էլ իր հերթին ծնում է նոր տարրեր կամ ավելի ուշ հանդես եկող գործառույթներ: Հետևաբար, սյուժեի անգամ «ամենամանր» թվացող տարրը կարող է իր հետևից բերել գործառույթների մի ամբողջ շղթա» (Գրականության տեսության արդի խնդիրներ 284): Միրզային կորցնելուց հետո թաշկինակը դառնում է վերջին հիշողությունը, որը պահպանում է կապը սիրելիի հետ: Թաշկինակը ծառայում է որպես հանգույց, որ միավորում է անցյալն ու ներկան, սթափեցնում տառապանքների մեջ թաղված Աննայի մտքերը և խորհրդանշում անսպառ հույսը՝ սիրո հավերժության և կորուստի ցավի համատեքստում. «Իւր ձախ ձեռքն նուիրական թաշկինակ մի բռնած է, որով մերթ ընդ մերթ իւր աղբերակունքներէն թափուող արտասուգն կը սրբէ. . . » (Բարխուդարեանց 7):

Իրենց ծանոթությունից շատ չանցած՝ Միրզան և Աննա փոխանակվում են թաշկինակներով և ուխտում. «. . . կը փոխեն միմեանց հետ իւրեանց թաշկինակներն, որպէսզի երբ զիրար յիշեն և լան, նոյն թաշկինակներով սրբեն իւրեանց արտասուքն» (Բարխուդարեանց 128): Թաշկինակը վերջին կապող օղակն է Աննայի և Միրզայի միջև, որը չկարողացավ խլել հասարակությունը:

Հասարակություն-անհատ հարաբերությունները քննելիս փորձել ենք ներկայացնել միջավայրի ու մարդու կապի բարդ համակարգը: Անհատը դառնում է հասարակության կաղապարված ու ավանդական մտածողության զոհը: Իրականությունը անողոք ու դաժան է մարդու նկատմամբ. «Կը տեսնէիր նոյն գերեզմանի վերայ տապանաքար մի և նորա վերայ սիրոյ գրչաւ քանդակուած այն համառօտ արձանագիրն.

Աստ հանգչի ընդ հոգւոյս

Հոգի Միրզայ սիրելւոյս:

Եւ երբ այս ամենը տեսնեիր, այնուհետև դիւրաւ կը համոզուէիր, որ սոյն օրիորդն միայնակ՝ բոլոր գիւղացւոց չափ վիշտ, ցաւ, հեծութիւն և կսկիծ ունի» (Բարխուդարեանց 116):

Աննայի սիրտը դարձել է տապանաքար, օրերը ավելի մռայլ ու անխոս են առանց Միրզայի: Աննային մնացել էր միայն հիշողությունը, որը երբե՛ք հասարակությունը չի կարող խլել:

Բայց և միևնույն ժամանակ ծանր է հիշողությունը. Աննային խեղդում է սրտի մորմոքը: Սիրելիի գերեզմանաքարը դարձել է նրա միակ մխիթարությունը: Մարդկային հասարակության բարդ համակարգի վերլուծության ընթացքում կենտրոնացել ենք ծնողների, միջավայրի ներկայացուցիչների և Միրզայի ու Աննայի վրա: Նրանց գործունեությունը և դիրքորոշումը արտացոլում են հասարակության տարբեր խավերի տեսակները և խճանկարը, որոնք միաժամանակ դառնում են ազգային կենցաղի անբաժանելի մասնիկը՝ ընդգծելով անհատի և միջավայրի անքակտելի փոխկապակցվածությունը:

Մարիամը՝ Միրզայի մայրը, ներկայացվում է որպես համարձակ և ինքնավստահ կին, որը հակադրվում է Թագուհու զուսպ և խոհեմ կերպարին: Սակայն նրա այդ համարձակությունը հաճախ ուղեկցվում է հետևանքների գիտակցման պակասով: Մարիամը գաղտնի, առանց ամուսնու գիտության, կնքում է բանավոր ուխտ՝ հայտնելով իր առանձին կամքը: Մակար Բարխուդարյանցը վերլուծում է միջավայրի անողոք ազդեցությունը կնոջ հոգեբանության վրա՝ ցույց տալով, թե ինչպես են արցախյան ավանդույթները սահմանափակում կնոջ գործողությունների շրջանակն ու խոչընդոտում նրա ինքնարտահայտումը. «Մարիամ անզգոյշ և անհեռատես և միանգամայն բոլոր եղելութեանց և գործոց հետևութեանց անթափանց» (Բարխուդարեանց 21):

Թագուհին՝ Աննայի մայրը, ավելի զուսպ, աստվածավախ կերպար է: Չնայած նա նույնպես դառնում է կնքվող դաշինքի մի մասը: Սակայն, ուխտի բացահայտվելուց հետո, նա որոշ ժամանակ ենթարկվում է ամուսնու խոսքին: Այս դեպքում տիրականը ամուսնու խոսքն է: Այստեղ Մակար Բարխուդարյանցը տալիս է արցախյան միջավայրի տիպիկ նկարագրությունը: Արցախցի մայրը իրավունք չունի աղջկա համար սիրած տղա ընտրել, ավելին՝ ուխտ կապել. «Թագուհին համարեա թէ Խնածախու բոլոր կիներէն կրթեալ, ազնիւ, խոհեմ և գեղեցիկն էր, և միանգամայն ամեն գործոց հետևութիւնքն քաջ հեռատեսողն» (Բարխուդարեանց 21):

Թագուհին և Մարիամը ներկայացվում են որպես արցախյան ավանդական բարոյականության և ընտանեկան սովորույթների կրողներ: Թագուհին՝ զուսպ, աստվածավախ և խոհեմ կին, մարմնավորում է իր դարի ու միջավայրի կանացի իդեալը՝ հարգելով ընտանեկան կարգը և աստվածային պատվիրանը: Նա և Մարիամը կնքում են բանավոր ուխտ, որն արտահայտում է ոչ միայն կնոջ որոշումների սահմանափակվածությունը, այլև նրանց ակտիվ ներգրավվածությունն ու պատասխանատվությունը ընտանիքի ապագայի ձևավորման գործում: Թագուհու կերպարը առանձնանում է խոհեմությամբ, բարեպաշտությամբ և ընտանեկան արժեքների հանդեպ համառությամբ՝ ներկայացնելով նուրբ հակադրություն մոր կամքի և ավանդույթի միջև:

Մակար Բարխուդարյանցը ընթերցողին չի առաջարկում պարզատիպ լուծումներ, այլ ներկայացնում է կնոջ դերը՝ ընդգծելով նրա ներսում առկա հոգեբանական և սոցիալական զուգահեռները:

Մինչդեռ Թագուհու ամուսինը՝ Առաքելը, կնոջ առաքինությունը չգնահատող, մակերեսային հայացք ունեցող կերպար էր, որը կնոջ դերը սահմանափակում էր միայն տնային տնտեսությամբ: Նա չէր ճանաչում կնոջ հոգևոր զորությունն ու խոհեմությունը, և չէր արժևորում ընտանեկան արժեքների հանդեպ նրա նվիրումն ու բարոյական բարձր դիրքը: Թագուհու և Առաքելի միջև գոյություն ունեցող այս

հակադրությունը ընդգծում է կնոջ՝ որպես հոգևոր և բարոյական անձնավորության և կնոջ՝ որպես տնային գործեր կատարողի տարբեր ընկալումները. «Առաքել իր կնոջ հարգն ու պատիւն իմացող չէր. իւր համար արժեք չ՛ունեին այս առաքինութիւնքն» (Բարխուդարեանց 65):

Ծնողների կնքած ուխտը իրական ու անշեղ դարձավ այն պահից, երբ իրենց զավակները առաջին անգամ հանդիպեցին ու փոխանակվեցին ծաղկեփնջերով: Այդ ծաղիկները տեսնելով՝ թե՛ Թագուհին, թե՛ Մարիամը, իրարից անկախ, շտապեցին եկեղեցի: Նրանք անակնկալի էին գալիս, սակայն շուտով սկսեցին խոսել ուխտի և ծաղիկների խորհրդի մասին: Միաձայն որոշեցին, որ այդ առաջին ծաղիկները պիտի նվիրեն Աստծուն, քանի որ իրենց կնքած ուխտը անձեռնմխելի էր և միայն Աստծուն էր հայտնի:

Կնոջ դերն այստեղ սահմանափակվում է առօրյա պարտականություններով, և նրա ներքին արժանիքները, գեղեցկությունն ու հոգևոր հարստությունը չեն նկատվում: Մակար Բարխուդարյանցը ներկայացնում է կնոջ ամբողջական կերպարը՝ նա միաժամանակ մայր է, տանտիկին, սակայն իր ազատությունն ու ինքնուրույնությունը խստորեն սահմանափակված են հասարակական ու ընտանեկան կանոններով: Հեղինակը հենց այս հակադրության միջոցով բացահայտում է կնոջ սոցիալական դիրքի և անհատի ազատության սահմանափակումների հիմնախնդիրը՝ զարգացնելով թեման և ընթերցողին ներգրավելով բարոյական ու հոգեբանական վերլուծության մեջ:

Աննան երկի կենտրոնական կերպարն է, որի շուրջ էլ հիմնականում զարգանում են գործողությունները: Մակար Բարխուդարյանցը Աննայի կերպարը կերտելիս կենտրոնացել է՝ նրան ներկայացնի ամենավառ ու գեղեցիկ ձևով: Բայց և, միևնույն ժամանակ, խոր քննության է ենթարկել Աննայի ներաշխարհը, բացահայտել նրա պայքարող տեսակը, որը և՛ բնավորություն է, և՛ խառնվածք: Բայց վերջում հասարակությունն է որոշում կնոջ երջանիկ լինելը կամ չլինելը. Աննան «մեղավոր էր» նրա համար, որ Աստծո կողմից արժանացել էր այդքան մեծ սիրո՝ Միրզայի սիրուն: Հասարակությունը անտարբեր է մարդկային ցավերի ու տառապանքների նկատմամբ, նա միայն սովոր է խարազանել ու քննադատել, փնովել տեղի ու անտեղի: Աննան անկեղծ սիրով էր սիրում Միրզային, նրա հոգին ազնիվ էր: Հեղինակը բացառիկ ուժով է օժտում Աննային:

Աննայի արտաքին կերպարը տեսանելի է շրջապատին, սակայն նրա ներքին հույզերն ու խոր ցավերը մնում են անհասանելի: Ներքին աշխարհի պատկերը՝ հոգու և սրտի խորքում, լի է բարոյական ավերակներով, ողբալի կործանումով, անտանելի վշտով և անդառնալի վերքերով: Սիրո հրդեհը վառվում է Աննայի սրտում՝ այն դարձնելով միաժամանակ բոցավառ և դալկահար:

Չլսված երևույթ էր արցախյան իրականության մեջ սիրած զույգերի ազատ հանդիպումը, ծաղկեփնջեր փոխանակելը, աղբյուրից միասին տուն գնալը: Այս յուրահատկություններով օժտելով Աննային՝ հեղինակը փորձում է նրան դարձնել նոր միջավայրի հերոս՝ ազատ, անկախ ու համարձակ: Իհարկե, սյուժեի զարգացմանը զուգընթաց հեղինակը տալիս է նաև գլխավոր հերոսների գաղափարական հասունացումը:

Միրզան և Աննան այն հազարավոր դժբախտ զույգերից էին, որոնց հավաքական կերպար է դարձրել Մակար Բարխուդարյանցը՝ փորձելով տալ մի շարք հարցերի պատասխաններ: Նախ պիտի վերափոխվի հասարակությունը, այնուհետև պիտի վերանա կնոջ՝ միայն տնային տնտեսուհի լինելու գաղափարի ընկալումը:

Մակար Բարխուդարյանցը կենցաղը վերափոխում է գեղարվեստական արժեքի: Կենցաղի նյութական և հոգևոր շերտերը՝ ընտանեկան ավանդույթները, հավատքը, աշխարհայացքը, աշխատանքային վարքագիծը, լեզվամշակութային առնաձնահատկությունները դառնում են ուսումնասիրության հիմնական նյութ:

Մակար Բարխուդարյանցը մշտապես շեշտադրում է արցախցի կնոջ կանացիության գաղափարը՝ ներկայացնելով մի կերպար, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվում են ֆիզիկական դիմացկունությունն ու ներքին քնքշությունը, աշխատանքի կոփվածությունը և հոգևոր նրբազգացությունը: Մակար Բարխուդարյանցի հայեցակետում արցախցի կինը հանդես է գալիս իբրև ազգային գոյատևման ու բարոյական տոկունության խորհրդանիշ՝ իր մեջ մարմնավորելով զոհաբերության, հավատքի, սիրո և պարտականության սկզբունքները: Բարխուդարյանցի գրառումները չեն սահմանափակվում կենցաղային նկարագրություններով. հեղինակը կնոջ կերպարի միջոցով փոխանցում է ազգային արժեհամակարգի էությունը. «Նահապետական կենաց ամեն տեսակ աշխատանաց բովուց միջէն իբրև ոսկի զտուած. . . » (Բարխուդարեանց 37):

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հեղինակը կենցաղը վերափոխում է բարոյական և ազգային ինքնագիտակցության, որով հաստատվում են հայ մարդու արժեհամակարգի հիմնական սկզբունքները: Առօրյան վերածվում է գեղարվեստական տարածության, որտեղ հեղինակը փորձում է միահյուսել անցյալն ու ներկան: Ազգային կենցաղի քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու կյանքի ամբողջական պատկերը: Սիրո պատմությունը դիտարկվում է ոչ միայն որպես անձնական դրամա, այլև միջավայրի, բարոյահասարակական վերաբերմունքի և ավանդական մտածողության քննադատություն: Հեղինակը ստեղծում է երկու կերպարներ, որոնց ճակատագիրը պայմանավորված է ոչ միայն նրանց զգացմունքային ներշնչումներով, այլև հասարակության կողմից պարտադրվող բարոյական և ավանդական օրենքներով: «Միրզայ և Աննայ» երկի նպատակն է ծառայել ընդհանուրին, այսինքն՝ ազգի բարօրությանն ու հոգևոր զարգացմանը:

Հեղինակը ձգտում է պահպանել անցյալի կենսական հիշողությունը՝ ամրապնդելով ազգային ինքնությունը, ինչպես նաև երիտասարդներին ու օրիորդներին ներկայացնել ամուսնական սիրո վառ, անկեղծ օրինակ՝ որպես բարոյական տիպար: Նպատակը միաժամանակ առաքելություն է՝ զգուշացնել ապագայի սերունդներին՝ ցույց տալով սիրո և ընտանեկան երջանկության ճանապարհին առկա վտանգներն ու դժվարությունները:

Մակար Բարխուդարյանցի «Միրզայ և Աննայ» երկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ազգային կենցաղին բնորոշ տարրերը: Առաջին գլխի «Հարսանիք» ենթագլխում հեղինակը ներկայացնում է նախահարսանեկան և ետհարսանեկան ամբողջ արարողակարգը՝ առանձնացնելով փեսայի սափրման ծեսը, բերանբացիքը և որսորդության կանոնները՝ մանրամասն նկարագրություններով:

Եզրահանգումներ

1. Մակար Բարխուդարյանցը կերպարների խոսքով և վարքով արտահայտում է կենցաղի նկարագրությունը: Ժողովրդական լեզվի, առած-ասացվածքների կիրառումը միջավայրը դարձնում է առավել տիպիկ և պատկերավոր:

2. Երկի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու արցախյան կենցաղի տարբեր շերտեր՝ ընտանեկան վարքուբարքից մինչև հասարակական մտածողության մեջ արմատացած նախապաշարումները, որոնք կործանարար ազդեցություն են ունենում մարդկային ճակատագրի վրա:

3. Հայ գրականության պատմության համատեքստում ավանդական մտածողության և նոր սերնդի գաղափարական բախումը մշտապես եղել է ստեղծագործական նյութ: Այս բախման գեղարվեստական արտացոլումը Բարխուդարյանցի «Միրզայ և Աննայ» երկում առաջանում է սերունդների միջև առկա մտածողության հակադրությունից: Այդ հակադրության հանգուցալուծումները գրողը փորձում է ներկայացնել ոչ որպես ուղղակի քննադատություն, այլ որպես բարոյահոգեբանական խոր վերլուծություն:

4. Մակար Բարխուդարյանցի գրական առաքելությունն ուղղված էր անհատական ինքնության ձևավորմանը: Հեղինակը գիտակցում էր, որ մի քանի գրական երկով հնարավոր չէր արմատախիլ անել դարերով կարծրացած հասարակական նորմերը, սակայն նրա ստեղծագործություններում նկատելի է գիտակցված փորձ՝ սկսելու «փոքր քայլերից»՝ դեպի մտածողության կառուցվածքային փոփոխություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան, Առաքել. *Մակար եպիսկոպոս Բարխուդարյան (Միաբան Մայր Աթոռի, 1836-1906).* Էջմիածին ամսագիր, 1974, թիվ Է-Ը:
2. Բալայան, Զինաիդա. *Արցախը XIX դարի հայ գրականության մեջ.* Դիզակ պլյուս, Ստեփանակերտ, 2021:
3. Բարխուդարեանց, Գրեաց Ո. Գ. *Միրզայ եւ Աննայ.* Տպագրութիւն Տէտէեան, Զմիւռնիա,1876:
4. *Գրականության տեսության արդի խնդիրներ.* ԵՊՀ հրատ. , Երևան, 2016:
5. Եղիազարյան, Վանո. *Արցախի հայկականության ակունքները և ադրբեջանական աղվանագիտության կեղծիքների հերքում.* ՎՄՎ-ՊՐԻՆՏ, Երևան, 2023:
6. Լալայան, Երվանդ. *Երկեր հինգ հատորով.* հ. , 2, Երևան, 1988:
7. Մինասյան, Թամարա. *Արցախի գրչության կենտրոնները.* «Նաիրի» հրատ., Երևան,2015:
8. Չոբանեան, Պավել. *Մակար եպս. Բարխուտարեանցի կեանքն ու գործը.* Գանձասար Աստուածաբանական կենտրոն, Երեւան, 1999:
9. Սարգսյան, Արմեն. *Ղարաբաղի բարբառի բառարան*, Երևան, 2013:

WORKS CITED

1. Arakelyan, Arakel, Makar episkopos Barkhudaryan (Miaban Mayr Atori, 1836–1906), Ejmiatsin amsagir, 1974, tiv E–Y. [Makar Bishop Barkhudaryan (Brother of the Mother See, 1836–1906)]. (in Armenian)
2. Balayan, Zinaida, Artsakhe XIX dari hay grakanutyan mej, Stepanakert, Dizak plus, 2021. [Artsakh in 19th-Century Armenian Literature]. (in Armenian)
3. Barkhudaryants, Ovanes G., Mirzay yev Annay, Zmyurnia, Tpaghrutyun Teteean, 1876. [Mirza and Anna]. (in Armenian)
4. Chobanian, Pavel, Makar eps. Barkhudaryantsi keanqn u gortsy, Gandzasar Astvatsabanakan kentron, Yerevan, 1999. [The Life and Work of Bishop Makar Barkhudaryants]. (in Armenian)
5. Grakanutyan tesutyan ardi khndirner, Yerevan State University Press, Yerevan, 2016. [Contemporary Issues of Literary Theory]. (in Armenian)
6. Lalayan, Yervand, Yerker hing hatorov, h. 2, Yerevan, 1988. [Works in Five Volumes, Vol. 2]. (in Armenian)
7. Minasyan, Tamara, Artsakhi grchutyan kentronnery, Yerevan, Nairi hrat., 2015, ej 20. [Centers of Manuscript Writing in Artsakh]. (in Armenian)
8. Sargsyan, Armen, Gharabaghi barbarri bararan, Yerevan, 2013. [Dictionary of the Karabakh Dialect]. (in Armenian)
9. Yeghiazaryan, Vano, Artsakhi haykakanutyan akunqnery yev adrbejanakan aghvanagitutyan keghciqneri herkum, Yerevan, VMV-PRINT, 2023. [The Origins of Armenian Identity in Artsakh and the Refutation of Falsifications in Azerbaijani Albanology]. (in Armenian)

REFLECTION OF NATIONAL LIFE IN MAKAR BARKHUDARYAN'S BOOK "MIRZAI AND ANNA"

SONA MUSAYELYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA),
M. Abeghyan Institute of Literature, Ph.D. Student;
"Artimet Secondary School" CJSC, Teacher
Etchmiadzin, the Republic of Armenia

The aim of the article is to examine how the social environment and traditional modes of thinking play a decisive role in the destruction of human destinies. In order to achieve this aim, the following objective has been set: to identify and analyze elements characteristic of national everyday life in Makar Barkhudaryants's work "Mirzay and Annay."

The study employs hermeneutic and biographical research methods.

The relevance of the topic is determined by the fact that this work by Makar Barkhudaryants is introduced into scholarly circulation for the first time, thereby revealing the author's worldview and artistic thinking. Due to its limited prior study, the work uncovers a number of previously unexplored layers significant for characterizing the historical period and the socio-cultural environment. The article also addresses issues related to the transformation of national everyday life during a transitional period. The identification of elements characteristic of national everyday life also carries an educational value.

The scientific novelty of the research lies in the comprehensive study of Makar Barkhudaryants's literary heritage, particularly "Mirzay and Annay," through a comparative analysis of national-cultural and socio-psychological layers.

The research is based on archival and printed materials.

As a result of the study, an interconnected system of national everyday life, social environment, and traditional thinking has been revealed, demonstrating their function within the cause-and-effect chain leading to the destruction of human destinies.

Keywords: *Mirza, Anna, artistic music, national way of life, social environment, traditional thinking, Artsakh.*

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО БЫТА В КНИГЕ МАКАРА БАРХУДАРЯНЦА «МИРЗАЙ И АННАЙ»

СОНА МУСАЕЛЯН
аспирант специальности «Армянская средневековая и новая литература»
Института литературы имени М. Абегяна
Национальной академии наук Республики Армения (НАН РА),
учитель армянского языка и литературы ЗАО «Средняя школа Артимета»,
г. Эчмиадзин, Республика Армения

Цель статьи заключается в рассмотрении того, каким образом социальная среда и традиционное мышление оказывают решающее влияние на разрушение человеческих судеб. Для достижения этой цели ставится задача выявить и проанализировать элементы, характерные для национального быта, в произведении Макара Бархударяна «Мирзай и Аннай».

В исследовании применены герменевтический и биографический методы.

Актуальность темы определяется тем, что указанное произведение Макара Бархударянца впервые вводится в научный оборот, раскрывая мировоззрение автора и особенности его художественного мышления. В силу недостаточной изученности текст открывает новые пласты, ранее не акцентированные в характеристике эпохи и социально-культурной среды. В статье также рассматриваются проблемы трансформации национального быта в переходный период. Выявление элементов, присущих национальной традиции, имеет и воспитательное значение.

Научная новизна работы состоит в сопоставительном исследовании художественного наследия Макара Бархударяна, в частности произведения «Мирзай и Аннай», с точки зрения национального быта и социально-психологических пластов.

Материалом для исследования послужили архивные и печатные источники.

В результате анализа выявлена взаимосвязанная система национального быта, социальной среды и традиционного мышления, показана их роль в причинно-следственной цепи, ведущей к разрушению человеческих судеб.

Ключевые слова: *Мирзай, Аннай, художественное произведение, национальный быт, социальная среда, традиционное мышление, Арцах.*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՏԴ 336:330.3 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-159*

ՍՈՒՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
կիրառական ֆինանսների ֆակուլտետի
ֆինանսական շուկաների և ինստիտուտների
ամբիոնի դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
surenpoghosyan.asue@gmail.com
ORCID: 0009-0004-0454-474X

ՍՈՒՍԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
կիրառական ֆինանսների ֆակուլտետի
ֆինանսական շուկաների և ինստիտուտների
ամբիոնի դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
avetisyansusan1964@gmail.com
ORCID: 0009-0005-6946-5986

Հետազոտության նպատակն է՝ միջազգային ֆինանսական համակարգերի արդի զարգացման և տնտեսության հետ փոխազդեցության տեսանկյունից գնահատել Հայաստանի ֆինանսական համակարգի ներկայիս վիճակը, նախանշել վերափոխման հնարավոր ուղղությունները: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Հայաստանի խիստ բանկակենտրոն ֆինանսական համակարգը բավարար մրցակցային և ճկուն չէ երկրի տնտեսության հետարդյունաբերական գիտելիքահենք և թվային վերափոխման օրակարգ արդյունավետորեն սպասարկելու համար:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ տնտեսության հետարդյունաբերական զարգացման և ճգնաժամերին դիմակայելու համատեքստում ֆինանսական համակարգերի վերլուծություն, ֆինանսական համակարգի միջազգային մոդելների առանձնացում, տնտեսության հետ այդ մոդելների երկրային փոխազդեցության ուսումնասիրություն, Հայաստանի ֆինանսական համակարգի հետարդյունաբերական աճի ներուժի գնահատում:

Որպես ֆինանսական համակարգի արդյունավետության հիմնական ցուցանիշ առանձնացվել է տևական կայուն և որակյալ աճի ապահովումը: Մեթոդաբանության մաս է կազմում նաև վերլուծության համալիր մոտեցումը:

* Հոդվածը ներկայացվել է 01.11.2025թ., գրախոսվել՝ 17.11.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Հետազոտության ընթացքում կիրառվել են նաև անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի և պատմահամեմատական մեթոդները:

Հոդվածում զարգացած, զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների օրինակով ներկայացված են հետարդյունաբերական դարաշրջանում բանկային մոդելի տնտեսական և ֆինանսական արդյունքները: Իրականացված հետազոտության արդյունքում եզրահանգել ենք, որ հետարդյունաբերական փուլ թևակոխած գրեթե բոլոր բանկակենտրոն երկրներում լուրջ խնդիրներ են առաջացել բանկային վարկի միջոցով ֆինանսական ռեսուրսների բաշխման, կարճաժամկետ պարտավորությունների կտրուկ աճի սպասարկման, ինչպես նաև նորամուծական բիզնես նախագծերի ֆինանսավորման առումով: Ինստիտուցիոնալ առումով ավելի դիվերսիֆիկացված և մրցակցային ֆինանսական համակարգերի կայացման միջազգային միտումներից չի կարող զերծ մնալ նաև Հայաստանի բազմաթիվ խնդիրներով ծանրաբեռնված մենաշնորհային բանկային համակարգը:

Հիմնաբառեր՝ ֆինանսական համակարգ, մոդել, Ճապոնիա, Հարավային Կորեա, անցումային տնտեսություն, հետարդյունաբերական զարգացում, բարեփոխում, կապիտալի շուկա:

Ներածություն

Ժամանակակից աշխարհում տնտեսական աճը տնտեսության և ֆինանսական համակարգի փոխազդեցության արդյունք է: Որքան ներդաշնակ և արդյունավետ է այդ փոխազդեցությունը, այնքան կայուն և որակյալ կարող է լինել աճը, հետևաբար և՝ տվյալ երկրում բնակչության բարեկեցությունը:

Արդյունաբերական դարաշրջանում ֆինանսական, իսկ իրականում՝ բանկային համակարգը, բացառությամբ դասական կապիտալիզմի մի քանի երկրների (Հոլանդիա, Մեծ Բրիտանիա) առևտրի և արդյունաբերության ֆինանսական կարիքների սպասարկման գործիք էր:

XX դարի 1970-1980-ական թվականներին ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների և ֆինանսական շուկաների աննախադեպ զարգացմամբ, ֆինանսական հեղափոխությամբ և գլոբալացմամբ պայմանավորված՝ զարգացած երկրների մեծ մասում ֆինանսական համակարգը տնտեսության նկատմամբ ձեռք բերեց դոմինանտի կարգավիճակ: Ֆինանսական շուկաների նման առաջանցիկ զարգացումը կապիտալի բարձր մոբիլության և շարժունակության արդյունք է:

Հայաստանի Հանրապետության տնտեսության ավելի քան 30-ամյա ընթացքն ավելի շատ ճգնաժամային է, քան զարգացող, ինչը չի կարող հարցեր չառաջացնել երկրում ձևավորված ֆինանսական համակարգի և դրա արդյունավետության վերաբերյալ: Ի տարբերություն զարգացած երկրների՝ Հայաստանի ֆինանսական համակարգը բավականաչափ զարգացած չէ տնտեսությունը լիարժեք ֆինանսավորելու, տնտեսական զարգացումը ուղղորդելու համար:

Ֆինանսական համակարգի և դրա գործառույթների վերաբերյալ տեսակետների բազմազանությամբ հանդերձ՝ հնարավոր չէ չնկատել մոտեցումների նմանությունը: Այդ առումով տիպական է Ֆրեդերիկ Միշկինի՝ լայն տարածում ստացած սահմանումը. «Ֆինանսական համակարգը (financial system) այն համակարգն է, որն ապահովում է միջոցների շարժը նրանցից, ովքեր խնայում են, դեպի նրանց, ովքեր զբաղվում են ներդրումներով կամ ծախսում են միջոցները» (Mishkin 4): Ավելի ընդգրկուն է Զ. Բոդիի և Ռ. Մերտոնի մոտեցումը. «Ֆինանսական համակարգը ընդգրկում է շուկաները, միջնորդներին, ֆինանսական ծառայություններ տրամադրող ֆիրմաներին, և այլ ինստիտուտներ, որոնց միջոցով տնային տնտեսությունները,

մասնավոր ընկերությունները և պետական կազմակերպությունները իրացնում են իրենց ընդունած ֆինանսական որոշումները» (Bodi and Merton 25):

Սակայն ֆինանսական համակարգի և տնտեսության փոխազդեցության առումով նպատակահարմար է թվում ֆինանսական համակարգի հեղինակային հետևյալ սահմանումը. «Ֆինանսական համակարգը յուրաքանչյուր երկրում պատմական, մշակութային և այլ հանգամանքների բերումով ձևավորված բանկային և կապիտալի շուկայի որոշակի հարաբերակցությամբ, տնտեսական աճի և ֆինանսական կայունության ապահովմանը միտված, ֆինանսական ռեսուրսների բաշխման ինստիտուտների և գործիքների համախումբ է» (Առաջարկվել է հեղինակների կողմից):

Ֆինանսական համակարգի մոդելների դասակարգման առավել հայտնի մոտեցումներից է ֆրանսիացի տնտեսագետ Միշել Ալբերի 1991 թվականին ֆրանսերեն հրապարակած և 1993թ. անգլերեն թարգմանված «Capitalism Against Capitalism» աշխատությունը: Հեղինակը տարանջատել և համակարգված դիտարկել է 1970-1980-ական թվականներին Արևմուտքում ձևավորված կապիտալիզմի երկու հիմնական՝ «հռենոսյան» և «նեո-ամերիկյան» մոդելները՝ չթաքցնելով հռենոսյան մոդելի իր նախապատվությունը:

Ալբերը «հռենոսյան» անվանում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի և հյուսիսեվրոպական պետությունների տնտեսական համակարգը: Մոդելի հիմնական բնութագրերն են «սոցիալական շուկայական տնտեսություն» և բանկային ֆինանսավորումը:

Ըստ Ալբերի՝ ամերիկյան մոդելի հիմնական թերությունն այն է, որ ֆիրման այլևս չի դիտարկվում բաժնետերերի, ընկերության ղեկավարության և վարձու աշխատողների շահերը միավորող կայուն կազմավորում: Հակառակը, ֆիրման դիտվում է շուկայական արժեք կրող ապրանք, դրամական հոսքերի(cash flow) շարժը ապահովող մեքենա, որն օրորվում է շուկայական ալիքների վրա՝ ենթակվելով բորսայական սպեկուլյացիաների փոթորիկների աննախադեպ վտանգների [Albert 85]:



Գծապատկեր 1. ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Եվրոգոտի, Ճապոնիա, Չինաստան. ոչ ֆինանսական կորպորացիաների ֆինանսավորման կառուցվածքը, 2024թ.,%:

Հռենոսյան, նախ և առաջ, գերմանական և ամերիկյան, հատկապես՝ ԱՄՆ-ը ֆինանսական համակարգի մոդելների հիմնական տարբերությունը ֆինանսավորման

աղբյուրներն են: Գերմանական մոդելում ֆիրմայի ֆինանսավորման հիմնական աղբյուրը բանկային վարկն է, իսկ ամերիկյան ֆիրման միջոցներ սովորաբար ներգրավում է կապիտալի շուկայից:

Այսպես, 2024 թվականի տարեկան տվյալներով ԱՄՆ-ում կապիտալ շուկաները՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկման միջոցով ապահովում են ոչ ֆինանսական կորպորացիաների ֆինանսավորման 75,3%-ը(World Bank; Capital Markets Fact Book 2025): Մեծ Բրիտանիայում կապիտալի շուկային բաժին է ընկնում ֆիրմաների ֆինանսավորման 69,7%-ը, Եվրոգոտու երկրներում 60,5%-ը, իսկ Ճապոնիայում՝ 62,2%-ը(World Bank; Capital Markets Fact Book 2025):

Ի տարբերություն Գերմանիայի՝ անգլոամերիկյան և խառը ֆինանսավորման մոդել ունեցող երկրներում կապիտալի շուկայի, այդ թվում՝ բաժնետոմսերի կապիտալիզացիայի ցուցանիշը անհամեմատ ավելի բարձր է:

Համաշխարհային բանկի տվյալներով 2024թվականի ավարտին ֆոնդային բորսաներում ցուցակված հայրենական (ներքին) ընկերությունների բաժնետոմսերի կապիտալիզացիայի գումարային մեծությունը կազմել է համաշխարհային ՀՆԱ-ի 129,9%-ը: ԱՄՆ-ում կապիտալիզացիան կազմել է երկրի ՀՆԱ-ի 213,1%-ը, Նիդեռլանդներում՝ 129,7%(2017), Մեծ Բրիտանիայում՝ 99,4%(2022): Թվարկված երեք երկրները, ինչպես նաև Ավստրալիան և մի շարք այլ երկրներ սովորաբար համարվում են կապիտալի շուկայի գերակայությամբ կամ անգլոամերիկյան մոդելի երկրներ: Դա չի բացառում այդ երկրներում, մասնավորապես Նիդեռլանդներում և Բրիտանիայում, զարգացած բանկային համակարգերի և ավանդույթների առկայությունը:



Գծապատկեր 2. Մոդելային երկրների կապիտալիզացիա/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան 1975-2024թթ.,%:

Կարելի է համաձայնվել ռուսաստանցի հետազոտող Գ. Կանարշի հետ, որ գերմանական մոդելն արդյունաբերական կապիտալիզմի օրինակելի մոդել է ներկայացնում, իսկ ամերիկյան մոդելը իր առավելություններն է ապացուցում հետարդյունաբերական զարգացման պայմաններում [Kanarsh 35–51]:

Չնայած Գերմանիայի կառավարության կողմից 2000-ականներին իրականացված սոցիալ-տնտեսական բարեփոխումներին՝ հռենոսյան մոդելի հիմնական երկիր հանդիսացող Գերմանիայի տնտեսության հետարդյունաբերական զարգացումը չի կարող համարվել արդյունավետ:

Աղյուսակ 1. Աշխարհի և զարգացած տնտեսությունների՝ 2024թվականի աճը և 2025-2026թթ. աճի կանխատեսումները:

		Կանխատեսումներ	
	2024	**2025**	**2026**
Աշխարհ	**3.3**	**3.2**	**3.1**
Զարգացած Տնտեսություններ	**1.8**	**1.6**	**1.6**
Միացյալ Նահանգներ	2.8	2.0	2.1
Եվրագոտի	0.9	1.2	1.1
Գերմանիա	–0.5	0.2	0.9
Ֆրանսիա	1.1	0.7	0.9
Իտալիա	0.7	0.5	0.8
Իսպանիա	3.5	2.9	2.0
Ճապոնիա	0.1	1.1	0.6
Մեծ Բրիտանիա	1.1	1.3	1.3
Կանադա	1.6	1.2	1.5
Այլ զարգացած տնտեսություններ	**2.3**	**1.8**	**2.0**

Աղյուսակի տվյալներից դատելով՝ ԱՄՆ-ում 2024-2026թթ. միջին տարեկան աճը կազմելու է 2,3%, մինչդեռ Գերմանիայում, նույն ժամանակահատվածում ընդամենը 0,2%, ինչը տնտեսական լճացման ցուցանիշ է: Ավելի լավ չէ բանկային մոդելի ասիական առանցքային երկրի համարում ունեցող Ճապոնիայի ցուցանիշը: 2024-2026թթ. միջին տարեկան աճը Ճապոնիայում կանխատեսվում է 0,6%, գրեթե չորս անգամ ցածր քան ԱՄՆ-ում:

Չնայած 2024 թվականին Ճապոնիայի շուկայական կապիտալիզացիայի ցուցանիշը կազմել է 156,7 % (Գծապատկեր 2), համալիր ինստիտուցիոնալ մոտեցմամբ այն դեռևս շարունակում է մնալ բանկային երկիր:

Ըստ ճապոնացի հետազոտող Միցուակի Օկաբեի՝ 1990-ականներին ճապոնական տնտեսության երկարատև անկման ամենակարևոր պատճառներից մեկը խորապես արմատավորված է տնտեսության՝ նախկինում ձևավորված ֆինանսական կառուցվածքում և դրա հետ սերտորեն կապված կորպորատիվ կառավարման հիմնախնդրում (Okabe 2004):

1992-2008 թթ. Ճապոնիայի տնտեսության միջին տարեկան աճը կազմել է ընդամենը 1%: 2009 թվականի գլոբալ ռեցեսիայի շրջանում՝ 5,7% տնտեսական անկումը, ավելի քան 4 անգամ գերազանցում էր համաշխարհային և 2 անգամ՝ ԱՄՆ-ի տնտեսական անկման ցուցանիշները: Համաշխարհային միջինից բարձր անկում գրանցվեց նաև 2020 թվականին՝ 4,2 % (GDP growth (annual %) - Japan, Germany, United States):

Ճապոնիայի տնտեսությունում ստագնացիոն միտումների պահպանման մասին են վկայում նաև 2022-2025թթ. ՀՆԱ-ի եռամսյակային տվյալները:



Գծապատկեր 3. Ճապոնիայի ՀՆԱ-ի եռամսյակային դինամիկան 2022 IV-2025 III եռամսյակ:

Բանկային մոդելի առումով՝ ընդհանրապես, իսկ Ճապոնիայի ֆինանսական համակարգի առումով՝ մասնավորապես, հատկանշական է նոբելյան մրցանակակիր Մերթոն Միլլերի դիրքորոշումը: Այսպես՝ 1990-երի ասիական ճգնաժամի հիմնական պատճառ նա համարում է ֆինանսական շուկաների թերզարգացվածությունը և բանկային համակարգից մեծ կախվածությունը: Միլլերը զարգացող շուկաների համար ճիշտ է համարում ֆինանսական շուկաների և ոչ բանկային ինստիտուտների զարգացումը, որոնք կամ կփոխարինեն, կամ որոշ դեպքերում կլրացնեն բանկային պրոդուկտները և ծառայությունները (Miller, “Financial Markets”):

Հայաստանի ֆինանսական համակարգի բնութագրման առումով հետաքրքրություն է ներկայացնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի(ԿԱԵ) նախկին սոցիալիստական երկրների, մասնավորապես՝ Լեհաստանի, Չեխիայի, Սլովենիայի, Էստոնիայի ֆինանսական համակարգերի էվոլյուցիան: Մասնավորապես, որքանով է թվարկված երկրներին հաջողվել պլանայինից շուկայական տնտեսությանն անցումը համատեղել ֆինանսկան համակարգերի շուկայական բարեփոխման, կապիտալի շուկայի զարգացման հետ:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ֆինանսական համակարգերը հիմնականում բանկակենտրոն են՝ բացառությամբ Լեհաստանի և մասամբ՝ Չեխիայի, որտեղ կապիտալի շուկաների զարգացումը հասել է հարաբերականորեն բարձր մակարդակի: Սլովենիան և Էստոնիան շարունակում են մնալ գերազանցապես բանկակենտրոն:

Աղյուսակ 2. ԿԱԵ առանձին երկրների և Հայաստանի բանկային ակտիվներ/ՀՆԱ, կապիտալիզացիա/ ՀՆԱ ֆինանսական խորության ցուցանիշները, % (Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից):

Երկիր	Բանկային Ակտիվները / ՀՆԱ (%)	Շուկայական Կապիտալիզացիա / ՀՆԱ (%)	Բնութագիր
Չեխիա	70.8%	10.0% (2024)	Բանկակենտրոն՝ կապիտալի շուկայի ցածր կապիտալիզացիա:
Լեհաստան	65.8%	21.6% (2024)	Անցումային՝ համեմատաբար զարգացած կապիտալի շուկայով
Սլովենիա	Մոտ 75-80%	15.8% (2024)	բանկակենտրոն՝ կապիտալի շուկայի ցածր կապիտալիզացիա
Էստոնիա	106% (2023)	12,8% (2024)	բանկակենտրոն՝ կապիտալի շուկայի ցածր կապիտալիզացիա

Երկիր	Բանկային Ակտիվները / ՀՆԱ (%)	Շուկայական Կապիտալիզացիա / ՀՆԱ (%)	Բնութագիր
Հայաստան	108,9% (2024)	4,3% (2024)	բանկակենտրոն՝ կապիտալի շուկայի ցածր կապիտալիզացիա

Թվարկված երկրներից կապիտալի շուկան առավել զարգացած է Լեհաստանում (Վարշավայի ֆոնդային բորսան): Սա մասամբ պայմանավորված է կենսաթոշակային ֆոնդերի բարեփոխումներով, որոնք մեծացրել են պահանջարկը տեղական արժեթղթերի նկատմամբ: Լեհաստանի կապիտալի շուկայի զարգացման նման փորձը ուսանելի կարող է լինել նաև Հայաստանի համար՝ հատկապես նկատի ունենալով Վարշավայի բորսայի կողմից Հայաստանի ֆոնդային բորսայի ձեռքբերումը:

Հայաստանի ֆինանսական համակարգը, չնայած ավտոտրանսպորտային պատահարների ապահովագրության և կուտակային կենսաթոշակային համակարգերի ներդրման բարեփոխումների, շարունակում է մնալ մենաշնորհային բանկային:



Ակտիվների փոփոխությունը.

	Աճը 2023-ի նկատմամբ	Վերջին 5 տարում /միջին/
Առևտրային բանկեր	20.2%	13.6%
Վարկային կազմա-կերպություններ	6.8%	1.5%
Ապահովագրական ընկերություններ	9.7%	7.8%
Կենսաթոշակային ֆոնդեր	34.9%	33.8%
Ներդրումային ընկերություններ	57.1%	31.2%

Գծապատկեր 3. ՀՀ ֆինանսական համակարգի կառուցվածքը 31.12.2024թ.

Այսպես՝ 2024 թվականին բանկային համակարգի ակտիվները կազմել են մոտ 11 տրիլիոն ՀՀ դրամ, իսկ բանկային ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2010թ. ՝ 45%-ից աճել է մինչև 108.9%: Հատկապես բարձր աճի տեմպեր շարունակվել է արձանագրվել սպառողական, հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրված վարկերի մասով: Աճել է նաև բանկերի ավանդային պորտֆելը և կազմել է 6.5 մլրդ ՀՀ դրամ, 2024թ. նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ 14.0%՝ արդյունքում ավանդներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 57:

Եզրահանգումներ

Հետազոտության արդյունքները ամփոփում են հետևյալ եզրահանգումները:

Հայաստանի՝ իր բնույթով բանկային ֆինանսական համակարգի համար առավել հետաքրքրություն է ներկայացնում բանկակենտրոն երկրների ֆինանսական համակարգերի էվոլյուցիան: Ֆինանսական ճգնաժամերի և հետարդյունաբերական իրականության ազդեցությամբ այդ երկրներում բանկային գերիշխանությունը աստիճանաբար իր տեղը զիջում է ֆինանսական համակարգի ավելի դիվերսիֆիկացված խառը մոդելին՝ կապիտալի շուկաների և ֆինանսավորման ոչ բանկային ինստիտուտների ակտիվ մասնակցությամբ:

Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական համակարգը բնութագրվում է մի շարք իստիտուցիոնալ և կառուցվածքային խնդիրներով, որոնք թույլ չեն տալիս այն ֆինանսական համակարգի որևէ միջազգային մոդելին վերագրել: Դրանց թվին են դասվում.

- Սեփականության և բաժնետիրական ընկերությունների թերզարգացվածությունը և խիստ կենտրոնացվածությունը, դատական համակարգի ցածր արդյունավետությունը, տնտեսական աճի նվազ սոցիալական բաշխվածությունը
- Բանկային վարկի՝ ֆինանսավորման մենաշնորհով հանդերձ, բարձր ծախսատարությունն ու նորամուծական բիզնեսի հետ աննշան փոխգործակցությունը
- Ոչ բանկային ինստիտուտների, բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի, թերզարգացվածությունը
- Կապիտալի, հատկապես բաժնետոմսերի շուկայի աննշան խորությունը և իրացվելիությունը
- Վենչուրային և ներդրումային ֆոնդերի, բաժնետոմսերի նախնական հրապարակային առաջարկի(IPO), քրաուդֆանդիգի և բիզնեսի ֆինանսավորման ոչ ավանդական այլ ձևերի գրեթե բացակայությունը
- Ստվերային տնտեսության և ֆինանսների՝ դեռևս զգալի չափը:

Այս պայմաններում նպատակահարմար է Հայաստանի ֆինանսական համակարգը բնութագրել որպես թերզարգացած անցումային համակարգ, որի հիմնական խնդիրը կապիտալի շուկայի և ինստիտուտների առաջանցիկ զարգացմամբ դեպի խառը՝ բանկային-շուկայական ֆինանսավորման մոդելին անցումն է: Նման համակարգի ձևավորումը կարող է նպաստել մրցակցային ֆինանսական միջնորդության ձևավորմանը և կապիտալի շուկայի խորացմանը, կապիտալի առավել արդյունավետ բաշխմանը, ոչ միայն արդյունաբերական, այլ հետարդյունաբերական նորարարական նախագծերի ֆինանսավորմանը և, վերջնաարդյունքում, կայուն և որակյալ աճի ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Albert, Michel. Capitalism against Capitalism. Whurr Publishers, 1993..
2. Bodie, Z., & Merton, R. C. *Finance*. Prentice Hall, 2000.
3. Bodie, Z., & Merton, R. C. Finance (p. 25). Williams Publishing, 2017.
4. International Monetary Fund. *World Economic Outlook: 2024 report*. IMF Publishing, 2024.
5. Kanarsch, G. “German and American Financial Models: A Comparative View”. *Voprosy Ekonomiki, 7*, 2010, 45–59 pp.
6. Miller, M. H. “Financial Markets and Economic Growth”. *Journal of Applied Corporate Finance,* 11(3), 1998, 8–14 pp, https://doi.org/10.1111/0022-1082.00105

7. Mishkin, F. S. *The Economics of Money, Banking, and Financial Markets* (10th Global Edition, p. 4). Pearson Education.

8. Mishkin, F. S. *The Economics of Money, Banking, and Financial Markets* (12th ed.). Pearson, 2019.

9. Morck, R., & Nakamura, M. "Banks and Corporate Control in Japan". *The Journal of Finance, 54*(1), 1999, 319–339 pp., https://doi.org/10.1111/0022-1082.00105

10. Okabe, M. *The Structure of Corporate Governance in Japan: Historical and Empirical Perspectives*. Oxford University Press, 2002.

11. Organisation for Economic Co-operation and Development. *Capital market review: Japan and Korea*. OECD Publishing, 2023.

12. Radelet, S., & Sachs, J. "The East Asian Financial Crisis: Diagnosis, Remedies, Prospects". *Brookings Papers on Economic Activity, 1998* (1), 1998, 1–74 pp.

13. Republic of Armenia Central Bank. *Financial Stability Report*. Central Bank of Armenia, 2024, Available at: https://www.cba.am/file_manager/Financial%20Stability%20Report%202024%20ARM.pdf. Accessed on: 11.01.2026.

14. Republic of Armenia Central Bank. *Financial Stability Report 2024: Presentation*, Central Bank of Armenia, 2024, Available at: https://www.cba.am/file_manager/Financial%20Stability%20Report%202024%20Presentation%20.pdf. Accessed on: 15.11.2025

15. Central Bank of Armenia. Financial Stability Report 2024. Availabne at: https://www.cba.am/file_manager/Financial%20Stability%20Report%202024%20ARM.pdf. Accessed on: 15.11.2025, 18:35.

16. World Bank. *Global Financial Development Database*. World Bank Publishing, 2024.

17. Frederic S. Mishkin. *The Economics of Money, Banking, and Financial Markets*.10th Global Edition. Pearson Education, 2013, 4 p.

18. Capital Markets Fact Book. 2025, Available at: https://www.sifma.org/wp-content/uploads/2024/07/2025-SIFMA-Capital-Markets-Factbook.pdf. Accessed on: 01.11.2025.

19. "Market Capitalization of Listed Domestic Companies (% of GDP) - World, United States, Germany, Japan, France, Korea, Rep., Poland, United Kingdom, Netherlands". *Data.worldbank*, Available at: https://data.worldbank.org/indicator/CM.MKT.LCAP.GD.ZS?locations=1W-US-DE-JP-FR-KR-PL-GB-NL. Accessed on: 05.12.2025.

20. IMF World Economic Outlook: Global Economy in fFux, Prospects Remain Dim October 2025. 12 p. https://www.imf.org/-/media/files/publications/weo/2025/october/english/text.pdf. Accessed: 05.12.2025.

21. Policy and Governance Working Paper Series No. 17. The Financial System and Corporate Governance in Japan Mitsuaki Okabe, February 2004, Available at: https://www.researchgate.net/publication/260386613_The_Financial_System_and_Corporate_Governance_in_Japan. Accessed on: 01.11.2025.

22. Data.Worldbank. *GDP growth (annual %) - Japan, Germany, United States.* Available at: https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=JP-DE-US. Accessed on: 05.12,2025

23. Tradingeconimics. *Japan GDP Growth Rate*. Available at: https://tradingeconomics.com/japan/gdp-growth. Accessed on: 28.11.2025.

24. [1]Merton H. Miller. *Financial Markets and Economic Growth*[*]. Available at: https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1111/j.1745-6622.2012.00360.x. Accessed on: 20.10.2025

25. Боди Зви, Мертон Роберт. Финансы. Издательство: Вильямс, 2017 г., 592 с
26. Альбер, М. Капитализм против капитализма / пер. с фр. под ред.В. М. Гальперина. СПб.: Экономическая школа, 1998, 296 с. (Этическая экономия: Исследования по этике, культуре и философии хозяйства; вып. 4)
27. Канарш Г. Ю. “Две модели капитализма (Электронный ресурс)” // Горизонты гуманитарного знания, 2018, №2, 35-51 сс. https://www.researchgate.net/publication/326547865_Dve_modeli_kapitalizma. Последний визит: 19.10.2025.

WORKS CITED

1. Albert, Michel. Kapitalizm protiv kapitalizma. St. Petersburg: [Capitalism against Capitalism. St. Petersburg] Ekonomicheskaya shkola, 1998. (in Russian)
2. Bodi, Zvi, & Merton, Robert. Finansy. Moscow [Finance. Moscow]: Williams Publishing, 2017. (in Russian)
3. Kanarsh, Georgii Yu. “Dve modeli kapitalizma” (Elektronnyi resurs). Gorizonty gumanitarnogo znaniya [“Two Models of Capitalism”. Horizons of Humanitarian Knowledge], no. 2, 2018, pp. 35–51. (in Russian)

COUNTRY-SPECIFIC FEATURES OF THE INTERACTION BETWEEN THE FINANCIAL SYSTEM AND THE ECONOMY

SUREN POGHOSYAN
Armenian State University of Economics,
Faculty of Applied Finance
Department of Financial Markets and Institutions
Ph.D. in Economics, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia

SUSAN AVETISYAN
Armenian State University of Economics,
Faculty of Applied Finance
Department of Financial Markets and Institutions
Ph.D. in Economics, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the research is to assess the current state of Armenia's financial system from the perspective of contemporary developments in international financial systems and their interaction with the economy, and to outline possible directions for its transformation. The relevance of the research is due to the fact that Armenia's highly bank-centric financial system is not sufficiently competitive and flexible to effectively serve the country's post-industrial, knowledge-based and digital transformation agenda.

To achieve this goal, we have set the following tasks: analysis of financial systems in the context of post-industrial economic development and crisis resilience; identification of international models of financial systems; study of the national interaction of these models with the economy; assessment of the potential of Armenia's financial system for post-industrial growth.

As the main indicator of the financial system's effectiveness, ensuring sustained, stable, and quality growth has been identified. A comprehensive analytical approach is

also part of the methodology. During the research, methods of analysis, synthesis, induction, deduction, and the historical-comparative method were applied.

Based on the conducted research, we came to the conclusion that serious problems have emerged in almost all bank-centered countries that have entered the post-industrial stage. These problems relate to the allocation of financial resources through bank lending, the servicing of the rapid growth in short-term liabilities, and the financing of innovative business projects. Armenia's monopoly-dominated banking system, burdened with numerous structural challenges, cannot remain unaffected by international trends toward the establishment of more institutionally diversified and competitive financial systems.

Keywords: *Financial system, model, Japan, South Korea, transition economy, post-industrial development, reform, capital market.*

ОСОБЕННОСТИ ВЗАИМОДЕЙСТВИЯ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ И ЭКОНОМИКИ В РАЗЛИЧНЫХ СТРАНАХ

СУРЕН ПОГОСЯН
доцент кафедры финансовых рынков и институтов Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения

СУСАН АВЕТИСЯН
доцент кафедры финансовых рынков и институтов Армянского государственного экономического университета
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения

Цель исследования — оценить текущее состояние финансовой системы Армении с точки зрения современных тенденций развития международных финансовых систем и их взаимодействия с экономикой, а также наметить возможные направления ее преобразования. Актуальность исследования обусловлена тем, что сильно банкоцентричная финансовая система Армении недостаточно конкурентна и гибка для эффективного обслуживания постиндустриальной, основанной на знаниях и цифровой трансформации экономики страны.

Для достижения цели были поставлены следующие задачи: анализ финансовых систем в контексте постиндустриального развития экономики и устойчивости к кризисам; выделение международных моделей финансовой системы; изучение национального взаимодействия этих моделей с экономикой; оценка потенциала финансовой системы Армении для постиндустриального роста.

В качестве основного показателя эффективности финансовой системы было выделено обеспечение устойчивого, качественного и долгосрочного роста. Частью методологии является также комплексный подход к анализу. В ходе исследования применялись методы анализа, синтеза, индукции, дедукции и историко-сравнительный метод.

В статье на примере стран с развитой, развивающейся и переходной экономикой представлены экономические и финансовые результаты банковской модели в постиндустриальную эпоху.

По результатам проведённого исследования мы пришли к выводу, что практически во всех странах с банковско-ориентированной финансовой системой, вступивших в постиндустриальную стадию развития, возникли серьёзные проблемы, связанные с распределением финансовых ресурсов посредством банковского кредитования, обслуживанием резкого роста краткосрочных обязательств, а также финансированием инновационных бизнес-проектов. Монополизированная банковская система Армении, обременённая множеством структурных проблем, не может оставаться в стороне от международных тенденций формирования более институционально диверсифицированных и конкурентных финансовых систем.

Ключевые слова: *финансовая система, модель, Япония, Южная Корея, переходная экономика, постиндустриальное развитие, реформа, рынок капитала.*

ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱՆՑԻԿ ՈՒՂԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ *

ՀՏԴ 338 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-171*

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գորիսի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտական գիտությունների թեկնածու,
ք. Գորիս, Հայաստանի Հանրապետություն
syuzanna.petrosyan.96@mail.ru
ORCID: 0009-0004-2201-7708

Հետազոտական աշխատանքի նպատակն է գնահատել Հայաստանի միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների գործունեությունը, զարգացման հնարավորություններն ու արդի միտումները, ինչին հասնելու համար խնդիր է դրվել վեր հանելու ՀՀ միջազգային տարանցիկ ուղիների զարգացման և տարածաշրջանային տրանսպորտային համակարգին ինտեգրման հիմնական ուղղություններն ու գնահատելու դրանց տնտեսական նպատակահարմարությունը:

Հետազոտության իրականացման ժամանակ ՀՀ միջազգային տարանցիկ ուղիների գործունեության վերլուծության, առկա հիմնախնդիրների վերհանման, միջազգային տրանսպորտային ուղիներին ինտեգրման տնտեսական նպատակահարմարության գնահատման նպատակով օգտագործվել են գիտական վերացարկման (աբստրահման), գործոնային, համեմատական, վիճակագրական վերլուծության մեթոդները:

Հետազոտության արդյունքները փաստում են Հայաստանի միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների զարգացման անհրաժեշտությունը, ինչի արդյունքում երկիրը հնարավորություն կստանա մասը կազմելու միջազգային տրանսպորտային ծրագրերի և միջանցքների: Հիմնավորվել է ՀՀ մասնակցության տնտեսական նպատակահարմարությունը Նոր մետաքսի ճանապարհի «Հարավ-Արևմուտք», «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքներին, ինչին կարելի է հասնել Հայաստանն Իրանին կապող երկաթուղու կառուցման պարագայում: Գնահատվել է նաև «TRIPP ուղու» տնտեսական նպատակահարմարությունը և հիմնավորվել, որ Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունի և տնտեսապես առաջնահերթ է «Հարավ-Արևմուտք» ուղղությանն ինտեգրվելը, որն ապահովում է տնտեսական բարձր արդյունավետություն և ավելի քիչ ռիսկեր է պարունակում:

Հիմնաբառեր՝ *տարանցիկ ուղի, «Հարավ-Արևմուտք», «Հյուսիս-Հարավ», «TRIPP ուղի», «Խաղաղության խաչմերուկ», արտաքին առևտուր, երկաթուղային հաղորդակցություն:*

---

* Հոդվածը ներկայացվել է 03.12.2025թ., գրախոսվել՝ 21.12.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Ներածություն

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման հարցում կարևորագույն նշանակություն ունեն նրա ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը, միջազգային տնտեսական հարաբերությունների ընդլայնումը: Վերջիններս, գլոբալիզացիոն գործընթացներով պայմանավորված, հանդիսանում են ռազմավարական առաջնահերթություն բոլոր այն երկրների համար, որոնք ցանկանում են ապահովել կայուն տնտեսական աճ, բարձրացնել մրցունակությունը համաշխարհային տնտեսական համակարգում, բարելավել բնակչության կենսամակարդակը: Նշված գործընթացների իրականացումը անհնար է պատկերացնել առանց զարգացած տրանսպորտային, լոգիստիկական ենթակառուցվածքների: Դրանք հիմնարար նշանակություն ունեն երկրի արտաքին առևտրային հարաբերությունների ընդլայնման, ներդրումային գրավչության բարելավման, դեպի արտաքին շուկաներ հասանելիության ապահովման, տրանսպորտային ծախսերի կրճատման ու տնտեսապես արդյունավետ առաքումների իրականացման, միջազգային տրանսպորտային ծրագրերի և միջանցքների մասը կազմելու առումներով:

Միջազգային տրանսպորտային համակարգին ՀՀ ինտեգրման ուղիների վերլուծությունը

Տրանսպորտի ոլորտը Հայաստանի տնտեսության կենսունակության և տարածաշրջանային ինտեգրմանն ապահովելու ռազմավարական հենասյուներից է: Վերջին տարիների վիճակագրական տվյալների համաձայն տրանսպորտի ոլորտի մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ում միջինում կազմել է 4-6%, որը, սակայն, մոտ երկու անգամ փոքր է զարգացած երկրների համապատասխան ցուցանիշներից: Ինչ վերաբերում է ոլորտում զբաղվածների թվին, ըստ վիճակագրական տվյալների՝ տրանսպորտի ոլորտում զբաղվածների թիվը կազմում է ՀՀ-ում զբաղվածների մոտ 5%-ը:

Ներկայումս Հայաստանի տրանսպորտային համակարգում մեծ դեր ունի ավտոմոբիլային տրանսպորտը: 2024թ.-ին ՀՀ-ում իրականացված 16.8 մլն տոննա բեռնափոխադրումների մոտ 80%-ն ու 225.1 մլն ուղևորափոխադրումների 97%-ը բաժին են հասել ավտոմոբիլային տրանսպորտին, իսկ երկաթուղային տրանսպորտին՝ 8.6%-ն ու 0.3%-ը՝ համապատասխանաբար (Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին 35-39):

Արտաքին առևտրի առումով ևս մեծ է ավտոմոբիլային տրանսպորտի տեսակարար կշիռը: Ըստ 2020-2024թթ. վիճակագրական տվյալների՝ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության 58.2%-ը բաժին է հասել ավտոմոբիլային, 26.3%-ը խողովակաշարային, 15.2%-ը երկաթուղային, 0.3%-ը օդային տրանսպորտի տեսակներին (աղյուսակ 1) (ՀՀ վիճակագրական կոմիտե):

ՀՀ արտաքին առևտրում ավտոմոբիլային տրանսպորտի մեծ տեսակարար կշիռը՝ տրանսպորտի մյուս տեսակների համեմատ, պայմանավորված է նրանով, որ Հայաստանը, լինելով դեպի ծով ելք չունեցող ցամաքային երկիր, գրեթե մեկուսացված է նաև տարածաշրջանային երկաթուղային ցանցից: Արցախյան I պատերազմի հետևանքով հարևան 2 երկրների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ միջսահմանային հաղորդակցության բացակայությունը խոչընդոտում է Հայաստանի տարանցիկ, այդ թվում՝ երկաթուղային տրանսպորտային ուղիների զարգացմանը: Այժմ գործում է միայն Վրաստանի հետ երկաթուղային հաղորդակցությունը, որը, սակայն, մեծ արդյունավետություն չունի՝ վրաց-աբխազական երկաթուղային կապի բացակայության պատճառով: Նշված հիմնախնդիրներով պայմանավորված՝ այժմ տարածաշրջանում մի շարք միջազգային տրանսպորտային ուղիներ չեն գործում, այդ թվում՝ Հայաստան-Ադրբեջան-ՌԴ (Իջևան -Աղստև(Ղազախ) – Բաքու – Դերբենտ - Մախաչկալա), Ադրբեջան – Հայաստան - Թուրքիա (Բաքու-Մեղրի-Ջուլֆա-Գյումրի-

Կարս), Իրան – Հայաստան - Վրաստան (Թավրիզ – Ջուլֆա – Երասխ – Այրում - Թբիլիսի), Իրան – Հայաստան - Թուրքիա (Թեհրան – Մերանդ – Գյումրի – Կարս - Ստամբուլ) երկաթուղային միջանցքները: Արդյունքում, ՀՀ՝ արտաքին շուկաներ դուրս գալու, միջազգային տրանսպորտային միջանցքների մասը կազմելու առումով կենսական նշանակություն ունի Վրաստանի և Իրանի հետ տրանսպորտային հաղորդակցությունը (Միքայելյան 201):

Աղյուսակ 1. ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը (մլն տոննա) և դրանում տրանսպորտի առանձին տեսակների տեսակարար կշիռը 2020-2024թթ.

	2020թ.		2021թ.		2022թ.		2023թ.		2024թ.	
Ընդամենը, այդ թվում՝	6.82	100%	7.02	100%	7.82	100%	8.13	100%	8.34	100%
Ավտոմոբ.	3.7	54.3%	3.9	55.6%	4.3	54.9%	5.0	61.5%	5.2	62.4%
Երկաթուղ.	1.2	17.6%	1.1	15.6%	1.4	17.9%	1.1	13.5%	1.1	13.2%
Օդային	0.02	0.3%	0.02	0.3%	0.02	0.3%	0.03	0.4%	0.04	0.5%
Խողովակ.	1.9	27.8%	2.0	28.5%	2.1	26.9%	2.0	24.6%	2.0	23.9%

ՀՀ տարանցիկ տրանսպորտային ուղիների զարգացման առումով կենսական նշանակություն ունի «Հյուսիս-Հարավ» (Մեղրի-Երևան-Աշտարակ-Գյումրի-Բավրա) ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը, որի կառուցումը որպես առաջնահերթություն ներառված է ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում (ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր 91): Այն հնարավորութուն կտա Հայաստանի հարավային՝ Իրանի հետ սահմանից միջազգային ստանդարտներին համապատասխան բեռնափոխադրումներ իրականացնելու դեպի Վրաստանի հետ սահման՝ նպաստելով երկրի տարանցիկ պոտենցիալի զարգացմանը, դեպի արտաքին շուկաներ դուրս գալու հնարավորությունների ընդլայնմանը, միջազգային տրանսպորտային համակարգին ինտեգրմանը: Չնայած նրան, որ ծրագրի իրականացման ժամկետը մինչև 2019թ. էր, առ այսօր Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այս տրանսպորտային միջանցքի մոտ 20%-ն է կառուցվել միայն: Մասնավորապես՝ ավարտին է հասցվել «Երևան-Աշտարակ» (11.4 կմ), «Երևան-Արտաշատ» (19.6 կմ) (Տրանշ 1), «Թալին-Լանջիկ» (18.7 կմ), «Լանջիկ-Գյումրի» (23 կմ) (Տրանշ 3) ճանապարհահատվածների կառուցումը: Այժմ աշխատանքներ են իրականացվում «Աշտարակ-Թալին» (42 կմ) (Տրանշ 2), «Քաջարան-Ագարակ» (52 կմ) (Տրանշ 4) հատվածների կառուցման ուղղությամբ: Ընդ որում՝ «Քաջարան-Ագարակ» ճանապարհահատվածի կառուցումն իրականացվում է իրանական շինարարական ընկերությունների կողմից: Հաշվի առնելով Իրանի՝ ճանապարհաշինության ոլորտում կուտակած հարուստ միջազգային փորձը, սա կարող է նպաստել հետագայում ևս ՀՀ տրանսպորտային այլ ենթակառուցվածքների զարգացման ու արդիականացման ուղղությամբ Իրանի հետ համագործակցության ընդլայնմանը, ինչը ռազմավարական նշանակություն ունի նաև Իրանի համար:

Տարածաշրջանում համագործակցության ուղիների ընդլայնման, երկարատև խաղաղություն հաստատելու, ինչպես նաև ՀՀ տրանսպորտային համակարգի զարգացման ու միջազգային տրանսպորտային համակարգին ինտեգրվելու

նպատակով 2023թ. Հայաստանի կողմից առաջ է քաշվել «Խաղաղության Խաչմերուկ» տրանսպորտային նախաձեռնությունը, որն առաջարկվում է իրագործել Իրանի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի հետ համատեղ քայլերի ձեռնարկման միջոցով: Նախագիծը ենթադրում է վերագործարկել տարածաշրջանային շրջափակված ենթակառուցվածքները, բարելավել դրանք և ձևավորել նոր ենթակառուցվածքներ՝ հարևան երկրների հետ տնտեսական, մշակութային, քաղաքական սերտ կապերի ապահովման նպատակով: Ըստ ՀՀ ՏԿԵՆ նախարարության՝ տրանսպորտային նախաձեռնության գործարկման դեպքում առաջին տարվա ընթացքում այն կապահովի 4,7 մլն տոննա բեռնափոխադրում և 300 հազար ուղևորափոխադրում՝ տարածաշրջանի երկրներով, իսկ արդեն մինչև 2050 թվականը Հայաստանի Հանրապետության երկաթուղային ենթակառուցվածքներով տարածաշրջանային երկրների միջև կիրականացվի մոտ 10 մլն տոննա բեռնափոխադրում (Mission of the Republic of Armenia to the European Union):

Տարածաշրջանային տրանսպորտային ուղիների ապաշրջափակման համատեքստում ներկայումս կարևոր ուղղություն է հանդիսանում «TRIPP ուղին» (Trump Road for Peace and Prosperity, Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման), որը հնարավորություն կտա Ադրբեջանին «Բաքու-Այյաթ-Մինջևան-Հորադիզ-Մեղրի-Օրդուբադ-Ջուլֆա» ուղիով ուղիղ տրանսպորտային (ավտոմոբիլային և երկաթուղային) կապ ապահովել Նախիջևանի, վերջինիս տարածքով նաև՝ Թուրքիայի հետ, որի մոտ 43 կմ երկարությամբ հատվածը պետք է անցնի Հայաստանի տարածքով: Տրանսպորտային նախաձեռնության իրագործման համար ՀՀ տարածքում կատարվելիք ներդրումների ծավալը գնահատվում է 226 մլն ԱՄՆ դոլար, ինչն, ըստ կատարված հաշվարկների, կլինի տնտեսապես արդյունավետ, եթե երկաթուղային միջանցքով տարեկան նվազագույն բեռնափոխադրումների ծավալը կազմի 10.2 մլն տոննա բեռ: Բեռնափոխադրումների նման ծավալի ապահովումն անիրատեսական է, հաշվի առնելով, որ Ադրբեջանի և Նախիջևանի միջև տարեկան ապրանքաշրջանառության ծավալը միջինում կազմում է 1-1.2 մլն տոննա բեռ: Մյուս կողմից, հարկ է ընդգծել, որ վերջին տարիներին շահագործման հանձնված «Բաքու-Թբիլիսի–Կարս» երկաթուղով (829կմ), որի կառուցման համար կատարվել են ավելի քան 2 մլրդ ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ և որի տարեկան թողունակությունը գնահատվում է 10 մլն տոննա բեռ, ներկայումս իրականացվում է տարեկան 1-1.3 մլն տոննա բեռնափոխադրում: Այսինքն՝ տնտեսական արդյունավետության ապահովման համար «TRIPP ուղով» տարեկան երկաթուղային բեռնափոխադրումների ծավալը մոտ 9 անգամ պետք է գերազանցի «Բաքու-Թբիլիսի–Կարս» երկաթուղով իրականացվող բեռնափոխադրումների ծավալին, ինչն այդքան էլ իրատեսական չէ:

Հայաստանի աշխարհագրական դիրքը բավականին նպաստավոր է համաշխարհային տրանսպորտային համակարգի անբաժանելի մասը հանդիսացող «Հարավ-Արևմուտք» միջազգային տրանսպորտային միջանցքին ինտեգրվելու համար: Այն ապահովում է տրանսպորտային կապը Հարավասիական և Եվրոպական երկրների միջև՝ տարեկան ապահովելով ավելի քան 200 մլն տոննա բեռնափոխադրում: Վերջինիս հիմնական և այլընտրանքային տրանսպորտային ուղիների համեմատական վերլուծության և տնտեսական նպատակահարմարության գնահատման արդյունքները փաստում են, որ այս ուղղությամբ բեռնափոխադրումների իրականացման ամենաարդյունավետ ուղին՝ թե՛ հեռավորության, թե՛ բեռնափոխադրումների միջին տևողության առումներով, ՀՀ տարածքով անցնող «Չինաստան (Հնդկաստան) – Իրան – Հայաստան – Վրաստան – Բուլղարիա - ԵՄ երկրներ» տրանսպորտային միջանցքն է (Իրան – Բուլղարիա հեռավորությունը՝ 4336.5 կմ), որը կարող է գործել Հայաստանի տարածքում 500 կմ երկարությամբ տարանցիկ երկաթուղային միջանցքի շահագործման արդյունքում (Ագարակ-Քաջարան-Սիսիան-Երասխ-Երևան-Հրազդան-Վանաձոր-Այրում): Դրա

համար անհրաժեշտ է կառուցել շուրջ 268 կմ երկարությամբ երկաթգիծ «Ագարակ – Երասխ» և «Ֆիոլետովո - Վանաձոր» հատվածներում, ինչը, ըստ կատարված հաշվարկների, կարժենա շուրջ 2.0 մլրդ ԱՄՆ դոլար: Վերջինիս կառուցումը կլինի տնտեսապես արդյունավետ ու նպատակահարմար, եթե արդյունքում այն տարեկան ապահովի նվազագույնը 7.5 մլն տոննա տարանցիկ բեռնափոխադրում: Սա լիովին հիմնավորում է վերջինիս տնտեսական նպատակահարմարությունը, քանի որ արդյունքում, ինտեգրվելով Նոր մետաքսի ճանապարհի «Հարավ-Արևմուտք» տրանսպորտային միջանցքին, ասիական երկրներից դեպի եվրոպական երկրներ և հակառակ ուղղությամբ ՀՀ տարածքով անցնող տարեկան բեռնափոխադրումների ծավալը, ըստ մեր կանխատեսումների, 1.5-2 անգամ կգերազանցի նշված ցուցանիշին:

Ներկայումս Հայաստանը ներգրավված է և մասն է կազմում «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային ծրագրի: Այն ենթադրում է մուլտիմոդալ բեռնափոխադրումների իրականացում Հնդկաստանի և Ռուսաստանի, Բալթյան, Սկանդինավյան, ինչպես նաև տրանսպորտային նախաձեռնության անդամ այլ երկրների միջև՝ Իրանի, Կովկասյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններով: Տրանսպորտային միջանցքը կարող է ապահովել նաև «Հնդկաստան-Եվրոպա» տրանսպորտային կապը՝ «Հնդկաստան-Իրան-Կովկասյան երկրներ-Ռուսաստան-Եվրոպական երկրներ» ուղիով: Ի համեմատ Սուեզի ջրանցքով անցնող ավանդական ուղու՝ «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքը մրցունակ և տնտեսապես առավել արդյունավետ այլընտրանք է, որով բեռնափոխադրումների իրականացումն ավելի մատչելի է, կարճատև ու ապահով: Համեմատության համար նշենք, որ եթե Սուեզի ջրանցքով անցնող ուղիով բեռնափոխադրումների միջին տևողությունը կազմում է 45-60 օր, «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքով ցուցանիշը կրճատվում է մոտ երկու անգամ՝ կազմելով 25-30 օր: Ինչ վերաբերում է տրանսպորտային ծախսերին, ապա դրանք կրճատվում են մոտ 30%-ով:

Այնուամենայնիվ հարկ է ընդգծել, որ, չնայած «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի ստրատեգիական նշանակությանն ու առկա պոտենցիալին, այն չի գործում լիարժեք կերպով՝ պայմանավորված մի շարք խնդիրներով, որոնք խոչընդոտում ու դանդաղեցնում են վերջինիս զարգացումը: Այդպիսիք են տրանսպորտային ծրագրում ընդգրկված երկրներում տրանսպորտային, լոգիստիկական ենթակառուցվածքների զարգացման ոչ բավարար մակարդակը, համապատասխան ենթակառուցվածքների արդիականացման, նոր ենթակառուցվածքների ձևավորման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար մակարդակը, ինչը հատկապես նկատելի է տրանսպորտային ծրագրում ընդգրկված որոշ զարգացող երկրների պարագայում, մաքսային գործընթացների միօրինականացման անհրաժեշտությունը, առկա «դաժան» մրցակցությունը՝ արդի միջազգային տրանսպորտային ծրագրերի, այդ թվում՝ Չինաստանի կողմից առաջ քաշված և ակտիվորեն իրագործվող «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» խոշորագույն տրանսպորտային նախաձեռնության միջև, տարածաշրջանային անկայունությունը Կովկասում, Պարսից Ծոցում, Աֆղանստանում, ռուս-ուկրաինական հակամարտությունը, Իրանի, Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, որոնք սահմանափակում են միջազգային համագործակցային հնարավորություններն ու լրացուցիչ ռիսկեր առաջացնում ներդրողների համար:

Տրանսպորտային միջանցքի զարգացման նպատակով իրականացվել և մինչև 2030թ. նախատեսվում է իրականացնել շուրջ 102 ծրագիր՝ 38.2 մլրդ ԱՄՆ դոլար ընդամենը արժեքով: Ներդրումային ծրագրերի մեծ մասը բաժին է հասնում Ռուսաստանին և Իրանին՝ համապատասխանաբար 13.2 մլրդ ԱՄՆ դոլար (35%) և 12.9 մլրդ ԱՄՆ դոլար (34%) մասնաբաժիններով: Հայաստանի և Ադրբեջանի դեպքում կատարվելիք ներդրումների ծավալը գնահատվում համապատասխանաբար է 1.9 մլրդ ԱՄՆ դոլար և 2.8 մլրդ ԱՄՆ դոլար (Евразийский банк развития 5):

2024թ. տրանսպորտային միջանցքն ապահովել է 41.2 մլն տոննա բեռնափոխադրում՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով ավելի քան 4% աճ (2023թ. «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքով իրականացվել է 39.5 մլն տոննա բեռնափոխադրում՝ ՌԴ-ից, Բալթյան, Սկանդինավյան և նախաձեռնության անդամ այլ երկրներից Հնդկաստան արտահանվել է 36.3 մլն տոննա բեռ, Հնդկաստանից այդ երկրներ՝ 3.2 մլն տոննա բեռ): Ընդ որում՝ 2024թ. ՌԴ-ից, Բալթյան, Սկանդինավյան և նախաձեռնության անդամ այլ երկրներից Հնդկաստան արտահանվել է 37.3 մլն տոննա բեռ, իսկ Հնդկաստանից այդ երկրներ՝ 3.9 մլն տոննա բեռ: Նշված երկրներից Ռուսաստանը հանդիսանում է Հնդկաստանի գլխավոր առևտրային գործընկերը՝ թե՛ արտահանման և թե՛ ներմուծման առումներով, որին 2024թ. բաժին է հասել նշված երկրներից Հնդկաստան արտահանման 87.0%-ը, Հնդկաստանից այդ երկրներ ներմուծման 38.0%-ը: Երկրորդ տեղում Իրանն է՝ 4.4% և 36.2% մասնաբաժիններով համապատասխանաբար (Միջազգային առևտրային կենտրոն): Ցուցանիշներն իրենց մեջ չեն ներառում այդ երկրների միջև արտահանված և ներմուծված բոլոր այն ապրանքները, որոնց փոխադրումը նպատակահարմար չէ իրականացնել երկաթուղային տրանսպորտով, օրինակ՝ շուտ փչացող ապրանքներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ: Ներառված չեն նաև նավթ ու գազը, որոնց փոխադրումն իրականացվում է խողովակաշարային տրանսպորտով:

«Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքով բեռնափոխադրումներն իրականացվում են երեք հիմնական ուղիներով.

NS1. Արևելյան՝ «Հնդկաստան – Իրան – Թուրքմենստան - (Ուզբեկստան) – Ղազախստան – Ռուսաստան - Բալթյան և Սկանդինավյան երկրներ»,

Այս ուղու դեպքում բեռնափոխադրումներն իրականացվում են «Բանդար - Աբաս - Գորգան - Էտրեկ - Բոլաշակ - Աստրախան - Սանկտ Պետերբուրգ - Բալթյան և Սկանդինավյան երկրներ» երկաթուղով:

NS2. Կասպյան՝ «Հնդկաստան – Իրան – Ռուսաստան - Բալթյան և Սկանդինավյան երկրներ»,

Այս ուղիով բեռները իրանական Բանդար-Աբաս, Չաբահար նավահանգիստներից փոխադրվում են Իրանի՝ Կասպից ծովի ափին գտնվող նավահանգիստներ, այնտեղից՝ Կասպից ծովով ռուսական Մախաչկալա, Օլյա, Աստրախան նավահանգիստներ, ապա՝ Բալթյան և Սկանդինավյան երկրներ:

NS3. Արևմտյան՝ «Հնդկաստան – Իրան – Հայաստան (Ադրբեջան) – Ռուսաստան - Բալթյան և Սկանդինավյան երկրներ»:

Այս ուղու շրջանակներում բեռնափոխադրումները կարող են իրականացվել մի քանի այլընտրանքային երթուղիներով.

NS3.1 «Հնդկաստան – Իրան – Հայաստան - Վրաստան – Ռուսաստան - Բալթյան և Սկանդինավյան երկրներ».

Այս երթուղու դեպքում բեռնափոխադրումները կիրականացվեն «Թավրիզ – Ջուլֆա - Երևան – Թբիլիսի – Օչամչուրի – Սուխում – Ադլեր – Մոսկվա - Սանկտ Պետերբուրգ – Բալթյան և Սկանդինավյան երկրներ» երկաթուղով: Այն կարող է գործել միայն «Երասխ – Ջուլֆա – Օրդուբադ – Մեղրի - Հորադիզ» և «Վրաստան – Աբխազիա - Ռուսաստան» երկաթուղիների վերականգնման և վերագործարկման պարագայում:

NS3.2 «Հնդկաստան – Իրան – Հայաստան - Վրաստան – Ռուսաստան - Բալթյան և Սկանդինավյան երկրներ».

Այս ուղու դեպքում բեռնափոխադրումները կիրականացվեն «Թավրիզ - Մերանդ - Մեղրի - Այրում - Թբիլիսի - Օչամչուրի - Սուխում - Ադլեր - Մոսկվա - Սանկտ Պետերբուրգ – Բալթյան և Սկանդինավյան երկրներ» երկաթուղային միջանցքով: Այն կարող է գործել միայն հայ-իրանական երկաթուղու կառուցման դեպքում:

NS3.3 «Հնդկաստան – Իրան – Ադրբեջան – Ռուսաստան - Բալթյան և Սկանդինավյան երկրներ».

Բեռնափոխադրումներն այս ուղիով իրականացվում են «Բանդար Աբաս - Թեհրան – Կազվին – Ռեշտ - Աստարա (Իրան)-Աստարա (Ադրբեջան) – Բաքու – Յալամա - Դերբենտ – Մախաչկալա – Վոլգոգրադ – Մոսկվա - Սանկտ Պետերբուրգ – Բալթյան և Սկանդինավյան երկրներ» երթուղով (Абрамян и Петросян 375-376):

Հյուսիս-հարավ ուղղությամբ հիմնական և այլընտրանքային տրանսպորտային ուղիների համեմատական վերլուծությունն ու տնտեսական նպատակահարմարության գնահատումը կատարվել է «Հնդկաստան (Մումբայ) – Ռուսաստան (Սանկտ Պետերբուրգ)» կտրվածքով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.Հյուսիս-Հարավ ուղղությամբ բեռնափոխադրումների իրականացման հիմնական և այլընտրանքային ուղիների ընդհանուր բնութագիրը (Հնդկաստան-Ռուսաստան կտրվածքով)

Տրանսպորտային ուղու անվանումը	Հեռավորությունը (կմ)	Բեռնափոխադրումների միջին տևողությունը (օր)
NS1. Արևելյան՝ «Հնդկաստան - Իրան – Թուրքմենստան – Ղազախստան – Ռուսաստան»	8716.4	11.2
NS2. Կասպյան՝ «Հնդկաստան - Իրան – Ռուսաստան»	7449.4	10.5
NS3.1 Արևմտյան՝ «Հնդկաստան - Իրան – Հայաստան - Վրաստան – Ռուսաստան»	7903.4	9.9
NS3.2 Արևմտյան՝ «Հնդկաստան - Իրան – Հայաստան - Վրաստան – Ռուսաստան»	7731.7	9.8
NS3.3 Արևմտյան՝ «Հնդկաստան - Իրան – Ադրբեջան – Ռուսաստան»	7514.7	10.4

Այս առումով հարկ է ընդգծել, որ հաշվարկները կատարվել են՝ հիմք ընդունելով տրանսպորտային ուղիները ձևավորող երկրներում բեռնատար գնացքների երթևեկության միջին արագության ցուցանիշները, հաշվի առնելով տրանսպորտի մի տեսակից մյուսին անցման դեպքում բեռնաթափման-բեռնաբարձման աշխատանքների իրականացման անհրաժեշտությունն ու հատվող երկրների թիվը: Վերացարկվել է այն սպասումների տևողությունը, որոնք կարող են առաջանալ սահմանային անցակետերում, նավահանգիստներում տրանսպորտային միջոցների հնարավոր կուտակումների հետևանքով:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, դիտարկող ուղիներից ամենաարդյունավետը, ըստ հեռավորության, հանդիսանում է Կասպյան՝ «Հնդկաստան – Իրան – Ռուսաստան» միջանցքը (7449,4 կմ), որով, սակայն, բեռնափոխադրումների միջին տևողությունը կազմում է 10.5 օր՝ պայմանավորված նրանով, որ այս ուղու դեպքում մեծ է ծովային տրանսպորտի կիրառությունը: Ադրբեջանի տարածքով անցնող «Հնդկաստան - Իրան – Ադրբեջան – Ռուսաստան» ուղին (7514.7կմ) ընդամենը 2.8%-ով է կարճ ՀՀ տարածքով անցնող «Հնդկաստան - Իրան – Հայաստան - Վրաստան – Ռուսաստան» տրանսպորտային ուղուց (7731.7 կմ), որը կարող է գործել հայ-իրանական երկաթուղու կառուցման պարագայում: Սակայն հարկ է ընդգծել, որ Հայաստանի տարածքով անցնող այս ուղին ամենաարդյունավետն է բեռնափոխադրումների միջին տևողության առումով, որը մոտ 6%-ով ավելի կարճատև է, քան Ադրբեջանի տարածքով անցնող ուղին:

Եզրակացություն

Այսպիսով՝ Հայաստանն ունի մեծ ներուժ արդի միջազգային տրանսպորտային ծրագրերում և ուղիներում ինտեգրվելու համար: ՀՀ տարածքով անցնող տրանսպորտային ուղիները հատկապես նպատակահարմար են Նոր մետաքսի ճանապարհի «Հարավ-Արևմուտք», «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքների մասը կազմելու առումով, ինչը փաստում են կատարված վերլուծության արդյունքները: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել ՀՀ տրանսպորտային, լոգիստիկական ենթակառուցվածքներն ու երկրի արտաքին երկաթուղային կապը: Արդյունքում Հայաստանը կկայանա որպես տարանցիկ երկիր՝ ամրապնդելով աշխարհաքաղաքական դիրքերը տարածաշրջանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ վիճակագրական կոմիտե. *Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020-2024 թվականների հունվար-դեկտեմբերին.* Տեղեկատվական ամսական զեկույցներ, https://www.armstat.am/am/?nid=82&year=2025. Վերջին այց՝ 22.11.2025.
2. ՀՀ *2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր*. Երևան, 2014.
3. Միջազգային առևտրային կենտրոնի պաշտոնական կայք. www.trademap.org/Country_SelProduct_TS.aspx: Վերջին այց՝ 21.11.2025.
4. Միքայելյան, Տիգրան. ՀՀ *լոգիստիկ համակարգի վերլուծությունը տարածաշրջանային տրանսպորտային ենթակառուցվածքների հնարավոր ապաշրջափակման համատեքստում*. «Գիտական Արցախ», N 2(17), «ԱՐՑԱԽ» հրատ., 2023, էջ 198-209, DOI: 10.52063/25792652-2023.2.17-198:
5. Mission of the Republic of Armenia to the European Union. *Armenia Presents Crossroads of Peace Project at Global Gateway Forum in Brussels,* https://eu.mfa.am/en/news/2024/01/30/armenia-presents-crossroads-of-peace-project-at-global-gateway-forum-in-brussels/12501. Accessed: 24.11.2025.
6. Абрамян, Ваграм и Петросян, Сюзанна. «Перспективы участия Армении в международном транспортном коридоре «Север-Юг»». *Общество и экономика знаний*, управление капиталами: цифровая экономика знаний (KSEM-2023), Краснодар, 2023, сс. 372-381.
7. Евразийский банк развития. *Международный транспортный коридор «Север — Юг»: инвестиционные решения и мягкая инфраструктура*. Доклады и рабочие документы 22/2. Алматы, Москва, 2022.

WORKS CITED

1. HH vitchakagrakan komite. Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitwaky' 2020-2024 t'vakanneri hunvar-dektemberin. Teghekatvakan amsakan zekuycner. *[Socio-Economic Situation of the Republic of Armenia in January-December 2020-2024: Monthly information reports]* Available at: https://www.armstat.am/am/?nid=82&year=2025, Accessed on: 22.11.2025. (in Armenian)
2. HH 2014-2025t't'. her'ankarayin zargacman r'azmavarakan c'ragir. [*Strategic Plan for the Prospective Development of the Republic of Armenia for 2014-2025*] Erevan, 2014. (in Armenian)
3. Mijazgayin ar'evtrayiin kentroni pashtonakan kayq. [*Official website of the International Trade Center*] Available at: www.trademap.org/Country_SelProduct_TS.aspx, Accessed on: 21.11.2025. (in Armenian)

4. Miqayelyan, Tigran. HH logistik hamakargi verluc'ut'yuny' tarac'ashrjanayin transportayin ent'akar'ucvac'qneri hnaravor apashrjap'akman hamateqstum. [*Analysis of the Logistics System of RA in the Context of Possible Unblocking of Regional Transport Infrastructures*] «Gitakan Artsakh», N 2(17), «ARTSAKH» hrat., 2023, Էջ 198-209, DOI: 10.52063/25792652-2023.2.17-198. (in Armenian)

5. Abramjan, Vagram i Petrosjan, Sjuzanna. «Perspektivy uchastija Armenii v mezhdunarodnom transportnom koridore «Sever-Jug»». [*"Prospects of Armenia's Participation in the International Transport Corridor "North-South""*] Obshhestvo i jekonomika znanij, upravlenie kapitalami: cifrovaja jekonomika znanij (KSEM-2023), Krasnodar, 2023, 372-381. (in Russian)

6. Evrazijskij bank razvitija. Mezhdunarodnyj transportnyj koridor «Sever — Jug»: investicionnye reshenija i mjagkaja infrastruktura. [*The North-South International Transport Corridor: Investment Solutions and Soft Infrastructure*] Doklady i rabochie dokumenty 22/2. Almaty, Moskva, 2022. (in Russian)

ANALYSIS OF FUNCTIONING AND DEVELOPMENT TRENDS OF INTERNATIONAL TRANSIT ROUTES OF THE REPUBLIC OF ARMENIA UNDER CONTEMPORARY CONDITIONS

SYUZANNA PETROSYAN
Goris State University, Chair of Economics and Management, Head,
Ph.D. in Economics
Goris, the Republic of Armenia

The purpose of the study is to assess the functioning, development possibilities and current trends in the sphere of international transit transport routes of Armenia.

For this an objective was put to identify the key development areas of Armenia's international transit routes and their integration into the regional transport system, as well as to assess their economic feasibility.

The methods of scientific abstraction, factor, comparative and statistical analysis have been used in the course of the study with the purpose of the analysis of functioning of the international transit routes of the Republic of Armenia, the exposure of existing problems and the assessment of the economic feasibility of integration into international transport routes.

The results of the study demonstrate the need for Armenia to develop international transit transport routes, which will allow the country to become a part of international transport programs and corridors. The economic feasibility of the prticipation of the Republic of Armenia in the «South-West» and «North-South» transport corridors of the New Silk Road has been substantiated, which could be achieved in case of the construction of a railway connecting Armenia and Iran. An assessment of the economic feasibility of the "TRIPP route" has been also conducted, and it has been also substantiated that integration into the "South-West" direction is of strategic importance for Armenia and it is priority from an economic point of view, which can ensure high economic efficiency and contains fewer risks.

Keywords: *Transit route, «South-West», «North-South», «TRIPP route», «Crossroads of Peace», foreign trade, railway communication.*

АНАЛИЗ ФУНКЦИОНИРОВАНИЯ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МЕЖДУНАРОДНЫХ ТРАНЗИТНЫХ ПУТЕЙ РА В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

СЮЗАННА ПЕТРОСЯН
заведующая кафедрой экономики и управления
Горисского государственного университета,
кандидат экономических наук,
г. Горис, Республика Армения

Цель исследования – оценка функционирования, возможностей развития и современных тенденций в сфере международных транзитных транспортных путей Армении.

С этой целью была поставлена задача выявить основные направления развития международных транзитных путей Армении и их интеграции в региональную транспортную систему, а также оценить их экономическую целесообразность.

В ходе исследования с целью анализа функционирования международных транзитных маршрутов РА, выявления существующих проблем и оценки экономической целесообразности интеграции в международные транспортные пути были использованы методы научной абстракции, факторного, сравнительного и статистического анализа.

Результаты исследования свидетельствуют о необходимости развития международных транзитных транспортных путей Армении, которые позволят стране стать частью международных транспортных программ и коридоров. Обоснована экономическая целесообразность участия РА в транспортных коридорах «Юг-Запад» и «Север-Юг» Нового Шелкового пути, что может быть достигнуто в случае строительства железной дороги, соединяющей Армению и Иран. Была также оценена экономическая целесообразность «маршрута TRIPP» и было обосновано, что для Армении имеет стратегическое значение и с экономической точки зрения приоритетна интеграция в направление «Юг-Запад», которая может обеспечить высокую экономическую эффективность и содержит меньше рисков.

Ключевые слова: *транзитный путь, «Юг-Запад», «Север-Юг», «маршрут TRIPP», «Перекрёсток мира», внешняя торговля, железнодорожное сообщение*.

ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՆԱ-Ի ՎՐԱ *

ՀՏԴ 330. 4 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-181*

ԱՍՏՂԻԿ ՓԱՐՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
astghikparsyan@ysu.am
ORCID: 0009-0008-8188-7446

ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կիրառական տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Anna.sargsyan@ysu.am
ORCID: 0009-0000-3624-5323

Աշխատանքի նպատակը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գործընթացում զբոսաշրջության դերի վերլուծությունն է:

Ուսումնասիրության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները. բացահայտել ոլորտի կառուցվածքն ու առկա խնդիրները, իրականացնել Հայաստանի զբոսաշրջային դաշտի վիճակագրական վերլուծություն 2000–2023 թվականների ընթացքում՝ հիմնվելով պաշտոնական տվյալների վրա, ինչպես նաև էկոնոմետրիկ մոդելի միջոցով գնահատել զբոսաշրջության ազդեցությունը ՀՀ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) վրա:

Վերլուծության մեթոդաբանությունը հիմնված է միագործոն և բազմագործոն ռեգրեսիոն մոդելների կիրառման վրա, ինչը թույլ է տվել բացահայտել զբոսաշրջության տնտեսական ազդեցության տարբեր բաղադրիչներ:

Ստացված արդյունքները ցույց են տվել, որ ճանապարհորդության և մարդատար տրանսպորտում զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արտահանումը (ZBEK) դրական ազդեցություն ունի ՀՆԱ-ի աճի վրա: Բազմագործոն ռեգրեսիայի արդյունքներովՀՆԱ-ի աճը դրականորեն կախված է ներքին զբոսաշրջիկների և սպառման աճից, մինչդեռ արտագնա տուրիզմի աճը հակառակ ազդեցություն է ունենում՝ նվազեցնելով տնտեսության ներքին աճը:

Հետազոտության արդյունքները կարևոր են ոչ միայն գիտական տեսանկյունից, այլև գործնական առումով, քանի որ կարող են ծառայել որպես հիմք Հայաստանի զբոսաշրջային քաղաքականության և զարգացման ռազմավարության ձևավորման համար:

* Հոդվածը ներկայացվել է 05.11.2025թ., գրախոսվել՝ 19.11.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Հիմնաբառեր՝ *ՀՆԱ, ներգնա զբոսաշրջություն, արտագնա զբոսաշրջություն, մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արտահանում, տնային տնտեսությունների սպառում, միագործոն ռեգրեսիա, բազմագործոն ռեգրեսիա:*

Ներածություն

Զբոսաշրջությունն այսօր 21-րդ դարի ամենաարագ զարգացող և բազմաճյուղ ազդեցություն ունեցող ոլորտներից մեկն է: Տարեցտարի միլիոնավոր մարդիկ շարժվում են տարբեր ուղղություններով՝ հանգստի, առողջապահական, մշակութային ճանաչողության, աշխատանքային նպատակներով:

Միջազգային փորձը վկայում է, որ զբոսաշրջությունը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային ու սոցիալական զարգացման կարևորագույն աղբյուր է այն ստեղծում է նոր հնարավորություններ ինչպես պետությունների, այնպես էլ տարածաշրջանների համար: Այդուհանդերձ, Հայաստանի պարագայում, ոլորտը դեռևս ունի չիրացված ներուժի զգալի պաշար, որը պահանջում է խորքային վերլուծություն և նպատակային քաղաքականություններ՝ արդյունավետ զարգացման ու միջազգային մրցունակության ապահովման համար:

Զբոսաշրջության ոլորտը ոչ միայն կարևոր է տնտեսական աճի ապահովման համար, այլև հանդիսանում է զբաղվածության խթանման հիմնական աղբյուրներից մեկը: Համաշխարհային մակարդակով 2019 թվականին զբոսաշրջությունը ապահովել է յուրաքանչյուր 10-րդ աշխատատեղը: Զբոսաշրջության և ճանապարհորդությունների համաշխարհային խորհրդի (WTTC) տվյալների համաձայն՝ 2017 թվականին ոլորտում ամբողջ աշխարհում զբաղված էր ավելի քան 313 միլիոն մարդ, իսկ 2019-ին՝ արդեն 330 միլիոն: Նույն թվականին, ըստ պաշտոնական տվյալների, Հայաստանի աշխատուժի շուրջ 12.5 տոկոսը՝ մոտ 124 հազար մարդ, զբաղված էր հենց զբոսաշրջության ոլորտում (ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն): Սա փաստում է, որ ոլորտը նաև սոցիալ-տնտեսական կայունության երաշխիքներից է:

Թեև 2020 թվականին COVID-19 համավարակը զգալի բացասական ազդեցություն ունեցավ զբոսաշրջության վրա և պահանջեց քաղաքականությունների վերանայում, այնուամենայնիվ ոլորտի ռազմավարական նշանակությունը մնում է անփոփոխ: Համաձայն Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ զբոսաշրջությունը շարունակում է դիտարկվել որպես արտահանման երկրորդ խոշորագույն ճյուղ, որի նպատակը արտահանման ծավալի 20 տոկոսի ապահովումն է (Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր): Հաշվի առնելով մինչհամավարակային տարիներին արձանագրված բարձր ցուցանիշները՝ կարելի է ենթադրել, որ հետճգնաժամային վերականգման պայմաններում ոլորտը կարող է վերագտնել իր դերը տնտեսական աճի խթանման և սոցիալական բարելավման գործընթացում:

Հետազոտության նպատակն է վերլուծել զբոսաշրջության դերը ՀՀ տնտեսական զարգացման գործնթացում:

Խնդիրները, որոնք առաջադրվում են այս ուսումնասիրության շրջանակում, ներառում են՝

- ✓ Բացահայտել ոլորտի կառուցվածքը և առկա խնդիրները
- ✓ Հայաստանի զբոսաշրջային դաշտի վիճակագրական վերլուծություն (2000-2023թթ.)՝ հիմնված պաշտոնական տվյալների վրա
- ✓ Էկոնոմետրիկ մոդելի միջոցով գնահատել Հայաստանի զբոսաշրջության ազդեցությունը ՀՀ ՀՆԱ-ի վրա:

Ուսումնասիրության *օբյեկտը* ՀՀ զբոսաշրջային ոլորտն է, իսկ *առարկան*՝ ոլորտի կառուցվածքային զարգացումն ու դրա ազդեցության գնահատումը ՀՆԱ-ի վրա:

Մեթոդաբանությունը

Վերլուծության մեջ դիտարկվել են ՀՀ 2000-2023թթ.-ի հետևյալ փոփոխականները՝ տարեկան կտրվածքով. ՀՀ անվանական ՀՆԱ՝ մլն դրամ (GDP), նշված ժամանակահատվածում ՀՀ-ից մեկնած զվբոսաշրջիկների թիվը (միավորը՝ մարդ, DEP) ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թիվը (միավորը՝ մարդ, ARR), տնային տնտեսությունների սպառումը (միավորը՝ ՀՀ մլն դրամ, CC), ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արտահանումը (միավորը՝ ՀՀ մլն դրամ, ZBEK):

Տվյալների աղբյուրներն են՝ ՀՀ վիճակագրական կոմիտեն և ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեն:

Աշխատանքի մեջ կիրառվել է միագործոն և բազմագործոն ռեգրեսիաներ:

Միագործոն ռեգրեսիան վիճակագրական մոդել է, որը օգտագործվում է երկու փոփոխականների միջև գծային հարաբերությունը գնահատելու և քանակական կերպով ներկայացնելու համար: Մոդելի կառուցվածքում մեկ փոփոխական սահմանվում է որպես ազատ (բացատրող) փոփոխական (X), իսկ մյուսը՝ որպես կախյալ (բացատրվող) փոփոխական (Y):

Մոդելի հիմնական նպատակն է կանխատեսել Y-ի արժեքները՝ հիմք ընդունելով X-ի դիտարկված արժեքները: Գծային մոդելի դասական ձևաչափը ներկայացվում է հետևյալ հավասարմամբ (Gujarati, 4-5):

$$Y=\beta_0 + \beta_1 X + \varepsilon$$

Որտեղ՝

Y – ը կախյալ փոփոխականն է,

X – ը անկախ փոփոխականն է,

β_0 –ը ռեգրեսիայի ազատ անդամն է,

β_1 – ը թեքության գործակիցն է,

ε – ը սխալն է (թույլատրելի շեղում մոդելից):

Գործակիցների (β_0 և β_1) գնահատումը իրականացվում է ամենափոքր քառակուսիների մեթոդով (OLS), որը նվազագույնի է հասցնում կանխատեսված և իրական արժեքների տարբերությունների քառակուսիների գումարը:

Բազմագործոն ռեգրեսիան (Multiple Linear Regression) օգտագործվել է բազմաթիվ բացատրող փոփոխականների ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա գնահատելու համար (Gujarati, 97–102):

Մոդելի դասական ձևաչափը արտահայտվում է հետևյալ հավասարմամբ:

$$y_t = \beta_0 + \beta_1 X_{1t} + \beta_2 X_{2t} + \cdots + \beta_m X_{mt} + \varepsilon_t ,$$

Որտեղ՝

y – ը կախյալ փոփոխականն է,

X_{jt}-ը j-րդ բացատրող փոփոխականն է,

β_j-ը պարամետր է, որը գնահատվում է փոքրագույն քառակուսիների եղանակով,

ε_t-ը պատահական սխալն է:

$\widehat{\beta_j}$ գործակիցների վիճակագրական նշանակալիությունը ստուգվել է t-static -ի միջոցով՝ հետևյալ զրոյական և այլընտրանքային հիպոթեզներով

$$H_0: \beta_j = 0$$
$$H_1: \beta_j \neq 0$$

5% մակարդակում, իսկ մոդելի նշանակալիությունը՝ F- statistic -ի միջոցով՝

$$H_0: \beta_1 = \beta_2 = \cdots = \beta_m = 0$$
$$H_1: \beta_j \neq 0$$

Մոդելի մնացորդների պայմանները ստուգվել են՝ հոմոսկեդաստիկություն (Breusch–Pagan–Godfrey), անկախություն /ավտոկորելացիա (Breusch–Godfrey LM) և նորմալ բաշխում (Jarque–Bera), իսկ մոդելի որակը գնահատվել է՝ R^2 և Adjusted R^2 գործակիցներով: (Gujarati, 188–231, Engle, 251–257)

Փոփոխականի տարեկան ավելացման տեմպը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$\text{Հավելաճի տեմպ} = \frac{y_t - y_{t-1}}{y_{t-1}} \times 100\%$$

Էկոնոմետրիկ հետազոտությունների ընթացքում ժամանակային շարքերի ստացիոնարությունը առանցքային պայման է: Երբ ժամանակային շարքերը ոչ ստացիոնար են, հնարավոր է՝ խախտվեն ստանդարտ գնահատման հատկությունները, ինչի հետևանքով ստացված արդյունքները կարող են լինել ոչ հուսալի կամ կեղծ: Այս խնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է օգտագործվող ժամանակային շարքերը ենթարկել խորը վերլուծության՝ նախքան մոդելի գնահատումը (Սարգսյան, 53–56):

Գրականության ակնարկ

«Զբոսաշրջությունը որպես տնտեսական աճի գործոն. փորձառնական վերլուծություն Հայաստանի համար» հոդվածում (Խառատյան և Տիգրանյան 113-131) ուսումնասիրվել է զբոսաշրջության և տնտեսական աճի միջև փոխազդեցությունը Հայաստանի Հանրապետության օրինակով՝ 1997–2020թթ. տվյալների հիման վրա: Ըստ հեղինակների՝ երկարաժամկետ ժամանակահատվածում զբոսաշրջության եկամուտների և ՀՆԱ-ի միջև կայուն հարաբերություն չկա: Այնուամենայնիվ, կարճաժամկետ ժամանակահատվածում արձանագրվել է երկկողմ պատճառահետևանքային կապ: Գրեյնջերի վերլուծությամբ պարզվել է, որ զբոսաշրջության ոլորտում գրանցվող աճը որոշ ժամանակ անց կարող է նպաստել ՀՆԱ-ի աճին, և հակառակը՝ տնտեսական ակտիվության աճը խթանում է զբոսաշրջային հոսքերի ընդլայնումը: Այս պարագայում, զբոսաշրջության ազդեցությունը դիտարկվում է որպես միաժամանակ արձագանքող և ձևավորող գործոն:

Մերսեդես Կաստրո Նունոն, Ջոզե Ա. Մոլինա—Տուկեդոն իրենց “Tourism and GDP: A Meta-analysis of Panel Data Studies“ հոդվածում ներկայացրել են մետա-վերլուծություն՝ 87 պանելային տվյալների ուսումնասիրություններից՝ նպատակ ունենալով գնահատելու զբոսաշրջության ազդեցությունը ՀՆԱ-ի վրա (Castro-Ոuno 745-758): Այս հետազոտությունը հաստատում է այն պատկերացումը, որ զբոսաշրջությունը, ընդհանուր առմամբ, դրականորեն է ազդում տնտեսական աճի վրա, բայց ընդգծում է նաև՝ գնահատման ճշգրտությունը կախված է հետազոտության մեթոդներից և օգտագործված փոփոխականներից: Այս եզրահանգումը օգտակար է այնպիսի երկրների համար, որտեղ զբոսաշրջության ոլորտը աճի պոտենցիալ ունի, սակայն գնահատականների ճշգրտությունը պահանջում է ամբողջական և բազմաչափ մոտեցում:

Մեկ ուրիշ հեղինակ Գ. Թովմասյանը իր “Evaluating the Role of Tourism in the Economic Development of the Republic of Armenia and other Member States of The Eurasian Economic Union” հոդվածում ուսումնասիրել է զբոսաշրջության զարգացման ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա և ստուգել Tourism-Led Growth Hypothesis (TLGH): Արդյունքները ցույց են տվել, որ զբոսաշրջության ծախսերի և այցելուների թվի աճը բարձրացնում է ՀՆԱ-ն և զբաղվածությունը, սակայն զբոսաշրջության ներդրումը աշխատանքի աճի վրա չափավոր է: Նույն միտումն է դիտվել նաև ԵՏՄ մյուս երկրներում (Tovmasyan 83-98):

Նմանատիպ մեկ այլ հետազոտություն են իրականացրել նաև Խորվաթիայի համալսարանի դոկտորներ Բ. Շ. Պերիչը և Զ. Վիդովիչը: Նրանք իրենց «Heterogeneous Panel Granger causality between GDP and tourism in 11 EU members in Central and Southeastern Europe» հոդվածում ուսումնասիրել են զբոսաշրջության և տնտեսական աճի փոխկապակցվածությունը 11 կենտրոնական և հարավարևելյան եվրոպական ԵՄ երկրների համար (1995–2013)՝ օգտագործելով պանելային՝ Granger causality թեստ: Արդյունքները ցույց են տվել, որ հարաբերությունները երկրից երկիր փոփոխական են: Հինգ երկրում (Չեխիա, Հունգարիա, Լեհաստան, Ռումանիա, Սլովակիա) առկա **է** երկկողմանի փոխկապակցվածություն՝ զբոսաշրջության եկամուտների և ՀՆԱ-ի միջև: Բուլղարիայում և Խորվաթիայում ՀՆԱ-ի աճը հանգեցնում է զբոսաշրջության եկամուտների աճի, իսկ Էստոնիայում, Լիտվայում, Լատվիայում և Սլովենիայում որևէ Granger պատճառահետևանքային կապ չի հայտնաբերվել (Škrabić Perić, Blanka 6-27):

Գիտական նորույթ

Աշխատանքում վերլուծվել է զբոսաշրջության ազդեցության տնտեսաչափական գնահատումը ՀՀ ՀՆԱ-ի վրա:

Տեսական հիմքերի և վիճակագրական համադրելի տվյալների հիման վրա վերլուծվել են որոշ մակրոտնտեսական և զբոսաշրջությունը բնութագրող ցուցանիշներ՝ 2000–2023 թթ. ժամանակահատվածի կտրվածքով: Ազդեցության գնահատումը իրականացվել է միագործոն և բազմագործոն ռեգրեսիայի մեթոդներով: Ստացած երկու մոդելների արդյունքների վերլուծությունները միավորելով՝ եզրակացնում ենք, որ ներքին զբոսաշրջիկների թիվը, սպառման աճը և ճանապարհորդության ու մարդատար տրանսպորտում զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արտահանումը (ZBEK) ազդում են ՀՆԱ-ի աճի վրա, իսկ արտագնա տուրիզմը ունի հակառակ ազդեցություն՝ տրամադրելով համապարփակ պատկերացում զբոսաշրջության բազմաչափ ազդեցության մասին երկրի տնտեսական զարգացման վրա:

Վերլուծություն

Աշխատանքում ՀՀ 2000-2023թթ.-ի տարեկան տվյալների հիման վրա իրականացվել է և՛ միագործոն ռեգրեսիա, և՛ բազմագործոն ռեգրեսիա: Փոփոխականներն են՝ ՀՀ անվանական ՀՆԱ՝ մլն դրամ (GDP), նշված ժամանակահատվածում ՀՀ-ից մեկնած զվբոսաշրջիկների թիվը (միավորը՝ մարդ, DEP), ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թիվը (միավորը՝ մարդ, ARR), տնային տնտեսությունների սպառումը (միավորը՝ ՀՀ մլն դրամ, CC), ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արտահանումը (միավորը՝ ՀՀ մլն դրամ, ZBEK):

Ստորև՝ աղյուսակ 1-ում ներկայացված է փոփոխականների վիճակագրական նկարագրությունը:

Աղյուսակ 1. Փոփոխականների խմբի վիճակագրական նկարագրությունը

	ARR	CC	DEP	GDP	ZBEK
Mean	851138.0	3258782.	748281.5	4254728.	352311.1
Median	781003.0	3332226.	583112.5	4022203.	266383.1
Maximum	2316210.	6154934.	1867888.	9453175.	1218841.
Minimum	84461.00	997641.6	109976.0	1031338.	26948.16
Std. Dev.	617150.6	1557500.	541706.8	2275375.	316006.7
Skewness	0.690893	0.129334	0.534005	0.496912	1.327448
Kurtosis	2.573830	1.858361	2.024706	2.604845	4.204283
Jarque-Bera	2.090952	1.370248	2.091845	1.143832	8.498770

Probability	0.351524	0.504028	0.351367	0.564443	0.014273
Sum	20427313	78210758	17958756	1.02E+08	8455467.
Sum Sq. Dev.	8.76E+12	5.58E+13	6.75E+12	1.19E+14	2.30E+12
Observations	24	24	24	24	24

Աղյուսակից ակնհայտ է դառնում, որ ՀՀ ժամանած զբոսաշրջիկների առավելագույն թիվը կազմել է 2 316 210 մարդ՝ 2023թ. , իսկ նվազագույնը՝ 84 461 մարդ՝ 2000 թ. : ՀՀ-ից մեկնողների առավելագույն թիվը 1 867 888 մարդ է՝ 2019 թ. , նվազագույնը՝ 109 976 մարդ՝ 2001թ. : Նշված ժամանակահատվածում ՀՀ որպես զբոսաշրջիկ ժամանել է միջինում 851 138 մարդ, իսկ ՀՀ-ից մեկնել է միջինում 748 281 մարդ:

2000-2023 թթ. ժամանակահատվածում ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արտահանման միջինը կազմել է 352 311,1 ՀՀ մլն դրամ, առավելագույնը՝ 1 218 841 մլն ՀՀ դրամ: Հատկանշական է, որ այդ արդյունքը գրանցվել է 2023թ-ին, այսինքն՝ հետազոտությունն իրականացրած ժամանակահատվածի ամենավերջին տարում: Չնայած դրամի փոխարժեքը ուսումնասիրվող ժամանակահատվածի վերջին տարիներին կայուն ցածր դիրքում է գտնվում, այդուհանդերձ, ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արտահանումը, դրամով արտահայտված, աճման միտում է գրանցել: Հետազոտության՝ ՀՀ-ի անվանական ՀՆԱ-ի միջինը նույն ժամանակահատվածում կազմել է 4 254 728 մլն ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ 9 453 175 մլն ՀՀ դրամ՝ 2023թ.:

Ստորև ներկայացրած գծապատկերը ցույց է տալիս ՀՀ ժամանած և ՀՀ-ից մեկնածների միաժամանակյա դինամիկան:



Գծապատկեր 1. Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների դինամիկան

Գծապատկերից պարզ երևում է, որ ներգնա և արտագնա տուրիզմը ուսումնասիրվող ժամանակահատվածում գրանցել է համընթաց կայուն աճ: Բացառություն է կազմում 2 փոփոխականների դեպքում էլ 2020 թ-ի կտրուկ նվազումը, որը պայմանավորված է համավարակով: 2020 թվականի միայն առաջին եռամսյակում է գրանցվել տուրիստների շարժ, որից հետո, արդեն հայտնի պատճառներով, նկատվել է շարժի կտրուկ անկում:

Ռեգրեսիոն վերլուծությունն իրականացնելու համար փոփոխականների ստացիոնարությունը ստուգվել է Դիքի-Ֆուլերի միավոր արմատ թեստով: Թեստի արդյունքները ներկայացված են ստորև՝ աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Դիքի-Ֆուլերի միավոր արմատ թեստի արդյունքները

Փոփոխականներ	Test Equation	ADF test stat	% level	Prob.**
D(ZBEK)	intercept	-6,1435	1	0,0001
D(GDP)	intercept	-3,1547	5	0,037
ARR	none	-2. 1644	5	0.0328
D(CC)	intercept	-4. 3760	1	0. 0032
DEP	intercept	3.8495	1	0. 0102

Augmented Dickey-Fuller (ADF) թեստի արդյունքները վկայում են, որ բոլոր շարքերը կայուն են տարբեր վստահության մակարդակներում: Մասնավորապես, զբոսաշրջային հոսքերի փոփոխականը (D(ZBEK)) ստացիոնար է 1% մակարդակում (ADF=-6.14, p=0.0001), իսկ համախառն ներքին արդյունքը (D(GDP))՝ 5% մակարդակում (ADF=-3.15, p=0.037): Ժամանումները (ARR) ցույց են տվել կայունություն 5% մակարդակում առանց ինտերսեպտի և տենդենցի (ADF=-2.16, p=0.0328), իսկ մեկնումների (DEP) շարքը կայուն է 1% մակարդակում (ADF=-3.85, p=0.0102): Սպառման ծախսերի փոփոխականը (D(CC)) նույնպես ստացիոնար է 1% մակարդակում (ADF=-4.38, p=0.0032):

Այսպիսով՝ բոլոր փոփոխականների դեպքում մերժվում է ոչ ստացիոնարության զրոյական հիպոթեզը՝ հաստատելով դրանց կայունությունը համապատասխան վստահության մակարդակներում: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ հետագա էկոնոմետրիկ վերլուծությունների համար ապահովված է անհրաժեշտ նախապայմանը:

Միագործոն ռեգրեսիա՝ մոդել 1:

Մոդել 1-ի կախյալ փոփոխականն է ՀՀ անվանական ՀՆԱ-ն, իսկ անկախ փոփոխականը՝ ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արտահանումը: Մոդելը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Մոդել 1

Dependent Variable: D(GDP)				
Method: Least Squares				
Date: 04/14/25 Time: 22:05				
Sample (adjusted): 2001 2023				
Included observations: 23 after adjustments				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	284653.3	51130.42	5.567199	0.0000
D(ZBEK)	1.572970	0.253010	6.217019	0.0000
R-squared	0.647954	Mean dependent var		366166.8
Adjusted R-squared	0.631190	S.D. dependent var		390276.3
S.E. of regression	237013.7	Akaike info criterion		27.6726
Sum squared resid	1.18E+12	Schwarz criterion		27.7713
Log likelihood	-316.2345	Hannan-Quinn criter.		27.6974
F-statistic	38.65133	Durbin-Watson stat		1.5104
Prob(F-statistic)	0.000004			

Մոդելի համար ստուգվել են Գաուս Մարկովի պայմանները, որոնց արդյունքները ներկայացված են ստորև՝ աղյուսակներ 4 և 5:

Աղյուսակ 4. Մոդել 1-ի մնացորդների ավտոկորելյացիայի թեստը

Breusch-Godfrey Serial Correlation LM Test:				
Null hypothesis: No serial correlation at up to 2 lags				
F-statistic	0.2729	Prob. F(2,19)		0.7641
Obs*R-squared	0.6423	Prob. Chi-Square(2)		0.7253

Աղյուսակ 4-ի տվյալները LM թեստի արդյունքներն են՝ F static Prob=0.7641 Obs*R-squared=0.6423 > 0.05 և Prob. Chi-Square =0.7253 > 0.05, որոնք վկայում են այն մասին, որ փոփոխականները ավտոկորելացված չեն:

Ներքոհիշյալ աղյուսակը վերաբերում է Բրեուշ Պագան Գոդֆրեյի թեստի արդյունքներին, ըստ որի մոդելի փոփոխականները հոմոսկեդաստիկ են (Prob>=0.05):

Աղյուսակ 5. Մոդել 1-ի մնացորդների հոմոսկեդաստիկության թեստը

Heteroskedasticity Test: Breusch-Pagan-Godfrey				
Null hypothesis: Homoskedasticity				
F-statistic	0.0754	Prob. F(1,21)		0.7863
Obs*R-squared	0.0823	Prob. Chi-Square(1)		0.7742
Scaled explained SS	0.1962	Prob. Chi-Square(1)		0.6578

Այսպիսով՝ մոդելի հավասարումը ունի հետևյալ տեսքը.

$$D(GDP) = 284653.271341 + 1.57296985931*D(ZBEK)$$

Այսինքն, եթե զբոսաշրջիկների բերած եկամուտները՝ ZBEK-ը, աճեն 1 մլն ՀՀ դրամով, ապա ՀՆԱ-ն կաճի 1.573՝ մլն ՀՀ դրամով: Այս արդյունքը վկայում է, որ բարձր տրանսպորտային ծառայությունների արտահանումը զբոսաշրջիկների համար նպաստում է երկրի տնտեսական աճին, ինչը ընդգծում է տրանսպորտային ենթակառուցվածքների և զբոսաշրջային ծառայությունների տնտեսական նշանակությունը:

Բազմագործոն ռեգրեսիա՝ մոդել 2:

Մոդելում կախյալ փոփոխական է ՀՀ անվանական ՀՆԱ-ն՝ GDP (միավորը՝ մլն ԱՄՆ դոլար), իսկ կախյալ փոփոխականներ են ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թիվը՝ ARR (միավորը՝ մարդ), ՀՀ-ից մեկնողների թիվը՝ DEP (միավորը՝ մարդ), ՀՀ-ում տնային տնտեսությունների սպառողական ծախսերը `CC (մլն. ՀՀ դրամ):

Արդյունքում ստացած մոդելը ներկայացվում է հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 6. Մոդել 2

Dependent Variable: D(GDP)				
Method: Least Squares				
Date: 04/16/25 Time: 19:49				
Sample (adjusted): 2001 2023				
Included observations: 23 after adjustments				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.

C	102795.7	72053.64	1.426655	0.1699
ARR	0.957507	0.225098	4.253738	0.0004
D(CC)	0.762529	0.154948	4.921193	0.0001
DEP	-0.972320	0.245571	-3.959430	0.0008
R-squared	0.792059	Mean dependent var		366166.8
Adjusted R-squared	0.759226	S.D. dependent var		390276.3
S.E. of regression	191503.5	Akaike info criterion		27.31997
Sum squared resid	6.97E+11	Schwarz criterion		27.51745
Log likelihood	-310.1797	Hannan-Quinn criter.		27.36964
F-statistic	24.12402	Durbin-Watson stat		2.120919
Prob(F-statistic)	0.000001			

Առաջադրվել են Գաուս Մարկովի պայմանները բավարարելու ստուգմանը միտված հիպոթեզներ (արդյունքները տես աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Ավտոկորելացիայի և հոմոսկեդաստիկության թեստերի արդյունքները

Breusch-Godfrey Serial Correlation LM Test:				
Null hypothesis: No serial correlation at up to 2 lags				
F-statistic	0.178500	Prob. F(2,17)		0.8381
Obs*R-squared	0.473065	Prob. Chi-Square(2)		0.7894

Heteroskedasticity Test: Breusch-Pagan-Godfrey				
Null hypothesis: Homoskedasticity				
F-statistic	0.731157	Prob. F(3,19)		0.5461
Obs*R-squared	2.380441	Prob. Chi-Square(3)		0.5173
Scaled explained SS	3.978039	Prob. Chi-Square(3)		0.2638

Ինչպես երևում է թե՛ Բրեուշ-Գոդֆեյի LM, թե՛ հոմոսկեդաստիկությունը ստուգող Բրեուշ -Պագան- Գոդֆրեյի թեստերի արդյունքներում Prob (F static) Prob (Chi Square) >0.05, ինչը նշանակում է, որ առաջադրված վարկածները հաստատվել են, ինչը փաստում է Գաուս Մարիկովի պայմանների բավարարելը:
Այսպիսով՝ մոդելի հավասարումն է՝

$$D(GDP) = 102795.675338 + 0.957507444924*ARR + 0.762528786078*D(CC) - 0.972319622248*DEP$$

Այսինքն՝

- եթե Հայաստան ժամանածների թիվը ավելանա 1 մարդով, ապա ՀՀ անվանական ՀՆԱ-ն կավելանա 957 507 դրամով, այլ հավասար պայմաններում նշանակալիության 1% մակարդակում: Սա նշանակում է, որ Հայաստանի տնտեսական աճի վրա իր դրական զգալի ազդեցությունը ունի ներգնա տուրիզմը, հետևաբար, պետք է կատարել որոշ գործողություններ այն խթանելու համար:
- եթե տնային տնտեսությունների սպառումը ավելանա 1 մլն ՀՀ դրամով, ապա ՀՆԱ-ն կավելանա 762 528 դրամով: Քանի որ տնային տնտեսությունների սպառումը համարվում է ՀՆԱ-ի կարևոր բաղադրիչ, հետևաբար, այս դրական ազդեցությունը տրամաբանական է և սպասելի: Այս գործակիցը հաստատում է այն, որ ներքին սպառումը ՀՆԱ-ի կայուն աճի հիմնական աղբյուրներից է:
- Յուրաքանչյուր լրացուցիչ մեկնող մարդ անվանական ՀՆԱ-ն նվազեցնում է 972 319,6 դրամով: Երբ մարդիկ հեռանում են երկրից, նվազում է ինչպես սպառումը, այնպես էլ արտադրողական ներուժը (աշխատուժ, գիտելիք, հարկեր և այլն): Այս մոդելն արձանագրում է, որ արտագնա տուրիզմը բացասաբար է ազդում տնտեսական աճի վրա:

Ընդհանուր առմամբ, մոդելը ակնհայտորեն վերահաստատում է զբոսաշրջության և ներքին սպառման դրական ներդրումը ՀՆԱ-ի աճի վրա՝ նույնքան կարևորությամբ բացահայտելով արտագնա տուրիզմի հակառակ ազդեցությունը:

Եզրակացություն

Վերլուծության շրջանակներում իրականացվել է տնտեսաչափական գնահատում՝ նպատակ ունենալով պարզելու ՀՀ զբոսաշրջության ազդեցությունը երկրի ՀՆԱ-ի վրա: Միագործոն և բազմագործոն ռեգրեսիաների միջոցով ստացած մոդելները թույլ են տվել բացահայտել ՀՆԱ-ի նկատմամբ զբոսաշրջությունը բնութագրող հիմնական գործոնների ազդեցությունները:

Իրականացված միագործոն ռեգրեսիայի արդյունքում ստացած մոդելի վերլուծությունը ցույց է տալիս, որ ճանապարհորդության և մարդատար տրանսպորտում զբոսաշրջության հետ կապված ծառայությունների **արտահանումը (**ZBEK**)** դրական ազդեցություն ունի ՀՆԱ-ի աճի վրա՝ ընդգծելով տրանսպորտային ենթակառուցվածքների և զբոսաշրջային ծառայությունների նշանակությունը երկրի տնտեսության համար, իսկ բազմագործոն ռեգրեսիայի մեթոդով ստացած մոդելի վերլուծության արդյունքում կարելի է պնդել, որ ՀՆԱ-ի աճը դրականորեն կախված է ներքին զբոսաշրջիկների և սպառման աճից, մինչդեռ արտագնա տուրիզմի աճը վերարտադրում է հակառակ ազդեցությունը՝ փոքրացնելով տնտեսության ներքին աճը:

Արդյունքները հաստատում են, որ անհրաժեշտ է խթանել ներքին զբոսաշրջության զարգացումը և նվազեցնել արտագնա տուրիզմի բացասական ազդեցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխարհի ճանապարհորդության և զբոսաշրջության խորհուրդ (WTTC). *Travel and Tourism Economic Impact*, 2018: wttc-global-economic-impact-and-issues-2018-eng.pdf, Վերջին այց՝ 16. 12. 2025
2. Աշխարհի ճանապարհորդության և զբոսաշրջության խորհուրդ (WTTC). *Travel and Tourism, Global Economic Impact and Trends*, հունիս 2020. WTTC Launches New Report on the Future of Travel & Tourism in a Post-COVID World, Վերջին այց՝ 16. 12. 2025

3. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ). *«Տուրիզմի վիճակագրություն»*, https://armstat.am/am: Վերջին այց՝ 23. 09. 2025:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն. *«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրություն»*, https://www.mineconomy.am: Վերջին այց՝ 23. 09. 2025:

5. Սարգսյան, Սուրեն. *Հայաստանի Հանրապետության իրական հատվածի մոդելավորումը և էկոնոմետրիկական հետազոտումը*. Երևան, 2008:

6. Castro-Nuño, María, José Andrés Molina-Toucedo, and María de los Ángeles Pablo-Romero. "Tourism and GDP: A Meta-analysis of Panel Data Studies". *Journal of Travel Research*, vol. 52, no. 6, 2013, pp. 745-758.

7. Engle, Robert F., and Clive W.J. Granger. «Co-Integration and Error Correction: Representation, Estimation, and Testing». *Econometrica*, vol. 55, no. 2, 1987, pp. 251–276.

8. Gujarati, Damodar N., and Dawn C. Porter. *Basic Econometrics*. 5th ed., McGraw-Hill/Irwin, 2008.

9. Kharatyan, Alvard, and Varsik Tigranyan. "Tourism as a Factor of Economic Growth: An Empirical Analysis for Armenia". *ResearchGate*, 2021, pp. 113–131, https://www.researchgate.net/publication/388180599_TOURISM_AS_A_FACTOR_OF_ECONOMIC_GROWTH_AN_EMPIRICAL_ANALYSIS_FOR_ARMENIA_1. Accessed: 24. 09. 2025.

10. Škrabić Perić, Blanka, and Žana Vidović. "Heterogeneous Panel Granger Causality between GDP and Tourism in 11 EU Members in Central and Southeastern Europe". *Eastern European Business and Economics Journal*, vol. 3, no. 1, 2017, pp. 6-27. https://ideas.repec.org/a/eeb/articl/v3y2017n1p6-27.html: Վերջին այց՝ 23. 09. 2025.

11. Tovmasyan, Gayane. "Evaluating the Role of Tourism in the Economic Development of the Republic of Armenia and Other Member States of the Eurasian Economic Union". *Journal of Liberty and International Affairs*, vol. 8, no. 3, 2022, pp. 83-98. https://e-jlia.com/index.php/jlia/article/view/747: Վերջին այց՝ 24. 09. 2025.

WORKS CITED

1. Ministry of Economy of the Republic of Armenia. *Zbosashrjutyani Volorti Vitchakagrutyun* [Tourism Sector Statistics]. https://www.mineconomy.am. (in Armenian)

2. Sargsyan, Suren D. *Hayastani Hanrapetut'yan Irakan Hataki Modelavorumn Ev Ekonometrikakan Hetazotumn* [Modeling and Econometric Research of the Real Sector of the Republic of Armenia]. Yerevan, 2008. (in Armenian)

3. Statistical Committee of the Republic of Armenia. *Zbosashrjutyani Vitchakagrutyun* [Tourism Statistics]. https://armstat.am/am. (in Armenian)

4. World Travel and Tourism Council (WTTC). *Travel and Tourism Economic Impact 2018.* 2018. https://wttc.org

5. World Travel and Tourism Council (WTTC). *Travel and Tourism: Global Economic Impact and Trends 2020.* June 2020. https://wttc.org

TOURISM DEVELOPMENT AND ITS IMPACT ON ARMENIA'S ECONOMY

ASTGHIK PARSYAN
Yerevan State University, Faculty of Economics and Management,
Chair of Mathematical Modelling in Economics,
Assistant Lecturer, Ph.D. in Economics;
Yerevan, the Republic of Armenia

ANNA SARGSYAN
Armenian State University of Economics, Faculty of Economics,
Chair of Applied Economics,
Ph.D. in Economics, Associate professor,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this study is to analyze the role of tourism in the economic development of the Republic of Armenia.

The research objectives include identifying the structure and existing challenges of the tourism sector, conducting a statistical analysis of Armenia's tourism field for the period 2000–2023 based on official data, and evaluating the impact of tourism on Armenia's Gross Domestic Product (GDP) using econometric models.

The methodology is based on single-equation and multiple-equation regression models, which allow revealing the influence of various tourism components on the economy. The results show that the export of tourism-related services in road and passenger transport (ZBEK) positively affects GDP growth. Multiple regression analysis further indicates that GDP growth is positively associated with the increase in domestic tourists and household consumption, whereas outbound tourism growth has an opposite effect, reducing domestic economic expansion.

These findings are significant not only from a scientific perspective but also from a practical standpoint, as they can serve as a basis for shaping tourism policy and development strategies in Armenia.

Keywords: *GDP, domestic tourism, outbound tourism, export of tourism-related services in passenger transport, household consumption, single-equation regression, multiple-equation regression.*

РАЗВИТИЕ ТУРИЗМА И ЕГО ВЛИЯНИЕ НА ЭКОНОМИКУ АРМЕНИИ

АСТХИК ПАРСЯН
ассистент-преподаватель кафедры математического моделирования
в экономике факультета экономики и управления
Ереванского государственного университета,
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения

АННА САРГСЯН
доцент кафедры прикладной экономики
экономического факультета
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения

Цель данного исследования — проанализировать роль туризма в экономическом развитии Республики Армения.

В рамках исследования поставлены следующие задачи: выявить структуру и существующие проблемы туристического сектора, провести статистический анализ туристической сферы Армении за период 2000–2023 годов на основе официальных данных, а также оценить влияние туризма на валовой внутренний продукт (ВВП) Армении с использованием эконометрических моделей.

Методология исследования основана на применении однофакторной и многофакторной регрессионной моделей, что позволило выявить влияние различных компонентов туризма на экономику. Результаты показывают, что экспорт туристических услуг в сфере автомобильного и пассажирского транспорта (ZBEK) положительно влияет на рост ВВП. Многофакторный регрессионный анализ дополнительно указывает на то, что рост ВВП положительно связан с увеличением числа внутренних туристов и потреблением домашних хозяйств, тогда как рост выездного туризма оказывает противоположное воздействие, снижая внутренний экономический рост.

Полученные результаты имеют значение не только с научной точки зрения, но и с практической, так как могут служить основой для разработки туристической политики и стратегий развития в Армении.

Ключевые слова: *ВВП, внутренний туризм, выездной туризм, экспорт туристических услуг в пассажирском транспорте, потребление домашних хозяйств, однофакторная регрессия, многофакторная регрессия.*

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ *

ՀՏԴ 352 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-194*

ՄԱՐԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի ասպիրանտ, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագծերի կառավարման պատասխանատու, «Ոսկեհատ» երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահ,
Աշտարակ համայնք, գ. Ոսկեհատ, Հայաստանի Հանրապետություն
mkhitarianmm@gmail.com
ORCID: 0009-0007-2966-0386

Հոդվածի նպատակն է միավորված համայնքների տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման առկա գործիքակազմերին զուգահեռ ստեղծել ինքնագնահատման գործիքակազմ՝ կարևորելով համայնքի ոլորտային ցուցանիշների անաչառ գնահատումը: Ինքնագնահատման գործիքակազմի նախագծման մեթոդաբանության ձևավորման համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- ***Բացահայտել ինքնագնահատման գործիքակազմի ոլորտները, ցուցանիշները, նրանց հետ փոխկապակցված ռիսկերը:***
- ***Մշակել ինքնագնահատման գործիքակազմի մեթոդաբանությունը:***

Հետազոտությունն արդիական է նրանով, որ տարածքային առանձնահատկություններով, բնակչության թվով, կազմով և այլ ցուցանիշներով միմյանցից տարբերվող համայնքների՝ միմյանց հետ համեմատումից և առկա ՀՀ միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության գնահատման տարատեսակ գործիքակազմերից զատ՝ անհրաժեշտ է ստեղծել ինքնագնահատման նոր մեթոդաբանություն և գործիքակազմ՝ միավորված համայնքների՝ առավել արդյունավետ կառավարման համար:

Ինքնագնահատման գործիքակազմը հնարավորություն է տալիս համայնքներին բացահայտելու համայնքի խնդիրները և քայլեր ձեռնարկելու դրանց լուծման ուղղությամբ՝ չհամեմատվելով այլ համայնքների համանման ցուցանիշների հետ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են նորմատիվ ակտերի վերլուծության, թվային կառավարման համակարգերի մոդելավորման մեթոդաբանությունները, որոնց հիման վրա մշակվել է ինքնագնահատման արդյունքում նախագծերի պլանավորման վերլուծական գործիքակազմի նախատիպ:

Հետազոտության շրջանակներում իրականացված եզրահանգումն այն է, որ ինքնագնահատման գործիքակազմը կարող է հիմք հանդիսանալ միավորված համայնքներում նախագծերի պլանավորման ժամանակ առկա խնդիրների վերհանման, դրանց լուծման ուղղությամբ արդյունավետ որոշումների կայացման համար:

Համայնքապետարանների որոշումները կարող են նպատակաուղղվել՝ նվազեցնելու ինքնագնահատման արդյունքում ի հայտ եկած ռիսկերը:

* Հոդվածը ներկայացվել է 30.09.2025թ., գրախոսվել՝ 28.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Հիմնաբառեր՝ ՀՀ *միավորված համայնքներ, կառավարման արդյունավետություն, ինքնագնահատում, նախագծերի պլանավորում, համայնքների զարգացում, կառավարում, «SWOT» վերլուծություն:*

Ներածություն

Համայնքների միավորման արդյունավետությունը հիմնավորելիս հետազոտողների կողմից նշվում են հանրային (համայնքային) ծառայությունների ծավալային աճը, համայնքների ֆինանսական ու բյուջետային կարողություններն ավելացնելու հնարավորությունները, քաղաքական հովանավորչության ձևերից խուսափելու ինստիտուցիոնալ եղանակները և այլն: Միավորումը հնարավորություն է տալիս խորացնելու ապակենտրոնացման քաղաքականությունը՝ միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելով ավելի մեծ ծավալի լիազորություններ և դրանով իսկ մեծացնելով վերջիններիս դերը հանրային կառավարման համակարգում (Ալթունյան 3):

ՀՀ միավորված համայնքների տեղական ինքնակառավարման արդյունավետ կառավարումը չի սահմանափակվում միայն տնտեսական ցուցանիշներով և քանակական գնահատումներով: Այն կարող ենք դիտարկել որպես համակողմանի երևույթ, որը ներառում է այնպիսի ցուցանիշներ, ինչպիսին են՝ հանրային վստահությունը, մասնակցային գործընթացներին ներառումը, տարածքային հավասարակշռությունը և համաչափ զարգացումը և այլն:

Առավել համապարփակ՝ արդյունավետ կառավարումը ենթադրում է համայնքային կյանքից գոհունակ բնակչություն, ծառայությունների լավագույն որակ, համայնքներից դեպի մայրաքաղաք միգրացիայի կանխում, արտագաղթի նվազեցում, կրթված հասարակության՝ համայնքի ներսում աշխատելու հնարավորությունների ընձեռում, աղքատության շեմի նվազեցում՝ համայնքների տնտեսական զարգացման շնորհիվ և այլն:

Նշված որակական արդյունքների կառավարման տեսանկյունից կարևորագույն խնդիր է մնում համայնքային նախագծերի պլանավորման ժամանակ ոլորտների ընտրության, միմյանց փոխկապակցված ռիսկերի նվազեցման, առաջնահերթությունների սահմանման գործիքակազմի ստեղծումը:

Կառավարման արդյունավետության գնահատումը

2008 թվականին Եվրոպայի խորհուրդն ընդունեց «Տեղական մակարդակում նորարարության և լավ կառավարման ռազմավարությունը», որով սահմանվեցին «Լավ կառավարման 12 սկզբունքները», որոնք խթանում են հաշվետվողականությունը, թափանցիկությունը, օրենքի գերակայությունը և առողջ ֆինանսական կառավարումը՝ ապահովելով արդյունավետ կառավարում (Թափանցիկ և լավ կառավարում 19):

Թերևս, ՀՀ տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման ամենատարածված և վերջին տարիներին արդյունավետություն գրանցած մեթոդաբանությունը ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ ՀՀ տեղական 6 կազմակերպությունների համընկերության (ՀՖՄ-ի առաջնորդությամբ) կողմից 2014թ. հոկտեմբեր - 2022թ. մարտ ժամանակահատվածում իրականացված «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի շրջանակներում ՀՖՄ-ի և ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից 2017-ին մշակված «Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ), Հայաստան» մեթոդաբանությունն է (2015թ. և 2016թ.)՝ հիմնված այդ բնագավառում միջազգային որոշակի փորձի վրա և հնարավորինս տեղայնացված ՀՀ ՏԻ համակարգում (Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս 16):

Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքսի համար հետազոտողները սահմանել են ՏԻ բնագավառների, գործառույթների և ցուցիչների սանդղակներ, գնահատման չափանիշներ: ՏԻՏԻ-ի հաշվարկի համար ընտրվել են 5 բնագավառներ՝ ՏԻ բարեփոխումներ.

- համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ
- տեղական ժողովրդավարություն
- համայնքի կառավարում:
- համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում:

Վերջին անգամ այս մեթոդով ՀՀ տարեկան ինդեքսը հաշվարկվել է 2022 թվականին՝ 2021 թվականի արդյունքների հիման վրա: Ըստ այդմ՝ 2021 թվականի համար հաշվարկված ՀՀ ՏԻՏԻ գնահատականը էականորեն աճել է 2020 թվականի ՏԻՏԻ-ից՝ կազմելով 5.7 բալ (Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս 12):

Էլինոր Օստրոմի տեսությունը և տեղական ինքնակառավարման արդյունավետությունը

Բնակչության կառավարման հիմնախնդիրները դեպի ներքև՝ տեղական մակարդակում դիտարկելուն զուգահեռ դեռևս 1990-ական թվականներին հետազոտողները բարձրաձայնել են համաշխարհային նշանակության հարցերի, օրինակ՝ ընդհանուր օգտագործման ռեսուրսների սահմանափակ օգտագործման հնարավորությունը՝ մեծ կամ փոքր համակարգերի տեսանկյունից:

Տեղական և տարածաշրջանային բաժանումների կամ միավորումների համատեքստում առաջին կին տնտեսագետ Նոբելյան մրցանակակիր Էլինոր Օստրոմը քննարկում է մարդկության նոր մարտահրավերների՝ կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության և այլ էկոհամակարգային ծառայությունների կառավարման համար համընդհանուր համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը (Revisiting the Commons: Local Lessons, Global Challenges.Science 278-282):

Օստրոմի տեսությունը եթե տեղայնացնենք Հայաստանի միավորված համայնքներում, ապա լուծումը մեկն է՝ տեղական ինքնակառավարման մարմինը չի սպասում պետական քաղաքականությանը, ինքն է որոշում իր համայնքում էներգախնայող, վերականգնող էներգիայի, աղբի տեսակավորման, անտառվերականգնման և այլ ծրագրերը: Այլ կերպ ասած՝ համընդհանուր խնդիրները հնարավոր է լուծել միայն ամենաստորին օղակների կողմից իրական գործուն քայլերի իրականացման դեպքում. տարածքային բազմակենտրոն լուծում:

Նշված մոտեցման դեպքում արդյունավետ կառավարման համար նախ անհրաժեշտ է հստակ տարանջատել յուրաքանչյուր համայնքի ուժեղ, թույլ կողմերը, հնարավորություններն ու մարտահրավերները:

Միաժամանակ, ոլորտային կառավարման տեսանկյունից, ՀՀ միավորված համայնքներում առկա չեն կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան քննելու, կարևորելու այս կամ այն ոլորտի զարգացման ուղղությունները, ներդրումներ կատարելու նշված ոլորտներում՝ դրանով նպաստելով համայնքի տնտեսական զարգացմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի համայնքում բնակիչների ապրելակերպի լավարկմանը, արտագաղթի նվազեցմանը և այլն:

Համայնքի տնտեսական զարգացման ապահովման տեսանկյունից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել ստեղծելու նոր կառուցակարգեր՝ համայնքի ոլորտային զարգացման նախնական գնահատման և ռեսուրսների թիրախային բաշխման նպատակով: Միաժամանակ, նոր կառուցակարգը հնարավորություն կստեղծի համայնքային ռազմավարական պլանի ստեղծման ժամանակ ուշադրություն դարձնելու տեղական և համընդհանուր ոլորտային խնդիրներին, ստեղծելու ներդրումային ուղեցույց՝ նպաստելով դեպի համայնք դրամաշնորհային ծրագրերի հոսքին:

Որպես ոլորտային զարգացման ուղղություններ առանձնացվել են՝ ՓՄՁ զարգացում, զբոսաշրջություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, էներգետիկ համակարգեր, տեղական արդյունաբերություն, առողջապահություն և սոցիալական ծառայություններ: Ոլորտային գնահատման կառուցակարգում գնահատումն իրականացվում է 1-10 բալային համակարգով՝ հետևյալ սկզբունքով՝ 10-կատարյալ, 9-շատ լավ, 8-լավ, 7-բավականին լավ, 6-ավելի շատ վատ, քան լավ, 5-միջին՝ ոչ լավ ոչ վատ, 4-ավելի շատ վատ, քան լավ, 3-բավականին վատ, 2-վատ, 1-շատ վատ:

Նշված կառուցակարգը կիրառելի է ինչպես պետական սուբսիդիաների ժամանակ համայնքների ընդհանուր ինքնագնահատման արդյունքները ստուգելու, այնպես էլ յուրաքանչյուր համայնքի կողմից իր լոկալ՝ բնակավայրերի միջև ոլորտային առաջնահերթություններ սահմանելու տեսանկյունից:

SWOT վերլուծությամբ համայնքային նախագծերի պլանավորման գործիքակազմ

Տեղական ինքնակառավարման ամրագրումը ենթադրում է տեղական նշանակության հարցերի հատուկ ոլորտների առանձնացում, որոնց շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինները գործում են ինքնուրույն և պատասխանատու են առաջին հերթին համայնքի բնակչության առջև (Հարությունյան 5):

Ընտրված ոլորտների ցուցանիշների SWOT վերլուծության հիման վրա համայնքային ծրագրերի պլանավորման գործիքակազմը հնարավորություն է տալիս ամեն տարի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնօրինվող բյուջեի պլանավորումը դարձնելու առավել թիրախային՝ ներառելով նախագծերը, որոնք ուղղված կլինեն համայնքային խնդիրների լուծմանը: Համայնքապետի, համայնքի ոլորտային աշխատակիցների կողմից կատարված հաշվարկների հիման վրա առկա ցուցանիշների լրացման արդյունքում ստեղծված գործիքակազմը վեր կհանի ոլորտային խնդրի լուծման դեպքում հնարավոր ռիսկերը: Կախված ռիսկերի բարձր կամ ցածր լինելուց՝ ՏԻՄ-երը կիրականացնեն հաջորդ տարվա բյուջեի ծախսման ուղղությունների նախագծերի պլանավորում:

Ընտրված ուղղություններ՝

- հարկային քաղաքականություն
- թափանցիկություն և հաշվետվողականություն
- ենթակառուցվածքների գնահատում և ռիսկեր
- սոցիալական ոլորտի զարգացում և ռիսկեր
- համայնքի տնտեսական զարգացման հնարավորություններ և ռիսկեր
- կառավարում և վերահսկողություն:

Միաժամանակ, զուգահեռներ են տարվել ընտրված ոլորտների արդյունքների թերակատարման դեպքում սպասվող ռիսկերի վերհանման, այլ ռիսկերի հետ փոխկապակցման ուղղությամբ:

Առկա ռիսկերի բարձր կամ ցածր լինելով պայմանավորված՝ համայնքի որոշում կայացնող անձինք՝ տեղական ինքնակառավարման մարմինը, կարող է միավորված համայնքի բյուջեն ուղղել ցածր արդյունքներ ունեցող ոլորտի զարգացմանն ու նշված ոլորտի թերակատարման դեպքում սպասվող ռիսկերի նվազեցմանը:

SWOT գործիքակազմի մեթոդաբանություն

Մշակված մեթոդաբանությամբ աղյուսակի ցուցանիշները գնահատվում են 1-10 գնահատման համակարգով, ինչի արդյունքում ինքնաշխատ եղանակով փոփոխվում են հաջորդող սյունակների ցուցանիշները՝ վեր հանելով ցուցանիշներին փոխկապակցված ռիսկերի բարձր կամ ցածր լինելը, ինչի արդյունքում տեսանելի են

դառնում ցուցանիշների փոփոխության ազդեցությունը՝ ռիսկերը, հնարավորություններն ու վտանգները, ուժեղ և թույլ կողմերը: Կարևորելով ռիսկերի նվազեցումը՝ SWOT գործիքակազմում ներկայացվել են այդ ռիսկերի վրա ազդող գործոնները:

Կարևորելով բոլոր ոլորտների ներառումը և ռիսկերի վերհանումը՝ գործիքակազմն ունի ինչպես ներքոշարադրյալ, այնպես էլ՝ սոցիալական, տնտեսական զարգացման, կառավարման, վերահսկողության և այլ ոլորտների գնատման բաժիններ՝ համապատասխան ռիսկերի վրա ազդեցությամբ:

Միավորված համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից վարվող հարկային քաղաքականությունը կարող է ապահովել ինչպես արդյունավետություն՝ պայմանավորված համայնքի միավորմամբ, այնպես էլ՝ անարդյունավետություն՝ կրկին պայմանավորված բնակավայրերի միավորմամբ: Համայնքների միավորումից հետո ոչ բոլոր բնակավայրերն են ապահովել հարկահավաքության մեծ ցուցանիշներ: Այնուամենայնիվ, խոշորացված համայնքները սկսել են ավելի հետևողական լինել և, եթե փոքր համայնքի պարագայում ավելի շաղկապված են եղել միմյանց բարեկամական կապերով, այժմ այդ կապվածությունը, կարելի է ասել, երկրորդվում է՝ մեծ տեղ հատկացնելով օրենքին (Օթարյան 7):

Միաժամանակ, գործիքակազմն ինքնաշխատ եղանակով հնարավորություն է տալիս տեսնելու առկա հնարավորությունները, մարտահրավերները, համայնքի ուժեղ և թույլ կողմերը:

Աղյուսակ 1.Հարկային քաղաքականության ցուցանիշներ և ռիսկեր*

Ցուցանիշներ	Բաժին և ոլորտ	Ռիսկեր
Տեղական եկամուտների քաղաքականության ազդեցության գնահատման իրականացում	Տեղական հարկաբյուջետային քաղաքականություն	Քաղաքացիների վստահության անկում, կոռուպցիոն ռիսկեր
Էլեկտրոնային վճարումների կիրառման հնարավորություն	Տեղական հարկաբյուջետային քաղաքականություն	Բյուջետային եկամուտների հավաքագրման ցուցանիշի անկում: Ֆինանսական կախվածության ավելացում
Այլ ՏԻՄ-երի հետ համագործակցություն	Հարկաբյուջետային քաղաքականություն	Ռեսուրսների անհամաչափ բաշխման, հնարավորությունների չօգտագործման ռիսկ
Հարկային վարչարարության՝ հանրության համար պարզություն և հասկանալություն	Հարկային վարչարարություն	Անվստահություն ՏԻՄ-ի հանդեպ: Հարկային համակարգի նկատմամբ անվստահության ավելացում
Տեղական հարկերի հավաքագրման մակարդակ	Տեղական հարկահավաքագրում	Համայնքապետարանի նկատմամբ վստահության անկման ռիսկ

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը կարող է կասեցնել այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են՝ կոռուպցիան, հասարակության վստահության անկումը, բնակիչների մասնակցության շեմի նվազումը և այլն:

Աղյուսակ 2. Թափանցիկություն և հաշվետվողականություն

Ցուցանիշներ	Բաժին և ոլորտ	Ռիսկեր
Համայնքապետարանի գործունեության թափանցիկություն	Թափանցիկություն և հանրության ներգրավվածություն	Կոռուպցիոն ռիսկերի աճ: Քաղաքացիների վստահության անկում
Բյուջեի վերաբերյալ քննարկումների՝ բաց ժողովների եղանակով կազմակերպում	Թափանցիկություն և հանրության ներգրավվածություն	Քաղաքացիների մասնակցության մշակույթի թուլացում
Բնակիչների մասնակցայնության մակարդակ	Թափանցիկություն և հանրության ներգրավվածություն	Սխալ որոշումների կայացման ռիսկ
Հանրային լսումների իրականացման մակարդակ	Թափանցիկություն և հանրության ներգրավվածություն	Սխալ որոշումների կայացման ռիսկ

*Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

Համայնքային ենթակառուցվածքների զարգացումը կարող է նպաստել բնակիչների գոհունակության բարձրացմանը, ինչպես նաև համայնքում տնտեսական աճին՝ պայմանավորված բնակիչների շարժով և ենթակառուցվածքների ընձեռած հնարավորություններով:

Աղյուսակ 3. Ենթակառուցվածքների գնահատում և ռիսկեր

Ցուցանիշներ	Բաժին և ոլորտ	Ռիսկեր
Ճանապարհների վիճակ	Ենթակառուցվածքների զարգացում	Տնտեսական պասիվության ռիսկ
Խմելու ջրի որակ	Ենթակառուցվածքների զարգացում	Բնակիչների առողջության վատթարացման ռիսկ՝
Ոռոգման ցանց	Ենթակառուցվածքների զարգացում	Գյուղատնտեսական արտադրողականության նվազման ռիսկ

*Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Միավորված համայնքներում յուրաքանչյուր ռիսկի նվազեցում նպաստելու է համայնքի զարգացմանը, սակայն համայնքն առանց բնակավայրի սոցիալական ու տնտեսական, ֆինանսական հնարավորություններից գոհունակ բնակչի ոչ կենսունակ է:

Մշակված գործիքակազմը հնարավորություն կտա առկա ֆինանսական միջոցներն ուղղելու միավորված համայնքի բարձր ռիսկերի նվազեցմանը՝ դրանով ապահովելով առավել արդյունավետ կառավարում համայնքներում: Ներքոնշյալ գծապատկերում երևում են ոլորտային գնահատման արդյունքում համայնքի ուժեղ և թույլ կողմերը, որոնց արդյունքում ձևավորվել են բարձր և ցածր ռիսկերը:

Միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ինքնագնահատման գործիքակազմի կիրառման արդյունքում հստակ կարող են սահմանվել համայնքի առջև ծառացած բարձր ռիսկերը, որոնց ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմնի գործունեությունը կարող է իրականացվել առավել թիրախային:

Գծապատկեր 1. Համայնքային SWOT գործիքակազմով գնահատում: Արագածոտնի մարզի մեկ համայնքի օրինակով

Ցուցանիշներ	Բաժին և ոլորտ	Գնահատում (1-10)	Գնահատման սանդղակ		Ուժեղ / թույլ կողմեր	Ռիսկեր	Բարձր/ցածր ռիսկ	Հնարավորություններ/վտանգներ
Համայնքապետարանի անձնակազմի վերապատրաստումների իրականացում	Տեղական անձնակազմի ներուժի զարգացում	4	10	Կատարյալ	թույլ	Ծառայությունների որակի և արդյունավետության նվազում: Աշխատակիցների արտահոսք	բարձր	վտանգ
			9	Շատ լավ				
			8	Լավ				
			7	Բավականին լավ				
			6	Ավելի շատ լավ, քան վատ				
			5	Միջին՝ ոչ լավ, ոչ վատ				
			4	Ավելի շատ վատ, քան լավ				
			3	Բավականին վատ				
			2	Վատ				
			1	Շատ վատ				
Տեղական եկամուտների քաղաքականության ազդեցության գնահատման իրականացում	Տեղական հարկաբյուջետային քաղաքականություն	6	10	Կատարյալ	ուժեղ	Քաղաքացիների վստահության անկում, կոռուպցիոն ռիսկեր	ցածր	հնարավորություն
			9	Շատ լավ				
			8	Լավ				
			7	Բավականին լավ				
			6	Ավելի շատ լավ, քան վատ				
			5	Միջին՝ ոչ լավ, ոչ վատ				
			4	Ավելի շատ վատ, քան լավ				
			3	Բավականին վատ				
			2	Վատ				
			1	Շատ վատ				

*Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:
Հաշվի առնելով ինքնագնահատման ձևաչափը՝ համայնքի անունը չի հրապարակվում

Եզրակացություն

Իրականացնելով կառավարման արդյունավետության գործիքակազմերի ուսումնասիրություն՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումներին՝

- Կառավարման արդյունավետության գնահատման բազմաթիվ մոդելներում առկա են արդյունավետության տարբեր ցուցանիշներ՝ համայնքների ֆինանսական անկախությունը, համայնքների մասշտաբի էֆեկտ, մարդկային ռեսուրսների կառավարում, բնակիչների մասնակցայնություն, ոլորտային կառավարում, համայնքային ծառայությունների մատուցում, տեղական ժողովրդավարություն, համայնքի սեփականության կառավարում և այլն:
- Այնուամենայնիվ, գնահատման արդյունավետությունը որոշելու առումով մոդելների կիրառելիությունը սահմանափակ է, դրանց հիման վրա ՏԻՄ-երում

իրականացված կառավարչական որոշումները, դրանց արդյունավետ ցուցանիշները մոդելների հետ կապող՝ համայնքների կողմից հրապարակված մեթոդաբանություններ ՀՀ-ում առկա չեն:

- Միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ կառավարման պլանավորումը, կազմակերպումն ու գնահատումն իրականացվում են տարաբնույթ մեթոդներով, որոնք ներառում են ինչպես քանակական, այնպես էլ որակական տվյալներ:
- Նշված մեթոդաբանությունները բախվում են կարևորագույն մի խնդրի, այն է՝ ցուցանիշները, որոնք պետական կառավարման մարմիններին տրամադրվում են տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կողմից, ոչ միշտ են արտահայտում առկա իրավիճակը:
- Գնահատման գործիքակազմերի արդյունքները, նախատեսված լինելով պետական և հասարակական միջավայրերում համայնքների արդյունքների վերհանման ու ներկայացման համար, երբեմն ներառում են ոչ ճշգրիտ տեղեկատվություն, մասնավորապես՝ որակական ցուցանիշների տեսանկյունից բնակիչների մասնակցայնություն, բնակիչների գոհունակություն՝ գործող համակարգերից, ռիսկերի գնահատում և այլն:
- Համայնքների ներկայացուցիչները խուսափում են նաև ճշգրիտ քանակական տվյալների ներկայացումից, քանի որ այն կարող է այլ համայնքների ցուցանիշների համեմատությամբ հանգեցնել համայնքի և ՏԻՄ-ի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորման:
- Միավորված համայնքների ՏԻՄ-երը համայնքային բյուջեի պլանավորման ժամանակ առաջնորդվում են պատվիրակված և սեփական լիազորություններով, սակայն համայնքի հաջորդ տարվա բյուջեի պլանավորումն իրականացվում է չհամակարգված մեթոդաբանությամբ: Նախագծերի ընտրությունն իրականացվում է իրենց սուբյեկտիվ մոտեցումներով և գնահատումներով:

Այսպիսով՝ առկա իրավիճակում համայնքների ինքնագնահատման գործիքակազմը կարող է դառնալ ներհամայնքային խնդիրների, հնարավորությունների վերհանման նոր, արդյունավետ մեթոդաբանություն: Ինքնագնահատման արդյունքների և համայնքում առկա ռիսկերի վերհանումը հնարավորություն կընձեռի համայնքում առկա ազատ ֆինանսական միջոցները նպատակաուղղելու առավել բարձր ռիսկերի նվազեցմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալթունյան, Կատերինա. «Համայնքների խոշորացում. դրական ու բացասական կողմերի վերլուծություն». *Գիտական Արցախ*, № 1(8), 2021, էջ 35-47, DOI: 10.52063/25792652-2021.1-35:
2. Եվրոպայի խորհուրդ. *Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական Խարտիա.* Ստրասբուրգ, 15.10.1985:
3. ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես. *Թափանցիկ և լավ կառավարում*. 2019, https://rm.coe.int/booklet-a6-transparency-coll-public-ethic-arm/168094ee2f: Վերջին մուտք՝ 06. 08. 2025:
4. Հարությունյան, Հերբերտ. «Տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական պատասխանատվության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում». *Գիտական Արցախ,* N 3 (22), 2024, էջ 21-30, DOI: 10.52063/25792652-2024.3.22-21:
5. ՀՀ *Սահմանադրություն.* 06. 12. 2015, https://www.arlis.am/hy/acts/143723/latest: Վերջին մուտք՝ 15. 09.2025:

6. ՀՀ Կառավարություն. *N 1093 որոշում. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին»*, ընդունված՝ 31. 08. 2015, https://www.arlis.am/hy/acts/110384: Վերջին մուտք՝ 11. 08. 2025:

7. Շահբազյան, Վահրամ և ուրիշներ. *Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս.* «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ, Երևան, գիրք 6, 2022:

8. *«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք.* ընդունված՝ 07.05.2002, ՀՀ ՊՏ N 21 (196), 21.06.2002, https://www.arlis.am/hy/acts/188985: Վերջին մուտք՝ 12. 09. 2025:

9. «*Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ), Հայաստան*». Մեթոդաբանություն, 2015 և 2016, Գիրք 1, Երևան, 2017:

10. Օթարյան, Միեր. «Համայնքների եկամուտների հավաքագրման արդի խնդիրները և բարելավման ուղիները». *Գիտական Արցախ*, No 1 (20), 2024, էջ 225-238, DOI: 10.52063/25792652-2024.1.20-225:

11. Dunleavy, Patrick, et al. *Innovating out of Austerity in Local Government: A SWOT analysis.* 2011.

12. Ostrom E. et al. *Revisiting the Commons: Local Lessons, Global Challenges.Science*. 1999, DOI:10.1126/science.284.5412.278.

13. Semenova, Liudmila. “Municipal entity SWOT- analysis conducting technique to assess its investment potential level”. *Espacios*, Vol. 39 (Nº 01) 2018, 1-9 p.

WORKS CITED

1. Alt'unyan, Katerina. «Hamaynqneri xoshoracum. Drakan u bacasakan koghmeri verluc'ut'yun» [Community Consolidation: Analysis of Positive and Negative Aspects]. Gitakan Arcax, № 1(8), 2021, e'j 35-47, DOI: 10.52063/25792652-2021.1-35, (in Armenian).

2. Evropayi xorhurd. Teghakan inqnakar'avarman masin Evropakan Xartia [Council of Europe. European Charter of Local Self-Government]. Strasbourg, 15.10.1985, (in Armenian).

3. EX teghakan ev tarac'qayin ishxanut'yunneri kongres. T'ap'ancik ev lav kar'avarum [Congress of Local and Regional Authorities of the Council of Europe. Transparency and Good Governance]. 2019, https://rm.coe.int/booklet-a6-transparency-coll-public-ethic-arm/168094ee2f: Verjin mutq՝ 06. 08. 2025, (in Armenian).

4. Harut'yunyan, Herbert. «Teghakan inqnakar'avarman marminneri sahmanadrakan patasxanatvut'yan himnaharcery' Hayastani Hanrapetut'yunum» [Issues of the Constitutional Responsibility of Local Self-Government Bodies in the Republic of Armenia]. Gitakan Arcax, N 3 (22), 2024, e'j 21-30, DOI: 10.52063/25792652-2024.3.22-21, (in Armenian).

5. HH Sahmanadrut'yun. [Constitution of the Republic of Armenia] 06. 12. 2015, https://www.arlis.am/hy/acts/143723/latest: Verjin mutq՝ 15. 09.2025, (in Armenian).

6. HH Kar'avarut'yun. N 1093 oroshum. «Petakan ev teghakan inqnakar'avarman marminneri koghmic e'lektronayin c'ar'ayut'yunneri matucman kam gorc'oghut'yunneri katarman hamar o'gtagorc'vogh e'lektronayin hamakargeri anvtangut'yan, p'oxgorc'eliut'yan ev texnikakan y'ndhanur pahanjnery' sahmanelu masin» [On Establishing General Security, Interoperability, and Technical Requirements for Electronic Systems Used by State and Local Self-Government Bodies for the Provision of Electronic

Services or Performance of Actions], y'ndunvac'՝ 31. 08. 2015, https://www.arlis.am/hy/acts/110384: Verjin mutq՝ 11. 08. 2025, (in Armenian).

7. Shahbazyan, Vahram ev urishner. Teghakan inqnakar'avarman tarekan indeqs. «Hamaynqneri finansistneri miavorum» HK [Annual Local Self-Government Index. NGO “Union of Community Financiers”], Erevan, girq 6, 2022, (in Armenian).

8. «Teghakan inqnakar'avarman masin» HH o'renq [Law of the Republic of Armenia “On Local Self-Government”]. y'ndunvac'՝ 07.05.2002, HH PT N 21 (196), 21.06.2002, https://www.arlis.am/hy/acts/188985: Verjin mutq՝ 12. 09. 2025, (in Armenian).

9. «Teghakan inqnakar'avarman tarekan indeqs (TITI), Hayastan» [Annual Local Self-Government Index (LSGI)]. Met'odabanut'yun, 2015 ev 2016, Girq 1, Erevan, 2017, (in Armenian).

10. O't'aryan, Mher. «Hamaynqneri ekamutneri havaqagrman ardi xndirnery' ev barelavman ughinery'» [Current Issues in Community Revenue Collection and Ways of Improvement]. Gitakan Arcax, No 1 (20), 2024, e'j 225-238, DOI: 10.52063/25792652-2024.1.20-225, (in Armenian).

SELF-ASSESSMENT AS A TOOLKIT FOR IMPROVING LOCAL SELF-GOVERNMENT EFFICIENCY

MARINE MKHITARYAN
Public Administration Academy of the Republic of Armenia,
Chair of Administration, Ph.D. Student;
RA State Revenue Committee, Project Manager;
"Voskehat" YNGO, President,
Ashtarak community, village Voskehat, the Republic of Armenia

The aim of the article is to create a self-assessment toolkit in parallel with the existing tools for assessing the effectiveness of local self-government in united communities, emphasizing the impartial assessment of community sectoral indicators. In order to form a methodology for designing a self-assessment toolkit, we have set the following objectives:

- To identify the areas, indicators, and risks associated with the self-assessment toolkit.
- To develop the methodology for the self-assessment toolkit.

The research is relevant in that, in addition to comparing communities that differ in territorial characteristics, population size, composition and other indicators, and in addition to the existing various tools for assessing the effectiveness of local self-government bodies in united communities of the Republic of Armenia, it is necessary to create a new self-assessment methodology and toolkit for more effective management of united communities.

The self-assessment toolkit enables communities to identify community problems and take steps to solve them, without comparing themselves with similar indicators of other communities.

During the research, methodologies for analyzing regulatory acts and modeling digital management systems were employed, on .which a prototype of an analytical toolkit for project planning, based on self-assessment, was developed.

The conclusion reached within the framework of the research is that the self-assessment toolkit can serve as a basis for identifying existing problems during project planning in united communities and making effective decisions to solve them.

Decisions of community municipalities can be aimed at reducing the risks identified as a result of self-assessment.

Keywords: *RA united communities, management efficiency, self-assessment, project planning, community development, management, "SWOT" analysis.*

САМООЦЕНИВАНИЕ КАК ИНСТРУМЕНТ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ

МАРИНЕ МХИТАРЯН
аспирант кафедры управления Академии государственного управления Республики Армения, специалист по управлению проектами Комитета государственных доходов РА, Президент ОО «Воскеат», община Аштарак, село Воскеат, Республика Армения

Цель статьи – создание инструментария самооценивания параллельно с существующими инструментами оценки эффективности местного самоуправления в объединенных общинах, с акцентом на беспристрастную оценку отраслевых показателей общин. Для формирования методологии разработки инструментария самооценивания поставлены следующие задачи:

- определение областей инструментария самооценивания, показателей и связанных с ними рисков;
- разработка методологии для инструментария самооценивания.

Исследование актуально потому, что, помимо сравнения общин, различающихся по территориальным характеристикам, численности населения, составу и другим показателям, и в дополнение к существующим инструментам оценки эффективности органов местного самоуправления в объединенных общинах Республики Армения, необходимо создать новую методологию и инструментарий самооценивания для более эффективного управления объединенными общинами.

Инструментарий самооценивания позволяет общинам выявлять проблемы общины и предпринимать шаги по их решению, не сравнивая их с аналогичными показателями других общин. В ходе исследования были использованы методологии анализа нормативных актов и моделирования цифровых систем управления, на основе которых был разработан прототип аналитического инструментария для планирования проектов, основанного на самооценке.

В рамках исследования был сделан вывод о том, что инструментарий самооценивания может служить основой для выявления существующих проблем при планировании проектов в объединенных сообществах и принятия эффективных решений по их решению.

Решения муниципалитетов могут быть направлены на снижение рисков, выявленных в результате самооценки.

Ключевые слова: *объединенные общины РА, эффективность управления, самооценивания, планирование проектов, развитие общин, менеджмент, SWOT-анализ.*

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԵՏՎԵՐԱԴԱՐՁԻ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՐ *

ՀՏԴ 332.8 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-205*

ԿԱՐԱՊԵՏ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի ֆինանսական շուկաների և ինստիտուտների ամբիոնի հայցորդ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն,
karapetmovsisyan@gmail.com
ORCID: 0009-0009-5295-2939

Հոդվածի նպատակն է ներկայացնել եկամտային հարկի հետվերադարձի նորացված մեխանիզմի հեղինակային մոտեցումը, որն ուղղված է ՀՀ մարզերի սոցիալ–տնտեսական զարգացման խթանմանը, բնակարանային մատչելիության բարելավմանը և տարածքային անհավասարությունների նվազեցմանը: Հետազոտության շրջանակներում գնահատվում են առաջարկվող համակարգի տեսական, իրավական և կիրառական հիմքերը, ինչպես նաև վերլուծվում է դրա հնարավոր ազդեցությունը բնակարանային շուկայի կառուցվածքի, ներդրումային ակտիվության, տեղական բիզնես միջավայրի և աշխատաշուկայի ձևավորման վրա:

Հոդվածի նպատակին հասնելու համար սահմանվել են մի շարք հետազոտական խնդիրներ: Դրանց շրջանակներում ուսումնասիրվել է եկամտային հարկի հետվերադարձի գործող և առաջարկվող մեխանիզմների արդյունավետությունը՝ մարզերի բնակարանային շուկայի առանձնահատկությունների համատեքստում: Միաժամանակ գնահատվում է առաջարկվող մոտեցման ազդեցությունը բնակարանային մատչելիության և ներդրումային ակտիվության վրա: Վերլուծվում են նաև տարածքային անհավասարությունները պայմանավորող հիմնական գործոնները և դրանց նվազեցման հնարավորությունները:

Վերլուծության մեթոդաբանությունը ներառում է բնակարանային շուկայի բազմամյա վիճակագրական տվյալների համեմատական ուսումնասիրություն, տարածքային ցուցանիշների հաշվարկ և հեղինակային «բնակֆոնդի ներուժի» մոդելի կիրառում, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու պետական աջակցության և շուկայական գների հարաբերակցությունը մարզային կտրվածքով:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ մարզերում բնակարանների համեմատաբար ավելի մատչելի գնային դինամիկան բարձրացնում է եկամտային հարկի հետվերադարձի առաջարկվող մեխանիզմի արդյունավետությունը՝ ձևավորելով բնակարանային շուկայի հասանելիության ավելի բարենպաստ միջավայր: Այս գործոնը կարող է խթանել ինչպես նորակառույցների, այնպես էլ երկրորդային շուկայի ակտիվությունը, նպաստել տեղական պահանջարկի աճին և աջակցել բնակչության տարածքային վերաբաշխման ավելի հավասարակշիռ գործընթացներին:

* Հոդվածը ներկայացվել է 11.10.2025թ., գրախոսվել՝ 29.11.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Հիմնաբառեր՝ *եկամտային հարկ, հիփոթեքային շուկա, հետվերադարձ, մարզեր, մայրաքաղաք, տնտեսություն, ներդրումներ, նորույթ, նոր մոտեցում, զարգացում:*

Ներածություն

Մարզերում տնտեսական դանդաղ զարգացումը, բնակչության արտագաղթը և եկամուտների անհավասար բաշխվածությունը շարունակում են խորացնել երկրի տարածքային անհավասարությունները: Այս պայմաններում եկամտային հարկի հետվերադարձի նոր մոտեցումը դիտարկվում է որպես գործիք, որը կարող է խթանել բնակարանաշինության ոլորտը, բարձրացնել տեղական ներդրումային ակտիվությունը և ամրապնդել հիփոթեքային շուկայի տարածքային մատչելիությունը: Նման քաղաքական գործիքների արդյունավետ կիրառումը կարող է նպաստել ոչ միայն բնակարանային պահանջարկի ակտիվացմանը, այլև աշխատատեղերի ստեղծմանը, տեղական բիզնես միջավայրի աշխուժացմանը և սոցիալ–տնտեսական ակտիվության բարձրացմանը մարզերում (Долматович, Кешенкова 441): Միաժամանակ, հարկային խթանների տարածքային ազդեցության գնահատումը կարևոր է պետական ռեսուրսների նպատակային բաշխման և տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետության ապահովման տեսանկյունից: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում եկամտային հարկի հետվերադարձի մեխանիզմի տարածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու դրա ազդեցության տարբերությունները մայրաքաղաքի և մարզերի միջև (Ներսիսյան 2): Հաշվի առնելով բնակարանային շուկայի կառուցվածքային տարբերությունները, բնակչության եկամտային մակարդակի անհավասարությունը և ֆինանսական գործիքների հասանելիության սահմանափակումները՝ անհրաժեշտ է համալիր վերլուծություն՝ ուղղված առաջարկվող մոտեցման կիրառելիության և արդյունավետության գնահատմանը:

ՀՀ բնակարանային և հիփոթեքային շուկայի տարածքային միտումները

ՀՀ-ում բնակարանների միջին գինն արտացոլում է ոչ միայն շուկայական պահանջարկը, այլև պետական ծրագրերի, հատկապես եկամտային հարկի վերադարձի մեխանիզմի ազդեցությունը բնակարանաշինության վրա:

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս 2017-2024թթ. ժամանակահատվածում Երևանում (ըստ վարչական շրջանների) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գների փոփոխության միտումը 1 ք/մ-ի համար:

Աղյուսակ 1. Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 ք/մ-ի միջին գինը 2017-2024թթ. (ՀՀ դրամ)*

Վարչական շրջան	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ.	2022թ	2023թ	2024
1. Կենտրոն	445,800	529,200	607,400	644,800	633. 000	737. 800	837. 700	2,371,240
2. Արաբկիր	345,800	370,500	415,100	452,000	455. 200	522. 100	587. 850	1,075,250
3. Քանաքեռ-Զեյթուն	270,600	277,500	306,200	328,500	327. 500	381. 600	405. 300	879,750
4. Նոր-Նորք	237,000	242,800	267,700	293,500	301. 500	325. 200	358. 800	332,750
5. Էրեբունի	240,100	252,800	270,500	288,200	290. 900	335. 000	371. 400	375,050
6. Շենգավիթ	244,600	253400	275,750	300,300	306. 700	337. 500	365. 500	403,200
7. Դավթաշեն	257,900	286,700	318,900	335,200	325. 600	382. 700	428. 300	558,350
8. Աջափնյակ	234,200	251,100	286,100	313,600	314. 800	354. 100	378. 800	
9. Մալաթիա-Սեբաստիա	233,800	240,500	266,300	289,600	292. 500	333. 050	365. 800	508,658

10. Ավան	251,500	257,200	273,900	295,600	295. 700	332. 500	364. 600	391,650
11. Նուբարաշեն	157,100	165,400	177,300	183,100	180. 100	201,200	214. 200	264,906
12. Նորք Մարաշ	523,417	571,263	643,892	692,745	734,618	801,357	852,946	884,125

* ՀՀ Կադաստրի կոմիտե, ՀՀ անշարժ գույքի շուկայի վերլուծություն 2017-2024թթ. :

Աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2017–2024թթ ընթացքում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում բնակարանների մեկ քմ-ի միջին գները շարունակական աճ են գրանցել: Առավել բարձր աճ է արձանագրվել «Կենտրոն» վարչական շրջանում՝ մոտ 88%, ինչը պայմանավորված է ինչպես ներդրումային պահանջարկի կտրուկ աճով, այնպես էլ շինարարական ոլորտի գների բարձրացմամբ: Արաբկիրում, Դավթաշենում, Շենգավիթում և Աջափնյակում աճը կազմել է միջինը 70%, իսկ Նոր Նորքում և Քանաքեռ-Զեյթունում՝ շուրջ 50–60%: Նուբարաշենում գների աճը եղել է համեմատաբար փոքր՝ մոտ 36%, ինչը կապված է տարածքի հեռավորությամբ և շուկայական ակտիվության ցածր մակարդակով: 2024 թվականի տվյալները վկայում են գների կտրուկ բարձրացման մասին՝ հատկապես «Կենտրոն» և «Արաբկիր» վարչական շրջաններում, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես շուկայի գերակտիվությամբ, այնպես էլ տվյալ տարվա նախնական գնահատականների հաշվառմամբ:

Աղյուսակ 2-ում ներկայացված են Երևանի վարչական շրջանների գործարքների դինամիկ տվյալները, որոնք արտացոլում են հիփոթեքային շուկայի տարածքային տարբերությունները և ներդրումային շարժը մայրաքաղաքում:

Աղյուսակ 2. Երևանի վարչական շրջաններ, բնակարանների առքուվաճառքի քանակը, 2017–2024թթ.*

Շրջան	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Կենտրոն	1,842	1,967	2,134	1,583	2,247	2,469	2,713	2,618
Արաբկիր	1,137	1,209	1,324	1,067	1,389	1,521	1,649	1,583
Աջափնյակ	842	896	954	781	1,012	1,128	1,213	1,167
Ավան	736	789	843	692	912	998	1,067	1,029
Դավթաշեն	518	557	603	473	648	712	768	732
Էրեբունի	923	976	1,028	824	1,087	1,174	1,246	1,198
Քանաքեռ-Զեյթուն	669	718	782	639	826	904	973	941
Մալաթիա-Սեբաստիա	1,058	1,129	1,213	964	1,298	1,389	1,462	1,416
Նոր Նորք	912	967	1,018	826	1,097	1,189	1,256	1,218
Նորք-Մարաշ	174	193	209	156	224	251	273	261
Նուբարաշեն	127	139	152	117	168	189	201	193
Շենգավիթ	1,013	1,082	1,147	934	1,234	1,327	1,398	1,351

*ՀՀ Կադաստրի կոմիտե, ՀՀ անշարժ գույքի շուկայի վերլուծություն 2017-2024թթ. :

Երևանում 2017–2024 թվականներին բնակարանների առքուվաճառքն աճել է մոտ **30%**: Առավել մեծ ծավալներ ունեն **Կենտրոն (1,842-ից՝ 2,618)**, **Մալաթիա-Սեբաստիա (1,058-ից՝ 1,416)** և **Շենգավիթ (1,013-ից՝ 1,351)** շրջանները: **Նուբարաշենում** գործարքների քանակը նվազ է՝ **127-ից՝ 193**, ինչը ցույց է տալիս շուկայի սահմանափակ ակտիվություն: 2020թ. նկատվող անկումից հետո շուկան արագ վերականգնվել է, և 2022–2023-ին գրանցվել են առավելագույն ցուցանիշներ:

Այսպիսով՝ Երևանում անշարժ գույքի շուկան պահպանել է կայուն և արագ աճ՝ թե՛ գների, թե՛ առքուվաճառքների թվի տեսանկյունից, ինչը պայմանավորված է բարձր պահանջարկով, ներդրումային հոսքերի կենտրոնացմամբ և բնակչության խտությամբ:

Աղյուսակ 3-ում ներկայացված են մարզերում բնակարանների առքուվաճառքի ցուցանիշները, որոնք ցույց են տալիս շուկայի ակտիվության աստիճանը և բնակարանային քաղաքականության ազդեցությունը մայրաքաղաքից դուրս:

Աղյուսակ 3. ՀՀ մարզերում բնակարանի 1 քմ-ի միջին գները 2017–2024 թթ. (ՀՀ դրամ)*

Մարզ	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ	2022թ	2023թ	2024թ
1. Արագածոտն	145,327	153,843	162,417	171,237	182,519	196,437	213,647	246,793
2. Արարատ	158,917	166,239	174,529	183,917	194,237	208,729	227,149	268,961
3. Արմավիր	151,437	159,629	168,217	177,829	188,913	202,347	220,713	259,493
4. Գեղարքունիք	132,827	140,237	149,527	158,619	169,417	182,537	198,213	237,339
5. Կոտայք	163,529	172,437	181,629	191,247	203,843	219,417	239,743	282,473
6. Լոռի	142,637	150,713	159,249	168,327	179,243	193,129	210,437	248,379
7. Շիրակ	136,917	145,329	154,217	163,749	175,639	189,437	206,327	241,597
8. Սյունիք	174,539	183,647	193,213	203,529	216,247	232,713	253,947	298,643
9. Տավուշ	128,429	136,237	144,813	153,647	164,237	178,319	195,629	229,487
10. Վայոց ձոր	121,739	129,427	138,217	147,329	158,247	171,437	188,217	218,579

*ՀՀ Կադաստրի կոմիտե, ՀՀ անշարժ գույքի շուկայի վերլուծություն 2017-2024թթ. :

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 2017–2024թթ ընթացքում ՀՀ բոլոր մարզերում բնակարանների 1 քմ-ի միջին գները կայունորեն աճել են: Այս աճը հատկապես նկատելի է Կոտայքի և Սյունիքի մարզերում, որտեղ գներն անցնում են 280–290 հազար դրամը, մինչդեռ Վայոց ձորում և Տավուշում դրանք շարունակում են մնալ համեմատաբար ցածր:

Համաձայն հաջորդ աղյուսակի՝ ՀՀ մարզերում առքուվաճառքի գործարքների թիվն ավելանում է, ինչը, առաջարկի և պահանջարկի օրենքին համաձայն, հանգեցնում է գների աճի:

Աղյուսակ 4. ՀՀ մարզերում բնակարանների առքուվաճառքի քանակը, 2017–2024թթ*

Մարզ	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Արագածոտն	412	463	498	421	537	612	659	633
Արարատ	589	624	672	538	718	794	857	829
Արմավիր	478	503	559	447	603	681	732	706
Գեղարքունիք	365	392	431	368	478	529	581	552
Կոտայք	728	781	846	712	903	984	1,052	1,018
Լոռի	532	564	613	497	652	718	773	742
Շիրակ	618	659	702	583	768	851	907	879

Սյունիք	297	321	348	289	367	412	456	433
Տավուշ	254	276	293	237	318	358	389	361
Վայոց ձոր	183	197	213	169	231	259	281	266

*ՀՀ Կադաստրի կոմիտե, ՀՀ անշարժ գույքի շուկայի վերլուծություն 2017-2024թթ.:

Մասնավորապես, 2017–2024 թվականներին մարզերում բնակարանների առքուվաճառքների քանակն աճել է միջինը շուրջ 35–40%: Ամենաշատ գործարքները գրանցվել են Կոտայքում՝ 728-ից՝ 1,018, Շիրակում՝ 618-ից՝ 879 և Արարատում՝ 589-ից՝ 829: Նկատվում է 2020թ. անկում՝ պայմանավորված համավարակով, սակայն, 2021-ից սկսած, գործարքների քանակը կայուն աճել է: Վայոց ձորում և Տավուշում ցուցանիշները համեմատաբար ցածր են՝ համապատասխանաբար 183-ից՝ 266 և 254-ից՝ 361: Այս աճը վկայում է մարզային բնակարանային շուկայի աստիճանական ակտիվացման մասին:

Եկամտային հարկի հետվերադարձի ծրագրի ազդեցության գնահատում և բնակֆոնդի ներուժի մոդել

Բնակչության թվաքանակի փոփոխությունը հիմնարար ցուցանիշ է հիփոթեքային շուկայի գնահատման համար, քանի որ բնակչության աճը կամ նվազումը անմիջապես ազդում է բնակարանային պահանջարկի վրա:

Աղյուսակ 5-ում ներկայացված են ՀՀ բնակչության թվաքանակի փոփոխություններ 2017–2024թթ. ընթացքում՝ ըստ մարզերի, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու բնակչության տարածքային բաշխման միտումները և դրանց կապը բնակարանաշինության զարգացումների հետ:

Աղյուսակ 5. Բնակչության թվաքանակի ցուցանիշները, 2017-2024թթ., (հազ. մարդ)*

Մարզ	**2017**	**2018**	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**
ՀՀ	2986.1	2972.7	2965.3	2959.7	2963.3	2961.4	2977.1	2 991.2
Երևան	1075.8	1077.6	1081.8	1084.0	1091.7	1092.8	1098.9	1 106.3
Արագածոտն	128.5	127.1	125.4	124.7	124.5	124.6	125.7	131.8
Արարատ	258.4	257.8	256.7	256.6	256.6	256.6	259.3	255.5
Արմավիր	265.8	264.6	263.9	263.8	264.0	264.4	266.6	259.7
Գեղարքունիք	230.7	229.7	228.3	227.7	227.3	227.8	228.7	213.2
Լոռի	221.1	217.4	215.5	213.3	212.6	211.7	211.5	226.3
Կոտայք	252.8	251.6	251.6	250.9	251.2	251.1	253.8	278.1
Շիրակ	239.3	235.4	233.3	231.4	231.0	230.4	230.5	238.9
Սյունիք	138.9	138.4	137.6	137.3	135.8	134.7	134.6	116.4
Վայոց ձոր	50.3	49.6	49.0	48.5	48.1	47.6	47.7	48.5
Տավուշ	124.5	123.5	122.2	121.5	120.5	119.7	119.8	116.5

* ՀՀ Վիճակագրական կոմիտե, մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, քաղաքային/գյուղական բաշխումով 40:
* Հայաստանը թվերով 2024:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 2011–2024 թթ. ՀՀ բնակչությունն ընդհանուր առմամբ պահպանել է նվազման միտում՝ հատկապես մարզերում: Մինչդեռ Երևանի բնակչությունը նույն ժամանակահատվածում աճել է շուրջ **40 հազարով**՝ մարզերից դեպի մայրաքաղաք միգրացիայի և կենտրոնացված տնտեսական հնարավորությունների հետևանքով: Մարզերում նկատվում է բնակչության կայուն անկում՝ առավել արտահայտված Սյունիքում, Տավուշում և Վայոց ձորում, որտեղ թվաքանակը նվազել է շուրջ **15–20%-ով**:

Բնակչության կառուցվածքի և տարածքային բաշխման ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել հիփոթեքային շուկայի զարգացման իրական ներուժը և գնահատել բնակարանային քաղաքականության ուղղվածությունը:

Աղյուսակ 6. ՀՀ-ում քաղաքային ու գյուղական բնակչության թվաքանակը, 2017-2025թթ. *

Տարեթիվ	Քաղաքային բնակչություն (%)	Գյուղական բնակչություն (%)
2017	63.7	36.3
2018	63.8	36.2
2019	63.9	36.1
2020	63.9	36.1
2021	64.0	36.0
2022	63.9	36.1
2022[1]	63.8	36.2
2023*	63.8	36.2
2024*	64.0	36.0
2025*	64.1	35.9

*ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հայաստանը թվերով 2024

Տվյալները ցույց են տալիս, որ 2017–2025թթ ՀՀ-ում քաղաքային բնակչության բաժինը աճել է մոտ 0.4 տոկոսային կետով, իսկ գյուղականը նույնքան նվազել է: Սա վկայում է քաղաքացիացման կայուն, բայց դանդաղ ընթացքի մասին: Տեղաշարժը հիմնականում պայմանավորված է աշխատատեղերի և ծառայությունների կենտրոնացմամբ քաղաքներում, հատկապես՝ Երևանում, ինչն ընդգծում է մարզերում տնտեսական և սոցիալական կայունության ապահովման անհրաժեշտությունը՝ բնակչության արտահոսքը կանխելու համար:

Աղյուսակ 7. ՀՀ մարզերի և Երևանի տարածքի ու բնակչության համեմատական բնութագիրը, 2025թ. *

Մարզերը և ք. Երևանը	**Տարածքը, կմ²**	**Մշտական բնակչության թվաքանակը**
Հայաստանի Հանրապետություն	29 743	2 991.2
ք. Երևան	223	1 106.3
Արագածոտն	2 773	131.8
Արարատ	2 090	255.5
Արմավիր	1 231	259.7
Գեղարքունիք	5 352	213.2

Լոռի	3 799	226.3
Կոտայք	2 076	278.1
Շիրակ	2 680	238.9
Սյունիք	4 506	116.4
Վայոց ձոր	2 310	48.5
Տավուշ	2 704	116.5

*ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հայաստանը թվերով 2024, 16

Բնակչության թվաքանակի և կառուցվածքի տվյալները ցույց են տալիս, որ բնակչության հիմնական մասը կենտրոնացած է Երևանում, մինչդեռ մարզերում նկատվում է նվազման միտում: Սա վկայում է, որ եկամտային հարկի հետվերադարձի ծրագիրը պետք է առավելապես ուղղվի մարզերին՝ խթանելու տեղային զբաղվածությունը, բնակարանաշինությունը և բնակչության պահպանությունը:

Բնակարանային ֆոնդի տարածքային բաշխման վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատելու ՀՀ հիփոթեքային շուկայի իրական ներուժը:

Աղյուսակ 8. Բնակարանային ֆոնդ ՀՀ մարզերում և Երևանում (մ²)՝ քաղաքներում և գյուղերում, 2020–2024թթ. *

Տարածք	2020 Քաղաք	2020 Գյուղ	2021 Քաղաք	2021 Գյուղ	2022 Քաղաք	2022 Գյուղ	2023 Քաղաք	023 Գյուղ	2024 Քաղաք	2024 Գյուղերում
Երևան	26,708,651	-	27,414,374	-	29,966,922	-	30,410,929	-	28,329,088	-
Արագածոտն	1,493,871	4,546,054	1,507,466	4,619,103	1,708,477	4,589,730	1,789,978	4,746,577	1,555,420	4,636,446
Արարատ	1,839,048	7,230,916	1,856,300	7,338,708	1,877,055	7,369,412	1,924,105	7,495,234	1,915,257	7,522,189
Արմավիր	2,834,177	6,100,899	2,876,740	6,216,407	2,927,033	6,270,580	3,178,596	6,423,091	3,017,941	6,451,345
Գեղարքունիք	2,828,704	4,495,098	2,854,657	4,543,785	2,991,516	4,575,416	3,305,807	4,914,871	2,873,235	4,671,567
Լոռի	5,342,125	3,845,759	5,359,341	3,858,231	5,870,258	3,868,151	5,870,627	3,962,535	5,412,295	3,938,461
Կոտայք	4,036,626	7,073,464	4,112,952	7,316,750	4,187,444	7,559,285	4,228,694	8,033,974	4,229,319	7,138,291
Շիրակ	4,512,143	3,123,815	4,534,647	3,135,303	4,501,470	3,179,021	4,501,604	3,183,954	4,359,326	3,220,129
Սյունիք	2,463,770	1,955,148	2,469,594	1,962,320	2,591,617	2,059,290	2,610,583	2,528,800	2,454,003	1,988,506
Վայոց ձոր	617,775	1,367,794	622,841	1,374,156	682,102	1,836,927	682,970	1,842,386	628,177	1,400,605
Տավուշ	2,265,513	3,960,674	2,293,378	3,983,403	2,495,810	4,549,411	2,513,007	4,532,257	2,372,375	4,054,723

*ՀՀ Կադաստրի կոմիտե, ՀՀ անշարժ գույքի շուկայի վերլուծություն 2017-2024թթ. :

Տվյալները ցույց են տալիս, որ բնակարանային ֆոնդն աճել է թե՛ Երևանում, թե՛ մարզերում՝ հատկապես քաղաքային բնակավայրերում: Մարզերում աճը հիմնականում ապահովվել է մարզկենտրոնների և քաղաքների հաշվին, մինչդեռ գյուղական համայնքներում այն ավելի դանդաղ է ընթացել: Այս միտումը վկայում է քաղաքային գոտիներում բնակարանաշինության կենտրոնացման մասին և ընդգծում է եկամտային հարկի հետվերադարձի ծրագրի կարևորությունը՝ մարզերի գյուղական հատվածներում շինարարական ակտիվությունը խթանելու համար: 2020–2024թթ. ընթացքում մարզերում բնակարանային ֆոնդի ընդհանուր աճը կազմել է միջինը շուրջ 8–10%, իսկ քաղաքային հատվածներում՝ ավելի քան 12%: Գյուղական

բնակավայրերում աճի միջին տեմպը եղել է մոտ 5%, ինչը վկայում է շինարարական ակտիվության դանդաղ առաջընթացի մասին՝ հատկապես փոքր բնակավայրերում:

Ամփոփելով վերը ներկայացված աղյուսակների վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ 2017–2024թթ ՀՀ-ում բնակարանային շուկան պահպանել է աճի կայուն միտում՝ հատկապես մայրաքաղաքում: Երևանում բնակարանների գների, շինարարության ծավալների և առքուվաճառքի թվերի աճը վկայում է շուկայի կենտրոնացման մասին, մինչդեռ մարզերում զարգացումները եղել են համեմատաբար դանդաղ: Միաժամանակ բնակչության թվաքանակի և կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս բնակչության շարունակական ներհոսք դեպի Երևան՝ պայմանավորված տնտեսական գործոններով:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ նպատակահարմար է վերանայել եկամտային հարկի հետվերադարձի գործող քաղաքականությունը՝ այն առավել նպատակաուղղված դարձնելով ՀՀ մարզերում բնակվող բնակչության պահանջներին և մարզային զարգացման իրական կարիքներին: Մոտեցման տրամաբանությունն այն է, որ մարզերում անշարժ գույք ձեռք բերող կամ այնտեղ բնակվող քաղաքացիների համար հարկային աջակցությունը դառնա ավելի արդյունավետ խթան՝ նպաստելով բնակարանաշինության աշխուժացմանը, բնակֆոնդի զարգացմանը և բնակչության տարածքային հավասարաչափ բաշխմանը: Այդ նպատակով առաջարկում ենք վերանայել շահագործվող շեմերը և սահմանել եկամտային հարկի հետվերադարձի առավելագույն չափը՝ 35 մլն դրամ՝ դիտարկելով այնպիսի գների միջին մակարդակը, որտեղ մարզերում մեկ քմ-ի արժեքը մոտ 300 հազար դրամ է: Միաժամանակ եռամսյակի ընթացքում վերադարձվող եկամտային հարկի առավելագույն չափը 1.5 մլն դրամից նվազեցվի մինչև 1 մլն դրամ: Այս փոփոխությունը հնարավորություն կտա տարեկան սահմանելու մինչև 4 մլն դրամ վերադարձի առավելագույն չափ, ինչն ապահովում է բյուջետային ծախսերի օպտիմալ բաշխում և ծրագրի երկարաժամկետ կայունություն: Եկամտային հարկի գործող օրենքով հետ վերադարձվող տոկոսագումարը եռամսյակի համար կազմում է 1.5 մլն դրամ, այսինքն՝ տարեկան՝ 4 × 1.5 մլն = 6 մլն դրամ: Եթե վարկը տրամադրվի 10 տարով, ապա գործող օրենքով ետվերադարձվող գումարը կկազմի 10 × 6 մլն = 60 մլն դրամ: Մեր առաջարկվող տարբերակով եռամսյակային վերադարձվող գումարը սահմանվում է 1 մլն դրամ, այսինքն՝ տարեկան՝ 4 × 1 մլն = 4 մլն դրամ, իսկ տասը տարվա կտրվածքով՝ 10 × 4 մլն = 40 մլն դրամ: Այսպիսով՝ նոր տարբերակը հնարավորություն է տալիս պետական բյուջեին խնայելու 60 մլն – 40 մլն = 20 մլն դրամ, որի փոխարեն նախատեսվում է մարել վարկի մայր գումարի 5 տոկոսը: Մայր գումարի առավելագույն չափը՝ 35 մլն դրամի դեպքում, կազմում է (35 մլն × 5%) = 1,750,000 դրամ: Արդյունքում, պետական բյուջեի մաքուր խնայողությունը կազմում է 20 մլն – 1.75 մլն = 18.25 մլն դրամ՝ յուրաքանչյուր շահառուի հաշվով, միաժամանակ պահպանելով ծրագրի սոցիալական և տարածքային ուղղվածությունը: Մեր առաջարկի տրամաբանության մեջ ներառվում է նաև պետական համաֆինանսավորման բաղադրիչ՝ վարկի մայր գումարի 5 տոկոսի չափով: Օրինակ՝ 35 մլն դրամ արժողությամբ բնակարանի դեպքում պետությունը կհամաֆինանսավորի 1 մլն 750 հազար դրամ՝ մասնակիորեն փոխհատուցելով հարկային արտոնության կրճատումը: Արդյունքում՝ տասը տարվա կտրվածքով ծրագիրը հնարավորություն է տալիս պետական բյուջեին խնայելու շուրջ 18.25 մլն դրամ յուրաքանչյուր շահառուի հաշվով՝ միաժամանակ պահպանելով դրա տարածքային ուղղվածությունը և աջակցելով բնակարան ձեռքբերող միջին ու ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին: Ծրագրի շահառու կարող են լինել այն անձինք, որոնք չունեն սեփական բնակարան և նախատեսում են գույք ձեռք բերել կամ այն կառուցել մարզերում՝ ներառյալ ինչպես նորակառույց, այնպես էլ երկրորդային շուկայի բնակարանները: Մեր առաջարկի տրամաբանությամբ նախատեսվում է, որ շահառուները հնարավորություն կունենան բնակարան ձեռք բերելու ինչպես

նորակառույց, այնպես էլ երկրորդային շուկայից՝ նպաստելով բնակֆոնդի շրջանառության ակտիվացմանը: Բացի այդ, հիփոթեքային վարկավորման միջոցով շահառուները կկարողանան իրականացնել բնակարանաշինություն սեփական հողամասերի վրա, ինչը կնպաստի բնակարանային ֆոնդի բնական աճին և շինարարական գործունեության ակտիվացմանը մարզերում: Ծրագրից կարող են օգտվել բացառապես այն անձինք, որոնք սեփական բնակարան չեն ունեցել, ինչն ապահովում է դրա սոցիալական նպատակային ուղղվածությունը:

Այժմ ներկայացնենք բնակֆոնդի ներուժի այն մոդելը, որը մշակվել է մեր կողմից՝ հիմնվելով եկամտային հարկի հետվերադարձի գործող կարգավորումների և առաջարկվող փոփոխությունների համադրության վրա: Մոդելի նպատակն է գնահատել, թե ինչ չափով է բնակարանային շուկան տարբեր մարզերում հասանելի դառնում հարկային աջակցության պայմաններում և, արդյո՞ք, պետական միջամտությունը նույն արդյունավետությունն ունի ողջ տարածքում:

Մոդելը կառուցված է այն տրամաբանության վրա, որ բնակարանային շուկաները մարզերում էականորեն տարբերվում են իրենց գների մակարդակով, պահանջարկի ինտենսիվությամբ, տնտեսական ակտիվությամբ և բնակչության միգրացիոն շարժերով: Այս համադրաբար տարբեր պայմանները մոդելում արտացոլելու համար ներմուծվում է **մարզային գործոնը**, որն ընդգրկում է տվյալ մարզի շուկայի առանձնահատկությունները՝ պահանջարկի ուժգնությունը, գների միջին մակարդակը և շինարարական ակտիվությունը:

Այս գործոնը մոդելի մեջ ներկայացվում է **մարզային գործակցով (Մգ)**, որը թույլ է տալիս կախյալ փոփոխականը (բնակարանի գնային միջին մակարդակը) համեմատելի դարձնել տարբեր մարզերի միջև: Մարզային գործակիցը կարգավորման գործիք է, որն ընդունված է տարածքային շուկաների համեմատության ոլորտում: Այն **պաշտոնական սահմանված ցուցանիշ չէ**, այլ կիրառվում է որպես մեթոդաբանական ճշգրտման տարր, որպեսզի մարզերի շուկաները հնարավոր լինի գնահատել նույն տրամաբանությամբ:

Մոդելում կիրառվող արժեքները (0.9, 1.0, 1.1 և Երևանում՝ 1.2) ներկայացնում են շուկաների հարաբերական ակտիվության խմբավորում՝

- **0.9** – ցածր պահանջարկ ունեցող և համեմատաբար մատչելի մարզեր,
- **1.0** – բազային (միջին պահանջարկով) մարզեր,
- **1.1** – բարձր պահանջարկ ունեցող մարզեր,
- **1.2** – մայրաքաղաք, որտեղ գները և ներդրումային ակտիվությունը զգալիորեն բարձր են:

Այս մոտեցումը համահունչ է բնակարանային մատչելիության միջազգային գնահատման մեթոդաբանություններին, որտեղ տարածքային շուկաների անհամաչափությունները հավասարեցվում են **տարածքային ճշգրտման գործակիցներով**: Հատկապես լայնորեն կիրառվում են նման մեթոդական լուծումներ՝

- ԱՄՆ «Housing Affordability Index»–ում (National Association of Realtors – NAR),
- OECD–ի տարածքային բարեկեցության և շուկայական համեմատության գործիքակազմում,
- Համաշխարհային բանկի բնակարանային քաղաքականությունների վերլուծությունում (World Bank Housing Policy Frameworks):

Այսպիսով՝ մեր կողմից մշակված մոդելում օգտագործվող մարզային գործակիցը ապահովում է տարածաշրջանների համադրելիությունը և թույլ է տալիս չափել պետական աջակցության հարաբերական ազդեցությունը՝ հաշվի առնելով տեղային շուկայական առանձնահատկությունները:

Բնակֆոնդի ներուժի մոդելի բանաձևը հետևյալն է[1].

$$Բg = \frac{Գքմ}{Տգ \times Մգ}$$

Որտեղ.

- **Բg** — ն բնակֆոնդի հարաբերական ցուցանիշն է մարզում.
- **Գքմ** —ն բնակարանի մեկ քառակուսի մետրի միջին գինն է տվյալ մարզում (դրամ).
- **Տգ** —ն տարեկան առավելագույն վերադարձվող եկամտային հարկն է (4,000,000 դրամ).
- **Մգ** —ն մարզային գործակիցն է, որը ներկայացնում է մարզի շուկայի հարաբերական ակտիվությունը:

Այս ցուցանիշը վկայում է, թե ինչ հարաբերակցություն է ձևավորվում բնակարանի միջին գնի և պետության կողմից տրամադրվող հարկային աջակցության միջև: Ցուցիչը որքան փոքր է, այնքան բարձր է պետական աջակցության ազդեցությունը տվյալ մարզում, այսինքն՝ շուկան ավելի մատչելի է և պետական միջամտությունը՝ ավելի արդյունավետ:

Աղյուսակը ցույց է տալիս բնակարանների միջին գների և պետական աջակցության (եկամտային հարկի հետվերադարձի) հարաբերակցությունը ՀՀ մարզերում՝ հնարավորություն տալով գնահատելու ծրագրի հարաբերական արդյունավետությունը տարածքային կտրվածքով:

Աղյուսակ 9. Բնակարանային շուկայի հարաբերական ցուցանիշ (Բg), 2024թ. (ճշգրիտ հաշվարկված)*

Մարզ / Շրջան	Գքմ (դրամ/մ²)	Տգ	Մգ	Բg = Գքմ / (Տգ×Մգ)
Արագածոտն	246,793	4,000,000	0.9	**0.0686**
Արարատ	268,961	4,000,000	1.0	**0.0672**
Արմավիր	259,493	4,000,000	1.0	**0.0649**
Գեղարքունիք	237,339	4,000,000	0.9	**0.0659**
Կոտայք	282,473	4,000,000	1.1	**0.0642**
Լոռի	248,379	4,000,000	1.0	**0.0621**
Շիրակ	241,597	4,000,000	0.9	**0.0671**
Սյունիք	298,643	4,000,000	1.1	**0.0679**
Տավուշ	229,487	4,000,000	0.9	**0.0637**
Վայոց ձոր	218,579	4,000,000	0.9	**0.0607**
Երևան	2,371,240	4,000,000	1.2	**0.4940**

*Housing Market Trends and Affordability in Central Europe: Insights from the Czech Republic, Slovakia, Austria, and Poland (Matějková & Tichá 2025).
*Towards a More Nuanced Approach to Measuring Housing Affordability (World Bank 2020).
* Regional Disparities in Availability and Affordability of Housing (Kadlecová & Hadlačová 2011).

[1] Բնակարանային մատչելիության հարաբերական ցուցանիշի հաշվարկման բանաձևը մշակվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով բնակարանային մատչելիության գնահատման միջազգային մեթոդաբանական մոտեցումների վրա:

Բնակարանային շուկայի հարաբերական ցուցանիշի (Բց) հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ մարզերում բնակարանների մեկ քառակուսի մետրի միջին գների և եկամտային հարկի հետվերադարձի շեմով սահմանված պետական աջակցության հարաբերակցությունը ձևավորվում է մոտավորապես **0.060–0.068** միջակայքում: Այս չափազանց նեղ տատանումը վկայում է, որ ՀՀ մարզերում բնակարանային շուկաները հիմնականում համադրելի են գնային կառուցվածքով, և պետական աջակցությունը համեմատաբար միատեսակ ազդեցություն է ունենում բնակարանային մատչելիության վրա:

Առանձին վերցված՝ մարզերում նկատվող փոքր տարբերությունները պայմանավորված են բնակարանային պահանջարկի, կառուցապատման ակտիվության, տնտեսական կենտրոնների առկայության և շուկայի ներքին չափի տարբերություններով: Օրինակ՝ Կոտայքում և Սյունիքում, որտեղ կիրառվում է 1. 1 գործակիցը, Բց-ի արժեքները մնում են նույն միջակայքում, ինչը ցույց է տալիս, որ նույնիսկ բարձր պահանջարկ ունեցող մարզերում պետական աջակցությունը շարունակում է մնալ համեմատաբար արդյունավետ: Մյուս մարզերում՝ Վայոց ձոր, Լոռի կամ Տավուշ, արժեքների փոքր նվազումը պայմանավորված է գների ավելի ցածր մակարդակով, ինչն ապահովում է պետական աջակցության ավելի մեծ «ծածկույթ» բնակարան ձեռք բերող բնակչության համար:

Երևանի համար ստացված **0.494** ցուցանիշը կտրուկ բարձր է մյուս մարզերի համեմատ. այս տարբերությունը ավելի քան յոթ անգամ գերազանցում է մարզային միջին արժեքը: Սա վկայում է, որ մայրաքաղաքում բնակարանների շուկայական գներն այնքան բարձր են, որ նույն պետական աջակցությունը գրեթե չի մեղմում գնային բեռը: Արդյունքում հարկային վերադարձի ազդեցությունն այստեղ երկրորդային է՝ սահմանափակելով դրա դերը բնակարանային մատչելիության բարձրացման գործում:

Ընդհանուր առմամբ, աղյուսակի տվյալները հաստատում են, որ նախատեսվող մեխանիզմը մարզերում կարող է ունենալ **բարձր սոցիալ–տնտեսական արդյունավետություն**, քանի որ այնտեղ պետական աջակցությունը զգալիորեն մեծացնում է բնակարան ձեռք բերելու հնարավորությունը, խթանում շինարարական ակտիվությունը և նպաստում ներդրումային միջավայրի աշխուժացմանը: Մայրաքաղաքում, հակառակը, նույն մեխանիզմը թույլ ազդեցություն է թողնում, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է քաղաքականության տարածքային նպատակաուղղվածության կարևորությունը:

Եզրահանգումներ

Այսպիսով եկամտային հարկի հետվերադարձի ծրագիրը կարևոր գործիք է բնակարանային շուկայի խթանման և սոցիալ–տնտեսական հավասարակշռության ապահովման գործում:

- Ծրագրի նոր տարբերակով նախատեսվող փոփոխությունները, մասնավորապես՝ սահմանաչափերի նվազեցումը և ծրագրի տարածումը դեպի մարզեր, հնարավորություն են տալիս բարձրացնելու դրա տարածքային արդյունավետությունը՝ նվազեցնելով բյուջետային ծանրաբեռնվածությունը:
- Ներկայացված վերլուծությունը ցույց է տալիս, որ նույն հարկային արտոնությամբ մարզերում հնարավոր է ձեռք բերել ավելի մեծ բնակարանային մակերես, ինչը նպաստում է բնակֆոնդի ընդլայնմանը, շինարարական ոլորտի աշխուժացմանը և տեղական տնտեսական շրջանառության աճին:
- Բնակֆոնդի ներուժի մոդելը վկայում է, որ հարկային քաղաքականության ճիշտ ուղղորդումը կարող է դառնալ տարածքային զարգացման գործիք՝ ապահովելով ոչ միայն տնտեսական, այլև տնտեսական դրական արդյունքներ: Այդ մոդելի կիրառումը հնարավորություն կտա խթանելու ներդրումները մարզերում,

հավասարակշռելու բնակչության բաշխվածությունը և նվազեցնելու մայրաքաղաքային գերծանրաբեռնվածությունը:

- Այսպիսով՝ եկամտային հարկի հետվերադարձի ծրագրի բարեփոխված տարբերակը կարող է դառնալ մարզերի տնտեսական և բնակարանային զարգացման կայուն շարժիչ ուժ:
- Ելնելով կատարած վերլուծությունից՝ նպատակահարմար է ապահովել եկամտային հարկի հետվերադարձի ծրագրի շարունակական և ինստիտուցիոնալ զարգացումը մարզերում՝ ձևավորելով դրա երկարաժամկետ կիրառման մեխանիզմներ:
- Կարևոր է նաև ծրագրի շրջանակներում առանձնացնել հատուկ ուղղություններ, որոնք կխթանեն երիտասարդ ընտանիքների և միջին եկամուտ ունեցող խմբերի մասնակցությունը բնակարանային շուկայում:
- Այս մոտեցումը կնպաստի բնակֆոնդի ընդլայնման, բնակչության տարածքային բաշխման հավասարակշռման և մարզերի սոցիալ–տնտեսական ներուժի ամրապնդմանը՝ ապահովելով ծրագրի արդյունավետ և կայուն ազդեցություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ներսիսյան Արմեն, «Հիփոթեքային հարաբերությունների զարգացման տեսական հիմքերը և պրակտիկ կիրառումը զարգացած երկրներում», Երևան, 2012, 8 էջ:
2. ՀՀ Կադաստրի կոմիտե, ՀՀ անշարժ գույքի շուկայի վերլուծություն, 2017-2024թթ., https://cadastre.am/market_analysis: Վերջին այց՝ 12. 07. 2025:
3. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության ընդհանուր բնութագիրը, https://armstat.am/file/article/armenia_2024_1.pdf: Վերջին այց՝ 28. 07. 2025:
4. ՀՀ Կառավարություն, «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության՝ 2022-2024 թվականների ծրագիր», 09.06.2022թ. թիվ 842-Լ որոշում, https://www.arlis.am/hy/acts/169243: Վերջին այց՝ 05. 08.2025:
5. ՀՀ Պետական եկամուտների կոմիտե, Հիփոթեքային վարկի շրջանակում եկամտային հարկի վերադարձի ծրագրի իրականացման կարգը, https://www.src.am/am/getNews/375: Վերջին այց՝ 10. 08. 2025:
6. ՀՀ Կառավարություն, «ՀՀ Հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» 10.05.2019թ. թիվ 524-Լ որոշում, https://www.arlis.am/hy/acts/130493: Վերջին այց՝ 16. 08. 2025:
7. Սեդա Հերգնյան, «Հիփոթեքային շուկայում եկամտային հարկի վերադարձի համակարգը 2027 թվականից հնարավոր է այլևս չկիրառվի Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերում», 2024թ., https://www.hetq.am/hy/article/163526: Վերջին այց՝ 29.08.2025:
8. How2b.am, «Հիփոթեքային վարկի շրջանակում եկամտային հարկի վերադարձի սահմանափակումները ուժի մեջ են մտնում»., https://how2b.am/ekamtayin-harki-veradardzi-sahmanapakumner-2025-hunvari-1: Վերջին այց՝ 02.09.2025:
9. Долматович Игорь Александрович, Кешенкова Наталья Викторовна, «Мировой опыт развития ипотечного жилищного кредитования (на примере США)», «Финансы и кредит», 2018, 13 с.
10. Milada Kadlecova, Michal Hadlac, Housing Affordability and the Price-to-Income Ratio: International Evidence, 1992, https://www.jstor.org/stable/1060390: Վերջին այց՝ 05.09.2025:

11. Matejkova Jitka, Ticha Alena, Housing Market Trends and Affordability in Central Europe: Insights from the Czech Republic, Slovakia, Austria and Poland, 2025, https://www.mdpi.com/2075-5309/15/10/1729: Վերջին այց՝ 08.09.2025:

12. OECD, Housing Affordability Indicators, https://www.oecd.org/housing/housing-affordability/: Վերջին այց՝ 12.09.2025:

13. Milada Kadlecova, Michal Hadlac, Regional Disparities in Availability and Affordability of Housing, 2011, https://www.corp.at/archive/CORP2011_83.pdf: Վերջին այց՝ 14.09.2025:

14. World Bank, Towards a More Nuanced Approach to Measuring Housing Affordability, 2020, https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/17663ceb-1691-4a7f-9645-e7c0f3cfa79e/content: Վերջին այց՝ 25.10.2025:

WORKS CITED

1. Nersisyan Armen, Hipotekayin haraberutyunneri zargatsman tesakan himkery yev praktik kirarumy zargatsvats yerkrnerum, Yerevan, 2012, 8 ej. [Theoretical Foundations and Practical Application of the Development of Mortgage Relations in Developed Countries, Yerevan, 2012, p. 8] (in Armenian)

2. RA Kadastri Komite, RA ansharzh guyqi shukayi verlucutyun, 2017–2024 tt., https://cadastre.am/market_analysis, Verjin ayc՝ 12.07.2025. [RA Cadastre Committee, Analysis of the Real Estate Market of the Republic of Armenia, 2017–2024, Accessed on: 12.07.2025] (in Armenian)

3. RA Vijakagrakan Komite, Hayastani Hanrapetutyan yndhanur bnuthagiry, https://armstat.am/file/article/armenia_2024_1.pdf, Verjin ayc՝ 28.07.2025. [Statistical Committee of the Republic of Armenia, General Description of the Republic of Armenia, Accessed on: 28.07.2025] (in Armenian)

4. RA Karavarutyun, “Hayastani Hanrapetutyan sahmanamerd bnakavayrerum yntaniqneri bnakaranayin matcheliutyan apahovman petakan ajaktsutyan 2022–2024 t‘t‘ tsragir”, 09.06.2022, № 842-L, https://www.arlis.am/hy/acts/169243, Verjin ayc՝ 05.08.2025.
[Government of the Republic of Armenia, “State Support Program for Ensuring Housing Affordability for Families in Border Communities of the Republic of Armenia for 2022–2024”, Decision No. 842-L, Accessed on: 05.08.2025] (in Armenian)

5. RA Petakan Yekamunneri Komite, Hipotekayin varki shrjanakum yekamtayin harki veradardzi tsragri irakanatsman kargy, https://www.src.am/am/getNews/375, Verjin ayc՝ 10.08.2025.
[State Revenue Committee of the Republic of Armenia, Procedure for Implementing the Income Tax Refund Program within Mortgage Lending, Accessed on: 10.08.2025] (in Armenian)

6. RA Karavarutyun, “RA Harkayin orensgrkum lratsum katarelu masin”, 10.05.2019, № 524-L, https://www.arlis.am/hy/acts/130493, Verjin ayc՝ 16.08.2025. [Government of the Republic of Armenia, “On Amendments to the Tax Code of the Republic of Armenia”, Decision No. 524-L, Accessed on: 16.08.2025] (in Armenian)

7. Hergnyan Seda, “Hipotekayin shukayum yekamtayin harki veradardzi hamakargy 2027 t‘vakaniç hnaravor e ayl’eves chkirarvi Aragatsotni, Ararati, Armaviri yev Kotayqi marzerum”, 2024, https://www.hetq.am/hy/article/163526, Verjin ayc՝ 29.08.2025. [“The Income Tax Refund System in the Mortgage Market May No Longer Be Applied in Aragatsotn, Ararat, Armavir and Kotayk Regions from 2027”, Accessed on: 29.08.2025] (in Armenian)

8. How2b.am, “Hipotekayin varki shrjanakum yekamtayin harki veradardzi sahmanapakumner@ uji mej en mtnum”, https://how2b.am/ekamtayin-harki-veradardzi-sahmanapakumner-2025-hunvari-1, Verjin ayc՝ 02.09.2025. [“Restrictions on Income Tax Refunds within Mortgage Lending Come into Force”, Accessed on: 02.09.2025] (in Armenian)

9. Dolmatovich Igor Alexandrovich, Keshenkova Natalya Viktorovna, Mirovoy opyt razvitiya ipotechnogo zhilishchnogo kreditovaniya (na primere SShA), Finansy i kredit, 2018, 13 s. [Global Experience in the Development of Mortgage Housing Lending (Case of the USA), Finance and Credit, 2018, p. 13] (in Russian)

A NEW APPROACH TO THE PERSONAL INCOME TAX REFUND MECHANISM FOR THE REGIONS OF THE REPUBLIC OF ARMENIA

KARAPET MOVSISYAN
Armenian State University of Economics, Faculty of Finance,
Department of Financial Markets and Institutions, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to present an authorial approach to an updated personal income tax refund mechanism aimed at stimulating the socio-economic development of the regions of the Republic of Armenia, improving housing affordability, and reducing territorial disparities. Within the framework of the study, the theoretical, legal, and practical foundations of the proposed system are assessed, as well as its potential impact on the structure of the housing market, investment activity, the local business environment, and labor market formation.

To achieve the stated objective, a number of research tasks have been defined. These include an assessment of the effectiveness of the current and proposed personal income tax refund mechanisms in the context of regional housing market characteristics. At the same time, the impact of the proposed approach on housing affordability and investment activity is evaluated. The study also analyzes the key factors contributing to territorial inequalities and the possibilities for their reduction.

The research methodology includes a comparative analysis of multi-year statistical data on the housing market, the calculation of territorial indicators, and the application of the author’s “housing stock potential” model, which allows for an assessment of the relationship between state support and market prices across regions.

The obtained results indicate that relatively more affordable housing price dynamics in the regions increase the effectiveness of the proposed personal income tax refund mechanism by creating a more favorable environment for housing market accessibility. This factor may stimulate activity in both the primary and secondary housing markets, contribute to the growth of local demand, and support more balanced processes of territorial population redistribution.

Keywords: *personal income tax, mortgage market, refund, regions, capital city, economy, investments, innovation, new approach, development.*

НОВЫЙ ПОДХОД К МЕХАНИЗМУ ВОЗВРАТА ПОДОХОДНОГО НАЛОГА ДЛЯ РЕГИОНОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

КАРАПЕТ МОВСИСЯН
соискатель кафедры финансовых рынков и институтов финансового факультета Армянского государственного экономического университета, г. Ереван, Республика Армения

Целью статьи является представление авторского подхода к обновлённому механизму возврата подоходного налога, направленного на стимулирование социально-экономического развития регионов Республики Армения, повышение доступности жилья и снижение территориальных диспропорций. В рамках исследования оцениваются теоретические, правовые и прикладные основы предлагаемой системы, а также анализируется её потенциальное влияние на структуру рынка жилья, инвестиционную активность, формирование локальной бизнес-среды и рынка труда.

Для достижения поставленной цели в статье сформулирован ряд исследовательских задач. В их рамках изучена эффективность действующего и предлагаемого механизмов возврата подоходного налога с учётом особенностей региональных рынков жилья. Одновременно оценивается влияние предлагаемого подхода на уровень доступности жилья и инвестиционную активность. Анализируются также ключевые факторы, обусловливающие территориальные неравенства, и возможности их снижения.

Методология исследования включает сравнительный анализ многолетних статистических данных рынка жилья, расчёт территориальных показателей, а также применение авторской модели «потенциала жилищного фонда», что позволяет оценить соотношение государственной поддержки и рыночных цен в региональном разрезе.

Полученные результаты свидетельствуют о том, что относительно более доступная ценовая динамика на жильё в регионах повышает эффективность предлагаемого механизма возврата подоходного налога, формируя более благоприятную среду для доступности рынка жилья. Данный фактор способен стимулировать активность как на первичном, так и на вторичном рынках недвижимости, способствовать росту локального спроса и поддерживать более сбалансированные процессы территориального перераспределения населения.

Ключевые слова: *подоходный налог, ипотечный рынок, возврат, регионы, столица, экономика, инвестиции, нововведение, новый подход, развитие.*

ՀԱՐԿԵՐԻ ՍԱՀՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ *

ՀՏԴ 336.2 *DOI: 10.52063/25792652-2025.3.26-220*

ԱՆՈՒՇ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ Ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anpetrosyan00@mail.ru
ORCID: 0009-0002-6112-1992

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում հարկային ընդհանուր եկամուտներից և առանձին հարկատեսակներից ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ), եկամտային հարկի և շահութահարկի գծով եկամուտների արձագանքը տնտեսական իրավիճակի փոփոխության նկատմամբ:

Աշխատանքի խնդիրն է գնահատել ընդհանուր հարկային եկամուտների, ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի և շահութահարկի սահունությունը երկարաժամկետ և կարճաժամկետ հեռանկարում:

Հարկերի սահունությունը գնահատելու համար աշխատանքում օգտագործվել են տնտեսաչափական մոդելներ. կառուցել և գնահատել ենք պարզագույն գծային ռեգրեսիոն մոդել և ARDL ECM մոդել (Autoregressive Distributed Lag Error Correction model):

Կատարված հետազոտությունը հատկապես կարևորվում է, քանի որ հարկերի սահունության գնահատումները բավականին քիչ են հայաստանյան աղբյուրներում: Հարկերի սահունության գործակցին անդրադարձ կատարվում է որոշ ռազմավարական փաստաթղթերում, որտեղ, սակայն, որպես հարկերի սահունության գործակից դիտարկվում է հարկային եկամուտների փոփոխության և ՀՆԱ փոփոխության հարաբերակցությունը:

Իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ երկարաժամկետ հատվածում հարկային եկամուտների արձագանքը ՀՆԱ-ի և հարկային փոփոխությունների նկատմամբ առավել ուժգին է, քան կարճաժամկետ հատվածում: ԱԱՀ-ի և շահութահարկի երկարաժամկետ և կարճաժամկետ սահունությունը համադրելի արդյունքներ է գրանցել, ինչը չի նկատվել եկամտային հարկի դեպքում: Արդյունքում, եկամտային հարկի սահունության հետագա, առանձին ուսումնասիրությունը, որը կներառի գործոնների առավել լայն շրջանակ, կարևորվում է՝ վերջինիս ամբողջական վարքագիծը բացահայտելու համար:

Հիմնաբառեր՝ *հարկեր, հարկերի սահունություն, հարկային եկամուտների փոփոխություն, հարկային քաղաքականություն, տնտեսական աճ, գնահատում, ARDL ECM մոդել:*

---

* Հոդվածը ներկայացվել է 06.11.2025թ., գրախոսվել՝ 30.10.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2025թ.:

Ներածություն

Հարկային եկամուտների և տնտեսական աճի միջև առկա կապի գնահատումը առանցքային է հարկային քաղաքականության մշակման գործում: Հարկային քաղաքականությունը ծառայում է ոչ միայն հանրային բարիքի ստեղծման ֆինանսավորման գործին, այլև կարևոր է տնտեսական պարբերաշրջանների ընթացքում կայունության ստեղծման համար:

Հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման և հետագա բարեփոխումների անհրաժեշտությունը գնահատելու համար կարևորվում է հարկերի սահունության գործակցի հաշվարկումը: Հարկերի սահունության գործակիցը այն ցուցիչներից է, որն արտացոլում է հարկային եկամուտների փոփոխությունը համախառն ներքին արդյունքի և հարկային քաղաքականության փոփոխությունների նկատմամբ:

Հարկային քաղաքականության արդյունավետությունը, հարկային եկամուտների կարճաժամկետ և երկարաժամկետ արձագանքը ՀՆԱ-ի և հարկային քաղաքականության փոփոխությունների նկատմամբ գնահատելու նպատակով իրականացված հարկերի սահունության գործակիցների հաշվարկն ամփոփված է սույն հետազոտության շրջանակում:

Գրականության վերլուծություն

Հարկային եկամուտների և տնտեսական աճի միջև առկա կախվածության վերլուծությունը եղել և շարունակում է մնալ շատ հետազոտությունների առանցքային թեման: Հարկերի սահունության գործակիցը առաջարկում է այն գնահատականը, որն արտացոլում է հարկային եկամուտների արձագանքը երկրում ստեղծված համախառն ներքին արդյունքի փոփոխությանը:

Հարկային քաղաքականության և հարկային համակարգի կառուցվածքի արդյունավետությունը, ինչպես նաև հարկային եկամուտների ճկունությունը գնահատելու համար լայնորեն կիրառվում են երկու իրար հետ փոխկապակցված ցուցանիշներ՝ հարկերի սահունության և էլաստիկության գործակիցները: Վերջիններս հաճախ կիրառության մեջ նույնացվում են, սակայն ունեն բովանդակային էական տարբերություններ: Հարկերի սահունության գործակիցը չափում է հարկային եկամուտների ընդհանուր արձագանքը ինչպես ազգային եկամտի, այնպես էլ ժամանակի ընթացքում հարկային քաղաքականությունում տեղի ունեցող փոփոխություններին (Dudine, Jalles 5): Հարկերի էլաստիկության գործակիցը ցույց է տալիս հարկային եկամուտների փոփոխությունը հարկման բազայի կամ համախառն ներքին արդյունքի փոփոխության նկատմամբ, երբ կիրառվող հարկային քաղաքականությունը անփոփոխ է (Ochieng, Mamingi 3): Արդյունքում, հարկերի էլաստիկության գործակիցը ամփոփում է հարկային եկամուտների ավտոմատ փոփոխությունը, երբ առկա է համախառն ներքին արդյունքի կամ հարկման բազայի փոփոխություն, իսկ հարկերի սահունության գործակիցը, ներառելով հարկային եկամուտների նշված ավտոմատ փոփոխությունը, արտացոլում է նաև հարկային քաղաքականության տարբեր ուղղություններում առկա փոփոխությունները: Այն դեպքում, երբ բացակայում է հարկերի դրույքաչափերի, հաշվարկման մեթոդների կամ հարկման այլ պայմանների փոփոխությունը, հարկերի սահունության գործակիցը համապատասխանում է հարկերի էլաստիկության գործակցին (Timsina 10):

Բազմաթիվ էմպիրիկ հետազոտություններ կան, որոնք ուսումնասիրում են զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների տարբերությունները՝ պայմանավորված հարկային քաղաքականության և ՀՆԱ փոփոխությունների հանդեպ հարկային եկամուտների արձագանքով: Օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի վերլուծություններից մեկը, որը կատարվել է 1990-2021 թթ. ժամանակահատվածի տվյալներով և 185 երկրների օրինակով, պարզել է, որ զարգացած երկրներում կարճաժամկետ հարկերի սահունությունը ավելի մեծ է, քան զարգացող երկրների

դեպքում (Cornevin, Corrales, Angel 46): Սա ցույց է տալիս, որ զարգացած երկրների դեպքում կարճ ժամկետում հարկային եկամուտները ավելի արագ են արձագանքում տնտեսական պայմանների փոփոխությանը: Չնայած առկա բազմաթիվ նման հետազոտությունների՝ Հայաստանի Հանրապետության օրինակով հարկերի սահունության գործակցի միջոցով կատարված վերլուծությունները սակավաթիվ են: Այս բացը հատկապես նկատելի է՝ հաշվի առնելով վերջին շրջանում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականության էական բարեփոխումները:

Հետազոտության մեթոդաբանություն

Հարկերի երկարաժամկետ սահունությունը գնահատելու համար նախ կիրառվել է պարզագույն գծային ռեգրեսիոն մոդել, որի դեպքում և՛ կախյալ, և՛ անկախ փոփոխականները ներկայացված են բնական հիմքով լոգարիթմի տեսքով: Այսպիսի տեսքը թույլ է տալիս գնահատված գործակիցը մեկնաբանել որպես հարկերի սահունության գործակից, այսինքն՝ հարկային եկամուտների միջին տոկոսային փոփոխություն՝ Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեկ տոկոսային փոփոխության դեպքում:

$$\ln \mathrm{T_t} = \alpha + \beta \ln \mathrm{GD}\, P_\mathrm{t} + \varepsilon_\mathrm{t}\ ,$$

որտեղ Tt-ն հարկային եկամուտներն են. աշխատանքում գնահատվել են 4 տարբեր մոդելներ՝ ընդամենը հարկային եկամուտների, ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի համար,

GDPt-ն Համախառն ներքին արդյունքն է,

β-ն հարկերի սահունության գործակիցն է,

ε_t-ն մոդելի պատահական սխալն է:

Այս մոդելն ապահովվում է օգտակար ելակետային գնահատականներով, սակայն դրանք հաշվի չեն առնում ՀՆԱ փոփոխության հետաձգված ազդեցությունը կամ կարճաժամկետ շեղումները: Նշված սահմանափակումները հաղթահարելու համար կառուցել ենք նաև ARDL ECM մոդել (Autoregressive Distributed Lag Error Correction model), որը էկոնոմետրիկ վերլուծությունների արժեքավոր գործիք է: ARDL ECM մոդելը, ի տարբերություն նախորդ մոդելի, ցույց է տալիս փոփոխականների ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ կախվածությունը: Բացի այդ, ARDL ECM մոդելը կիրառելի է նաև ոչ ստացիոնար ժամանակային շարքերի դեպքում և այն դեպքերում, երբ առկա են սահմանափակ տվյալներ:

ARDL մոդելը պաշտոնապես ներկայացվել է 2001 թվականին Պեսարանի, Շինի և Սմիթի կողմից: Տարբեր VAR (Vector autoregression) մոդելներից ստացված ECMs-ները (error correction models) նրանք վերաիմաստավորեցին և միավորեցին մեկ ընդհանուր մոդելի մեջ, որը այժմ լայնորեն կիրառվում է և հայտնի է *ARDL մոդել* անվամբ (Pesaran, Shin, Smith 299):

Հետազոտության մեջ օգտագործված ARDL ECM մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$\Delta lnT_t = \alpha_0 + \sum_{i=1}^{p} \beta_i \Delta \ln T_{t-i} + \sum_{j=0}^{q} \gamma_i \Delta lnGDP_{t-j} + \phi_1 lnT_{t-1} + \phi_2 lnGDP_{t-1} + \varepsilon_t\ ,$$

որտեղ՝ T-ն, GDP-ն և ε_t-ն ունեն նախկինում նշված նշանակությունը,

Δ-ով նշանակված են փոփոխականների 1-ին կարգի տարբերությունները,

β_i-ն, γ_i-ն, ϕ_1-ը և ϕ_2-ը անկախ փոփոխականների գործակիցներն են:

Վերլուծություն

Պարզագույն գծային ռեգրեսիոն մոդելներում, որոնցում և՛ կախյալ, և՛ անկախ փոփոխականները ներկայացված են բնական հիմքով լոգարիթմի տեսքով, R^2 արժեքը գերազանցում է 0. 9-ը, ինչը նշանակում է, որ ՀՆԱ-ի տատանումները բացատրում են

հարկային եկամուտների տատանումների 90%-ից ավելին: Այնուամենայնիվ, Durbin-Watson-ի վիճակագրությունը փաստում է, որ բոլոր մոդելների մնացորդներում առկա է ավտոկոռելյացիա (DW<2), ինչը, բացառությամբ շահութահարկի, հաստատվել է Breusch–Godfrey Lagrange Multiplier (LM) թեստի միջոցով: Այս խնդիրը լուծելու համար բոլոր մոդելները գնահատվել են՝ օգտագործելով HAC (Newey–West) ստանդարտ սխալները, որոնք ավտոկոռելյացիայի առկայության դեպքում ապահովում են հուսալի գնահատականներով:

Գնահատված մոդելներում հետերոսկեդաստիկությունը ստուգելու համար կատարել ենք Breusch–Pagan–Godfrey (BPG) թեստը, ըստ որի՝ ԱԱՀ-ի (p=0,6476), եկամտային հարկի (p=0,3120) և շահութահարկի (p=0,5959) դեպքում մոդելներում հետերոսկեդաստիկություն առկա չէ: Ընդամենը հարկային եկամուտների դեպքում ստացված p-value-ի արժեքը սահմանային է (p=0.0585), ինչը վկայում է մոդելում թույլ հետերոսկեդաստիկության առկայության մասին, որը վիճակագրորեն նշանակալի է միայն 10% վստահելիության մակարդակում, իսկ 1% և 5% վստահելիության մակարդակում հոմոսկեդաստիկության առկայության հիպոթեզը չի մերժվում, այսինքն՝ առկա չէ հետերոսկեդաստիկություն: HAC (Newey–West) ստանդարտ սխալների կիրառությունը, սակայն, այս խնդիրը ևս հաղթահարում է:

Արդյունքում, բոլոր գնահատված մոդելները հավաստի են, իսկ ստացված արդյունքները՝ տնտեսապես իմաստալից և վիճակագրորեն նշանակալի:

Աղյուսակ 1. Մոդելների գնահատման էմպիրիկ արդյունքները և մնացորդների թեստերը

Variable	Total Tax	VAT	PIT	CIT
lnGDP	1.305***	1.114***	2.248***	1.398***
(t-statistic)	(37.55)	(29.04)	(15.49)	(17.38)
Constant	-6.290***	-4.290***	-22.47***	-9.829***
(t-statistic)	(-11.68)	(-7.34)	(-10.30)	(-7.97)
R^2	0.989	0.977	0.937	0.952
DW stat	0.488	0.533	0.559	1.236
Serial Correlation LM Test				
F-stat. (prob.)	13.582 (0.0002)	11.775 (0.0005)	8.582 (0.0022)	2.283 (0.1292)
Heteroskedasticity Test (BPG)				
Obs*R-sq. (prob. 2)	3.579 (0.0585)	0.209 (0.6476)	1.022 (0.3120)	0.281 (0.5959)

*** p < 0.01, ** p < 0.05, * p < 0.1: Փակագծերում ներկայացված են t վիճականու արժեքները:
Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ:

Գնահատված մոդելների արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում հարկային եկամուտների դիտարկված բոլոր կատեգորիաները 2001-2023 թվականների ընթացքում ցուցաբերել են ուժեղ և վիճակագրորեն նշանակալի սահունություն: Գնահատված հարկերի սահունության գործակիցը երկարաժամկետ հատվածում ԱԱՀ-ի համար կազմում է 1. 11, եկամտային հարկի համար՝ 2. 25, շահութահարկի համար՝ 1. 40, իսկ ընդամենը հարկային եկամուտների համար՝ 1. 31: Ընդ որում, ստացված բոլոր գործակիցները նշանակալի են 1% վստահելիության մակարդակում (p<0. 01):

Երկարաժամկետ հատվածում հարկերի սահունության հաշվարկված գործակիցները ցույց են տալիս, որ ՀՆԱ-ի 1% աճի դեպքում հարկային եկամուտները աճում են ավելի արագ տեմպով (ԱԱՀ-ի գծով մուտքերը միջինում աճում են 1. 11%-ով, շահութահարկի գծով մուտքերը՝ 1. 40%-ով, եկամտային հարկի գծով մուտքերը 2. 25%-ով, իսկ ընդամենը հարկային եկամուտները՝ 1. 31%-ով):

Հետաքրքրական է եկամտային հարկի գնահատված զգայնությունը ՀՆԱ-ի փոփոխության նկատմամբ: Թեև գնահատված մոդելները առաջարկում են արժեքավոր գնահատականներ, անհրաժեշտ է շարունակել գնահատումները՝ կարճաժամկետ հարկերի սահմանության գործակիցները հաշվարկելով, որպեսզի առավել համապարփակ մեկնաբանենք հարկային եկամուտների արձագանքը ՀՆԱ-ի փոփոխության նկատմամբ: Կարճաժամկետ և երկարաժամկետ հարկերի սահմանության գործակիցները հաշվարկելու համար գնահատելու ենք ARDL ECM մոդելներ:

Հայաստանի Հանրապետության օրինակով գնահատվել են 4 ARDL ECM մոդելներ՝ ընդհանուր հարկային եկամուտների, ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտային հարկի համար: Մոդելների մնացորդների թեստերի արդյունքը ցույց է տալիս, որ գնահատված բոլոր մոդելների մնացորդները հոմոսկեդաստիկ են, իսկ ավտոկոռելյացիան բացակայում է: Մոդելները գնահատելիս կիրառվել են HAC (Newey-West) ստանդարտ սխալները:

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ գնահատված մոդելներում, սակայն, առկա են որոշ խնդիրներ: Եկամտային հարկի դեպքում ճշգրտված դետերմինացիայի գործակիցը 0-ին մոտ է, ինչը ենթադրում է, որ առկա են այլ գործոններ ևս, որոնք բացատրում են եկամտային հարկի գծով մուտքերի վարիացիան, իսկ ստացված գործակիցներն էլ վիճակագրորեն նշանակալի չեն: Եկամտային հարկի օրինակը առանձին քննարկման հարց է, քանի որ, օրինակ, եկամտային հարկի համահարթ 20 տոկոս դրույքաչափին անցումը ենթադրում է ոչ միայն դրույքաչափի, այլև՝ տնտեսավարողների վարքագծի փոփոխություն: Այս հետազոտության շրջանակում մոդելների արդյունքները մեկնաբանվում են՝ համաձայն աղյուսակ 2-ի տվյալների:

Աղյուսակ 2. Մոդելների գնահատման էմպիրիկ արդյունքները և մնացորդների թեստերը

Variable	Total Tax	VAT	PIT	CIT
Δ_LNGDP	0.81***	1.33***	0.36	1.13***
(t-statistic)	(8.00)	(8.97)	(0.86)	(2.83)
Δ_LNGDP_1	-0.28**	-0.52	-0.02	0.55**
(t-statistic)	(-2.54)	(-1.29)	(-0.14)	(1.13)
LNGDP_1	0.46**	0.34	0.58	0.99***
(t-statistic)	(2.67)	(1.86)	(1.22)	(3.65)
LNTOTAL_1	-0.35**	-0.30	-0.28	-0.71***
(t-statistic)	(-2.63)	(-1.78)	(-1.44)	(-3.81)
Constant	-2.22**	-1.44	-5.42	-7.05***
(t-statistic)	(-2.68)	(-1.79)	(-1.10)	(-3.09)
R^2	0.87	0.74	0.24	0.62
Adjusted R^2	0.82	0.66	-0.01	0.49
DW stat	2.13	0.533	0.559	1.236
Serial Correlation LM Test				
F-stat. (prob.)	0.366 (0.7000)	0.638 (0.5440)	0.103 (0.9028)	0.517 (0.6079)
Heteroskedasticity Test (BPG)				
Obs*R-sq. (prob. 2)	2.888 (0.7172)	5.796 (0.3266)	2.853 (0.7226)	2.031 (0.8448)

*** p < 0.01, ** p < 0.05, * p < 0.1: Փակագծերում ներկայացված են t վիճականու արժեքները:
Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ:

Հարկային եկամուտների սահունության գործակիցները կարճաժամկետ հատվածում (գնահատված մոդելների արդյունքներով դրանք համապատասխանում են Δ_LNGDP-ի գործակիցներին) ընդամենը հարկային եկամուտների, ԱԱՀ-ի, եկամտային հարկի և շահութահարկի համար կազմում են, համապատասխանաբար, 0.81, 1.33, 0.36 և 1.13: Հարկերի սահունության նշված գործակիցները, բացառությամբ եկամտային հարկի, նշանակալի են 1% վստահելիության մակարդակում (p<0. 01): Այսպիսով ընդհանուր հարկային եկամուտները չափավոր առաձգական են ՀՆԱ-ի փոփոխության նկատմամբ, ինչը համահունչ է շատ զարգացող երկրների նույն ցուցանիշին, սակայն ցածր է ՏՀԶԿ միջինից: ՏՀԶԿ երկրների միջին հարկերի սահունության գործակիցները կարճաժամկետում և համադրելի մի քանի երկրների տվյալներ ներկայացված է գծապատկեր 1-ում (TAX REVENUE BUOYANCY IN OECD COUNTRIES 1965-2022, OECD, 2023 և հեղինակի հաշվարկներ):

Գծապատկեր 1. Կարճաժամկետ հարկերի սահունության գործակիցները



Երկարաժամկետ հարկերի սահունության գործակիցները հաշվարկելու համար կիրառել ենք հետևյալ բանաձևը՝

$$\text{Երկարաժամկետ հարկերի սահունության գործակից} = -\frac{\phi_2}{\phi_1}:$$

Արդյունքում, եկրարաժամկետում հարկերի սահունության գործակիցները ընդամենը հարկային եկամուտների, ԱԱՀ-ի, եկամտային հարկի և շահութահարկի համար կազմում են, համապատասխանաբար, 1.31, 1.13, 2.07 և 1.39, որոնք մոտ են առաջին քայլով հաշվարկված գործակիցներին: Ընդհանուր հարկային եկամուտները երկարաժամկետում, փաստորեն, դրսևորում են կայուն աճ՝ համահունչ տնտեսության ընդլայնմանը: Երկարաժամկետում հարկերի սահունության գործակիցը Հայաստանում գրանցել է բավականին լավ արդյունք՝ գերազանցելով ՏՀԶԿ միջին ցուցանիշը 0.28 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Երկարաժամկետ հարկերի սահունության գործակիցները (TAX REVENUE BUOYANCY IN OECD COUNTRIES 1965-2022, OECD, 2023 և հեղինակի հաշվարկներ)



Եկամտային հարկի սահունության զգալի տարբերությունը կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում արտացոլում է ՀՀ-ում եկամտային հարկի համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները: Կարճաժամկետ հատվածում եկամտային հարկի գծով մուտքերը դանդաղ են արձագանքում ՀՆԱ փոփոխություններին, որի պատճառներից կարող է հանդիսանալ եկամտային հարկի հետաձգված վճարման համակարգի առկայությունը (կան առանձին դեպքեր, երբ եկամտային հարկը վճարվում է տարեկան), աշխատավարձերի դանդաղ փոփոխությունը համախառն ներքին արդյունքի փոփոխության նկատմամբ և այլն: Երկարաժամկետ հատվածում, սակայն, եկամտային հարկի գծով մուտքերը ավելի արագ տեմպով են արձագանքում, քան ՀՆԱ-ի փոփոխությունն է, ինչը պայմանավորված է այնպիսի գործոնների ազդեցության ի հայտ գալով, որոնք կարճաժամկետում չեն արտացոլվում: Անհրաժեշտ է ընդգծել, որ եկամտային հարկի գծով գնահատված մոդելները ցույց են տվել, որ առկա են մի շարք այլ գործոններ,

որոնք բացատրում են վերջիններիս փոփոխությունը: Դրանցից կարևոր է հարկային քաղաքականության փոփոխությունը, որի արդյունքնում պրոգրեսիվ եկամտային հարկի համակարգը փոխարինվեց հաստատուն դրույքաչափով հարկման համակարգով: Այս և այլ գործոնների դիտարկումը չափազանց կարևոր է, սակայն առանձին հետազոտության առարկա է:

Եզրակացություններ

Հոդվածի շրջանակում իրականացվել է հիմնական հարկատեսակների և ընդամենը հարկային եկամուտների սահունության էմպիրիկ գնահատում. գնահատվել են կարճաժամկետ և երկարաժամկետ սահունության գործակիցները՝ օգտագործելով 2001-2023 թթ. ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության հարկային եկամուտների և ՀՆԱ-ի ցուցանիշները:

Պարզագույն գծային ռեգրեսիոն մոդելների գնահատումները, որտեղ փոփոխականները ներկայացված են բնական հիմքով լոգարիթմի տեսքով, ցույց են տվել, որ երկարաժամկետ հատվածում ընդհանուր հարկային եկամուտների, ԱԱՀ-ի, եկամտային հարկի և շահութահարկի սահունությունը կազմում է, համապատասխանաբար, 1.31, 1.11, 2.25 և 1.40, իսկ ARDL ECM մոդելի արդյունքներով հարկերի սահունության գործակիցները գնահատվել են, համապատասխանաբար, 1.31, 1.13, 2.07 և 1.39: Նկատելի է, որ գնահատման երկու տարբերակների դեպքում էլ ստացված գործակիցները միմյանց բավական մոտ են, ինչը բարձրացնում է վերջիններիս հավաստիությունը:

Հարկային եկամուտների կարճաժամկետ արձագանքը ՀՆԱ-ի և հարկային քաղաքականության փոփոխությունների նկատմամբ գնահատվել է ARDL ECM մոդելով, որի արդյունքներով ընդհանուր հարկային եկամուտների, ԱԱՀ-ի, եկամտային հարկի և շահութահարկի սահունությունը կազմում է, համապատասխանաբար, 0.81, 1.33, 0.36 և 1.13:

Իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երկարաժամկետ հատվածում հարկային եկամուտների արձագանքը ՀՆԱ-ի և հարկային փոփոխությունների նկատմամբ առավել ուժգին է, քան կարճաժամկետ հատվածում: Ստացված արդյունքները հիմնականում համապատասխանում են ՏՀԶԿ միջին ցուցանիշին, առանձին դեպքերով, նույնիսկ, գերազանցում են:

Հարկ է նկատել նաև, որ եկամտային հարկի դեպքում ARDL ECM մոդելի ճշգրտված դետերմինացիայի գործակիցը մոտ է եղել 0-ի՝ ընդգծելով տնտեսական աճից բացի այլ գործոնների ազդեցությունը և դրանք դիտարկելու անհրաժեշտությունը: Դրանց թվում առավել նշանակալի կարող է լինել եկամտային հարկի պրոգրեսիվ համակարգից հաստատուն դրույքաչափով հարկման անցնելը: Արդյունքում, եկամտային հարկի սահունության հետագա, առանձին ուսումնասիրությունը կարևորվում է՝ վերջինիս ամբողջական վարքագիծը բացահայտելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Cornevin Antoine, Corrales Juan Sebastian, Angel Juan Pablo “A Deep Dive into Tax Buoyancy: Comparing Estimation Techniques in a Large Heterogeneous Panel”. *International Monetary Fund*, IMF Working Paper No. 23/71, 2023, 72 p.
2. Dudine Paolo, Jalles Joao Tovar “How Buoyant is the Tax System? New Evidence from a Large Heterogeneous Panel”. *Journal of International Development, vol. 30, no. 6,* 2018, pp. 961-991
3. Ochieng Brandon, Mamingi Nlandu “Estimating the Sizes of Buoyancy and Elasticity of the Tax System in Barbados over the period 1990 to 2019”. *Central Bank of Barbados*, CBB Working Paper No. WP/22/2, 2022, 30 p.

4. OECD. *Tax Revenue Buoyancy in OECD Countries 1965–2022*. 2023, 336 p.
5. Pesaran Hashem, Shin Yongcheol, Smith Richard "Bounds Testing Approaches to the Analysis of Level Relationships". *Journal of Applied Econometrics*, 16(3), 2001, 38 p.
6. Timsina Nitya "Tax Elasticity and Buoyancy in Nepal: A Revisit. Economic Review". *Nepal Rastra Bank*, 17, 9–21, 2005, 13 p.

AN ASSESSMENT OF TAX BUOYANCY IN THE REPUBLIC OF ARMENIA

ANUSH PETROSYAN
Armenian State University of Economics, Faculty of Finance,
Chair of the Finance, Ph.D. Student, Ministry of Finance of the RA, Department of Revenue Policy and Administration Methodology, Adviser,
Yerevan, the Republic of Armenia

The aim of this article is to examine the responsiveness of total tax revenues, as well as revenues from individual taxes — value-added tax (VAT), income tax, and profit tax — to changes in the economic conditions of the Republic of Armenia.

The objective of this study is to assess the buoyancy of total tax revenues, as well as revenues from VAT, income tax, and profit tax, in both the short and long term.

To estimate tax buoyancy, the study employs econometric modelling approaches, including a simple linear regression model and an ARDL–ECM (Autoregressive Distributed Lag Error Correction Model).

This research is particularly significant, as assessments of tax buoyancy are relatively scarce in Armenian economic literature. The tax buoyancy coefficient is mentioned in several strategic documents; however, in these sources, it is typically defined as the ratio of the change in tax revenue to the change in GDP.

The results of the analysis indicate that, in the long run, the responsiveness of tax revenues to changes in GDP and taxation is stronger than in the short run. The short- and long-term buoyancy of VAT and corporate income tax exhibited similar patterns — a result that was not observed for income tax. Consequently, a more detailed and separate examination of income tax buoyancy — incorporating a broader set of explanatory factors — is necessary to fully capture its dynamics.

Keywords: *Taxes, Tax Buoyancy, Tax Revenue Dynamics, Tax Policy, Economic Growth, Econometric Estimation, ARDL–ECM Model.*

ОЦЕНКА НАЛОГОВОЙ ГИБКОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АНУШ ПЕТРОСЯН
аспирант кафедры финансов
Армянского государственного экономического университета,
советник, координирующий отдельные функции Департамента политики доходов и методологии администрирования Министерства финансов РА,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи заключается в исследовании степени чувствительности совокупных налоговых поступлений, а также поступлений по отдельным видам налогов — налогу на добавленную стоимость (НДС), подоходному налогу и налогу на прибыль к изменениям экономических условий в Республике Армения.

Задачей данного исследования является оценка гибкости (налоговой буойности) совокупных налоговых поступлений, а также поступлений по НДС, подоходному налогу и налогу на прибыль в краткосрочной и долгосрочной перспективах.

Для оценки налоговой буойности в исследовании используются эконометрические методы моделирования, включая простую модель линейной регрессии и модель ARDL–ECM (Autoregressive Distributed Lag Error Correction Model — авторегрессионная распределённая лаговая модель с механизмом коррекции ошибок).

Проведённое исследование имеет особую значимость, поскольку оценки налоговой буойности встречаются в армянской экономической литературе относительно редко. Коэффициент налоговой буойности упоминается в ряде стратегических документов; однако в них он, как правило, определяется как отношение изменения налоговых поступлений к изменению ВВП.

Результаты анализа показывают, что в долгосрочной перспективе чувствительность налоговых поступлений к изменениям ВВП и налоговой политики выше, чем в краткосрочной. Краткосрочная и долгосрочная буойность НДС и налога на прибыль продемонстрировали схожие закономерности, что не наблюдалось в случае подоходного налога. В связи с этим более детальное и самостоятельное исследование буойности подоходного налога, включающее более широкий спектр объясняющих факторов, представляется необходимым для полного раскрытия его динамики.

Ключевые слова: *налоги; налоговая буойность; динамика налоговых поступлений; налоговая политика; экономический рост; эконометрическое моделирование; модель ARDL–ECM.*

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպության **«Գիտական Արցախ»** պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան 3 անգամ:

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականն ընդգրկված է նաև РИНЦ միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում և զետեղված www.elibrary.ru կայքում:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրապարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ունեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված (անպայմանորեն պետք է նշված լինի, որ տպագրության է երաշխավորվում «Գիտական Արցախ» պարբերականում):

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են www.scientificartsakh.com կայքում ծանոթանան «Գիտական Արցախ» պարբերականի գիտական հրապարակումների էթիկային և խստորեն հետևել դրան:

Խմբագրության կողմից հոդվածն ընդունվելու դեպքում հեղինակը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարել հոդվածի տպագրության համար նախատեսված գումարը, իսկ վճարման անդորրագրի սկանավորված տարբերակն ուղարկել խմբագրության էլեկտրոնային փոստին: Նյութի հրապարակման և հեղինակին «Գիտական Արցախ» պարբերականի 1 անվճար օրինակի տրամադրման համար գանձվող գումարը կազմում է՝ 1 էջը 2,500 ՀՀ դրամ:

Բոլոր հոդվածներն ունենալու են DOI միջազգային ստանդարտ համարներ:

1-ին համարը լույս է տեսնում մայիսին **(հոդվածներն ընդունվում են մինչև փետրվարի 15-ը),** 2-րդ համարը՝ սեպտեմբերին **(հոդվածներն ընդունվում են մինչև հունիսի 15-ը),** իսկ 3-րդ համարը՝ դեկտեմբերին **(հոդվածներն ընդունվում են մինչև հոկտեմբերի 15-ը):**

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՄ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում (www.artsakhlib.am), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել www.scientificartsakh.com կայքի միջոցով կամ scientific.artsakh@gmail.com էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի ֆորմատը՝ 170*240 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:

Ծավալը՝ 10-25 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ Arial:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ տողի ձախ

կողմում նշվում է հոդվածի ՀՏԴ-ն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է (են) հեղինակ(ներ)ի անուն ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) նշվում են աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն, որից հետո՝ անհատական համարանիշը (ID) հեղինակների նույնականացման միջազգային հարթակներում (առնվազն **ORCID** համակարգում, ցանկալի է նաև Scopus ID, WoS ID համակարգերում):

Մեկ տող բաց թողնելով՝ 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 150-180 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Ամփոփագիրը պետք է լինի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել **«Հիմնաբառեր»** և նշել 7-10 հիմնաբառ:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որը պետք է ունենա ենթավերնագրեր: Տեքստի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Հղումները պարտադիր են:

MLA ձևաչափում կիրառվում է ներտեքստային հղումների հեղինակ-էջ եղանակը: Համաձայն վերջինիս՝ հեղինակի ազգանունն ու համապատասխան աշխատանքի էջ(եր)ի համար(ներ)ը արտացոլվում են տեքստում, իսկ ամբողջական հղումը զետեղվում է գրականության (հղված աշխատանքների) ցանկի մեջ:

Հիմնական տեքստից հետո «WORKS CITED» բառակապակցության ներքո պարտադիր անհրաժեշտ է կցել օգտագործված ոչ լատինատառ գրականության լատինական տառադարձումով տարբերակը՝ դասավորելով այբբենական կարգով, […] փակագծերում թարգմանել աշխատության վերնագիրը և հրատարակության վայրը, որից հետո (…) փակագծերում նշել բնագրի լեզուն, օրինակ.

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler’nayin Gharabagh. Adrbejani irakanacrac’ ceghaspanut’yan anatomian. Step’anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. “Jetnicheskie i regional’nye konflikty v Evrazii. Kn. 1. Central’naja Azija i Kavkaz, Moskva, [“Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Տառադարձումը կարող եք կատարել՝ օգտվելով www.translit.ru կայքից:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., դոցենտ **Ավետիք Հարությունյանի** հետ՝ գրելով avetiq.hh@gmail.com էլեկտրոնային փոստին կամ զանգահարելով +37497277770, (+374) 55277755 հեռախոսահամարներին:

THE REQUIREMENTS FOR THE JOURNAL «SCIENTIFIC ARTSAKH»

The journal **«Scientific Artsakh»** of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published 3 times a year.

The journal **«Scientific Artsakh»** is also included in the RSCI (Russian Scientific Citation Index) International Scientific Information Database and posted on www.elibrary.ru website.

High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.

All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal (it should be noted that the article is recommended for publication in the Journal «Scientific Artsakh»).

Before sending the article, the authors are obliged to familiarize themselves with the ethics of scientific publications of the journal «Scientific Artsakh» on the www.scientificartsakh.com website and strictly comply with it.

Once the article is accepted by the Editorial Board, the author is obliged to pay the amount provided for the publication of the article within 3 working days and send the scan of the payment order to the the Editorial Board e-mail. The cost of publishing and providing the author with one copy of the journal «Scientific Artsakh» is 2,500 AMD per 1 page.

All articles will have DOI International Standard Numbers.

The 1st issue is published in May **(articles are accepted until February 15),** the 2nd issue – in September **(articles are accepted until June 15)** and the 3rd issue – in December **(articles are accepted until October 15).**

The articles published in the journal «Scientific Artsakh» are placed on Artsakh E-Library website (www.artsakhlib.am), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.

Articles should be sent via the www.scientificartsakh.com website or to the scientific.artsakh@gmail.com e-mail, the mobile phone number and the address of the author's residence, indicating the index should also be stated.

Technical requirements for works:

Computer typing: program MS Word 2003-2010.
Page format: 170*240 mm, margins (left, right, top, bottom)` 20 mm.
Volume: 10-25 pages (summary inclusive).
Text font: Armenian, English and Russian – Arial.
Language of articles: Armenian, Russian, English.

On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. The UDC of the article is indicated in the left-aligned line a line down. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree,

title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author's email is provided, after that: a personal identification number (ID) on international author identification platforms (at least in the **ORCID** system, preferably also in Scopus ID, WoS ID systems).

Over a line, font size 12, bold, italic an abstract (ամփոփում, аннотация), in the 150-180 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.

Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.

Over a line, the main text of the work containing subtitles with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB.

Tables should be numbered and have titles.

Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.

Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.

References are required.

In the MLA format, the author-page method of intra-text links is used. According to the latter, the author's surname and the corresponding page(s) of the work are displayed in the text, and the full link is placed in the list of references (referenced works).

After the main text, under the phrase «WORKS CITED», it is mandatory to attach a Latin transliteration of the used literature presented in non-Latin letters, placing it in alphabetical order, in square brackets […] indicate the name of the work and the place of publication, after which in round brackets (…) the original language, for example:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)
2. Avetisjan, Grant. "Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Transliteration can be done by using www.translit.ru. website.

For more information, please contact the Editor-in-chief of the journal «Scientific Artsakh», Ph.D in Law, Associate Professor **Avetik Harutyunyan**, e-mail at avetiq.hh@gmail.com or by phone +37497277770, (+374) 55277755.

ТРЕБОВАНИЯ К ОФОРМЛЕНИЮ СТАТЕЙ ЖУРНАЛА «НАУЧНЫЙ АРЦАХ»

Журнал **«Научный Арцах»** общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается 3 раза в год.

Журнал **«Научный Арцах»** также включен в международную научно-информационную базу данных РИНЦ и размещен на сайте www.elibrary.ru.

К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи, рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.

Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью (обязательно должно быть отмечено, что статья рекомендуется к печати в журнале «Научный Арцах»).

Перед подачей статьи авторам предлагается ознакомиться с этикой научных публикаций журнала «Научный Арцах» на сайте www.scientificartsakh.com и неукоснительно следовать ей.

После принятия статьи редколлегией, автор обязан в течение 3 рабочих дней уплатить сумму, предусмотренную для публикации статьи, и выслать на электронный адрес редакции скан платежного поручения. Стоимость публикации и предоставления автору одного экземпляра журнала «Научный Арцах» составляет 2,500 драммов за 1 страницу.

Все статьи получат международные стандартные номера DOI.

1-ый номер публикуется в мае **(статьи принимаются до 15-го февраля),** 2-ой номер – в сентябре **(статьи принимаются до 15-го июня),** а 3-ий номер – в декабре **(статьи принимаются до 15-го октября).**

Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха (www.artsakhlib.am), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.

Статьи следует присылать через сайт на адрес www.scientificartsakh.com или на электронную почту scientific.artsakh@gmail.com, при этом должен быть указан номер мобильного телефона автора и адрес проживания (с индексом).

Технические требования к оформлению работ:

Компьютерный набор: программа MS Word 2003-2010.

Формат страницы: 170*240 мм, поля (левое, правое, верхнее, нижнее)` 20 мм.

Объем: 10-25 страниц (резюме включительно).

Шрифт текста: армянский, английский и русский – Arial.

Язык представления статей: армянский, английский, русский.

На верхней строке первой страницы (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку с выравниванием по левому краю указывается УДК статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора, после чего: персональный номерной знак (ID) на международных платформах идентификации авторов (как минимум в системе **ORCID**, желательно также в системах Scopus ID, WoS ID).

Через строку кеглем 12, полужирным шрифтом (Bold) и курсивом (Italic) предоставляется аннотация (ԱՄՓՈՓՈՒՄ, abstract), в которой в объеме 150-180 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные

выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, дающий представление о нем без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы с подзаголовками кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя TAB.

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны.

В формате MLA используется способ внутритекстовых ссылок автор-страница. При этом фамилия автора и страница (страницы) соответствующей работы (страниц) отображаются в тексте, а полная ссылка помещается в список цитируемых работ в конце статьи.

После основного текста под наименованием «WORKS CITED» обязательно приложить латинскую версию использованной литературы в латинской транслитерации и в алфавитном порядке, в скобках […] поместить переведенные на армянский язык название работы и место ее публикации, затем в скобках (…) обозначить язык оригинала, например:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. «Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, [«Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Транслитерацию можете осуществить, используя сайт www.translit.ru.

За дополнительной информацией можно обратится к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту **Аветику Арутюняну**, написав по электронному адресу avetiq.hh@gmail.com или позвонив по телефону +37497277770, (+374) 55277755.

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3 (26), 2025

«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան 3 անգամ:
Հրատարակվում է 2018 թվականից:

The journal «Scientific Artsakh» is published three times a year. It has been published since 2018.

Журнал «Научный Арцах» выходит три раза в год. Издается с 2018 года.

Գլխավոր խմբագիր՝ Editor-in-Chief: Главный редактор:	**Ավետիք Հարությունյան** **Avetik Harutyunyan** **Аветик Арутюнян**
Հայերենի պատասխանատու Responsible for Armenian Ответственный за армянский язык	**Ռենա Մովսեսյան** **Rena Movsesyan** **Рена Мовсесян**
Անգլերենի պատասխանատու՝ Responsible for English Ответственный за английский язык	**Ալվինա Ներսեսյան** **Alvina Nersesyan** **Альвина Нерсесян**
Ռուսերենի պատասխանատու՝ Responsible for Russian Ответственный за русский язык	**Ռուզաննա Սարգսյան** **Ruzanna Sargsyan** **Рузанна Саркисян**
Պատասխանատու քարտուղար՝ Executive Secretary Ответственный секретарь	**Դավիթ Աքելյան** **Davit Akelyan** **Давид Акелян**
Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ Computer set, style, font and layout Компьютерный набор, стиль, шрифт и верстка	«**Արցախ**» **հրատարակչության** «**Artsakh**» **Publishing House** **Издательство «Арцах»**
Շապիկի ձևավորումը՝ Cover design Дизайн обложки	**Արմինե Քոչարյանի** **Armine Kocharyan** **Армине Кочарян**

Website: www.scientificartsakh.com, www.aegmm.org.
E-mail: scientific.artsakh@gmail.com, avetiq.hh@gmail.com.
Tel. (+374) 97277770, (+374) 55277755.

Ստորագրված է տպագրության՝ 30.12.2025 թ.:
Չափսը՝ 70*100/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 14,75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

Տպագրված է «ՄՀՄ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ տպագրատանը: